

ՊԵՏԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆԻՍՅԱՆ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
Институт Литературы им. М. Аджаряна

ИОАННЕС ИОАННИСЯН

СОБРАНИЕ
СОЧИНЕНИЙ

Том

1

Издательство АН Армянской ССР
ЕРЕВАН 1964

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Ս.Ա.ԲԵՂՇԱՆԻ ՆԱԺԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՍՏԻՏՈՒՏ

V

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ


ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

A II
36648

Հասցի

1

Հայկական ՍՍՌԻ ԳԱ Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 1964




Խմբագրական կոլեգիա
ԶԱՐՅԱՆ Ռ., ԻՆՃԻԿՅԱՆ Ա., ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա.,
ՀՈՎՆԱՆ Գ., ՄՈՒՐԱԴՅԱՆ Ն.

Տեքստը պատրաստեց և ծանոթագրեց
ՆՇԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

Հատորի խմբագիր
Ռ. Վ. ԶԱՐՅԱՆ



Հովհաննես Հովհաննիսյան



Ե Ր Կ ՈՒ Խ ՈՍ Զ

Հովհաննես Հովհաննիսյանն իր կենդանության օրոք հրատարակվել է ընդամենը երեք անգամ. 1887 թվականին, 1908-ին և 1912-ին հրատարակված հատընտիրը, որ արձագանքն էր նրա հոբելյանի: Դրանցից ամենասովորը և նշանակալին՝ 1908 թվականի ժողովածուն էր:

Բանաստեղծի մահից հետո միայն, 1937 թվականին Հայպետհրատը ձեռնարկեց լույս ընծայելու նրա «Երկերի ժողովածուն» երկու հատորով, Ռուբեն Զարյանի խմբագրությամբ: Ցավոք սրտի, իր տեսակի մեջ անդրանիկ այդ ժողովածուն, որ բանաստեղծի առաջին գիտական հրատարակությունն էր լինելու, մնաց անավարտ. լույս տեսավ միայն առաջին՝ չափածոն ընդգրկող հատորը, որը թերություններով հանդերձ խոշոր ներդրում էր Հովհաննիսյանի աշխատությունների հրատարակության գործում: Այնուհետև լույս տեսան բանաստեղծի ևս հինգ ժողովածուներ՝ 1939-ին, 1945-ին, 1949-ին, 1953-ին և 1959-ին:

Բոլոր այս ժողովածուները, բացի 1937 թվականի երկերից, հավակնություն չեն ունեցել բանաստեղծի ամբողջական հրատարակությունները լինելու, թեև ընդգրկել են նաև նոր, մինչ այդ անտիպ բանաստեղծություններ, իսկ վերջինը՝ նաև նամակները:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի սույն հրատարակությունը, թվով տասներորդը, Հովհաննես Հովհաննիսյանի երկերի առաջին ամբողջական գիտական հրատարակությունն է:

«Երկերի ժողովածուի» նյութերն ըստ հատորների բաշխված են հետևյալ կերպ. առաջին և երկրորդ հատորներն ընդգրկելու են բանաստեղծի չափածո երկերը (Բանաստեղծություններ, Բալլադներ և պոեմներ, Սևագրություններ և Ֆրագմենտներ, Թարգմանություններ և փոխադրություններ), երրորդ հատորը՝ Հոգվածներ, ուսումնասիրություններ, գրախոսականներ և վերջին, չորրորդ հատորը՝ Նամակներ:

Չափածոն ընդգրկող առաջին երկու հատորներում նյութերի այս նոր բաշխումը կատարված է հետևյալ նկատառումներով. ի տարբերություն ակադեմիական շատ հրատարակությունների, այստեղ անջատել ենք ինքնուրույն

շործերը թարգմանություններից, նկատի ունենալով հեղինակի ցանկությունը. այդպես է նա վարվել 1908 թվականի հրատարակության ժամանակ: Այնու-
հետև: Բանի որ Հովհաննիսյանը երգաշարեր չունի, ուստի բոլոր հիմնական
բաժիններում ընդգրկված են ինչպես տպագրված (հեղինակի օրոք, նրա կամ-
քով), նույնպես և անտիպ (հեղինակի մահից հետո, նրա հրատարակիչների
ընտրությամբ հրապարակված) բանաստեղծությունները, ինչպես ընդունված է
արդի ռուսական բոլոր գիտական հրատարակություններում: Հարկ կա՝ ավե-
լացնելու, որ անտիպ էջերը ո՛չ մի դեպքում չպետք է շփոթել սևագրությունների
հետ. անտիպ էջերը մնում են անտիպ նաև այն ժամանակ, երբ դրանք հրապա-
րակված են նույնիսկ մեկից ավելի անգամ: Եվ եթե այս դեպքում դրանք վե-
տեղվում են տպագրվածների շարքը, ապա, սոսկ այն պատճառով, որ տվյալ
գիտական հրատարակության նպատակն է ցույց տալ նախ և առաջ հեղինակի
գաղափարական և գեղարվեստական աճը, նրա ներքին զարգացումը:

Առանձին բաժին են կազմում Սևագրությունները և Ֆրագմենտները, այն
նկատառումով, որ սևագիր բանաստեղծությունները կարող են և շատ անգամ
տպագրված լինել, բայց դրանից չի փոխվի նրանց որակը, որ բացառապես
հեղինակի կամքի արտահայտությունն է՝ հանդիսանում: Այսպիսով, Սևագրու-
թյուններ և Ֆրագմենտներ բաժնում են կենտրոնանում բոլոր այն բանաստեղծու-
թյունները, երբևէ տպագրված թե անտիպ, որոնք թերի, երբեմն կիսատ՝ սկսած և
չվերջացրած գործեր կամ նախնական գրառումներ են, բառիս իսկական իմաս-
տով, գրական փորձեր, կամ էլ թե ամբողջապես գրի առնված լինելով հան-
դերձ՝ սպասել են իրենց հետագա գրական մշակմանը և այդպես էլ մնացել են
բանաստեղծի արխիվում: Դրանց ճնշող մեծամասնությունը կարելի էր առանձ-
նացնել և կոչել «Պատանեկական ոտանավորներ», բայց դա ինքնին հասկա-
նալի է,՝ մանավանդ՝ որ թվերը մշտապես հիշեցնում են այդ մասին: Դրանց մի
վգայի մասը (թվով 82 հատ) հրատարակվել է 1937 և հետագա թվականների
ժողովածուներում. սույն հրատարակության մեջ ընթերցողը կծանոթանա այդ
կարգի ևս 107 ոտանավորների հետ (ինքնուրույն և թարգմանական), որոնք
մինչև օրս ոչ մի տեղ չեն տպագրված և հրապարակվում են առաջին անգամ:
Այդպիսի շարք առանձնացվեց պատանեկան տարիներին գրած սյուժետային
երկերից կամ չափածո նովելներից, և որպեսզի այն չխախտի հատորների ներ-
քին կարգը, հարմար գտնվեց անվանել «Պատանեկական պոեմներ» և վետեղել
չափածո ստեղծագործություններից հետո, այն է՝ երկրորդ հատորի վերջում:

Բանի որ Սևագրությունների բաժինը ներկայացնում է այն, ինչ այլ կերպ
կոչվում է գրողի ստեղծագործական լաբորատորիա, ապա այս բաժնին ծա-
նոթանալուց առաջ ընթերցողը պետք է նորից վերհիշի բանաստեղծի կյանքի
իրոք դժվարին հանգամանքները, ողբերգական՝ ճշմարիտ պոետի համար:
Դասական կրթությամբ, բանաստեղծությունների առաջին իսկ գրքով միանգա-
մից հռչակված երիտասարդ Հովհաննիսյանը վերադառնում է ծննդավայրը՝ աշ-
խատելու և ստեղծագործելու վարդագույն երապներով: Սակայն հետամնաց
միջավայրը և ժամանակի պայմանները նպաստավոր չէին ստեղծագործական
լայն ճանապարհի դուրս գալու համար: Այստեղից էլ՝ նրան մշտապես պարու-

րած ծանր, ճնշող տրամադրությունը, նրա անվերջ ու անվերջ գանգատները անխճալ նյութականից, հավերժ պահված լինելուց, այն ամենից, ինչ փաստորեն մեռցնում է ամեն մի բանաստեղծական: Ահա՛ թե ինչու Հովհաննես Հովհաննիսյանը հասուն տարիներին անհամեմատ քիչ է ստեղծագործել: Եթե սրան ավելացնելու լինենք նաև, որ նա պատկանել է բանաստեղծների այն խմբին, որոնք իրենց մտահղացումը թղթին են հանձնում ամբողջովին ավարտելուց հետո,— հասկանալի կդառնա, թե ինչու նրա հանրահայտ գործերն անհամեմատ քիչ սևագրություններ ունեն, զրած բանաստեղծություններին նա քիչ է անդրադարձել կամ բնավ չի անդրադարձել:

Բոլոր նյութերի համար հիմք ենք ընդունել բանաստեղծի՝ իր ձեռքով հրատարակած ժողովածուներն ու երկերը, ինչպես և, իհարկե, վերջին ձեռագրերը: Կատարված է տարբեր հրատարակությունների, բանաստեղծի վերջին խմբագրությամբ տպագրված տեքստերի և ինքնագրերի կամ նրանց հեղինակային պատճենների բաղդատություն: Հեղինակից հետո հրապարակված բոլոր երկերն անխտիր տպագրվում են ինքնագրերի հիման վրա. այդպիսի դեպքերում հետագա հրատարակիչների ձեռքով կամ անփութությամբ սպրդած սխալներն ուղղվում են անշուշտ, բայց չեն նշվում: Ինքնագրերի միջոցով հնարավորին չափ վերականգնել ենք բանաստեղծությունների գրության թվականները և ճշտել եղածները: Սուր փակագծերի մեջ են առնված այն թվականները, որոնց ճշգրիտ վերականգնման համար բավականաչափ հաստատ հիմքեր չկային, այդպիսի դեպքերում ստիպված ենք եղել պահպանել երկի անդրանիկ տպագրության թվականը: Սուր փակագծերի մեջ են առնված նաև այն թվականները, որոնց ճշգրտությունն այս կամ այն պատճառով տարակույսի տեղիք է տալիս, ինչպես և այն բառերը կամ բառերի մասնիկները, որոնք ավելացվում են ծանոթագրողի կողմից. ընդհակառակը, հեղինակի ջնջած բառերը կամ բառերի մասնիկներն առնվում են ուղիղ փակագծերի մեջ: Հեղինակի աշխատանքը ցույց տալու նպատակով, նրա ավելացրած բառերը կամ տողերը տրվում են սևով: Օրինակ.

[Կյանքից] հեռու, հեռու սրլանամ

Նշանակում է՝ բանաստեղծը ջնջել է կյանքից բառը և ավելացրել հեռու բառը:

Տեքստը տպագրության պատրաստելիս հեղինակի ուղղագրությունը, հարկավ մեր նոր ուղղագրության սահմաններում, նույնպես և կետադրական առանձնահատկությունները, պահպանված են հարապատությամբ. հավվագյուտ դեպքերում միայն (սա վերաբերում է գլխավորապես արծակին և նամակներին) կետադրական աննշան ճշտումներ են կատարվում՝ հստակ ու մատչելի դարձնելու համար հեղինակի խոսքը:

Հատորներին կցված ծանոթագրություններում տրված է երկի գրության և տպագրության համառոտ պատմությունը, ինչպես և տեքստային տարբերությունները: Վերջին հատորում կտրվեն բանաստեղծի կյանքի և ստեղծագործության համառոտ տարեգրությունը, մատենագիտական տախտակ և հատորներում տեղ գտած նրա ստեղծագործությունների այբբենական ցանկը:

Բոլոր հատորների համար բիբլիոգրաֆիկ տեղեկությունները հավաքել է

ինստիտուտի աշխատակից Մ. Պողոսյանը: Նա է կազմել նաև Հ. Հովհաննիս-
յանի կյանքի և ստեղծագործությունների տարեգրությունը: Հրատարակության
պատրաստման բոլոր աշխատանքներին՝ ինչպես տեքստերը պատրաստելուն,
այնպես էլ ծանոթագրությունները կազմելուն մասնակցել է նաև ինստիտուտի
աշխատակից Մ. Մելիքյանը:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

*
* *

«Իմ հայրենիք տեսե՛լ ես, ասա»:

- Տեսե՛լ ես արդյոք այն բլուրները,
 Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,
 Կանաչում թաղված այն այգիները,
 5 Ուր իբրև գոհար խաղողն է հասնում:

Տեսե՛լ ես դաշտեր, մարգագետիններ,
 Ու բացված այնտեղ վառ շուշան, մեխակ,
 Շնորհատու արև, ոսկի նըշույլներ
 Եվ միշտ սիրաշունչ երկինք կապուտակ:

- 10 Տեսե՛լ ես ծերուկ ժայռերի միջով
 Կատղած անցնելիս դեպը փրփրած,
 Ականջ դրե՛լ ես խրոփած հոգով
 Այն աղմկալից գոռոցին ալյաց:

- Տեսե՛լ ես գյուղը հովտի մեջ մենակ
 15 Եվ շուրջը փոված շքեղ պարտեզներ,
 Եվ ոսկի հասկեր և խաղաղ վրտակ,—
 Լըսե՛լ ես քաղցրիկ արտուտի երգեր:

Եվ դու տեսե՛լ ես նորա գանձն անգին,
 Դեմքով հըրեշտակ, հասակը փարթամ

- 20 Հարավո դուստրը, հրապույրքն աչերին,
Շրթունքը ալ վարդ, ժըպիտն անթառամ...
Սիրատանջ այրված քնքուշ այտերից
Քաղե՛լ ես համբույր, որ քաղցր է մեղրից:

Հոկտեմբերի 17

2

* * *

Առաւիտոս անցաւ: Առաջ եմ նայում—
Պարզ է հորիզոն, և արեւն ոսկի
Ինձ յուր անուշիկ ժըպիտն է նվիրում,
Եւ ողջ բընությունն այնպէս գեղանի...

- 5 Ականջ եմ դընում—մի ձայն անմեկին
Խոսում է ինձ հետ, բաղդըս գուշակում,
Եւ իմ առաջն բընության գաշտնին
Կարծես թե բընաւ բացվում, մերկանում:

- 10 Ահա՛ տեսնում եմ իմ կյանքի պատեր
Այնպէս սրտառուչ գունով նըկարած—
Սեր, վայելչություն, դրախտի երազներ,
Կյանք շընաշխարհիկ ահա իմ դիմաց:

- Բայց, ճակատագի՛ր, դու ինձ չե՞ս խաբում,
Զէ՞ք քո ցույց տվածն ոսկեզօծ դիմակ.
15 Աւա՛ղ, ցնդում է իմ հույսը օդում,—
Կեսօրվան արդեն մոտ է ժամանակ...

Նոյեմբերի 22

3

* * *

Շտապի՛ր, պատանի՛, տալ վայելչության,
 Կյանքի ծիծաղկոտ ոսկի օրերին
 Հարկ լիաձեռն, քանի անսասան,
 Մախիչ ժամանակ քո բաց ճակատին
 5 Ձեռքն չէ մըխել ակոս ձրգելու,
 Քանի ժպտում է քեզ դեմքն լարևու,
 Քանի հաշտ աչքով քո երջանկության
 Նայում է երկինք ծաղկավառ դարնան...

Կանցնեն շուտ տարիք, և դու կրփոխվիս.
 10 Ձրկա եռանդըդ պատանեկության,
 Եվ նախկին կրքեր ալիքս չունիս,
 Եվ չէ տըրոփում բոցով սրբազան
 Քո մաշված սիրտը. աչերըդ մարած
 Չէ վառում հուրը մանուկ արտասվաց,
 15 Եվ միայն վերջին փոթորկից առաջ
 Լսվում է ջարդված կրծքիդ թո՛ւյլ հառաչ:

Փետրվարի 27

- Նայում եմ առաջ—երկու ճանապարհ
 Բաց է իմ դիմաց. մեկը տանում է
 Շրջեղ, բաղդավոր, նվիրական աշխարհ
 Քնքուշ զգացմունքի, ուր միշտ ծաղկում է
- 5 Գարունը սիրո երկնքից օրհնած:
 Այնտեղ անթառամ վարդի պըսակներ,
 Երջանիկ օրեր սիրով զարդարված
 Եվ վայելչության անձկալի ժամեր
 Աշխատավորի վաստակած գլխին
- 10 Պիտի սպարզեհն հանգիստ խնդագին:

- Մյուսն անապատ ինձ դուրս է հանում,
 Որ կարոտում է մըշակող բազկի:
 Այստեղ պերճափառ վարդ չէ բուսանում,—
 Միայն տատասկը և փուշը վայրի.
- 15 Եվ լկանքը մեռած և օդը խեղդող,
 Սրտացավ խընամք, եթե այդ լիներ,
 Միշտ երախտամոռ հոգուց ոտնակոխ.
 Ձէ ժպտում արեւ, սեւթույր ամպեր
 Գոռ փոթորիկ են երկրին գուշակում:—
- 20 Եվ ես կանգնած եմ և խոր մըտածում;
 Ո՞ւր իմ անհաստատ քայլերըս ուղղեմ,
 Արդյոք երկուսից ես ո՞րը ընտրեմ:

- Այնտե՛ղ ըզգում եմ, փարթամ, երջանիկ
Գըլորվելու են իմ կյանքի օրեր.
- 25 Աչագեղ -կրկսը հայացք չքնադիկ
Պարզեում է ինձ, և սրբանշվեր
Նոճիների տակ պիտ գըլուխս հանգչի
Նորա մարմարիոն կուրծքին նաղելի,
Եվ պիտի գըտնեմ այն վառ աչերում
- 30 Եվ դրախտավայել մի վայելչություն...

- Այստե՛ղ ախանջըս փայփայելու չէ
Կանաչ պուրակում թռչնոց մեղեդին,
Ոչ պիտի տեսնեմ սըփոռոց թավիշե
Ես անուշաբույր ծաղկոտ մարգերին:
- 35 Ո՛չ. արյուն-արցունք, լրբյալ հառաչանք,
Անտեր ամբոխի անվերջ տառապանք,
Արդար քրտինքով մըշակած գետին
Ավարի մատնած—ահա՛ իմ բաժին:

- Բայց այնտե՛ղ կյանքը չունի նըպատակ
40 Բացի անձնական բարօրությունից,
Իսկ այստե՛ղ գործի ասպարեղ արձակ,
Ազնիվ և վըսեմ, թեև փըշալից:—
Եվ ես կանգնած եմ և խոր մղտածում...
Կյա՛նք, ինձ երկուսից ո՞րն ես պատրաստում:


Մարտի 1

Զինջ երկնքից ոսկի արև
Տալիս է մեզ սիրո բարև—
Ուրախություն աշուհետև.
«Քրիստոս հարյա՛վ ի մեռելոց»:

5 Խոխոջում է լճիտ առվակ,
Զրում հովիտ, դաշտ, արտորայք,
Ավետելով նոր հույս, նոր կյանք.
«Քրիստոս հարյա՛վ ի մեռելոց»:

10 Եվ պարտիզում կանաչադարդ
Թռչնակները կայտառ զվարթ
Ճովողում են քաղցր երգով.
«Քրիստոս հարյա՛վ ի մեռելոց»:

Ապրիլի 4



A^{II}
36648

- Միենույն վիշտը մեզ միացըրեց,
 Երկու վիրավոր սրտեր մոտեցան.
 Անմեկի'ն ընկեր, հոգիս վկայեց—
 Դու իմ հրեշտակն ես մխիթարության:
- 5 Տեսե՛լ ես, քուրի՛կ, երբ գլու փոթորիկ
 Փչում ահագին և մատաղ թփեր
 Խիստ տատանում է, նոքա իրար դիրկ
 Դիմում են սիրով, ասես, այդ լինեի
 Փրկության անքույթ մի պատսպարան...
- 10 Բայց հողմը ուժգին բաղխում է նոցա,
 Եվ ահա՛ կրկին իրարից բաժան
 Իբանց չար բաղդը ողբում են նոքա:
 Ո՞վ դիտե, գուցե խիստ ճակատագիր
 Եվ մեզ անջատե մի օր հավիտյան,
- 15 Եվ դու, սիրելի՛, արդյոք տարադիր
 Եղբորդ չե՞ս տալ դու մոռացության.
 Կըհիշե՞ս արդյոք միասին թափած
 Մեր արտասուքը, իզուր հառաչանք,
 Եվ դարձյալ կզգա՞ս քեզ համար միշտ բաց
- 20 Մի լքյալ սրտի անվերջ տառապանք...

Սեպտեմբերի 3

Որպես հաղթանդամ մի ծերուկ հսկա,
Կախված է ժայռը ջրերի վրա.
Ալիքը կայտառ գնում են, գալիս
Եվ ժայռին սիրո համբույր են տալիս:

5 Խաղում են անհոգ ալիքը գետի,
Ցուցնում են գրկած պատկերն արևի,
Եվ, որպես մանուկ ժպիտն երեսին,
Մեղմիկ շշուռճով խոսում են ժայռին.

10 «Լսի՛ր, ծերունի՛, ինչո՞ւ ճակատիդ
Սև կնճիռները չեն տալիս դեմքիդ՝
Մի օր խնդության շողով ցլանալ—
Ողջը փոխվում է, դու նույնն ես դարձյալ:

Ազատ լեռների ազատ զավակներ,
Մենք քեզ բերել ենք անթիվ գոհարներ.
15 Երկնքի դստեր-վարդի լեռնասուն
Կըցողենք կուրծքիդ անուշհոտություն:

Մենք երանավետ քնքուշ նվագով
Կըկոչենք խորքից ձկներն երամով
Եվ ոսկեղօծված գարնան արևից
20 Քեզ մեր զվարթ պարին կանենք խնդակից,

Եվ քո ականջին միշտ սիրո երգեր
Մենք արշալուսից կասենք մինչ աստղեր,
Եվ քեզ կըփարենք և քո ծեր կուրծքին
Մենք հանգչել կըտանք մեր քաղցրը կրքին...»

- 25 Ալիքը կայտառ գնում են, գալիս,
Սև ժայռը նախկին յուր վիշտն է լալիս...
Խաղում են ալիք, ուրախ կարկաչում—
Նա կրկին անշալժ, նա կրկին տրտում...

Սեպտեմբերի 5

Որպես վաղեմի մի ավանդություն
Կամ շքեղ երազ անմեղ մանկության,
Կենդանանում է այսօր իմ մտքում
Խրոխտ ավերակն նախնյաց մեծության.

- 5 Այստեղ բեկորներ վսեմ արվեստի,
Այնտեղ հիշատակն արքունի փառաց,
Եվ վկայարան սրբազան ուխտի,
Եվ տխուր հետքը մեծաշուք կենաց...

- Ո՛հ, այսպես ողջ մեր կյանքն է վաղանցիկ,
10 Ողջը լուկ ծաղր է անսիրտ բնության,
Եվ սեր, և հրճվանք, համայն գեղեցիկ
Զոհ է ավերի և մոռացության:
Ինչպես պատրանքը հեշտասիրության,
Ինչպես գրգիռը պատանու արյան,
15 Խաբուսիկ ժպիտն աշնան արևու,—
Բոլո՛րը վաղն է անհետանալու:

Սեպտեմբերի 17

Ախ, տվե՛ք ինձ քաղցր մի բուն,
 Կյանքից հեռո՛ւ սըլանամ
 Այն աշխարհը, ուր խնդու՞թյուն,
 Ուր սերն է միշտ անթառամ:

- 5 քնքուշ վարդերն ինձ բարձ լինին,
 Վառ կանաչից իմ վերմակ,
 Նոցա՝ բույրը զըվարթագին
 Ծծեմ անվերջ ես անհագ:

- 10 Եվ խայտալուվ իմ առաջին
 Վտախն անուշ խոխոջե,
 Մի թարմություն եղեմային
 Զորս բոլորքս տարածե:

- 15 Եվ ինձ ժպտի արշալուսին
 Գարնան մատաղ արեգակ,
 Եվ գիշերով իմ ճակատին
 Խաղա գողտրիկ վառ լուսնակ:

- 20 Եվ աչագեղ կույսն ականջիս
 Յուր մեղեդին մեղմ հնչե,
 Եվ հերարձակ՝ սիրով վըզիս
 Փարե քնքուշ, փաղաքշե...

Եվ հավիտյան վայելչություն
Գրկե հոգիս, շահեկանամ...
Ա՛խ, տվե՛ք ինձ քաղցըր մի քուն,
Հեռո՛ւ, հեռո՛ւ սըլանամ:

Սեպտեմբերի 18

10 ՀԱԿՈՒ Ա. Բ. ՍՈՒՐԵՆՅԱՆՅԻ

նիշատակին

Մեռա՛վ, ասում ենք ամենայն անգամ,
Տալով հրաժեշտի ողջունը մեկին,
Մեռա՛վ, և ահա՛ օրհասին խիստ ժամ
Մեկին էլ հանձնեց հավիտյան երկրին...

- 5 Անցնում են, կանցնեն օրեր, տարիներ,—
Եվ մենք բոլորըս բաժին ենք հողի,
Եվ մեզնից միայն պիտ մընա ավեր
Ազնիվ կրքերի, ոսկե հույսերի:

- 10 Թե նեղ շիրիմն է մեր վերջին կայան—
Ինչո՞ւ են արցունք, ինչո՞ւ հառաչանք.
Ինչպես ծուխն օդում, երազ մանկության,
Պիտ անցնի ունայն երկրային մեր կյանք:

- 15 Բայց նա, որի մեջ ցոլում էր վառված
Կայծը փրկչական ոգեշունչ խոսքի,
Նա, որի սիրտը միշտ սիրով լցված,
Անձն հասարակաց տված էր օգտի,

- Որ անկեղծ հոգով հայր կարոտյալին
Հանդիսացած էր և հովիվ արթուն—
Նա չէ մեռնելու մարդկան շրթունքին
20 Միշտ պիտի մընա նորա քաղցր անուն:

Թող հանգչի գլուխն աշխատավորի
Կյանքի հոգսերից մայր երկրի կրծքում,
Որ վեհ խորհրդի, ազնիվ մտքերի
Տվել էր նորան ընդունակություն:

- 25 Եվ թող բնություն շքեղ պճնված
Ամենայն գարուն, զերթ շքնաղ մանուկ,
Իբրև երգ սիրո հնչե լայնտարած
Անխոնջ մշակին անուն մեծաշուք:

11 ԶԻՆՎՈՐԻ ՄԱՀԸ

- Ես մեռանում եմ, ո՛վ մայր հայրենիք,
 Կարմիր արյունով անվեհեր կուրծքիս
 Ներկելով սուրբ հողդ, և թող բո սրգիք
 Զողբան իմ մահը, երբ քաջ զինվորիս
 5 Թափած արյան տեղ պիտի բուսանին
 Ո՛չ փուշ ու տատապի, այլ կարմիր վարդեր,
 Եվ այդ վարդերից փնջեր պիտ հյուսվին
 Պսակելու զոհված ազնիվ զբլուխներ:
- Եվ թող ես գրկած կուրծքը մայրենի,
 10 Քո ազատ կուրծքը, սիրո՞ւն հայրենիք,
 Քրնանամ մինչև ականջիս հասնի
 Քո ազատության անուշ ավետիք.
 Ես այն ժամանակ կելնեմ և պայծառ
 Արևըդ տեսած՝ իմ բաղդը կօրհնեմ,
 15 Որ, ի՛մ հայրենիք, միայն քեզ համար,
 Քեզ համար միայն կյանքըս զոհել եմ...

Նոյեմբերի 18

Ի զուր է, հոգի՛ս, ի զուր, իմ հրեշտա՛կ,
Այդ գգվանքներդ, անուշ ժպիտներ.
Դու չես վառելու սրտիս մեջ կրակ,
Նորից կյանք չեն տալ ինձ քո համբույրներ:

- 5 ինչպես որ աշնան արևը աղոտ
Ձէր սթափեցնելու մեռնող տերևներ,
Ինչպես արհեստը ծաղկանցը անհոտ
Կորուսած բույրը էլ հետ տալու չէր,

- Նույնպես քո սերը նորից բորբոքված՝
10 իմ մարած հոգուն հարություն չի տա.
Քեզ համար, հոգյա՛կ, իմ սիրտը մաշված
Այլ երս շունի նույն սերն, հավատա՛:

- Բայց իբրև ցնորք քեզ միշտ պիտ սիրեմ,
Մի քաղցր ցնորք ոսկի մանկության,
15 իբրև կորուսած վաղանցիկ եղեմ,
Մի վառ շող անկեղծ ոգևորության:

Նոյեմբերի 22

Անաստատու՛մը երերուն կյանքի,
 Անմիտ ցնորքով մաշված սրտերին
 Խավարի մեջը հոռուն կրքերի
 Միակ սփռփանքն ես դու, կա՛յծ երկնային.

- 5 Դու անդի՛ն գոհար, սե՛ր, դանձ մարդկության,
 Դու ես որ միայն չարատանջ հոգուն
 Բերում ես քաղցրը հույս երջանկության
 Եվ կյանքը սիրել տալիս ես մարդուն:

- 10 Քանի՜ տանջվելով ծանր բեռի տակ,
 Ճնշված պիտույքիցն առօրեական,
 Դարձնում եմ աչքըս այն ջինջ, կապուտակ
 Երկնքի վերա անցած մանկության,

- Երբ նույնպես էին իմ օրերն անցնում
 Անհոգ խաղերով, քաղցրիկ երգերով,
 15 Ինչպես վըտակը դալար ափերում
 Սահում է մեղմիկ կարկաջ հանելով:

- Այդ քո սլատկերն է, սե՛ր աստվածային.
 Դու իբրեւ մի շող կենդանի լուսով
 Միշտ բորբոքում ես սիրտը մարդկային
 20 Ասլրել անվհատ անվախճան հուսով...

Նոյեմբերի 24

14 ՆՎԵՐ ՕՐ. ՄԱՐԻԱՄ Զ<ԱՆՈՒՄՅԱՆ>ԻՆ

Ես զբոսնում եմ բերկրամիտ
Կանաչազգեստ պարտիզում,
Մանիշակը յուր ժըպիտ
Իմ աչքին է պարգևում:

- 5 Սիրո՛ւն մանուկ, քո աչեր
Վառ են ինչպես այդ ծաղիկ,
Եվ սիրելի քո պատկեր
Նույնպես մատաղ, գեղեցիկ:

- Քո ժըպիտն էլ անմեղ է,
10 Ինչպես չքնաղ մանիշակ.
Մանո՛ւկ քաղցրիկ, ինձ սիրե՛ —
Մընա՛ այդպես միշտ հստակ:

Դեկտեմբերի 13

Տխուր նստած եմ սենեկում փակված
 Եվ հազար մի վիշտ սիրտըս են նեղում...
 Դուրսը մութն է, ցուրտ. քամին կատաղած
 Իմ լուսամուտը ծեծում է, ծեծում:

- 5 Չարատա՛նջ պանդուխտ, քամի՛ դու ձմրան,
 Ի՞նչ ես կամենում. ինչո՞ւ անհանգիստ
 Պտտեցնում ես տարափները ձյան.
 Ի՞նչ ես դու երգում. այդ սե՛ր է թե վիշտ:

- 10 Թե թեւավորված, իբրեւ փրկության
 Լուսավոր ոգի, բերում ես դու լուր
 Սիրուն հայրենյաց քաղցր աղատության,
 Թե՞ ստրուկ հայի հառաչանք տխուր:

- Արդյոք փախե՞լ ես, իբրեւ խորթ զավակ
 Չարչարված անմիտ հալածանքներից,
 15 Թե՞ չէ՞ ձանձրացած դու կյանքից դատարկ
 Վաղում ես կորած բաղդի հետևից:

- Թե փաղաքշե՞լ ես նազելի շնչով
 Դու շուշանագեղ կուրծքն օրիորդի,
 Կամ թե շփե՞լ ես կոշտացած ձեռով
 20 Խոր կնճիռները անբաղդ ծերուկի...

Արդյոք եկա՞ծ ես դու այն աշխարհից,
Ուր փարթամ ծաղկած մշտական գարուն,
Ուր ջինջ կապույտը միշտ պայծառ երկնից
Վառ ցոլանում է առվում պաղպաղուն....

- 25 Հայրենի երկրից ես, իբրև գոթկան,
Թռչում եմ սփռել հայրենի ցավեր.
Թող բոլոր աշխարհն հայի գերության
Տեսնե դարձվոր անլույծ կապանքներ:

- 30 Ես արյունաներկ լայն հովիտներից
Նվեր եմ բերում ո՛չ փնջեր վարդի,
Այլ ահեղ պրսակ, պրսակ փռշալից
Որ զարգարում է ճակատը հայի:

- 35 Ես սլանում եմ շորցած դաշտերից,
Ուր հին ավերակ նոր ավերակին
Միշտ տեղ է տալիս, բոլոր կրճերից
Լոկ հառաչանք է թռչում դառնագին.

- 40 Ուր չըկա անդուսպ կրքերին սահման,
Ուր օր ու գիշեր խիստ դատավճռին
Սպասում են անթիվ զոհեր բռնության,
Ուր չըկա ժըպիտ մեկի երեսին:

Այնտեղ թռչնում է վարդը կոկոնում,
Զրտեսած շողը ոսկի արևու...
Եվ արդյոք ե՞րբ է՞ այն թշվառ երկրում
Փրկության գարունն նորից ծաղկելու....

Դեկտեմբերի 13

Խ <աչատուր> Ա <բովյանի> ճիշատակին

- Այս դառն օրերում, երբ ահն ու կասկած,
 Իբր երկնաքար, հանդերձ կապարի,
 Պատել խեղդել է միտքն հասարակաց,
 Երբ կոպիտ ձեռքը անլույս խավարի
- 5 Եվ խարազանը անդուստ բռնության
 Միայն բերում է հուսահատություն,
 Մինչև երկյուղով ստվերը սեպհական
 Ընդունել վրիժու մարմնավորություն,
- Երբ որ սեաղեմ եսապաշտ հողին
- 10 Համառ, անմատույց մի ազնիվ զգացման,
 Իբրև ապառաժ ցցված ծովափին,
 Որ ալիքների սիրո բերկրության
 Միշտ նույն անտարբեր կուրծքն է ցույց տալիս,
 Երբ տգիտության թևերն արձակած
- 15 Նոր նոր զոհերով լուռ ման է գալիս
 Մեր երկրին և՛ տեր և՛ իշխան դարձած,—
- Հիշենք այն ազնիվ հայրենասերին,
 Որ հայի վերքը և՛ գերեզմանում
 Գուցե ողբում է նույնպես սրտագին,
- 20 Ինչպես երբեմն անդին տողերում,
 Որ ինչպես վառված վայր ընկնող աստղիկ

Մեր մութ երկնքում ցուաց մի վայրկյան,
Որ ինչպե՞ս կայծակ, ահեղ փոթորիկ,
Ցնցեց խոր քունը հայի թմրության:

- 25 Բոցավառ սիրով դեռ մանուկ այրված,—
Այդպես սիրելու մենք չենք ընդունակ,—
Անհուն ցավիցը դառնությամբ լցված,
Նա առավ քնարն և իբրև վտակ
Առատ հոսանքով ձայներն հնչեցին.
- 30 Այնտեղ քնքուշ սեր և ատելություն,
Եվ ողբ դառնակոծ հայրենասիրին,
Եվ քաղցր երազով քաջալերություն...

- Մենք, որ անհանճար, անսիրտ, եսական,
Էլ չենք կարմրում այրող ամոթից,
- 35 Մենք, որ դիմակը փարիսեական
Չըկամինք առնել մեր սև երեսից,
Գոնե ունենանք այնքան արություն,
Որ քրտնավաստակ մեր մշակներին
Աննախանձ հիշենք սրբազան անուն,—
- 40 «Օրհնյա՛լ հիշատակ աշխատավորին»:

Դեկտեմբերի 14

Այս օրերումը բնդհանուր սուգի,
Ջարդված սրտերի, դառն հառաչանաց,
Երբ մենք միշտ բլատրաստ մի ծանր կուլի,
Վատնում ենք ուշժեր դեռ չըկաղղուրված,

- 5 Եվ այս կուլի մեջ ահեղ, սոսկալի,
Ուր ուր զրկվածը նենգավոր բաղդից
Անհետանում է, որպես մի ճրճի,
Հաղթված ոսկեղօծ երկաթի բաղդից,

- 10 Ուր միայն մեկի ծառն երջանկության
Բուսնում է տասի ավերակներից,
Ուր մի ժպիտը ծաղկում է միայն
Հարյուրավորի աղի արցունքից,—

- Ես դեռ անվըհատ շարունակում եմ
Իմ ճանապարհը, դեռ հավատալով,
15 Թե գուցե մի օր և ես գտնում եմ
Այն, ինչ չըկամի բաղդը տալ սիրով:

- Բայց եթե և ես տանջված, չարչարված,
Գըլուխ խոնարհեմ իմ ճակատագրին,
Խորտակված հուսով, արյունս սառած,
20 Իբր աշնան տերև քամու առաջին,

Բնկեր սիրելի՛, դու չըմոռանաս
Հիշել անունը մատաղհաս երգչի,
Որ գիտեր տանջվիլ, սիրել հանապազ,
Գուցե՞ երջանիկ օրվան արժանի...

Գեկտեմբերի 19

Դարձյալ նոր տարի. թող ուրախանան,
Բաղդավոր կյանքով վերածընդության,
Ում ճակատագիրն այդ վիճակել է,
Ու միշտ հուսացել և ըսպասել է:

- 5 Բայց ինձ ի՞նչ պիտի բերե նոր տարին,
Ո՛չ արդյոք նոր ցավ իմ տանջված սրտին...
Ա՛խ, ոսկի շողը մի նոր զգացմունքի
Ինձ մի նոր վշտի աղբյուր պիտ լինի:

- 2 քնա՛ղ արարած, որ մի հայացքով
10 Անմեղ մանկության, մի անուշ ժպտով,
Կարող ես կյանք տալ լուծ քնարին
Եվ ոգևորել քուն մտած հոգին,
Ես հասկանում եմ, որ չեմ աթժանի
Վայելել սերը քո քնքուշ սրտի.
15 Անմիտ խոսքերով ես չեմ կամենում
Խոռովել հանգիստդ այդ քաղցր հասակում:

- Ո՛չ, քեզ սիրելով, քո վառ պատկերին.
Երկրպագության դարձնում եմ բազին
Իմ մաշված սիրտը և ակնածությամբ,
20 Անկեղծ արցունքով և անհուն զգացմամբ,
Միշտ պիտ աղոթեմ, տանջվիմ և սիրեմ,
Սերըս աշխարհից ծածուկ պիտ պահեմ.
Եվ լուկ մի խոսքդ բարեկամության
Ինձ երջանկություն պիտ տա անսահման:

Աննման ես ինչպես հրեշտակ երկնային,
 Զեմ կշտանում նայելով քո եղեսին.
 Վառ աչերըդ, ինչպես արև գարնային
 Ա՛խ, սիրական՛ն, բորբոքում են իմ հոգին:

- 5 Իրավունք տուր՝ ծծեմ մեղրը շրթունքիդ,
 Քաղեմ կարմիր այդ վարդերը թշերիդ.
 Ով ուր առնի հոտը շամամ ծծերիդ,
 Էլ կարո՞ղ է թե մի գին տա յուր կյանքին:

- 10 Թե աստված ինձ պիտի մահ տա, թող մոտ գամ,
 Վզովդ ընկնեմ, քեզ համբուրեմ մի անգամ.
 Թող ապրշում մազերովդ ինձ կախ տամ—
 Բընավ մի կյանք էլ չի հասնի այդ մահին:

Հունվարի 14

Տըխուր երգիչը քնարը ձեռին
 Ողբում էր անբաղդ յուր ճակատագիր,
 Քնքուշ ձայները խորտակված սրտին
 Չունեին տալու մի խոսք կարեկիր:

- 5 Դառնացած հոգով նա խորասուզված
 Անցած օրերում, ուղում էր այնտեղ
 Գտնեի այն հանգիստ, որ երգչին տանջված
 Տալ չէր կամենում աշխարհը տգեղ:

- Բայց և ա՛յն դատարկ որպես անապատ,
 10 Հիշողություններ անցած մանկության,—
 Կուսի ջերմ սիրտը գլխին հուսահատ
 Միայն պարզեց հանգիստ փրկության...

- Ո՛հ, թույլ տո՛ւր և ինձ, ընկե՛ր նազելի,
 Այս քաղցր օրին ցանկալ որ, պատած
 15 Անկեղծ սիրովը մատաղ քերթողի,
 Ծաղկիս դու չքնաղ, իբրև վաղդ փթթած.

- Եվ քո անարատ ըզգայուն հոգին
 Լինի ինձ աղբյուր վառ երջանկության,
 Քո անբիծ սերը կյանքիս խավարին
 20 Ծագե արշալույս նոր բաղդի դարնան:

21 ԻՆՁ ՄԻ ՍԻՐԻՐ

Ինձ մի՛ սիրիր. անբաղդ օրիս
Այդ սերն ինձ չէ խնդություն.
Դաժան վշտից խեղդված հոգիս
Էլ չի առնի հարություն:

- 5 Ծածուկ կիրքը ինձ պիտ տանջե,
Ես չըկամիմ քեզ սիրել,
Բայց իմ սիրտը միշտ պիտ խնդրե
Քնքուշ սրտիդ մոտ լինել...

- 10 Եվ պատրաստ եմ քեզ հավիճյան
Լինել անկեղծ կարեկից,
Եվ թող բեռը քո տխրության
Չըհեռանա իմ սրտից:

- Ինձ մի՛ սիրիր... թող ախտավոր,
Մաշող սիրո փոխարեն
15 Մտերմություն մեզ բաղդավոր
Կապե կապով բոցեղեն:

Հունվարի 25

- Երանի նորան, որ տեր է ազատ
 Յուր զգացմունքներին,— սիրել և ատել,
 Որին բռնություն չի տալ հուսահատ
 Բաղդիցը զզված յուր կյանքն անիծել.
 5 Որ երկնից հետ հաշտ, ներդաշնակ հոգով,
 Չէ դարձել գերի անթիվ կոթերին,
 Կարող է սերը ողջունել թպտով
 Եվ նախատելով մերժել անգութին:

- Երանի նորան, որ շընորհք ունի
 10 Սիրել անձնվեր և անկեղծ սրտով
 Սրբել քրտինքը վաստակավորի
 Եվ տառապյալին խընամել փութով.
 Եվ երկրպագու Փրկչի սուրբ խոսքին
 Անտրտունջ բաշխե յուր ձեռի լուման,
 15 Եվ կարեկցաբար արհամարհվածին
 Բաց անե դուռը մըխիթարության...

Հունվարի 27

Զգում եմ արդեն, հանգչում է հոգիս,
 էլ չկա բոցը ոգևորության.
 Զուր է քո խրախույս, զուր է, սիրելի՛ս,
 էլ ինձ չի ծագի արևը գարնան:

5 էլ աղմկալից կյանքը աշխարհի
 Եվ ոչ սերն անուշ յուր երազներով
 Այն հըրապույրը շունին վաղեմի,
 Այն քաղցրությունը և այն մեղմ գորով...

10 Վառվռուն կյանքից ես դեռ չըքաղած
 Եվ ոչ մի ծաղիկ, արդեն ուժասպառ
 Ընկած եմ որպես մի ծերուկ մաշված,
 Եվ վայելչությունն արդեն ինձ օտար...

Փետրվարի 17

Անցան դարեր—ստրկության
Ոգին տիրեց հայերին.
Էլ չէ սիրում հայրենական
Յուր օջախը հայորդին:

- 5 Մոռացել է նա յուր նախնիք,
Զուգե նոցա նմանիլ,
Անշքացած խեղճ հայրենիք
Անցած փառքը չի տեսնիլ:

- 10 Խավարել է հայ աշխարհի
Արեգակը ու հանճար,
Էլ չի ցոլա նորա բաղդի
Նախկին աստղը լուսավառ:

- Ավա՛ղ, ի՛նչպես դու ողբացիր
Հայրենիքիդ այս անկումն,
15 Ո՛վ լեհ հոգի, արդյոք զգացի՞ր
Նոր հարվածներ քո շիրմում...

- Բայց տես՝ հնչեց փողն հարության.
«Արի՛ք արտաքս» — լսվեցավ,
Եվ ամեն տեղ կենդանության
20 Քարոզն է — «Քրիստոս հարյա՛վ»:

Ահա՛ բոլոր անկյալները
Նորից ոտքի կանգնեցան—
Եվ լսվում են սաղմոսները
Աստվածորդու մեծության:

- 25 Եվ զարթեցավ մի նոր կյանքով
Նախնյաց ոգին դադաղից,
Մի նոր բարբառ սիրագործով
Թրուով նորա բերանից—

- «Ժամանակ է, ժամանակ է,
30 Ծագեց արև, զարթեցե՛ք.
Քրիստոս հարյա՛վ, վաղուց լույս է—
Շուտ շաժվեցե՛ք, վեր կացեք»...

- Գեղեցիկ օրեր, ծաղկավա՛ռ օրեր,
 Իմ ցնորամիտ պատանեկության,
 Գիտեմ, որ շուտով չարագույժ ամպեր
 Կըպատեն երկինքն իմ սիրուն դարնան.
- 5 Գիտեմ, որ արեն, որ հիմա պայծառ
 Ծիծաղում է ինձ, պատիր հույսերով
 Լոկ խոստանում է իմ կյանքի համար
 Ծաղիկ բուսցընել ոսկե շողերով:
- 10 Եվ այն բոլորը, ինչ ինքնահավան
 Ստեղծում է միտքըս վառված բորբոքված,
 Զբքանալու է շուտ ծովսի նրման.
 Եվ այն պատկերը սիրած փայփայած,
 Որ մխիթարն է ամայի կյանքիս,
 Գիտեմ պիտ ցնդի, ինչպես մի երազ
- 15 Հուզված ուղեղի, որ ցույց է տալիս
 Երբեմն անբաղդին մի վիճակ անհաս:
- Բայց դարձյալ քա՛ղցր եք, գեղեցի՛կ օրեր,
 Ընտանի՛ սրտիս... Ո՞վ գիտե հետո
 Իմ տանջված հոգին ի՛նչ նոր նոր ցավեր
- 20 Դեռ պիտի տեսնե. ծաղիկը սիրո,
 Որ հիմա թռչնած մի հիվանդ ժպտով
 Դեռ նայում է ինձ, արդյոք բընավին
 Պիտի չըմենի՞... գուցե և շուտով
 Կուռ փոթորիկը ճայթի իմ գլխին...

- 25 Լուղորդի նըման ես ծովն եմ ընկնում—
Արդյոք մյուս ափն ինձ պիտի հանե՞ն
Գոռ ալիքները... զինվորը կռվում
Գիտե՞ իրանցից ո՛րք պիտի ապրեն...
Գոնե դեռ շքեղ երազներ հիմա
- 30 Ազնիվ վայելքի բերում են ժամեր.
Ա՛խ, օրհնյա՛լ լինիք, ձեզ չեմ մոռանա,
Գեղեցի՛կ օրեր, ծաղկավա՛ռ օրեր:

Տա՛ն-դո, տա՛ն-դո... Նազլո՛ւ, վեր կա՛ց,
Արևն արդեն մայր է մտնում.

Տե՛ս, հաթունն էլ գործը պրծած՝
Փողոցումն է, ժամ է շտապում:

Ժամը տվին — տա՛ն-դո, տա՛ն-դո,
Տե՛ր, փառքըդ շա՛տ, տա՛ն-դո, տա՛ն-դո...

Շուտով նախիրն հանդից կըգա.

Գընանք, որ շուտ էլի ետ գանք,
Կովը կթենք, թը՛ռ-թը՛ռ կաթ տա,
10 Կովը կթենք, մեր ցավն հոգանք...

Ա՛խ, Նազլո՛ւ ջան, չես իմանում —
էգուց էլի աղան կըգա,
Նորա սիրտը միշտ անկշտում,
էլ ամպի պես պիտի գոռա.

15 «Շուտով, Գրիգոր՝, փողերը բե՛ր... —
էլի չկա՞. կովըդ հանի՛ր»...
Ա՛խ, Նազլո՛ւ ջան, այն ի՛նչ բան էր,
Մի՛տդ է հերու... Տե՛ր, դու փրկի՛ր:

Հայրիկդ արդեն գընացել է
20 Որ փող ճարի. ե՞րբ պիտի գա,
Տեսնենք մեկը խղճացե՛լ է...
Ա՛խ, սև օրը տերն էլ չըտա:

Շուտով, Նազլո՛ւ, գընանք ժամը,
Աղոթք անենք. քո ձայնն աստված
25 Շուտ կըլըսի. այս անգամը
Մեզ չի թողնի անկով, անհաց...

Բարի մարդիկ միշտ կլինին,
Հայրիկդ հետը փող կըբերե.
Փողը կըտանք չար աղային
30 Որ մեր բիծոն էլ չըխըլե...

Տա՛ն-դո, տա՛ն-դո... Նազլո՛ւ, գնանք.
Արեն արդեն մայր է մտնում,
էգուց տեսնենք, որ վեր կենանք,
Ի՞նչ նոր արե է մեզ ծագում...
35 ժամը տվին—տա՛ն-դո, տա՛ն-դո.
Տե՛ր, փառքըդ շա՛տ. տա՛ն-դո, տա՛ն-դո:

Մարտի 16

Գիշերն անցավ. առավոտյան
 Սեգը փովեց դաշտի վերա,
 Շուտով արտուտն յուր վաղորդյան
 Ավետիքը պիտի տա.

5 Արշալույսը բացվեցավ,
 Քընաժ երկիրն արթնացավ:

Դեռ նիրհում են դաշտ ու անտառ,
 Բայց զեփյուռը արտերին
 Գուրգուրալով երգ սիրավառ

10 Շշնջում է մեղմագին.

Արշալույսը բացվեցավ,
 Համ—արարած արթնացավ:

Գիշերն անցավ. զարթի՛ր, զարթի՛ր,
 Դու իմ քնկոտ հայրենիք,

15 Զարթի՛ր շուտով, ոտքի կանգնի՛ր—
 Բացվում է օր երջանիկ.

Արևն արդեն աշխարհին
 Բերում է սերն արարչին:

Մարտի 18

Ես քեզ սիրում եմ, սուրբ գեղեցկության
 Անարա՛տ հրեշտակ, տիպար մաքրության.
 Սիրում եմ ոչ վառ աչերիդ համար,
 Ուր ցոլանում է քո հոգին պայծառ,
 5 Ոչ վարդ այտերիդ, նաղուր շրթունքիդ,
 Ուր ծաղկում է քաղցր երկնային ժպիտ...

Այդ անմեղդությունն, այդ անբիծ հոգին,
 Օտար աշխարհի տգեղ ախտերին,
 Այդ սիրող սիրտը, ջերմ սիրտն անխարդախ,
 10 Այդ վառ հավատը մանկության խաղաղ—
 Ահա թե ի՛նչը, մանո՛ւկ պաշտելի,
 Ես անկեղծ սրտով քեզնում սիրեցի:

Եվ սեղան կանգնած երկրպագության,
 Հալվե՛ս ու զմուռս, կնդրուկ սրբազան
 15 Քեզ պիտի ձոնեմ, թե սերն իմ սրտի
 Քեզ պես զիցուհուն չէ՛ զոհ արժանի:

Մարտի 20

Քանի՜, քանի՜ կամեցել եմ
 Հանգիստ գտնել կյանքիս մեջ,
 Եվ միշտ սիրտըս բորբոքել եմ
 Երազներով ես անվերջ:

- 5 Ինձ աշխարհը չըկամի տալ
 Անդորրությունն իմ խնդրած,
 Դատարկ հուսով չուզեմ մընալ
 Սիրտըս մաշված, խորտակված:

- Եվ չեմ խնդրում անկարելին —
 10 Մի սիրտ, մի սիրտ ըզգայուն,
 Որ և սիրվեր և սիրողին
 Բերեր սիրո վառ գարուն...

Մարտի 23

Ամենայն անգամ, երբ տեսնում եմ քեզ,
 հեկոք աչերիդ նայում եմ զմայլած,
 Եվ հանկարծ անփորձ մի մանուկի պես
 Ես կարմրում եմ հուզված, շփոթված...

- 5 Ամենայն անգամ որքան էլ տրտում
 Ինձ տված լինիմ մաշող մտքերի,
 Քո ներկայութունն աղբյուր է լինում
 Ինձ համար ուրախ, զըվարթ ժամերի:

- Այս ի՞նչ է արդյոք, ո՛վ կույս նազելի.
 10 Մի՞թե սեր արդեն. օ՛հ, եթե այդպես—
 Թող ուրեմն, հոգյա՛կ, նվերն երկնքի,
 Այս աստվածեղեն կայծն հասնի և քեզ.
 Կուզեի և քո արյունը վառված
 Սիրո փոթորիկ հաներ քո սրտում,
 15 Կուզեի տեսնել քո հոգին խռոված,
 Արցունքի շիթեր և քո աչերում...

Մարտի 25

Ահա քնար և տավիղներ.
 Հառա՛ջ, եղբարք, երգերով.
 Թող բարձր հնչեն մեղեդիներ
 Դառըն ողբի ձայներով:

- 5 Նոր Սիրնի անբա՛ղդ որդիք,
 Շուրջ հավաքված երգեցե՛ք.
 Հանդած օջախ, սուրբ հայրենիք
 Աղի լացով թնդացրե՛ք:

- 10 Ես կըփշրեմ քնարն ոսկի,
 Թե որ նորա լարերից
 Երջանկության ուրախ երգի
 Թռչեն ձայներ ոգելից:

- Մենք պիտ ողբանք, մինչև բացվի
 Անամպ երկինք նոր դարնան,
 15 Սուրբ հայրենյաց նորոգ կյանքի
 Մկրտության Հորդանան...

Մարտի 27

32 ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻՆ

Նա ուր հըզոր, դյութիչ գըշով
Հայի հոգին բաց արեց
Եվ սրտառուչ ազատ երգով
Մեզ խինդ և լաց պատրաստեց,

5 Թող և այսօր հնչեցընե
Իր մեղեդին համարձակ,
Արի ձայնով թնդացընե
Հայ աշխարհը բովանդակ:

10 Եվ կենդանի այն վառ քարող
Անշահ սիրո, սուրբ գործի,
Ինչպես վտակ առատահոս,
Թող ամեն տեղ տարածվի:

Թող խոսքն հստակ և անկաշառ
Ույժ տա թույլին հանապաղ,
15 Քաջին բաշխե հավատ պայծառ.
Եռանդ ու խանդ աննվաղ:

Մարտի 30

Անլույս խավարը, շարության ոգին
Տիրել էր աշխարհ, և վաղուց մարդիկ
Ապառաժ սրտով կործանել էին
Խանդավառ զգացման սխալներ գեղեցիկ.

- 5 Անցած օրերի մաքուր պարզություն
Ապականության ասպարեղ դարձած,
Էլ չէր կարմրում նենգամտություն,
Առաքինության փառքըն էր շիջած...

- 10 Բայց հասավ օրը մի նորոգ կյանքի,
Եվ Բեթղեհեմից նոր արև ծագեց,
Այրից առաջին ճիշը Մանուկի
Փրկության ժամը մարդկանց ավետեց.
Նորա ժպիտն էր, որ անհուն սիրով
Սրտերի սառույցն պիտ հալեցընհեր,
15 Եվ մարդկությունը նորա շրթունքով
Ճշմարտությունը պիտի ուսաներ:

Ապրիլի 1

Լույսը բացվում է. շուտ արտը գընամ,
 Պատռեմ սուր խոփով ես կուրծքը հողի.
 Իմ սիրո՛ւն հատիկ, քեզ նորան պահ տամ
 Մինչև օրերը ամրան արևի:

- 5 Թաղեմ քեզ, հատի՛կ, և դարդըս քեզ հետ.
 Թե աստված ուզեց, դու կանաչեցիր,
 Թող դարդըս մեռնի գետնի տակ անհետ,
 Դու ինձ մխիթար կրկին տուն դարձի՛ր:

- 10 Եվ ջերմ աղոթքով տիրամոր առջև
 Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծրխեմ,
 Որ քեզ պարգևե մի առատ անձրև,
 Որ քեզ միշտ սիրով նայե խնդադեմ:

- Բայց թե այդ շնորհին մեղքերիս համար
 Արժանի չլինիմ, ծով կը դարձնեմ
 15 Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,
 Որ քեզ, իմ հատի՛կ, ծառավ չըթողնեմ:

Ծըլի՛ր, կանաչի՛ր, ոսկե սավանով
 Ծածկի՛ր իմ արտը ողջ ալեծածան,
 Նոր այն ժամանակ անուշ շրշյունով
 Տո՛ւր ջարդված սրտիս մի քուն հանգստյան:

Ապրիլի 2

Դարձյալ դարուն, և խնդագին
Արթնանում է բընություն,
Պարգևում է արեն երկրին
Յուր շնորհատու զորություն:

- 5 Եվ սթափում է մի նոր կյանքով
Կանաչ տերե, թավիշ խոտ,
Եվ բերում է ողջուն սիրով
Ձեզ զեփյուռը քաղցրահոտ:

- 10 Եվ կենսաբույր այս վառ գարնան
Գեղեցկութունն ոգելից
Կամի հուսալ մի պատասխան,
Ներդաշնակ խոսք աշխարհից:

- Բայց խռովահույզ միտքը մարդկան
Ըստպատմ է այն օրին,
15 Երբ սերը մեծ ու անվախճան
Պիտի հառնե վերստին:

- Եղբայրական սուրբ համբուրով
Մարդիկ միմյանց մոտեցած
Ողջագութեւ անոխ հոգով
20 Պիտի շտապեն սեր զրկած:

Կըգա այդ օրն, էլի նորեն
Մարդիկ մեծ սերն անվախճան
Ամբողջ տարով պիտի թաղեն
Մինչև նոր օրն հարության...

Ապրիլի 4

Ա՛խ, ի՛նչպես, հոգյա՛կ, կը կամենայի
Քեզ հետ մնալ մենակ գոնե մի վայրկյան,
Եվ, թեպետ զրկված գգվանքից բազդի,
Խնդրել քեզանից խոսք համակրության:

- 5 Մեր բոլոր կյանքը անցնում է շնչին,
Փոքրիկ կրքերով, ունայն հոգսերում,
Անմիտ կռվի մեջ, որ չունի մի գին
Վեհ, ազատ հոգու առաքինութուն:

- Եվ ես ատում եմ վայելչութունը
10 Կյանքի անխորհուրդ հոուն խնջույքի,
Ուր տիրազլուխ է սև չարությունը,
Բուրմունքը չը կա սիրավառ սրտի:

- Կուզեի գտնել հանգիստ երգի մեջ,
Մի զեղուն, մաքուր, հոգեբուլխ երգի,—
15 Բայց սիրտըս դատարի, և ես մի անշեջ
Կարոտ եմ բոցոտ, անհուն զգացմունքի:

- Ես քեզ եմ դարձնում, հոգյա՛կ, իմ աչեր,
Լի մի խանդակաթ սիրով անսահման...
Բայց մատաղ հոգուդ արդյոք իմ խոսքեր
20 Պիտի հասնի՞ն թե՛ լուկ ձայն պիտ մընան:

- Քանի դեռ մատաղ արյունը հոռն
 Երակներիս մեջ զարկում է ուժգին,
 Եվ ծաղիկներով կյանքը զարգարուն
 Խոստանում է մեզ մի դրախտ երկնային,—
- 5 Սեր չքնա՛ղ, դու ես համբույրող տալի
 Մեր ախտաբորբոք այրվող շրթունքին,
 Բաղդի խաբուսիկ համբույր թունալի,
 Ինչպես ոսկեվառ երազ հիվանդին:

- Բայց կըգա ժամը, երբ հրաժարական
- 10 Պիտի տանք ողջուն բոլոր պատրանաց,
 Եվ անուշաբույր կյանքի քաղցրության,
 Եվ անադորուն դառն հառաչանաց,—
 Եվ ահա՛ դունատ մահը կըդրոշմե
- Յուր սառն համբույրը մեր սառ շրթունքին,
- 15 Եվ գիտեմ որ նա պիտի չըխաբե
 Մեզ փաղաքշելով յուր անկյանք կուրծքին:

Ապրիլի 5

- Ես անմոռունչ գնում էի ճանապարհ
 Իմ հեղհեղուկ բաղդին տըված ինձ խոնարհ.
 Բայց այն օրից, երբ ողջունես հրաժեշտի
 Իմ մանկության քաղցր օրերին ես տըվի,
 5 Երբ ես թունը ճաշակեցի գիտության,
 Երբ խաղալիք դարձա մարդկանց նենգության,—
 Ես ասացի՝ աշխա՛րհ, քո ողջ պարգևներ
 Խաբեություն, դատարկ, անմիտ ցընորք էր:

 Ես չըկամիմ ոչ քո փառքը, գիտություն,
 10 Ոչ քո ոսկին և ոչ խարդախ ստություն.
 Չըկամիմ քո արյամբ դնած սարդենին,
 Ոչ կարճատև կուսի սիրո վարդենին.
 Այն մեղքը որ դու ոսկեղօծ բաժակով
 Տալիս ես ինձ ժպտածիծաղ երեսով,
 15 Միայն ծածուկ մահադեղ է կործանող,
 Ծաղկափունջըդ միայն փուշ է ծակոտող...

 Աշխա՛րհ, ես քո կըհավատամ վայելքին,
 Կըհավատամ երջանկության մարդկային,
 Երբ որ ձգես դու կեղծավոր այդ դիմակ,
 20 Երբ ողջունես մի նոր կյանքի արեգակ,
 Երբ անխընա արդարության խարաղան
 Քո սրտիցը խըլի սերմը չարության
 Եվ ականջըդ բանա լըսել երկնային
 Անմահ սիրո սուրբ բարբառը անմեկին:

Քնքուշ տողերում ես պիտի երգեմ
 Սրտիս թագուհու նազելի պատկեր,
 Ես նորա առաջ զոհ պիտի բերեմ
 Հոգուս անմեկին բոլոր ղգացմունքներ:

- 5 Թե շունչ կա բերնումս և սրտումքս հույս,
 Դեռ չէ ցամաքել արցունքն աչերիս,—
 Այդ դու ես, հոգյա՛կ, որ ծագում ես լույս
 Այս խավարի մեջ անապատ կյանքիս:

- 10 Եվ ես կըհյուսեմ պսակ քո գլխին
 Վառ արշալուստ ոսկի շողերից,
 Եվ քո կուսական ցողելու կուրծքին
 Կըխըլեմ բույրը հարավո վարդից:

- Եվ կառնեմ ձեռքս յոթնադի քընար,
 Կըհնչեցընեմ երգքս ոլորուն,
 15 Թող լսեն մարդիկ, հանաչե աշխարհ
 Անմահ դիցուհուս սուրբ գեղեցկութուն:

Ապրիլի 14

Եվ այս դարուն կանցնի շուտով,
 Կըթառամի մանուշակ,
 Կըծածկվի սև՝ վարագուրով
 Երկնից դեմքը անուշակ:

- 5 Միայն սերը միշտ կըմընա
 Իմ սրտումը կենդանի.
 Ոչինչ սիրող սրտի վեհա
 Բռնանալու ույժ չունի:

Ապրիլի 15

- Երբ ես նստած եմ տխուր և մնջիկ
 Պատանհների անհոգ շրջանում,
 Որ քեզ շուրջ պատած, իմ ընկեր քաղցրի՛կ,
 Հաճոյանալ են այնպես ցանկանում,
 5 Ո՛հ, դու մի՛ կարծիր, թե այն մեծամիտ
 Հպարտությունն է շրթունքըս կապում
 Եվ ուրախության բաղդավոր ժպիտ
 Ամսամած դեմքիցս հեռու է պահում:
- 10 Ես լուռ եմ լինում, բայց թե քո աչեր
 Հոգուս խորքերը թափ անցանեին,
 Դու կըտեսնեիր, թե ինչ զգացմունքներ
 Այնտեղ բորբոքված, կուտակված էին:
 Ես չեմ կամենում իզուր վրդովել
 Իմ վառ, երջանիկ հոգեզմայլություն,
 15 Ես կամիմ լռիկ սրտումըս պահել
 Սիրուն պատկերիդ անվերջ քաղցրություն:
- Ահա հասնում է և խորին գիշեր.
 Դու ճաշակում ես հանգիստ անխռով,
 Իսկ ես քուն չունիմ և երկար ժամեր
 20 Անցնում եմ խաղաղ, բայց անուշ ցնորքով.
 Պատկերդ առաջիցս էլ չէ հեռանում,—
 Խորին գիշերով աղոթքի համար:
 Քունըս մոռացած, ես վեր եմ կենում,
 Օրհնում եմ, հոգյա՛կ, օրերըդ պայծառ:

- Երբ ես տեսնում եմ, որ ունայնասեր
Աշխարհը այսօր պսակում է փառքով
Նորան, որին ինքն հետո պիտ ծաղրեր
Նախանձով վառված մի աղքատ հոգով,—
- 5 Ես կամենում եմ այն կեղծ երեսին
Տալ ճշմարտության սուրբ խոսքն անկաշառ,
Իբր ահեղ փողի որոտ՝ ականջին
Հասցնել մի մեծ, սոսկալի բարբառ,—
Հող էիր, ո՛վ մարդ, հող դառնաս դարձյալ:
- 10 Եվ եթե մի է բոլորիս վախճան
Անվերջ երազով ապրիլ և հուսալ
Միայն մի թիվ հող վերջին հանգստյան,
Ի՞նչն է մեզ ստիպում անմիտ պարծանքով
Յուցամոլության, մանկա՛ն արժանի,
- 15 Փառքի պսակը հյուսել մեր ձեռքով,
Որ մեր ոտներին կոխան պիտ լինի:
Մե՛նք կըտապալենք այն վեհ բարձրություն,
Որ մե՛նք ենք կանգնում իբրև աշտարակ,
Եվ խրոխտ շենքի հոյակապություն
- 20 Կրմնա մեզ իբրև տխո՛ւր ավերակ...

Ինչպես վտակ ես կըթափեմ
 Աչքերիցըս արտասունք,
 Եվ նոցանից կըբուսցընեմ
 Եվ քեզ համար վառ ծաղկունք:

5 Եվ հնազանդ իմ վիճակին
 Ես կըտանջվիմ հանապազ,
 Լինի՜ միայն, ընկե՛ր անգին,
 Երջանկությունդ անսպական:

Գիտեմ, որ ինձ չես մոռանա,
 10 երբ ես իջնեմ գերեզման,
 Եվ կըհիշես, որ ես մեռա
 Քեզ մտերիմ, սիրական:

Ապրիլի 19

Երբ մատաղ մուսաս ժպիտն երեսին,
Առաջին անգամ ինձ երեւցավ,
Նա գեղեցկության, սիրո պատկերին
Երկրպագելու ինձ պատվեր տվաւ:

- 5 Ես ուսա երգել է/ երգում էի
Անվարժ տողերով հրաշքները գարնան,
Նազելի վիշտը կուսական սրտի,
Անուշ վայելքներ սիրո արբեցման:

- 10 Անցան տարիներ, և ներքին մի ձայն
Մի նոր հուր վառեց իմ հուղված հոգում,
Երբ վերաս ինչպես կասկար ծանրացան
Կյանքի պիտույքը, մարդկան շարություն:

- Սիրո զվարճության մեղեդիներ
Ժամանակը չէ, ո՛վ անհոգ երգիչ.
15 Դուրս ե՛կ ասպարեզ մահաոթի կռվի,
Թունով թաթախված ա՛ռ կարող գրիչ:

- Անխնա դատի՛ր եղեռնագործին,
Մեծատան երեսն այրի՛ր ամոթով,
Մեր բոլոր ախտեր ցույց տո՛ւր աշխարհին,
20 Խայտառակության անարգ պսակով:

Թող որ շարություն սարսափի տեսած
Արժանի պտուղն ըստոր գործերի,
Եւ կեղծաւորը ուժաթափ եղած
Թող յուր ոսկեզօծ դիմակը հանի...

Ապրիլի 20

Լինում է բոպե, ես անիծում եմ
 Եվ իմ վիճակը և ամբողջ աշխարհ,
 Երջանիկ մի օր, ես մտածում եմ,
 Բաղդը չի բանա երբեք ինձ համար:

- 5 Ձէ՛ կարող էի և ես բիրտ ուժով
 Կամ մի ստորաքարը շողորորթությամբ
 Հաշտվել մարդկանց հետ, և պատած ոսկով
 Հռչակ ըստանալ պատվավոր անվամբ...

- Բայց ո՛չ. չըկամիմ զըլուխ խոնարհել
 10 Արյունով կանգնած մեծափայլ կուռքին,
 Եվ ոչ կարող է իմ սիրտը դրավել
 Շլացնող փառքի փշահյուս դափնին:

- Իմ հոգու ձայնին ես հավատում եմ,
 Եվ աղքատության ու երգի համար
 15 Ես իմ զըրոշակն ահա՛ պարզում եմ—
 Եվ այսուհետև հավատըս պայծա՛ռ

Ապրիլի 22

Զքնա՛ղ մանուկ, հրեշտա՛կ դեմքով,
 Որ մի դրախտ երկնային
 Խոստանում ես հուր աչերով
 Եվ այդ ժպտովն հեշտագին,

- 5 Թույլ տո՛ւր կուրծքիդ շուշանագեղ
 Հոգնած գըլուխըս հանգչի,
 Եվ մետաքսի մազեր շքեղ
 Լինին նորան հովանի:

- Ճաշակել եմ վաղուց արդեն
 10 Ես թույնն և մեղրը սիրո,
 Բայց ինձ հանգիստ դեռ տված չեն
 Արցունք, ժպիտն իմ հուսո:

- Դու այժմ, իբրև նոր արշալույս,
 Ինձ նոր բաղդ ես գուշակում.
 15 Միրո՛ւն մանուկ, ցաված հոգուս
 Արգցոք դու էլ չե՞ս խաբում:

Ապրիլի 23

Անպտուղ կյանքիս քսաներկու գարուն
 Անցան զընացին, որպես մի վայրկյան...
 Ինչո՞ւ ապրեցա, ինչո՞ւ եմ ապրում—
 Միտքըս չէ կարող տալ ինձ պատասխան:

- 5 Եվ իմ մանկության սերը ցնորամիտ,
 Եվ անկեղծ սրտի ոգևորություն,
 Եվ բաղցր արտասուք, և ոսկե ժպիտ,—
 Ա՛խ, ո՞ւր եք. ո՞ւր է ձեր անուշություն:

- Գիտությունն ինչպես մի թույն դանդաղկոտ
 10 Աննըկատելի վարակեց հոգիս,
 Ինչպես ցուրտ ձմեռ միտքըս կասկածոտ
 Քաղեց, խորտակեց ծաղիկը կյանքիս...

- Իբրև երեբուն եղեգն անվակում,
 Տեսնում եմ պատկերս և սարսափում եմ.
 15 Լսում եմ մարդկան երգերը արտում,
 Անմի՛տ ու դատա՛րկ, և տաղտկանում եմ...

- Եվ երջանկությունս թե անդարձ կորավ,
 Փշրված ինչպես տխուր փլլատակ,
 Թե անհոգ տավղի ձայնը մարեցավ,
 20 Եվ մընաց ինձ լուկ նորա հիշատակ,

Գոնե սրտիցըս հիմա շհեռանար
Նոր ցնորքներիս տիպար սիրելի,
Տանջված հոգուս մեջ կենդանի մընար
Բուռըն փոթորիկ ազնիվ կըրքերի...

Ապրիլի 26

Դու արտասովում ես և չես ամաչում
Այդ անկեղծ սրտի արտասուքներից,
Եվ գիտես, որ զուր հանդիստ ես խնդրում
Հուսահատության տառանկանքներից:

- 5 Ա՛խ, ո՛ր չար ձեռքը քնքուշ թշերիդ
Վաղաժամ քաղեց վարդը կենսաբույր,
Քաղցր շրթունքիդ խըլեց վառ ժպիտ,
Ճակատիդ դըրեց թախիժը տխուր:

- Այդ վանդակի մեջ դու ոսկեզօծած,
10 Սոխակի նրման մոռացած երգեր
Հալվում, մաշվում ես, թևերդ խուղած
Չունիս, սիրելի՛, սրտացավ ընկեր:

- Հուսա՛ դու, խղճո՛ւկ, հուսա՛. թող լինի
Վշտի հրեշտակը քեզ հովանավոր.
15 Ո՛վ գիտես, դուցե պայծառ վիճակի
Օրը դեռ ծագի և քեզ փառավոր...

Մայիսի 7

Ահա քեզ ձեռքս, ընկե՛ր թանկագին,
 Սեղմի՛ր դու նորան անվախ, անկասկած—
 Բարեկամ է նա լքյալ թշվառին,
 Փորձության քովում կոշտերով ծածկված:

5 Թող ծանր վշտիցն անցած օրերի
 Հանգչի քո սիրտը դոնե մի վայրկյան—
 Արի՛ իմ գիրկը, ընկե՛ր սիրելի,
 Ես իմ ջերմ կուրծքին օրորեմ նորան:

10 Եվ ցավակցության այրող արցունքով
 Տանջանքիդ այդ կուռ շղթան կործանեմ:
 Գուցե և սիրո դյուլթական շողով
 Մի բուպե ես քեզ հանգիստ պարգևեմ...

Մալխի 9

Թող այսօր մութն է քեզ համար արև,
 Չարատա՛նջ հոգիս, թող անվերջ ցավով
 Բաղդն իբրև խորթ մայր բերե քո առջև
 Կյանքի բաժակը, լի դառն թունով,—

- 5 Կըգա և մի օր քո վառ արշալույս,
 Դու կըմոռանաս անցյալի ցավեր,
 Խաղաղ վիճակի կըցոլա քաղցր հույս,
 Ոգևորության կհոսեն արցունքներ...

Սեպտեմբերի 28

Ես քեզ սիրեցի, բայց չեմ կամենում
Տալ սիրտըս, հոգյա՛կ, քեզ բընավ գերել—
Մի անկյուն նորա անմեկին խորքում
Ա՛յլ սիրո համար ես կամիմ պահել:

- 5 Զերմոցում սընած դու վարդ նաղելի,
Արցունքի մի շիթ չէ կաթել թշիդ,
Կյանքի փոթորիկն անվե՛րջ, ահռելի՛,
Դեռ քո շրթունքից չէ խըլել ժպիտ:

- 10 Եվ անհոգ խաղով, ինչպես թիթեռնակ,
Ճրագի բոցին դու մոտ ես վաղում,
Եվ չես հասկանում թե համաճարակ
Հրդեհն է այդպես քեզ հրապուրում...

- Տե՛ս՝ թշվառության հաղարալեղու
Բոցը բորբոքված խնդրում է զոհեր,
15 Տե՛ս՝ այստեղ խոնած իրար մոտ ահու
Վերջին են սպասում քանի՜ անբաղդներ...

- Եվ դոցա՛ համար ես սեր եմ պահում,
Այդ ճակատագրի խորթ որդոց համար,
Որոնց առաջին դուռը չէ բանում
20 Մխիթարության՝ քարասիրտ աշխարհ...

Տո՛ւր ինձ, սիրելի՛ս, և քո՛ սերն անբիժ
Այս հառաչանքի հովիտը տանեմ—
Գուցե արցունքը ցաված աչերից,
Մաշված ճակատից թախիժը խրչեմ:

Դեկտեմբերի 14

Երբ նա դեռ նոր էր լույս աշխարհ տեսել,—
Դառն աշխատության, կարիքի զավակ,—
Ավանդ ստացավ սիրել և գործել,
Ճակատին ծանրը խաչի նշանակ:

- 5 Եվ նա մեծացավ, և կյանքը մտավ,
Եվ հավատարիմ մնաց յուր խաչին.
Հանդուգն լուղորդ՝ ակաց մեջ ընկավ,
Մրցում էր, դիմում փրկության ափին:

- Աներկբա մտքով, հավատով հոգով
10 Քարողում էր յուր խաչի քաղցրություն,
Ինչպես խարաղան երկաթի խոսքով
Նա հալածում էր շահ ու բռնություն:

- Բայց ի՞նչ. չարանենգ քուրմերը ուժի
Մահաթույն լեղի արբուցին նորան,
15 Կարմիր երկաթով նշանը խաչի
Ջնջեցին պայծառ ճակատի վրան...

- Եվ հավատարիմ յուր կոչման մեռավ՝
Սուրբ ճշմարտության անբիծ նահատակ,
Իսկ սիրո նշանն անմահ դրոշմվեցավ
20 Շատերի սրտում մեկի փոխանակ...

«Սովորեցե՛ք բարութիւնն անել, որոնեցե՛ք
իրավունք, ուղղութիւնն ցուցե՛ք զրկվածին,
որրի դատը տեսե՛ք, որբեայրու դատը պաշտ-
պանեցե՛ք»:

Մարգար. Եսայա, Ա. 17.

Մի՛ թողնիր, երգի՛չ, քնարըդ / կախած,
Որ նորան ժանգով տարիքը պատեն,
Ոսկի լարերին դու ոգևորված
Զարկի՛ր մատներով, թող դարձյալ հնչեն:

- 5 Թող հնչեն նորից հին երգը անմահ
 Եվ վառեն սիրով սրտերը մարդկան,
 Թող նոքա նորից օրհներգեն անահ
 Գործերը բարվո՛ր և կարեկցության:

- 10 Ինչպես չէ՛ կարող ձմեռն արգելել
 Գալուստը շքեղ ծաղկաբույր գարնան,
 Նույնպես ճշմարիտ խոսքը խափանել
 Չէ՛ կարող ձայնը անմիտ չարության:

Հունվարի 2

Իմ խեղճ հայրենիք, անփառք վիճակիդ
 Ոչ ոք ցույց տվավ ցարդ կարեկցութուն.
 Երկար սպասեցի փրկության օրիդ,
 Եվ միայն տեսա ավեր, բռնությո՛ւն...

- 5 Եվ մենք քարասիրտ՝ արյունըդ տեսանք—
 Հոսում էր կաթ-կաթ անվերջ տարիներ.
 Եվ մի՞թե հիմա մենք պիտի մընանք
 Երգելու դառըն սև մահվան ողբեր:

Հունվարի 3

Մըտալ արև. Ավարայրին մութ պատեց,
 Սև ամպերով երկնից դեմքը քողարկվեց.
 Բընությունը մի քուն մըտած հեշտասեր
 Վայելում է անուշության վառ ժամեր:

- 5 Ձէ նըվագում քաղցրը սրինգ՝ հովվական,
 Թռչունների քնքուշ տաղեր լեցան.
 Ծաղիկները նիրհած փափուկ մարգերում
 Երբեմն մեղմիկ հովի հետ են համբուրվում:

- Բայց այդ քունը մոտ չէ գալիս հեշտագին
 10 Ծեր Տղմուտի արյունակոխ աչքերին
 Այն սև օրից, երբ որ կուրծքը կուսական
 Ոռոգվեցավ արյունովը հայության:

- Անցան դարեր. դեռ Տղմուտը հեծելով
 Գիշերները խանդարում է անվրդով
 15 Ավարայրի անուշ քունը, և չունի
 Մինչև այսօր նա ողբակից յուր վշտի:

- Եվ ծերունին հառաչում է սրգավոր.
 Արյուն դարձած կոհակները ալևոր
 Գընում, գալիս, զարնվում են ափերին,
 20 Անցած փառքը հիշեցնում են հայերին:

«Ձեր նախնյացը էլ չեք նրման դուր, հայե՛ր,
Չունիք այլ ևս հայրենասեր այն ոգին.
Նոքա մեռան, և կուրծքերը անվեհեր
Արյամբ բուսած անմահ վարդեր պսակեցին:

- 25 Նոքա զըլուխ չըտվեցին բռնության,
Չըծախեցին նոքա խիղճը և ամոթ,
Ազատության երկրպագու կանգնեցան,
Հավատալով փառքի լուսույն անաղոտ:

- 30 Եվ անթառամ զարդարվեցան պըսակով,
Անմահացավ այն վեհ հոգին արության.
Եվ հայրենյաց կյանք տվեցին արյունով
Ահեղ մարտի դաշտում հայ մարդ, հայ կուսան:

- Դուր ի՞նչ արիք, դո՛ւր, փառավոր նախորդաց
Ստորով ծընած, անփառք սընած զավակներ.
35 Հայ սար, հայ դեռ, հայ դաշտորայք շունչ առած
Պիտ ամոթով այրեն ձեր սև երեսներ:

- Ազատության սուրբ պատկերը կործանած,
Դուր ծաղրում եք ազատասեր ըզգացմունք.
Նոր Հազկերտի անարգ բազին եք կանգնած
40 Եվ խայտառակ կատարում եք պաշտամունք:

Ո՛հ, թե ելներ կորած մոռցված դամբանից
Վարդանների առյուծական այն հոգին,
Եվ երկաթի խարազանը թունալից
Տար ձեր ժպիրհ, ամոթապարտ ճակատին:

- 45 Եվ արցունքով համբուրեիք սուրբ շիրիմ,
Ուխտ կապեիք նորից խաչով և սըրով
Կանգնեցընել նոր Աշտիշատ, Խոխոցիմ,
Վերջ տալ անարգ այս վիճակին արյունով»...

- Եւ Տղմուտը հառաչում է սրգավոր.
50 Աբյուն դարձած կոհակները ալևոր
Գընում, գալիս, դարնւում են ամերին,
Անցած փառքը հիշեցնում են հայերին:

- Անցան դարեր. դեռ ծերունին հեծելով
Գիշերները խանդարում է անվրդով
55 Ավարայրի անուշ քունը, բայց շունի
Նա ուշք քունը խանդարելու հայերի...

Հունվարի 7

Հասի՛ր, սիրելի՛ս, բե՛ր ոսկի քրնար,
 Ես կամենում եմ ցրվել իմ թախիժ,
 Տեսնել եմ ուզում իմ կյանքն էլ պայծառ
 Եվ վիշտը վանել հեռու իմ սրտից:

- 5 Բավ է ինչ լացի, հերի՛ք արտասուք.
 Արցունքի տեղակ թող աչքիցս բղխին
 Վառ ցողի շիթեր, քաղցր ինչպես կնդրուկ,
 Թող կյանք տան մարող իմ անհույս սրտին:

- Սուտ է, կարող եմ ես դարձյալ սիրել
 10 Ձոհելով բոլորն ինչ ունի հոգիս,
 Ձէ՛, դեռ կարող եմ ես անուշ երգել
 Ձքնաղ պատկերը իմ սիրականիս:

- Կուզես ինձ ատի՛ր, ո՛վ իմ թագուհի,
 Կուզես ծիծաղի՛ր զգացմունքիս վրրան.
 15 Հավիտյան մընալ քո ձեռին գերի—
 Չըկա այլ վիճակ ինձ երջանկության:

Հունվարի 21

Ասի՛ աշո՛ւղ, ա՛ն շունգուրըդ, մեզ բան ասա՛ սրտալի.
 Կարոտ ենք քու անուշ ձենին, մի բան ասա՛ սրտալի.
 Սրտի խոսք ենք ուզում քեզնից, որ վեր հանի մեր հոգին —
 Ա՛ն շունգուրըդ, դարդո՛ւտ աշուղ, մեզ բան ասա՛ սրտալի:

- 5 Գիտենք, որ դու միշտ տանջվում ես հաղար ու մի
 ցավերով,
 Հայրենիքիդ խոր խոցերը համարում ես դարերով.
 Չես լվանա էդ խոցերը արտասունքի ծովերով...
 Ա՛ն շունգուրըդ, ցավո՛ւտ աշուղ, մեզ բան ասա՛ վշտալի:

- Լուռ մընալով մեր վերքերին դու չես անի դեղ դարման.
 10 Արար-աշխարհք գիտի՛ չըկա մեր դարդերին չափ,
 սահման,
 Մնջությունն էլ նըշան հո չի՞ մի գովելի հատկության —
 Ա՛ն շունգուրըդ, մեզ բան ասա՛, թող խոսքդ ընի
 ցավալի:

- Էդպես խոսքեր շատ ենք լսել, էլ կըլսենք անտըրտունջ,
 Մեր չըխոսկան ըլնելուցն է՛ մընացել ենք անտերունչ.
 15 Լավ է ազատ լաց ըլնիլը, բանց դարդ տանիլն անմոռնչ,
 Ասա՛ լսենք, ի՞նչ անենք, որ խոսքդ կըլնի ողբալի:

Տեսնում ես, որ մենք թմրած ենք, քունն անուշ է մեզ
թըվում:

Է՞ր ես դու էլ մեզ բոլորիս մաշող քընիցն հաղթըվում:

Ա՛ռ շունգուրըդ, տո՛ւր լարերին, կըրակ վառի՛ր մեր
սրտում,

20 Մեզ ամենիս նոր շունչ տվող մի բան ասա՛ սրտալի:

Հունվարի 22

Թող երգդ հնչե ներդաշնակ
Աղատ սրտի վառ զեղմունք,
Թող զարթեցնե համարձակ
Մեր քնեաժ ըղբացմունք:

- 5 Վառի՛ր դու մեր սրտերում,
Հուրը ազնիվ կրքերի—
Երկրպագու ենք կանգնում
Ճշմարտության սլատկերի:

Հունվարի 23

Սիրուն գլուխըդ կուրծքիս խոնարհած
 Դու լալիս էիր և ինձ մրմնջում.
 «Անգո՛ւթ, հերիք չէ՞, ես այսպես տանջված—
 Անսահման սերս դու չես նկատում»:

- 5 Եվ լալիս էիր այնպես կաթոգին,
 Գոհար շիթերը քո արտասուքի
 Ինչպես հուր՝ ջարդված սիրտըս այրեցին,—
 Թեպետ երազ էր այս, իմ նազելի՛:

- 10 Իսկ ես անդադար, վշտիցըս խեղդված,
 Ողբում եմ սերս—դու չես նկատում.
 Իմ տխուր երգը քո անվամբ հյուսված
 Յրտացած սիրտըդ բընավ չէ շարժում:
 Ա՛խ, ի՞նչ երջանիկ ես կըլինեի,
 Եթե երազում թափած արցունքիդ
 15 Գոնե երկու շիթ իրավ տեսնեի,
 Իմ վշտի հրեշտա՛կ, այդ վառ աչերիդ...

Հունվարի 25

- Ամենայն անգամ, երբ թեթևամիտ
Դիպչում է մուսաս սրտիս լարերին,
Քնքուշ մատներով խըլում է ժըպիտ
Եվ դընում թախիժն իմ անհոգ ճակտին,—
5 Անցած պատկերներ խուռն երամով
Լցվում են սիրտըս, դարձնում է հոգիս,
Եվ միտքըս հեռու թռչոյ՝ է սիրով
Նաղելի աշխարհն մանուկ օրերիս:

- Եվ կամենում եմ սեղ երգել միայն
10 Եվ քաղցրությունը մաքուր հասակի,
Անուշ ժամերը անամպ խնդության,
Կենդանի հրճվանք կուսական սրտի:
Բայց միշտ ակամա լարերը բեկբեկ
Տխուր են հնչում օրհներգը սիրո,
15 Էլ չէ երևում ինձ սերը երբեք
Իբրև վառ զեղմունք երջանիկ հոգվո:

- Եվ միշտ լսվում է մի ձայն լարերից,
Որպես հառաչանք պաղատող սրտի,
Էլ չէ հեռանում նա իմ ականջից,
20 Այդ ձայնն անմեկին մի խորին վշտի.
«Այնտեղ, ուր արցունք, շղթա և ավեր,
Ուր լսվում է լոկ հառաչք լալադին,
Քո քընարիցը թող ուրախ ձայներ,
Ով թշվառ երգիչ, բընավ չըլսվին»...

Դու չըկամիս, ո՛վ կույս, լինել
 Իմ տանջանքին մասնակից,
 Դու չըկամիս հըրաժարվել
 Այդ քո անհոգ վիճակից:

- 5 Բայց թե սիրտըս դու տեսնեիր,
 Ճանաչեիր իմ հոգին,
 Ինչ է վիշտը—կիմանայիր,
 Կըսիրեիր դու երգչին:

- 10 Շատ գոհարներ վառ, անըման,
 Ալիքներումն են թաղված,
 Շատ զգացմունք, սե՛ր անսահման
 Սրտիս խորքումն են պահված:

Հունվարի 27

- Տեսնում եմ ահա—աղբեր են մեռնում,
Աղբեր են ծնվում, և արմավենին
Սուրբ աղատության՝ դուրդոջուն ձեռքում՝
Բաղդն է մոտենում մատաղ աղբերին:
- 5 Եվ նախնյաց փառքը՝ նոր արշալուսով
Յոլում է նոցա պաշտօն ճակատին,
Եվ ահե՛ղ կռվում արյուն-քրտինքով
Վաստակած անմահ աճում է դափնին:
- 10 Եվ միայն դու ես, իմ խեղճ հայրենիք,
Որ շղթայակապ հեծում ես դարձյալ,
Եվ պատա՛ռ պատա՛ռ կուրծքըդ գեղեցիկ—
Ընկած ես որպես կենդանի մեռյալ...
- 15 Եվ անցած փառքիդ ավերակներից
Փրկության ոստը դեռ չէ կանաչում,
Կրծքիցըդ հոսած արյան շիթերից
Քո տանջանքների փունջն է ցողվում:
- Բայց, իմ հայրենի՛ք, դու պիտի չմեռնիս.
Ես հավատում եմ հարության օրիդ.
Մո՛տ է ժամանակ, զարթի՛ր, սիրելի՛ս,
20 Փրկության աստղը վառվում է ճակտիդ:

Ոտքի ե՛լ, հոգի՛ս, շղթադ թոթափի՛ր,
Աչքըդ բաց արա՛ այդ մահւման քընից,
Թեև մահամեքձ, դու մի ձայն հանի՛ր—
Որդիքդ օգնության կըզան շորս կողմից:

Փետրվարի 5

Ասում են. «Պոե'տ, մենք չենք կամենում
Արտասուք տեսնել, լսել հառաչանք.

Ի՞նչ ես քո աչքող վիշտը մեղ պատմում,
Ի՞նչ ես դու ողբում քո անվերջ տանջանք.

- 5 Մենք միայն վայելք ուղում ենք կյանքից,
Հրճվանք, խնդովյուն և ուրախ տաղեր.
Մեղ անհոգ ժամեր երգի'ր ոգելից,
Կյանքի խնջույքը, գինով բաժակներ»...

- Եվ դու լսում ես անմիտ ցնծության
10 Ճիշեր՝ արձակած անդուն բերանից,
Եվ չես սպասում մի աղնիվ զգացման,
Մի հստակ սիրո նշույլ դոցանից...
Տեսնում ես շուրջըդ կարիք և ղրկանք
Եվ ըստրկության ճնշող շղթաներ.
15 Եղբարքըդ, կյանքից չտեսած դգվանք,
Վաղ ճաշակել են հոգեմաշ ցավեր:

- Չես կարողանում քնքուշ մատներով,
Ոգևորության երջանիկ ժամում,
Դիպչել լարերին, թե հլու քնարով
20 Երգելու լինիս մի անհոգ խնդում:
Եվ կատաղում ես, որ քո զգացմունքին,
Վեհ հոգուդ չկա մի խոսք համակիր,
Հուսահատվում ես, որ քո քարոզին
Մարգարեական՝ չունիս ունկնդիր:

- 25 Բայց հանգիստ մ'նա', կըղա ժամանակ—
Կանցնե խաւարը մոլեռանդության,
Կըգա նոր սերունդ, զգալու ընդունակ,
Լուսածին որդիք. սուրբ ազատության.
Եւ աբբայական քո բաց ճակատին
- 30 Հսկարտ սարդենին կըփայլի փառքով,
Եւ քո թունալից թվող տողերին
Մարգարիտ կշարեն սիրո արցունքով...

Քեզ մոտեցա սեր հուսալու՛մ,
 Պայծառ դեմքիդ նայեցի,
 Ես — խաւարած վշտի ամպով,
 Դու — արշալույս նազելի:

- 5 Ես ասացի. «Ինձ բույր եղիր,
 Եղի՛ր ընկեր ցավակից,
 Սերըս, երգըս դու ընդունի՛ր
 Նվեր տանջված մի սրտից»:

- 10 Բայց դու, դավակ փարթամության,
 Զըհասկացար երգս աղքատ.
 Դու — նույն անհոգ թռչնակ գարնան,
 Ես — նույն երգիչն հուսահատ...

Փետրվարի 11

Մընա՛ք բարով, արեւ, դարուն
 Եւ խնկաբույր ծաղիկներ,
 Կարկաշահոս վտակ սիրուն,
 Կանաչազգեստ բլուրներ.

- 5 Մընա՛ք բարով, համբույր և սեր,
 Դեմքով հրեշտակ կույս չքնաղ,
 Վայելչության պայծառ ժամեր,
 Քաղցրը ժպիտ, կյանք մատաղ...

- 10 Աղբատություն ես սիրեցի,
 Խեղճի լացը, հառաչանք,
 Ես քընարըս նըվիրեցի
 Վիշտ երգելու և տանջանք...

Փետրվարի 12

Դու ծաղկում ես, ինչպես վարդը հարավի,
 Քեզ փարում է առավոտյան շողն ոսկի,
 Եվ ցողում է ծաղկանց բույրը քո կուրծքին
 Զեփյունն անուշ՝ գուրգուրալով հեշտագին.

- 5 Եվ աստղերը շողշողալով ճակատիդ,
 Քեզ ժպտում են գիշերները խնդամիտ.
 Թեթևաքայլ եղնիկի պես նազ տալով,
 Հալեցնում ես մատաղ սրտեր աչերով,
 Բայց չգիտես դու քո ույժը, սիրելի՛,
 10 Միամիտ ես, անփույթ, իբրև աղավնի.
 Այրող, մաշող սիրո բուռն փոթորիկ
 Դեռ չի հուզել մանուկ կուրծքըդ գեղեցիկ...

- Եվ իմ միակ ցանկությունն է, որ անբիծ
 Սիրտըդ զգար սիրո հրձվանք ու թախիծ,
 15 Եվ գուրգուրանքն հասկանալիդ զեփյուռի,
 Եվ սիրտըդ թունդ զարկել տար բույրը վարդի,
 Եվ ըզգայիր, որ բացի խաղն, անհոգ կյանք,
 Կա ակամա արցունք, և վիշտ, և տանջանք:

Փետրվարի 14

Զեզ եմ նվիրում իմ անվարժ տողեր,
 Զեզ, իմ ընկերներ, որ մաքուր սրտով
 Դեռ սլահսպանում եք ազնիվ միտք և սեր,
 Որ կյանքն եք տեսնում դեռ պարզ հավատով:

- 5 Եվ սիրելի է պատանեկության,
 Այդ վառ հավատը, ոսկի երազներ,—
 Թեպետ և քակե բաղդն անագորույն
 Մեր սիրուն պսակի չքնաղ ծաղիկներ:
- 10 Միայն ա՛յն կասյրի, որ միշտ է անմահ,
 Սուրբ գեղեցկություն և սուրբ գաղափար.
 Վեհ, աղատ միտքը կենդանի կրմնա,
 Անձնազոհ սերը խեղճ եղբոր համար:

Փետրվարի 20

I

- Արդյոք երա՞զ էր սսկի մանկության,
 Արդյոք ցնո՞րք էր հուզված ուղեղի,—
 Հայի վեհ հոգին ես տեսա կենդան,
 Հայ միտքը ծաղկած զերթ կոկոն վարդի.
 5 Ինչպես կարկաչուն մի առվակ կայտառ,
 Ինչպես զանգակի արծաթի հնչյուն,
 Լսեցի անուշ մայրենի բարբառ,
 Տեսա վառ զեղմունք, ոգևորություն:

- Եվ նորից հոգումս հարություն առավ
 10 նոր, կրկին գեղով երգը պոետի,
 Եվ շարժված սրտիս լարերին հասավ
 Թաթաղուն նվազն անդույզ քնարի:
 Եվ ես մկրտված նոր մարդ նոր հոգով,
 Մանուկ հրճվանքով գոչեցի ազատ.
 15 «Կեցցե՛ս, ո՛վ քերթող, քո թովիչ երգով,
 Կեցցե՛ս հավիտյան, լեզո՛ւ հարազատ»:

II

- Սևասքող գիշեր, իբրև փոթորիկ,
 Կախված էր հայի շարչարված գլխին.
 Հեծում էր ստրուկ, թշվառ հայրենիք,
 20 Գլուխ խոնարհած խայտառակ լծին:

Հազար ցավերով սիրտը պատառւած՝
Կարոտ էր լսել գեթ խոսք կարեկից,
Իսկ անմիտները, իրանք խավարած,
Թանձրացնում էին մութ քողը երկնից:

- 25 Բայց հայ աշխարհը դեռ ևս զուրկ չէր
Ազնիվ սրտերից. գիտության զրահով
Զինավառվեցան լուսոյ զավակներ,
Պատռեցին խավարն ամուր ձեռներով:

- 30 Մերկացավ դիմակ փարիսեություն,
Եվ փքուն խոսքերն օդում ցնդեցան,
Երբ մատաղ քնարի լսվեցավ հնչյուն—
Կենդանի քարոզ վերածնության:

- Եվ դու դեռ մանուկ, եռանդով վառված,
Տվիր լարերին ոգևորություն.
35 Դու վիշտ երգեցիր, վիշտը հայրենյաց,
Հոգով ողբացիր ազգիդ գերություն:

- Սեր, եղբայրություն, գիտություն ու լույս
Դու քարոզեցիր խավար սրտերին
Եվ վառ հավատով կարդացիր խրախույս
40 Ծանրը, ահարկու կովում ընկճվողին:

Դու ներշնչեցիր մեզ մի հույս գողտրիկ,
Թե մեր փրկության օրն էլ շուտ կը գա.
Անկեղծ սիրեցիր դու քո հայրենիք,
Նա, ազնի՛վ երգիչ, քեզ չի մոռանա:

Մարտի 13

Աբաղն էկավ լափին տալով,
 Ժեռ քարերին, ափին տալով.
 Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
 Զոր գլուխըս տափին տալով:

- 5 Ա՛յ իմ Աբաղ, ջուրըդ վախար,
 Սիրուն յարիս յարաբ տեսա՞ր.
 Ես չըհասա իմ մուրադին,—
 Աբա՛ղ, յարաբ կարոտս առա՞ր:

- 10 Ամպերն ընկան Մասիս սարին,
 Կարոտ մնացի ես իմ յարին.
 Աստոծ սիրես, էրված սրտիս
 Զուղաբ բերես էկող տարին:

- Գիշերն անքուն գիր կըգրեմ
 Արտասունքս գետ կըշինեմ.
 15 Աբա՛ղ, ծեղը ջրիդ չառած՝
 Իմ սեղադը բեղ կըբերեմ:

- Կասես՝ շողքը քարին ընկավ,
 Կըրակըն իմ սրտին ընկավ.
 Կամար ունքից, թուխ աչքիցը
 20 Յավն իմ ջիվան ջանին ընկավ:

Արազն էկա՛վ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով,
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Չոր գլուխըս տափին տալով...

Հուլիսի 21

Հրաշալի՜ գիշեր... խաղաղ քուն մտած
 Հանգչում է բնություն քնքուշ երազով.
 Պայծառ երկնքում լուսինը վառված
 Նայում է երկրին սիրահար աչքով:

- 5 Այսպիսի գիշեր այրված սոխակին
 Յուր բույրն անուշիկ վարդն է պարգևում,
 Այսպիսի գիշեր մատաղհաս երգչին
 Առաջին սիրո շունչն է խոռովում...

- 10 Եվ սիրտս մանուկ մի այսպես գիշեր
 Ես զոհ բերեցի նենգավոր կուսին.
 Էլ այնուհետև անցան տարիներ,
 Հանգիստ չտեսավ իմ տանջված հոգին:

- Եվ հիմա մոռտաս այսպիսի գիշեր
 Երևում է ինձ փուշ պսակ գլխին,
 15 Եվ երգում եմ ես քո կուռ շղթաներ,
 Ստրո՛ւկ հայրենիք, իմ մա՛յր տխրագին...

Հուլիսի 27

Ես փառք չեմ ուզում, ոսկի չեմ խնդրում,
 Եվ ոչ վայելքը ունայն աշխարհի.
 Պսակն հաղթության ես քեզ եմ թողնում,
 Արյունով սընված հզորըդ երկրի...

- 5 Ա՛խ, ինձ մի երա՛զ, ո՛չ մեր սին կյանքի
 Անմիտ ցնորքը փոքրիկ կրքերով,—
 Մի շնաշխարհիկ երազ հրաշալի
 Աղատ, անսահման, անշեջ զգացմունքով:

- Որ և ատելը լինի կատարյալ,
 10 Ինչպես և սերը աղատ, անվախճան,
 Որ իմանաս թե՛ կարող եմ զգալ
 Եվ խորհիլ ինչպես էակ բանական—

- Որ իմանամ թե՛ վարդգեղ շրթունքիդ
 Մեղրի հետ մի տեղ ես թույն չեմ ծծում,
 15 Թե՛ երգը բղխած կենդանի սրտից
 Գուժկան շղթայի շաշյուն չէ դառնում...

Սեպտեմբերի 24

Ինչպես քաղցր երազ օրերըդ կանցնեն,
 Խանդըդ կըմարի, ինչպես գիշերվան
 Մի ձայն մեռանող, հոգուդ կըպատեն
 Ամպերը մռայլ զուր երկբայության:

- 5 Ինչպես մոլորված մենակ ուղևոր
 Հանկարծ կըկանգնես և հարցում կըտաս.
 «Ա՛խ, դու ո՞ւր թռար, իմ օր փառավոր.
 Բա՛ղդ, ի՞նչ ճանապարհ ինձ պիտի ցույց տաս»...

- 10 Եվ նոր կըտեսնես, թե ի՛նչպես անցան
 Անպտուղ, անմիտ քո կյանքի օրեր,
 Աննկատելի ի՛նչպես ծուխ դարձան
 Վառ սրտիդ, մտքիդ բոլոր ցնորքներ:

- 15 Եվ ուշ կըտեսնես, թե քո առաջին
 Ո՛րչափ մեծ գործ կար արության դաշտում
 Եվ ինչպես գետին գըլորված կաղնին
 Կըմընաս մենակ, հուսահատ, տրտում...

Սեպտեմբերի 26

«Վա՛յ ձեզ՝ դպիրներիդ և փարիսեցիներիդ,
կեղծավորներ, որ դուք այն գերեզմանների պես
եք, որ անհայտ են, և մարդիկը որ նրանց վրա
գնում են՝ չեն գիտում»:

Ղուկ. ԺԱ, 44.

Մաքուր օրերի անուշ երազով
Մենք դեռ ապրում ենք, ապրում անվհատ.
Վառվում է մեր սիրտն երկնային հրով,
Հստակ է մեր միտքն, անամպ մեր ճակատ:
5 Եվ պարզ հավատով առաջ ենք գնում
Դրախտ կարծելով խավար ապագան
Եվ առաջնորդ ենք մենք մեզ ճանաչում
Ճշմարտությունը, սերը մեր նշան:

Բայց ի՞նչ է արդյոք այն, որի համար
10 Բոլորի սիրտը տրոփում է ուժգին.
Զե՞ արդյոք կյանքը բաժակ ոսկեվառ,
Ուր դեռ չգիտենք՝ մեղրածոր գինի՞ն
Թե թուլնն է ցոլում... Ա՛խ, տանջվում եմ ես.
Մարդի՛կ, դուք խավար ինչպես գերեզման,
15 Պիտի շանթե՞ք մեզ խարդախ օձի պես,
Թե՞ պիտի գզվեք սիրող մոր նման...

Նոյեմբերի 8

Թուլլ տո՛ւր, իմ հոգյա՛կ, կուրծքիդ խոնարհած,—
 Այդ շքեղ կուրծքիդ, փղոսկրից ճերմակ,—
 Նայեմ աչերիդ՝ խանդիցս արբած,
 Այդ քնքուշ ձեռքդ հոգնած գլխիս տակ.

- 5 Եվ վառ բերկրությամբ, հրեշտա՛կ իմ, քեզնից
 Կընդունիմ բաժակ մահացու թունով.
 Մի ջերմ համբույրըդ քաղցրագո՛ւնն կյանքից,
 Անմահությունի՛ց թանկ համարելով...

Դեկտեմբերի 19

- Ես քնած էի: Խորին գիշերով
 Ահա քաղցր երազ. տեսնում եմ պայծառ
 Ծագել է արև ոսկի շողերով,
 էլ չըկա խեղդող այն մահու խավար:
 5 Եվ սիրտըս թնդաց. «Ահա՛, ասացի,
 Փոթորիկն անցավ, հասան վառ օրեր.
 Բաղդը մեղ բերեց ահա Նոր Տարի—
 Նոր այդ փրկության, հաշտություն և սեր»...

- Յնորքըս անցավ, երբ ես զարթեցա.
 10 Տխրագին ամպեր երկինքը պատած՝
 Ծանրացան նորից իմ սրտի վերա,—
 Եվ հառաչեցի ես դարձյալ ճնշված.
 «Ո՛վ անբաղդ երկիր, և այս Նոր Տարին
 Զբերեց պայծառ օրվանդ ավետիք.
 15 Կարոտ մնացիր զարնան արևին,
 Ծուխի պես ցնդեց երազըդ գողտրիկ»:

Դեկտեմբերի 19

Թեպետ խեղդված եմ ես դաժան վշտից
 Եվ սիրտս մաշված անմիտ հույսերով,
 Թեպետ մինչ այսօր խաբված եմ կյանքից,
 Կարոտ տեսնելու մի անկեղծ գորով.

- 5 Թեպետ դառնությամբ հոգիս է լցված
 Եվ գանգատվում եմ չար բաղդիս վերա,
 Որ այս աշարհում ես միշտ հալածված՝
 Եվ ոչ մի սփոփանք ինձ համար չկա,—

- Բայց դու մի՛ հիշիր իմ դառն վիճակ,
 10 Խաբի՛ր ինձ դարձյալ շքեղ ցնորքով,
 Թե դեռ ինձ համար զարնան արեգակ
 Կըցուլա պայծառ, գոհար պսակով,
 Թե արծաթափայլ ամոթխած լուսին
 Գողարիկ հայացքով դեռ ինձ կըժպտի,
 15 Թե ծով-ծով աչերն աննման կուսին
 Սիրտս անուշ տենչով դեռ հուղեն պիտի...

Դեկտեմբերի 25

ԲԱԼԼԱԴՆԵՐ ԵՎ ՊՈԵՄՆԵՐ



1

ԱՐՏԱՎԱԶԴ

Զարկեցե՛ք, դարբիններ, կըռանը սալին,
 Զարկեցե՛ք կըռանը—շղթայքն ամրանան,
 Անիծյալ արքայի կապանքն ամրանան.
 Զարկեցե՛ք, դարբիններ, կըռանը սալին:

- 5 Ահարկու ամպերը եկան ժողվեցան,
 Ծեր Մասյաց ճակատին սև բող փաթթեցին,
 Գոռում է փոթորիկ գազանի նըման,
 Հառաչում, սուլում է կատաղած քամին:

- Զարկեցե՛ք կըռանը. խորունկ քարայրից
 10 Ահա չար հողմի հետ հասնում են ձայներ...
 Յուլացավ փայլակը—արքայի աչքից
 Դեպի վեր թռչում են բարկության կայծեր:

- Կամի նա ելանել վրեժխնդիր հոգով
 Յուր անվերջ տանջանքի թույնը մահաբեր
 15 Աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով,—
 Բայց ամուր են նորա ծանրը շղթաներ:

- Մըտերիմ գամփոռները կրծում են կապանք,
 Կրծում են անդադար կապանքն արքայի...
 Արտավա՛զդ, վերջ չունի հոգուդ տառապանք,
 20 Եվ դեռ շատ հեռու է վախճանն աշխարհի:

Եւ անդոր շարության ք: կուռ հարվածներ
Դեռ պիտի փշրվին մեր մուրճի տակին—
Մենք սպասում ենք դեռեւս գեղեցիկ օրեր,
Դեռ հաշտ է երկինքը մեղսոտ աշխարհին:

- 25 Բայց եթե քարացած՝ մենք չենք լսելու
Նոր կյանքի կոչն հուժկու, և վերածնության
Սրբաբար ավաղան մեղ չէ փրկելու,—
Արտավա՛ղդ, փշրվի թող մեր կուռ կրօնն.

- Մենք էլ չենք զարկելու երկաթի սալին:
30 Թող կրճեն զամփոռներդ ոտքիդ շղթաներ,
Արձակվին բազուկներդ, և դու աշխարհին
Դուրս արի՛ բերելու կոտորա՛ծ, ավե՛ր...

- Բայց ո՛չ. հավատում ենք դեռ մենք փրկության,
Մեղ մի նոր երկնքից նոր լույս կըբացվի,
35 Եւ տեսնում ենք ահա արբեն ծիածան
Մենք աղա՛տ, լուսավո՛ր մի նոր վիճակի...

- Զարկեցե՛ք, դարբիննե՛ր, կըռանը սալին,
Զարկեցե՛ք կըռանը—շղթայքն ամրանան,
Անիծյալ արքայի կապանքն ամրանան.
40 Զարկեցե՛ք, դարբիննե՛ր, կըռանը սալին:

Փետրվարի 18

2 ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

- Երկնեց երկին և երկիր,
 Երկնեց և ծով ծիրանի,
 Եվ հղեգնիկը կարմիր
 Երկնեց ծովում ծիրանի:
- 5 Մուխ է դուրս գալիս հղեգան փողից,
 Բոց է դուրս գալիս հղեգան փողից.
 Բոցն է պատել կարմիր հղեգնիկ,
 Բոց է դարձել և ծով ծիրանի.
 Կարմիր բոցիցն ահա մի մանկիկ,
 10 Վահագն ահա՝—մանուկ գեղանի:
- Բոց մորուքով,
 Հուր շրթունքով
 Հուր հեր գլխին-հրեղեն սլակ,
 Եվ աչերն են զույգ արեգակ:
- 15 Ալեծուփ ծովի ծիրանի ալիք,
 Գնում են գալիս, ծեծում են ափունք.
 Ահեղամուռն զոռում է մանկիկ,
 Սաստում է ալյացն հրավառ շրթունք:
 Վահագն ծնավ, լռեցե՛ք, ալիք-
- 20 Դու ծովահալած, դադար ա՛ռ, մրրի՛կ:
 Թեքնոս ոսկեհուռ հրահեր բաշով
 Նժույզը տակին՝ սլացավ լերե—
 Երեսըդ ծածկի՛ր համեստ շղարշով,
 Տե՛ս, ո՞վ է գալիս, և դու, հո՛ւր-արե.
- 25 Գլուխդ ալևոր, քաջածի՛ն Մասիս,

Դու էլ խոնարհի՛ր, Վահագն է գալիս:
Երկինք ու երկիր և ծիրանի ծով
Ավետում են քեզ, ցավերի դու ծո՛ւլ՝
Յնծա՛, բյուրվիշապ Հայաստան աշխարհ,
30 Փրկության արև Վահագնիդ տեսար:

«... և նա ըստ առաջին կարգի օրինացն
արքունի արկանէր զպատուական հան-
դերձն զոր ունէր ի Թագաւորէն... և զամե-
նայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ՝
երթայր յարքունիս. շքեղ և երեւիլի քան
զամենեանս երեւէր բաղմութեանն»։
Եղիշէ, Յեղանակ է.

- Արյան փայլով, տանջանքներով անմահացած,
ինչպես ցընորք երևում են օրերն անցած.
Ես չեմ կարող նոցա նայել լուռ պարծանքով,
Այլ մի խորին ցավակցության ըզգացմունքով.—
5 Ի՞նչ մեղ թողին մեր քաջարի գոված նախնիք,
կացի՛, ողբի՛ անփառունակ մի հայրենիք...
Եվ անձրեք ծաղկապըսակ վառ փունջերի,
Որ մանկական բերկրությունով անմիտների
Առաջին ենք մենք տարածում, ես մի նըշան
10 Համարում եմ մեր փոքր հոգու աղբատության.
Շղթան սիրող ըստրուկների մի բազմություն—
Ահա՛ նոցա թողած անփառք ժառանգություն...

Բայց այդ անցյալի խորին խավարից
Ահա առնում է հոգումս հարություն

- 15 Նա, որ մերժված է բոլոր աշխարհից,
Որի հիշատակն հանդիմանություն
լըսել է միայն: Բայց անեծքների
Անվերջ կարկուտը ինձ չէ՝ շրփոթում:
Սև դրոշմի տակից մաշված ճակատի՝
- 20 Ես նորա ալրոզ տանջանքն եմ տեսնում:
Ահա նա մենակ, առանց հաշտության
Արտասուքների, առանց կարեկից
Մի սիրող սրտի մխիթարության,
Հեռու աշխարհի փարթամ խնջույքից,
- 25 Ընկած է բանտի խոնավ անկյունում
Գրելուխն ալեղարդ կուրծքին խոնարհած,
Հուսահատություն խորտակված սրտում
Եվ հուրը զղջման խեղդող արտասուլաց...
Ընկած է մենակ, և խուլ տանջանքով
- 30 Նա յուր ոճիրը, անկումն է՝ ողբում
Եվ հիշողության թույնը նոր ուժով,
Ինչպես շեկ երկաթ, ուղիղն է ալրում..

- «Հեռո՛ւ աչքիցրս, տաղտո՛ւկ տեսիլներ,
Ծերունի կուրծքըս զըժոխք դարձրիր».
- 35 Հեռո՛ւ աչքիցրս, արյունո՛տ սուսեր,
Եվ դու, անողո՛րմ, թշվա՛ռ հայրենիք:
Ո՛հ, ևս երջանիկ պիտի լինեի,
Թե ձեր անեծքը թափեր իմ գլխին
Ահեղ դաշտումը մահառիթ կովի,
- 40 Պղտոր Տղմուտի չարագույժ ափին...
Իսկ այժմ անջատված արևի շողից,
Հեծում եմ մենակ բանտումըս խավար,
Գործած հանցանքըս,— ըստվեր թունալից,
Մի օձ է խայթող իմ հոգու համար...

- 45 Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ. մի՞թե այլոց պես
Քեզ, ի՛մ հայրենիք, չըսիրեց Վասակ,

- Մի՞թե քեզ համար սիրտըս աղեկեղ
 Պիտի դոհվելու չլիներ ընդունակ...
 Ո՛չ, ո՛չ. ես մի խեղճ, անընշան ճճի,
 50 Արժանի էլ չեմ լինել քո ոտքին
 Կոխելու հողը... անե՛ծք դարերի,
 Ես օրինակ եմ գալոց սերունդին
 Իբրեւ շարագործ, որից գթառատ
 Երկինքն էլ արդեն դարձրել է երես.
 55 Բայց դու, հայրենի՛ք, ինչո՞ւ ես վըհատ,
 Մի՞թե կարող է չար Հազկերտը քեզ
 Ճուտի պես խեղդել յուր մագիլներում
 Ինչպէս մի ուրուր... Դո՛ւ, թագից զրկված,
 Մի՞թե մոռացար փառքըդ անցյալում,
 60 Քո պըսակաւոր արի իշխանաց...

- Ա՛խ, անցյալ օրերն անմե՛ղ շրջանում...
 Այն ի՛նչ հրջանիկ, քաղցր օրեր էին.
 Մի հանդարտ լուսով ճըրագն էր վառվում,
 Շուրջըս սիրական որդիք, ամուսին...
 65 Ո՛հ, հեռու, սիրո՛ւն, թշվա՛ռ դավակներ,
 Զեր հայրը մեռավ... Ի՛նչ հայր, ե՛ս միթե.
 Հեռո՛ւ ինձանից. ձեր հայրն իշխան էր...
 Ինձ շուտով խորունկ շիրիմ կըփրկե—
 Դեռ լայն է բանտըս...

- 70 — Նոքա փառավոր
 Պայազատեցին անուն, հիշատակ,
 Նոքա՛ քեզ բերին մահվան այս սև օր
 Եվ բոլորեցին տանջանքի պըսակ
 Ալեկոր գլխիդ. և դու մոռացա՛ր,
 75 Իմ խե՛ղճ հայրենիք, արշան պալատներ,
 Անառակության խայտառակ տաճար
 Եվ արենապիղծ շամբշոտ գիշերներ...
 Այդ քո թագադարդ պետերը չէի՛ն:
 Եվ դու, ուժասպա՛ռ, վիրավո՛ր եղնիկ,

- 80 Ինչպե՞ս կամեցար պարսիկ առյուծին
Կըռիվ ելանել... Անբա՛ղդ հայրենիք,
Արյունդ հոսում էր հեղեղի նըման,—
Դու նոր վերքերով մի՞թե հարուխյուն
Կամեցար առնել... Երեսիդ վըրան
- 85 Դեռ չէր ցամաքել արտասվաց առուն—
Մի ժըպիրհ հակատ դու գոռ վըտանդին
Ցույց տըվիր անահ: Եվ ի՞նչ. փոխանակ
Օրոր ասելու նիրհող գաղանին,
Սոսկալի մարտի զարկեցիր կոշնակ...
- 90 Եվ քո քաջերը շուտ հավաքվեցան,
Ինչպես փեթակի շուրջը մեղուներ,
Մահ տալ, մահ առնել նոքա երգվեցան,
Լինել ողջակեղ բոլորանըվեր
- 95 Եվ հա... ո՛հ, թո՛ղ ինձ, չա՛ր հիշողություն, —
Ես էլ մըտերիմ քեզ հանդես ելա
Կովին բերելու ոգևորություն.
Սուր սըլաք, շանթեր թշնամու գլխին
Շաղ տալ աներկյուղ մըտածում էի,
100 Ես կյանքըս փրկանք փառքիդ սուրբ օրին
Արդեն ցընորված համարում էի:
Եվ հասավ ժամը— թնդաց Ավարայր,
Հայոց զենքերի լըսեց շառաչյուն.
Ասպարեղ ելանք այնտեղ քեզ համար,
105 Աշխա՛րհ սիրական, թափել հորդ արյուն...

— Բայց ի՞նչ եմ տեսնում. այդ մի՞թե դուք եք,
Անգի՛ն զավակներ... Ա՛խ, ծածկե՛ք շուտով
Այդ կուրծքը պատռած. մի՛ մերկացընեք
Մատաղ գլուխներդ ներկված արյունով...
110 Կուրացե՛ք, աչե՛ր, հանդիմանության

- Այն հուրը շտեմնեմ նոցա աչքերում.
 Այն էր որ վառեց կայծակի նրման
 Զարատանջ հոգիս գոռ մարտի դաշտում...
 Ի՞նչ... ի՞նչ եք կամենում. Վասակը ձեզ հա՞յր...
 115 Հեռո՛ւ ինձանից, թշվա՛ռ ուրունքեր.—
 Ահա՛ թշնամին հասաւ զինավառ,
 Պատյանի մե՞ջ են դեռ ձեր սուսերներ.
 Հառա՛ջ, դեպի մահ, փառաւոր՝ օրհաս—
 Ահա մեր նըվեր քեզ, մա՛յր հայրենիք,
 120 Թող մեր որդիքը կրկնեն հանապազ
 Որ վիճակեցինք մենք մահ երջանիկ...

- Նշավակության բանտի անկյունո՞ւմ,
 Հուսահատության տառապանքներո՞ւմ.
 Ո՞վ է այդ մահը արդյոք ժառանգում,
 125 Ե՛ս—դավաճանի անարգ պըսակով...
 Առանց սիրելյաց արտասուքների,
 Առանց աշխարհի, երկնից հաշտության...—
 Ա՛խ, հանգիստ թող ինձ, տեսի՛լ սոսկալի,
 Զէ՛ ներումն երբեք բաժին մատնության...

- 130 Եւ դու, հայրենի՛ք, լսում եմ արդեն,
 Կարդում ես ահեղ քո դատաւճիռ.
 Շրթունքըդ ինձ միշտ սլիտի նըզովեն—
 «Վասա՛կ, այս ի՞նչ էր որ գլխիս բերիր»...
 Ահա կենդանի դու մի կշտամբանք
 135 Կանգնած առաջիս, պըսակըդ փետած,—
 Ես—ապուշ մատնիչ, բաժինըս—տանջանք,
 Այս դերեզմանում հավիտյան փակված:

- Ո՞վ մատնիչ... Վասա՛կ... շարժվեցե՛ք, պատե՛ք,
 Տե՛ղ, կարկո՛ւտ, մրրի՛կ, դարկեցե՛ք գլխիս.
 140 Դու, հավատարի՛մ պողպատ, իմ ընկե՛ր,

Կուրծքըս պատառի՛ր—արյունը սրտիս
Թող սև հեղեղով հերքըս լըվանա,
Ճակատիս դընե անեծքի կընիք,
Թող դարեր անցնեն, աշխարհն իմանա—
145 «Անա՛րգ փասակը մատնեց հայրենիք»...

Փետրվարի 17

ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ

1

Ե Ր Գ

Երբ նայում եմ, սիրակա՛ն,
Քո շքնադիկ դեմքի վրա,
Ես ասում եմ ինձն ու ինձ՝
Քեզ պես սիրուն ոչ ոք չկա:

5

Երբ աչերըդ սևորակ
Ես տեսնում եմ լուսատես,
Ոչինչ չկա, ասում եմ,
Պայծառ սիրուն դրանց պես:

10

Ո՛չ լուսինը, ո՛չ արև,
Եվ ո՛չ անթիվ աստղերից
Չկա մինը սիրունիկ
Քո գրավիչ աչերից:

15

Երբ վարդագույն շրթունքիդ
Ջերմ համբույր եմ դրոշմում
Ավել ոչինչ չկա քաղցրիկ
Քո համբուրիցդ եմ ասում:

20

Իսկ երբ, աննմա՛ն, քեզ գրկած
Կրծքիս սխմում եմ սիրավառ,
Ինձնից, ասում, երջանիկ
Չունի այլ ոք ողջ աշխարհ:

Ապրիլի 7

2 ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Իմ հոգին, իմ միտքը, իմ սիրտ
Հայաստանումն է սիրուն.
Ես այստեղ եմ, բայց մտքով
Միշտ այնտեղ եմ ես թռչում:
5 Ուր էլ որ գնամ՝ ես դարձյալ
Իմ սիրելի հայրենիքիցս
Ես չեմ կարող հեռանալ.
Նա մասն է իմ հեք սրտիս:

Հեք հայրենիքս՝ հեք է սիրտս,
10 Նա երջանիկ՝ ես նույնպես.
Նա կարտասովի՝ ես կ'ողբամ,
Նա ուրախ է՝ կհրճվիմ ես:
Մնաս բարե, սրբազան,
Իմ թանկագին հայրենիք,
15 Գընում եմ, բայց չեմ մոռնա
Հիշատակը քո քաղցրիկ:

Ապրիլի 16

Երկնից կապուտակ պարզ հորիզոնից
 Լուսինը պայծառ ելնում է կամաց.
 Թեթև ամպերի լողալով տակից,
 Լուսավորում է երկիրը նիրհած:

- 5 Եվ փայլուն աստղեր ամենայն կողմից
 Սփռված նորա շուրջը բյուրավոր
 Ահա՛ միասին, տե՛ս, հազար տեղից
 Նայում են վերաս, աչե՛ր լուսավոր:

- 10 Կարծես բոլորն էլ շնչում են ինձ,
 Լռիկ ու մնչիկ ապշած կանգնածիս,
 Մեծ ու փառավոր այդ բարձրությունից
 Այս խորհրդավոր խոսքերն ականջիս:

- «Մենք լույս ենք տալիս, զարդարում բնություն,
 Մեծաշուք հանդես ամենայն գիշեր
 15 Տոնում ենք այստեղ պայծառ երկնքում,
 Զմայլում են որին ողջ արարածներ:

- Բայց քեզ համար է, ո՛վ դու երջանիկ,
 Որ մենք այս գիշեր այսպես դյուլթական
 Սիրափայլ ելանք քո մռայլ սրտիկ,
 20 Զվարճացնելու խաղով մանկական:

Արդ հրճվե՛ հոգիդ սիրատենչ այդպես,
Օտար երկնից տակ հոգուդ հատորիկն
Կհիշե քեզ այժմ, կտրտմե քեզ պես,
Բայց հրճվե՛ արդ դու, ամուր է սրտիկն:

- 25 Ձի մոռնալ նա քեզ բնավ հավիտյան.
Սիրաբույր ծաղկանց հոտըն անուշիկ,
Ճովողյունն թիթռանց, շունչն եթերական,
Քե՛զ են միշտ հիշում և նորա սրտիկ:

Quien no ama, no vive.

Սեր դու, սրտի պայծառ ջահ,
 Երկնից աղագծ դու սուրբ կայծ,
 Մատաղ հոգիս վառ լռասովդ
 Լուսավորե՛ արդ քթիս:

- 5 Գարունս, սիրուն իմ, արդեն
 Եկել հասել, ու ծաղիկ
 Շատ քաղցրաբույր բուրում են
 Հոտ սրտիս մեջ անուշիկ:

- Սե՛ր դու, քեզ են տե՛ս երգում
 10 Սոխակների մեղեդին,
 Զով ղեփյուռի մեղմիկ շունչն
 Եվ իմ սիրտը խնդագի՛ն:

Ապրիլի 30

Նա էլ էր պոետ վաղ ժամանակով,
 Հնչում 'ին նորա տողերն սիրանվագ,
 Բայց մեռա՞վ տաղանդ, չորացա՞վ ծաղիկ
 Ահա՛ վշտագին մընաց և սոխակ:

- 5 Բայց ի՞նչ էր արդյոք պատճառը սորա,
 Ո՞վ թառամեցրուց ծաղիկը սիրուն.
 Արեւը կիզիչ էր այն մահապարտ,
 Այլ ամոթալի՞ տաղտուկ ծուլություն:

Ապրիլի 30

Կույս դու չքնա՛ղ, կուղես ժպտա՛,
 Խայտա՛ իբրև սիրուն թռչնիկ,
 Պչրե՛, ինչպես գարնան ոսկյա—
 Անուշ վարդի լուրջ թիթեռնիկ:

Ծ Բայց հավատ՛, որ ավելի
 Հուզված սրտի քո արտասունքդ,
 Որ սիրացայտ թափեն աչկունքդ—
 Ինձ համար է ախորժելի:

Մայիսի 8

7 ՍԻՐՈ ԱՍՏՂ

Սևասքող գիշեր
Երկինքն ամպամած.
Հողմը կըփչեր
Խստաշունչ կատղած:

- 5 Բնությունն համայն
Խալվարով պատած.
Կենդանի մի բան
Դեռ չի տեսնված:

- 10 Ծառերը հսկա
Հեռվից կ'երևին.
Ու մարդ կըսոսկա
Այս անասլատին:

- Դժոխքի ձայներ
Կըլսվին աստից—
15 Անտառի հյուրեր
Կըգոչեն ահից:

- Եվ այս խալվարում
Հանկարծ լուսատես
Աստղիկ մի սիրուն
20 Թռավ նետի պես...

Նորից մութ գիշեր
Անհետ ծածկվեցաւ...
Ո՛հ, սիրո աստղեր,
Բայց է՞ր նա ընկաւ:

Մայիսի 12

8 Մ Ա Յ Ի Ս

(Մանկական երգ)

Մայիսն հկալ
Ու մեղ բերալ
Ոսկի օրեր,
Ուրախ ժամեր:

5 Սոխակն երգեց
Անտառումը
Վարդը բացվեց
Ծաղկոցումը:

10 Վտակն վաղեց
Կարկաչելով,
Դաշտն ոռոգեց
Զվարթ խաչտալով:

Գեղջուկն շտապեց
Արտը գնալ,
15 Ուրախ սկսեց
Նրա սիրտ թնդալ:

Մանկունքն հլան
Ծիծաղերես
Կանաչ, աննման,
20 Սիրուն պարտեղ:

Մայիսն եկա՛վ
Ու մեզ բերա՛վ
Ոսկի օրեր,
Ուրախ ժամեր:

Մայիսի 15

Քեզ սիրում եմ, մանուշակ,
 Աչերդ կապույտ կախարդիչ,
 Սիրում եմ հոտդ անուշակ,
 Եվ քո՝ տեսքն է դրավիչ.

- 5 Բայց սիրազգաց իմ հոգին
 Ես զոհեմ եմ կարմրավար
 Վարդին անուշ, որ ձայնին
 Լսել է քնարիս փափկալար:

Մայիսի 19

Անցնում է գետակ հանդարտ ու հեզիկ,
Վետ-վետ թռչոտում թեթև նրա ակիբ:

Հուննի սիրունիկ դեմքը հրաշալի
Խաղում է նրա մեջ այնպես սիրելի.

- 5 Աստղերը պայծառ փայլուն շողարձակ
Խոսում երեսին նորա կապուտակ:

Եվ ես նրա ափում սիզավետ ծաղկած
Փոխում եմ քայլերս ապուշ մոլորված:

- 10 Եվ երբ ականա նրա մեջ եմ նայում,
Քո սիրուն պատկերն այնտեղ եմ տեսնում:

Մայիսի 22

Այն ի՞նչ ազգ է, այն ի՞նչ ցեղ է,
 Որի կերածն է թույն, լեղի,
 Որի խմածն սառը ջուր չէ,
 Այլ արտասուք միշտ դառնաղի:

- 5 Այն ի՞նչ ազգ է, այն ի՞նչ ցեղ է,
 Որի ճակատին շողն արևի
 Չէ խաղացել երբեք ոսկե
 Եվ փայլելու չէ, երևի:

- Որի հուսո նշույլն պայծառ
 10 Արդեն վաղուց է խավարած...
 Որի կենաց մութ ճանապարհ
 Փուշ տատասկով է միշտ պատած:

- Որի առաջ դուռն կենսաբեր
 Խստասիրտ փակեց մարդկութուն...
 15 Որի համար այգն լուսաբեր
 Մնաց լուկ երազ, ունայնությո՞ւն:

Մայիսի 22

12 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

- Ինձ ասացին՝ ճշմարտություն դու սիրի՛ր,
Հեռո՛ւ պահիր քեզ շողոքորթ ցածերից,
Հզոր գրչովդ միշտ դու սուտը հալածի՛ր,
Մնա՛ աներկյուղ դու հաստափոր աղայից:
5 Եվ երջանիկ կյանքի պատկերն բաց արին,
Եթե ես այս հետևեի խրատին:

- «Բարի մարդիկ», մտածեցի ինձն ու ինձ.
Եվ համեմատ այս խորհրդին ուղղեցի
Կյանքիս նավի ես իմ դեկը թյուր շավղից
10 Եվ երջանկանալ այնուհետև ուղեցի:
Եվ ճշմարիտ նախկին կյանքիցս ես զզված
Լավին էի ուզում դիմել զգաստացած:

- Բարի մարդիկ... նրանք ինձ քաղցից մեռցրին
Որովհետև... նոցա խրատն էր շատ բարի...
15 Մեռած էի թե դիմեի ճշմարտին
Ու լիք ջերը չպաշտեի աղայի:

Մայիսի 23

Ճակատըդ պայծառ դաբնով պսակած
 Զքնաղ Մուղայի թևերի տակին
 Հանգար դու, հանճա՛ր, մեղանից մոռցված,
 Զոհ քո բարեմիտ ցանկություններին:

- 5 Դու «Աղատությա՛ն» ձայն էիր տալիս
 Հայրենակցացըդ, թոթափել շղթան,
 Դեմ տալ հարվածին, հեռա՛լ խավարից՝
 «Ողջո՛ւյն լուսաբեր շողդ առավոտյան»...

- 10 Դու աղատ, իբրև արտուտ օդապար,
 Մռայլ երկնքում քո սուրբ հայրենյաց,
 Հեռատես գոչում էիր անդադար
 Թե մոտ է այդը աղատ փլատակաց...

- 15 Բայց վանդակապատ դու խավար խորշում
 Օտար աշխարհի աչերդ փակեցիր,
 Թուլյնը մահաբեր քո աղատ սրտում,
 Ամբոխից մնացած խիղճդ անկարեկիր:

Մայիսի 28

14 ԹԵ ԼՈՒՍԱՆՈՒՄ Է

- Թե լուսանում է, առավոտ դալիս,
 նշույլն արեին
 Մտնում է ուրախ իմ պատուհանից,
 ժպտում խնդադին,
 5 Եվ թռչնոց զվարթ երգն առավոտյան
 Դուրս է ինձ կոչում
 Սիւլավետ սլարտեղն, ուր սիրուն աննման
 Ծաղկունք են բուրում,
 10 Թե անցնում ցերեկ, երեկո դալիս,
 Արեւը փախչում
 Դադար առնելու կապույտ երկնքից,
 Եվ լուսինն փայլում,—
 Նույն վիշտն ու նույն ցավ հոգիս են մաշում
 Թե արդյոք ի՞նչ է
 15 Իմ մութ ապագան, որ միշտ իմ աչքում
 Անլույս, մռայլ է...

Մայիսի 29

Անցնում է Զանգին ալեկոծ կատղած,
 Ժայռերի միջով, ահարկո՛ւ սկաներ—
 Ափերն հարվածում խրոխտ ալիքովն,
 Ժայթրում է բերնից թույնը մահաբեր...

- 5 Փրփրագեղ թռչում, ցածնում է նորից,
 Դժոխսաձայն զոռոցքն երկիր թնդացնում,
 Սոսկում է նորա մարդ ցատկումներից,—
 Առյուծն ամեհի՛ սոված վանդակում:

- 10 Երկինքն որոտաց, փայլակը ցոլաց
 Եվ զղրդեցան սարեր ու ձորեր...
 Զանգին մոլեգնած, բաշը դիզացած
 Առաջ է սողում. հրացայտ աչեր
 Վառվում են նորա, կայծեր արձակում...
 Ոչի՛նչ նրան դեմ տալ չէ համարձակում:

Մայիսի 30

16 ՔԱՐԱԺԱՅՌ

Քնած է ափում
Սև քարաժայռ.
Ծովն է ծփում
Միշտ անդադար:

- 5 Առավոտ, իրկուն
Մառախլապատ,
Լույս չէ տեսնում
Նա շողակաթ:

- Գիշեր եկավ.
10 Սոսկավիթխար
Վե՛ր բարձրացավ
Հսկայաբար:

- Թեթև ամպեր
Վրայիցն անցնում,
15 Նորից դեպ վեր
Են ծրարվում:

- Իսկ նա մենակ
Անապատում
Այս կապուտակ
20 Լուռ է, ողբում...

Մայիսի 30

- Մըթին գիշերին խավար երկնքով
 Լուսադգեստ հրեշտակ թռչում է մեղմով.
 Խավարի միջին խարխափող աղգաց
 Դեպ լույս է կոչում կենսատու խոսքով,
 5 Երկնային ոգին նոցա ներշնչած:

- Եվ ամենեքյան նորա գիրկն սիրով
 Դիմում են զվարթ դեպ լույս շտապով...
 Բայց մի անկյունում սլաճառ երկնից տակ
 Պատած է դեռևս նախկին խավարով
 10 Երկրորի վրա մի աղգ ավերակ...

Հունիսի 4

Ոսկի հասկեր, սիրուն ծաղկունք
Այն մարգերը թո՛ղ պճնեն,
Ուր քաղցրատես քո սե աչկունք
Ուրախ զվարթ կընայեն:

- 5 Ուրախության աշխույժ ջրեր
Թո՛ղ աչերըդ թաց անեն,
Մարգարտահատ երբ արցունքներ
Կաթ կաթ նրանցից ցած գլորվեն:

- 10 Վարդ, մանուշակ ու նունուֆար
Անուշություն թո՛ղ բուրեն
Ու զարդարեն այն ճանապարհ,
Որով օրերդ կըսահեն:

- Թո՛ղ, նազելի՛, կենացդ կամար
Պարզ խնդազին միշտ փայլե,
15 Սիրո երգիչն ձեռին քնար
Երգ ոլորուն քեզ երգե:

- Ոսկենշույլ աստղիկդ պայծառ
Միշտ քեզ լույս տա՛ աննվաղ,
Եվ սոխակի քաղցրաբարբառ
20 Ջայնն քեզ հնչե անպակաս:

Հեռու է ինձնից արևի լույսը,
 Ամպոտ է երկինք, մռայլ է վրաս...
 Անդադար խաբում է ինձ իմ հույսը,
 Հեռու է ազատ աշխարհն ու անհաս:

- 5 Խափարով պատած մի մութ անկյունում,
 Անցնում են օրերս լացով ու ողբով.
 Սուգն ինձ միշտ ընկեր՝ չունիմ ես խնդում,
 Ա՛խ, ո՛ւմ եմ սպասում ես տառապանքով...

- 10 Դու ազատութ՜յո՛ւն, սուրբ ազատութ՜յուն,
 Իմ կյանք դու, իմ հույս, դու իմ նպատակ,
 Արդյոք ե՞րբ պայծառ քո հորիզոնում
 Ապաստան պիտ տաս դու ինձ ավերակ:

Հունիսի 11

Վառվում են աստղերը երկնքում,
 Լուսինը լողում է հեզիկ
 Փշում է զեփյուռը մեղմիկ.
 Նիրհում է բնությունը: Լռությո՞ւն...

- 5 Թեթևշարժ ամպերի սավերը
 Անցնում է երկրի վրայից.
 Հանդարտիկ ջրի մեջ երկնից
 Խաղում են ոսկեփայլ շողերը:

- 10 Անսահման օվկիանում գիշերին
 Թռչում է նավակը սրընթաց,
 Դիմում է երկիրը ուխտած.
 Ուղեցույց է նորան հո՞ւյսն անգին:

Հունիսի 12

- Երբ ես կիջնեմ գերեզման,
 Վերջին հանգիստ ամենքիս,
 Եվ աշխարհիս այս ունայն
 Հեռու կլինիմ ախտերից,
 5 Խաղաղ հոգով ես ննջած
 Եվ լռություն շուրջ տիրած,

- Սիրո ծաղիկ դու սիրուն,
 Դու հեշտաբույր վարդ անուշ,
 Քո հյուրընկալ թփերում
 10 Բուսած շիրմիս վրա քնքուշ
 Անշուք մոռցված ամենից,—
 Վա՛րձ մշակին աշխարհից,—

- Թող սոխակը քաղցրաձայն
 Աստեղափայլ գիշերին,
 15 Թող երգ երգե նա միայն
 Սնդավաճան սիրողին,
 Որի սիրտը սաստկադին
 Չդիմացավ հարվածին...

Հունիսի 13

22 N N N

Սիրաբույր վարդի
Ծաղկուն թանկագին
Բուրումը անուշ
Զէ ինձ համար:

5 Քաղցրախոս թռչնի
Սոխակի սիրուն
Քնքուշ մեղեդին
Զէ ինձ համար:

10 Հեշտաշունչ մեղմիկ
Զեփյուռի շունչը
Եվ նորա գգվանք
Զեն ինձ համար:

15 Բայց քո սրտահույզ
Աչաց արտասունքն
Վարդագեղ այտիցդ
Ինձ համար է...

Հունիսի 13

Բյուրեղափայլ բարձր ժայռից
 Վտակն է վազում հանդարտիկ,
 Խաղաղ մրմունջն ուրախալից
 Կուսին թռվում է սրտիկ:

- 5 Մաղկադալար սիրուն ափում
 Նա կանգնած է նազելի,
 Ջքնաղ պատկերն տեսնում ջրում
 Եվ ժպտում է սիրելի:

- Հավանում ես դու քեզ, ո՛վ կույս,
 10 Դու սիրեցի՞ր ինքզեք քեզ,
 Վե՛հ իդեալ իմ սուրբ սիրույս:

Այո՛, հրեշտա՛կ. գեղեցկության
 Արած սեղան ճակատըդ
 Երկնի՛ց առաջ ես սիրարժան:

Փոքստոսի 12

Հիշում եմ լուսնի կախարդիչ փայլը,
 Հիշում եմ պայծա՛ռ աստղերն երկնքում,
 Սիրուն ամպերի թեթեշարժ քայլը,
 Եվ նիրհը բնության ծառերի ստվերում...

- 5 Հիշում եմ ինչպես դու սիրատենչիկ
 Ամոթխած դեմքով հետս էիր ճամուռ...
 Եվ ես հիացմամբ մերթ դեպի երկինք
 Եվ մերթ քեզ վրա աչք էի ձգում:

- Մերթ տեսնում էի քո դեմքի վրա
 10 Ինչպես դյուլթական զույգ աստղ էր փայլում,
 Եվ մերթ կուզեի գիտենալ ի՛նչ կա
 Քո սրտում և ի՛նչ է քեզ խռովում...

- «Սիրում եմ ես քեզ, ասացի, անմա՛ն»,
 Սրտահույզ խռոված երեսդ դարձրիր
 15 Եվ հավատալ իմ խոստովանության
 Չէիր վստահում, զի սպասում չէիր:

- «Սիրում եմ, նորից կրկնեցի, հրեշտա՛կ,
 Սիրում եմ ես քեզ, այո՛, հրաշագե՛ղ...»
 Իբրև մարգարիտ աչքումդ սևորակ
 20 Երկու կաթ արցունք երեցավ անմեղ...

Եվ նա կարդացի, ո՛վ կույս, քո սրտում
Առաջին սիրո կայծը հրավառ,
Հասկացա երեսդ է՞ր էիր դարձնում
Հասկացա սրտի քո հուզման պատճառ:

- 25 Եվ մեր առաջին սիրո վկա էր
կուսինն երկնքում հիասքանչ սիրուն,
Եվ խորհրդավոր ցոլուն վառ աստղեր,
Ծառերի վրայից զեփյուռի շնչուն:

Սեպտեմբերի 2

Ոսկի ու արծաթ քո սընդուններում
Թանկագին քարեր կնոջդ վըրա,
Քո տանը փայլը աչք է շլացնում:
Բայց քեզ ի՞նչ օգուտ... դա քեզ բաղդ չի տա:

- 5 Կրեսոս անունդ աշխարհ հռչակված
Փառքով անցնում են օրերդ պալատում
Ժլատությունն երեսըդ է սևացրած—
Բայց ինձ հավատա՛, փուշ շա՛տ քո փառքում:

- 10 Աղքատ փինաչին յուր մերկ խրճիթում
Քեղանից հարուստ առանց կոպեկի.
Զի բաղդը նորա ժպտում է շեմքում
Եվ աչքի լույսն փնա ամեն մեկի:

- Բայց դու, ինձ ասա՛, թշվա՛ռ արարած,
Արդյոք որի՞ն հս ոսկովդ սիրելի.
15 Երբ եղբորդ համար քսակդ է փակած
«Արհամարհանաց» հս լոկ արժանի:

Սեպտեմբերի 3

Սիրուն գարուն, ոսկի՜ օրեր, դուք անցար
 Սիրո ժամեր, ուրախ բույեր, հեռացար,
 եկավ աշուն տրտմազգեցիկ շարագույժ
 Զարդից անտառն զրկեց, երգից նա անուշ:

- 5 Սոխա՛կ, ո՛ւր ես... ո՛ւր ես, սե՛ր դու և հանգիստ
 Անհոգս ուրախ դու մանկություն օրհնյա՛լ միշտ...
 Երկինքն շունի յուր ժպիտը սիտալիր,
 Անղա՛րդ, անշո՛ւք, ավա՛ղ, ահա՛ ցուրտ երկիր:

- Գարունն անցա՛վ... սեր չըկտ և սոխակը
 10 Անտառն թողած թռավ անցավ գետակը.
 Թառամեցան ծաղիկները, տերեւներ
 Վայր են իջած, կոծով թողել մերկ ծառեր...

- Ո՛հ, և դու, սի՛րտս, դու քարացար, սառեցար,
 Գարունդ անցավ, աշուն եկավ, որբացար.
 15 Բայց քեզ շուտով (թե գերեզման դու իջար)
 Սև գետինը քեզ կըզգվե մայրաբար...

Սեպտեմբերի 3

27 ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳ

Ո՛ւր ես, ո՛ւր ես, նազելի՛,
 Ո՛ւր հեռացար ինձանից.
 Արդյոք ո՞ր ձեռն անգութի
 Բաժանեց մեզ իրարից:

- 5 Քաղցրախոս դու իմ սոխակ,
 Ինչո՞ւ թռար ինձանից
 է՞ր զրկեցիր անուշակ
 Ինձ քո քնքուշ երգերից:

- 10 Դու կարմրաթուշ իմ վարդիկ
 Թառամեցա՛ր, չորացա՛ր...
 Անշատեցին շար մարդիկ
 Քեզ ինձանից, սիրո՞ւն յար:

- 15 Ես քեզի հետ, սիրակա՛ն,
 Հարուստ էի ամենից,
 Եվ իմ գանձն էր գովական
 Քա՛ղցր համբույր քո շրթունքից:

- 20 Ստրուկ տեղովս տեր էի
 Քեզնով, չքնա՛ղ, և իշխան.
 Իմ իրավունքն էր երկրի
 Քո մի հայացքն աննման:

Ո՞ր չար աչքն է հիանում
Այժմ քեզնով, իմ հրեշտա՛կ,
Սիրուն դեմքիդ նախանձում
Ո՞ր երկինքն է կապուտակ:

- 25 իմ կյա՛նք, իմ շո՛ւնչ, է՞ր տանջում
Ու մաշում ես իմ հոգին.
է՞ր, սիրակա՛ն, չես լսում
Իմ խղճալի թույլ ձայնին:

- Լալով աչերս կուրացան...
30 Ո՛վ իմ հոգյակ, խղճա՛ ինձ.
Արցունքն աչքումս չորացան...
Ո՛վ իմ հրեշտակ, գթա՛ ինձ:

- Թռի՛ր, թռի՛ր, մոտս արի՛,
Ընկի՛ր գիրկս, պինդ սեղմեմ.
35 Թշերդ քնքուշ ալ վարդի
Անուշ անուշ համբուրեմ:

- Արի՛, հոգիս սփռփի՛ր,
Սիրտըս լցրու պալատան—
Սիրտըս խոցվա՛ծ—շուտ թռի՛ր,
40 Ընկի՛ր գիրկըս, սիրակա՛ն...

Սեպտեմբերի 10

Աշխատեցաք անխոնջ, խեղճե՛ր,
Դրախտ դարձրիք անապատ,
Քուն շունեցաք շատ գիշերներ
Զըթուլացաք հուսահատ:

- 5 Արևակեղ դուք արտերում
Քշում էիք եղները,
Դառն քրտինքով էիք ջրում
Զեր օրական պարենը:

- 10 Բայց սուրբ պտուղ սուրբ վաստակի
Դուք գիտեիք ձերը չէ:
Արյուն-քրտինք ձեր ճակատի
Զե՛ղ կերակուր տալու չէ:

- Եվ նահատակ վսեմ կոշման
Տանում էիք անմոռնչ
15 Դուք խաչը ձեր վրկայության,
Տանջվում էիք լուռ ու մոռնչ:

- Հույսն էր ձեզի միակ խրախույս—
Ահա՛ և ժամն անձկալի,
Հառա՛ջ, հառա՛ջ օ՛ն դեպի լույս,
20 Մի անձն ազատ, մի հոգի...

Սուրբ արյունով ազատության
կվանաք պիտ, ո՛վ քաջեր,
Դուք սեղանը ձեր փրկության,—
Հառա՛ջ, հառա՛ջ անվեհեր:

Սեպտեմբերի 11

Ծաղկազարդ է հովիտ,
 Դալարիք գեղեցիկ
 Զվարթ ու քաղցրաժպիտ
 Ծաղկանց հոտն անուշիկ:

- 5 Եվ թիթռունք ճախրում են
 Թփից թռւի թռչելով,
 Եվ համբույր տալիս են
 Ծաղկանցը գգվելով:

- 10 Զինչ վտակ վազում է,
 Հեշտ զով է տարածում.
 Շուշանին փարում է
 Կանաչ յուր ամբերում:

- Եվ արեն հանդարտիկ
 Խաղում է ջրերում.
 15 Ժպտում է սլարդ երկինք
 Նրա հստակ հատակում:

Սեպտեմբերի 11

- Անո՛ւշ տեսիլ, քա՛ղցր երազ...
 Եվ իմ հոգին բերկրացավ.
 Հուզված սիրտըս ծանոթ վայրում
 Առ ժամ թեև լոկ հանգչավ:
 5 Եվ քո գրկում, քա՛ղցր Հայրենիք,
 Մանկությանս անհոգ օրրան,
 Առ ժամ մոռցա սրտիս վերքերն
 Անուշ քունը աչացս վրան:

- Եվ որ անտառն կանաչադարդ
 10 Թռչնոց երգից թնդալով
 Երկինքն օրհնում էր խնդամիտ
 Եվ ուր լիճը ծփալով
 Ծաղկաժպիտ յուր ափերում
 Զով էր փչում հեշտաշունչ
 15 Եվ վառ վարդին համբուրելով
 Առվակն անցնում անտրտունջ,—

- Ծանոթ սոսու ստվերի տակին
 Ննջած էի անվրդով...
 Ա՛խ, քա՛ղցր երազ, շքե՛ղ տեսիլ...
 20 Եվ հրեշտակի նա դեմքով,
 Զքնաղ իբրև նիմփան երկնից,
 Պայծառ իբրև վառ աստղիկ
 Թեթևաշարժ դեփյուռի պես
 Վրաս խոնարհեց յուր թևիկ:

- 25 «Քնի՛ր, հոգյա՛կս, քունդ անո՛ւշ,
խաղաղ այսպէս կյանքդ լինի
եւ երջանիկ, աղատ, ուրախ
Իբրեւ թռչնակ դաշտերի: -
Ես հյուսիսում դժնյա և ցուրտ
30 Սիրտ եմ պահում ջերմագին
եւ սեր անխաբ, անդավաճան
Իմ անմոռաց հոգյակին»:

Սեպտեմբերի 14

Կարմրաթուշիկ վարդն ասաց
 Յուր սիրահար սոխակին,
 «Ինձ մի՛ թողնիր որբացած,
 Իմ սիրական թանկագին...

- 5 Կանաչի՛ր դու իմ կողքին՝
 Իբրև սիրուն մի թփիկ,
 Կաղնու ստվերի մենք չափին
 Մեր կյանք կանցնենք երջանիկ...

- 10 Կամ ինձ էլ տո՛ւր քեզ նման
 Շախրաստաց թեփկներ՝
 Եվ մենք օդում անսահման
 Կանցնենք ոսկի շատ օրեր»:

- 15 Բայց անդուծը հեռացավ
 Խեղճին թողեց ողբակոծ,
 Դեպի երկիրն բարձրացավ,
 Խառնվեցավ այլ թռչնոց:

Սեպտեմբերի 16

- Երջանի՛կ օրեր, երջանի՛կ օրեր,
 Սիրո ծաղկաբույր ոսկի՛ երազներ,
 Անցաք գնացիք դուք քամու նման,
 Տարաք արցունքներ, հոյս ուրախության...
 5 Երբ անհոգ լարերն անուշ բերկրությամբ
 Զվարթ ժպիտով իբր երկինք անամպ
 Կանաչ պարտիզում հրաշագեղ կուսին
 Գիտեին երգել սերը խնդագին:
 Բայց այժմ բեկբեկված քնարն խեղճ երգչի,
 10 Կորցրած իդեալն չքնաղ յուր սրտի,
 Խուլ հառաչանք է միայն արձակում
 Եվ սիրտ պատառուղ արցունք անկշտում:

Սեպտեմբերի 18

- Իրիկվան ցողը թավշյա արտաին
 Սփռում է իբրև մարգարտի հատեր,
 Իբրև բերկրության շքնադիկ արտին
 Սիրատենչ կուսի անուշ արցունքներ...
- 5 Երկինքը անամպ ուղարկեց երկին
 Պարզ գիշեր սիրուն և վառ փայլեցան
 Իբր աչեր գողտրիկ աստղերն՝ ու լուսին,
 Փովեցան թևերն լուռ խաղաղության:
 Լուռ է բնություն, նիրհում անվրդով,
 10 Թռչունը բընում դադրել է երգից,
 Լուսինը միայն սիրահար աչքով
 Հսկում է անքուն պայծառ երկնքից:
- Թովի՛շ է բնություն, հրաշալի՛ պատկեր...
 Հըճվանք, բերկրություն քաղցր արբեցումի,
 15 Սիրո ցանկալի անուշ արցունքներ—
 Դու ալ ի՞նչ ունիս, աշխարհ աննման:
 Չքնա՛ղ դու երկիր, կուսակրո՞ն աշխարհ,
 Անմատուց սեղան սուրբ գեղեցկության,
 Ա՛խ, ինչու բաղդը խստասիրտ ու չար
 20 Քեզ պիղծ ոտների անում է կոխան...
 Ո՛հ, թե հեք ոգիդ զարթի յուր բնից,
 Քաջությունն հիշե յուր վեհ նախնյացը,
 Գիտեմ, շղթաներն կթոթափե վրայից
 Նոր շունչ կըփչե ավերակացը...

Արյուն-արցունքով թշվառ մայրն այրի
 ձանրա էր ձգում յուր միակ որդուն,
 Անդրանիկ որդուն դեպ դաշտըն մարտի,
 Զոհվելու աղգին, յուր եղբայրներուն...

- 5 «Որդյա՛կ իմ, թեև դառն վշտիցը
 Մաշվում է հոգիս, հեքացյալ հոգիս,
 Բայց գնա՛... գնա՛ թող քո սրտիցը
 Վաղև ջերմ արյունն հովտում ծաղկալից...

- Այնտեղ եղբարքըդ, վե՛հ, ազատ հոգիք,
 10 Փշրում են իրանց կուռ շղթաները,
 Վարդագե՛ղ արյամբ կանաչ, դալարիք
 Լըվանում նաև կուռ շղթաները...»
 Շունչն ազատության, սուրբ ազատության,
 Նիրհած սրտերին նորից կյանք փչեց,
 15 Եվ վսեմ գործին անվեհեր պաշտպան
 Դեպի դաշտն արյան զոհվելու կոչեց:

- Եվ պառկած այնտեղ ախոյանների
 Հպարտ կրծքի վրա հուսն ժպիտով,
 Ծաղկում են, փթթում ազատ աշխարհի
 20 Կարմրաթուշ վարդեր գեղեցիկ փայլով:

<Սեպտեմբերի 30>

Կույս հրաշագեղ, կույս նազելի՛,
Ասա՛, է՞ր ես ինձ տանջում.
Կամ տառապյալ դու իմ սրտի
Վերքերն նորից բաց անում:

- 5 Հեռու քեզնից, ո՛վ իմ հոգե՛լի,
Հանդիստ չունիմ բնավին,
Կույս չէ տալիս ինձ արեգակ,
Ասողերն հանգած երկնային:

- 10 Միայն սրտումս միշտ տեսնում եմ
Զույգ թովչական վառ աստղիկ,
Այն, ի՛մ հրեշտակ, քո աչերն են,
Արեգիցն էլ գեղեցիկ:

- Թե կյանք ունիմ, դեռ շնչում եմ
Նվ դովարար հեշտ այեր—
15 Ո՛վ, այն դու ես, աստվածեղեն,
Իմ շունչ տվող կենսաբեր:

- Զքնաղ ծաղկանց դու թագուհի,
Սիրուն հովտի դարդ ու պսակ
Սիրո երգեր քաղցր հեշտալի
20 Միշտ երգում է քեզ սոխակ:

Եվ իմ սիրտը քեզնով այրված,
Քեզ համար է միայն զարկում,
Աննման տեսքովդ քո կախարդված
Միայն քեզ է միշտ կոչում...

Հոկտեմբերի 2

Ա՛խ, հանդիստ առ և անցյալը մոռացիր,
 Որ կեղծ երես քեզ զգվում էր քաղցրությամբ,
 Փռւչ երազներ, հույս խաբուսիկ, ժամ պատիր.—
 Նոր երկնքում քեզ պիտ ծագե լույս անամս:

- 5 Իբրեւ մատաղ դու բնություն կը փթիս,
 Իբրեւ ծաղիկ թարմ կը ծաղկիս սիրաբույր,
 Աստղիկդ երկնում կը ժպտա նոր լուսալից...
 Ա՛խ, մի՛ թափիր արցունք բաղդիցդ դու իզուր:

- Փոքր համբերիր, թող որ անցնի փոթորիկ
 10 Եվ թռթափե վրայից երկիրն շղթաներ,
 Անդորրավետ քեզ կը դառնա կյանք քաղցրիկ,
 Կը դարդարին քեզ վարդահյուս պսակներ:

Հոկտեմբերի 6

Զարկում է պերճագեղ շատրվան,
 Սփռում է վառ ծաղիկանց մարդարիտ
 Եվ արփին ոսկեհոռ առվոտյան
 Զգում է զվարթ նոցա յուր ժսկիտ:

- 5 Կախարդիչ ցոլում է բյուր փայլով,
 Զվարճագեղ դգվելով նշույլներ,
 Սիրով է մրմնջում խայտալով,
 Գլորում բյուրեղյա արցունքներ:

- 10 Փափկասեր շուրջ փթթած վարդենիք
 Քաղցրությամբ բուրում են հեշտալի...
 Եվ կուսանք սիրափայլ, զերթ ծաղիկ,
 Ճեմում են կուռ-կռան նազելի:

- Սևորակ, զերթ թուխակեր մութ երկնից,
 Ցոլում են հիասքանչ նրանց աչեր,
 15 Դրախտը Եդեմա լուսալից
 Ասես թե դոցանում թաց լինենր...

- Մարմիններն հրաշագեղ մարմարյան
 Թեթևա՛րժ աչնպես, և թարմ, աշխույժ,—
 Գանձ անդի՛ն անձկալի քո, սուլթա՛ն,
 20 x

Եւ թիթոունք իբր ազատ դաշտերի
Ճախսում են շուրջ, խմբով միասին,

.
.

- 25 Նա նստած արբեցմամբ նայում է...
Հուրիններն դրախտի թովում են
Նորա սիրտ... նա տուփոտ հրճվում է
Աննման պատկերովն պալատեն...

- Հայացքը փայլեցավ սուլթանի...
30 Կախարդված ձայնում է, և հրեշտակ
Երկնային շտապում է.....

.

Մռայլ է երկինք, ամպամած,
 Ոչ մի աստղիկ չէ փայլում,
 Լուսինն էլ է թափնված
 Սև թուխպերի հետևում:

- 5 Քո աչերը, իմ հոգյակ,
 Սև են ինչպես այդ թուխպեր,
 Կամարածե հոնքիդ տակ,
 Յուրուն ինչպես վառ կայծեր:

- 10 Եվ թե սիրուն քո աչեր
 Այժմ լինեին երկնքում,
 Ոչ մի լուսին կամ աստղեր
 Չէին լույս տա կամարում:

- Այնպես պայծառ, վառվռուն,
 Ինչպես սիրուն քո աչեր.
 15 Այդ մութ թանձր խավարում
 Կը վառվեին արևներ:

Հոկտեմբերի 15

39 ԱՅՆ ԵՐԱՊ ԷՐ

Ես քնած էի. նինչս անուշ էր,
Ինչպես նիրհը լուռ հովտի.
Թռչնոց երգը մեղմ քնքուշ էր,
Քաղցր էր բուրում վարդենի...

5 Ոսկի՜ երազ. երանության
Բաց էր աշխարհն առաջիս,
Եվ ժպիտը հավերժ դարնան
Զվարթ փթթած էր շրթունքիս:

10 Նինչս խաղաղ էր ու անվրդով,
Երազս անուշ. ես տեսա
Իմ հոգյակը ուրախ դեմքով
Հրեշտակ իջավ ինձ վերա:

Սիրո անդին համբույր դրոշմեց
Իմ վառվռուն շրթունքին,
15 Շուշանագեղ ձեռներն սլարդեց
Եվ ինձ գրկեց քնքշագին:

«Արի՜ գիրկս, ասաց նա ինձ,
Իմ սիրելի թանկագին,
Հեռո՛ւ գնանք այս աշխարհից
20 Երջանկության սուրբ երկիրն:

Քաղցր երգերով սիրանւլագ
Քեզ քուն կդնեմ իմ գրկում.
Ուրախ կանցնե անուշ մեր կյանք
Ծաղկազարդար մարգերում»:

- 25 Եւ զարթեցա... աչերս բաց են...
Ասացե՛ք, այն երա՞զ էր,
Բայց շրթունքս դեռ այրւլում են,—
Ի՞նչ ջերմագին համբույրներ...

Տխրագին քամին սուլում է, հեծում,
 Ծառի վրա միակ տերեն տատանում.
 Արդեն ցուրտ ձմռան փչում է շունչը,
 Լուում է վտակի խաղաղ մրմունջը:

- 5 Անտառն մերկացած յուր զարդ գեղեցիկ,
 Կանգնած է այրի կին սգազգեցիկ.
 Եվ քամին փչում, հեծում է տրտում,
 Ծառի վրա միակ տերեն տատանում:

- 10 Մահու խորթ որդի մնացել է մոռցված,
 Վերջին շնչի վրա խեղճ տերև շորցած...
 Ձմեռը մոտ է. նա դողդողալով
 Կպչում է ոստին հարազատ սիրով,
 Դժվար է ասես բաժանվիլ ոստից,
 Հեռանալ անքույթ սիրուն անտառից...

- 15 Բայց դարձյալ փչեց բուռն հողմը սաստիկ
 Բաժնեց հարազատ ոստից տերևիկ...
 Եվ ծառը վերջին տերևից զրկված
 Անսփոփ մենակ սգավոր մնաց:

Հոկտեմբերի 15

41 ԱՐՏՈՒՏ

- Ողջ գիշերը մնջիկ
Տխուր անցուցած,
Արտուտը երգեցիկ
Բարձրացավ սթափած:
- 5 Շողերը ոսկեվառ
Ողջունեց սիրուն
Եվ երկնքում պայծառ,
Շքեղ զարդարուն,
Քնքշաձայն սկսեց
- 10 Յուր երգն ոլորուն.
Իմ սերն էլ զարթեց
Երգով իմ սրտում:

Հոկտեմբերի 17

Ծաղիկի թառամած, ծաղիկի շորցած
ինչո՞ւ եմ ես քեզ սիրում.

Երբ տեսնում եմ քեզ իմ առաջս
է՞ր է սիրտըս դող ընկնում,

5 էր եմ քեզ սիրում...

Ո՛հ, ի՛նչ քաղցր է քո հիշատակ
ի՛նչ թանկ, շորցած դու ծաղիկ.

Ո՛վ քեզ տըվաւ ինձ, հրեշտա՞կ,
թե կույս չքնաղ գեղեցիկ,

10 Ա՛խ իմ սեր ծաղիկ:

Կույս հրաշագե՛ղ, հրեշտակ գեմքով,

Որ այս ծաղիկն ինձ տվիր,

Գիտե՞ս ծաղիկդ ի՛նչ արցունքով

Միշտ տեսնում եմ սիրալիր...

15 Հոգյա՛կ, ինձ հիշի՛ր...

Դու իմ սերն ես, ծաղիկ սիրուն.

Սիրում եմ քեզ ջերմ սրտով,

Թեև շորցած դու այս էջում

Կուռ ընկած ես հայացքով,—

20 Կից եմ քեզ հոգով:

Կուղեի մեռնել... բայց մահս մոտ չէ
 Եվ նոր եմ ծաղկում ես մատաղ կյանքով.
 Կըլսեր սերըս, բայց նա իմը չէ
 Եվ մի ալ մատաղ դարկում է շնչով...

- 5 Ա՛խ, ի՛նչ կուղեի մոռանալ աշխարհ...
 Բայց ի՛նչպես մոռնամ քեզ, իմ սեր անգին.
 Վըրաս գոռում են ամպերը խավար,
 Պայծա՛ռ է, հոգյա՛կ, սլատկերդ երկնային:

Հոկտեմբերի 29

44 ԱՆԽ, ԻՆՉ ԵՄ ՈՒՋՈՒՄ...

Ա՛խ, ի՞նչ եմ ուզում, ինքս էլ չգիտեմ.
 Ես ո՛ւր եմ ձգտում անհանգիստ հոգով.
 Եվ ի՞նչ է ճնշում սիրտս—չգիտեմ,
 Չգիտեմ... սիրտըս պատած է մռայլով...

- 5 Ավա՛ղ, երկիրը շուրջս սառած է,
 Հեծում է հողմը, տխուր բնություն...
 Բայց մի՞թե ազնիվ զգացմունք մեռած է,
 Թմրած իբր երկիր զգայուն սրտում:

- 10 Սիրտս ցավում է, հանգի՛ստ է խնդրում.
 Դադրե թող մրրիկ, երկինքը պարզի,
 Թող խաղաղ հանգչե խոնջած բնություն...
 Թող փակե աչերն սիրտըս ու ննջի:

- Ա՛խ, ի՞նչ կուզեի մոռանալ աշխարհ
 Ու քաղցր քնով ննջել հավիտյան...
 15 Բայց ի՞նչ է սիրտս տանջում անդադար,
 Հեռու է դեռևս իմ մութ դերեղման:

<Հոկտեմբեր>

45 ԸՆԿԵՐԻՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Երբ թոթափե երկիրն կապանք,
Եվ շունչ փչե գարունն նորան,
Երբ որ շքեղ ծաղկի նոր կյանք
Եվ հորդ վաղեն արցունք լերան,

- 5 Թնդան հովիտ, դաշտ ու անտառ
Ուրախության նվազներից,
Եվ հաշտ նայե մեղ լուսավառ
Շնորհատու արեգն երկնից,—

- Կըզարդարեն, գիտեմ, ծաղկունք
10 Գերեզմանը քո անմոռաց,
Անոգ կերգեն ազատ թռչունք
Շուրջը նորա երգ սիրազգաց.

Բայց դու կըմնաս անշարժ դարձյալ
Քո նեղ տանը խավարային.

- 15 Պայծառ շողեր քեղ լույս չեն տալ,
Քեղ չի հասնիլ խոխոջն առվին...

Այսպես և միշտ կանցնեն տարիք
Կըծաղկի շիրիմդ, կըմամոռտի...

- Միայն այլևս քո գեղեցիկ
20 Պատկերդ երբեք մեղ չի ժպտի...

Նոյեմբերի 3

Տեսե՛լ ես կուսին,
Կանգնած լճափին—
Տիպար աննմա՛ն
Սուրբ գեղեցկության:

- 5 Զովը փչում է ջրի հովտից,—
Շունչն աղատ է շքնադին.
Հաշտ նայում է արևն երկնից,—
Եվ բերկրում է նրա հոգին:

- 10 Տեսե՛լ ես կուսին,
Կանգնած լճափին—
Տիպար աննմա՛ն
Սուրբ գեղեցկության:

Ճոխ մաղերը տատանում է
Քաղցրիկ զեփյուռն առվոտյան.

- 15 Ժպիտը շրթանց վրա խաղում է,
Անո՛ւշ ժպիտ փափկության:

- Տեսե՛լ ես կուսին
Կանգնած լճափին—
Տիպար աննմա՛ն
20 Սուրբ գեղեցկության:

Հանդարտ կուրծքը բաբախում է,
«Սե՛ր» է նորա ողջ շարժվածք.
Քնքուշ դեմքը զվարթ վառվում է,
«Սե՛ր» է նորա ողջ հայացք:

25

Տեսե՛լ ես կուսին
 Կանգնած լճափին,—
 Տիպար աննմա՛ն
 Սուրբ գեղեցկության:

30

Անկի՛ր առաջն, ո՛վ պատանի,
 Միակ ժպիտն է քո կյանք.
 Նա՛ է սրտի քո թագուհի,
 Քոնն է նորա ողջ գգվանք:

35

Տեսե՛լ ես կուսին
 Կանգնած լճափին,—
 Տիպար աննմա՛ն
 Սուրբ գեղեցկության:

Դու իմ սիրտը կամիս տեսնել,
 Ի՛նչ է արդյոք նորանում.
 Անգին դանձ է այնտեղ սպհած,
 Սրտիս գաղտնի խորքերում:—

- 5 Զույգ արեգակ հրաշավառ,
 Զույգ վարդ, դստերք հարավո,
 Գարնան ժպիտ, երկնից համբույր—
 Այն պատկերն է իմ սիրո:

Նոյեմբերի 11

- Սիրտըս մաշվում է օտարությունում,
 Քա՛ղցր Հայրենիք, քեզ չեմ մոռանա.
 Թեև բարեկամ այստեղ չեմ գտնում,
 Միայն մինը կա... նա՛ ինձ կըխղճա...
 5 Երկու ձայն հոգիս տանջում են միասին.
 Կարոտ եմ հողիդ սուրբ, իմ Հայրենիք,
 Կուզեի ննջել հավերժ քո ծոցին,
 Մոռանալ... բայց ո՛չ. ով իմ Գեղեցիկ,
 Անջի՛նջ է մնալու պատկերըդ սրտիցս.
 10 Ինձ հեշտ էր մոռնալ իմ գոյությունը...
 Ես մտածում եմ, պատում է թախիժ
 Հոգիս չարատանջ... և իմ մտքիցը
 Չեն ելնում երկու անուն թանկագին.
 Իմ սրտի մասն է քաղցր Հայրենիք,
 15 Նորան չեմ մոռնա և իմ Գեղեցկին—
 Դո՛ւ ես իմ Լյանքը, Հոգյա՛կ իմ անգին:

Նոյեմբերի 12

Նորածաղիկ չքնա՛ղ շուշան,
 Վրճիտ առվին խոնարհած,
 Է՛ր չես նայում սիրուն գարնան
 Կապույտ երկինք զվարթացած:

- 5 — Ես խոնարհած՝ աղանջակիտ
 Միշտ տեսնում եմ վտակում
 Պայծառ աստեղց քաղցրիկ ժպիտ,
 Խաղը կայտառ երկնքում:

Նոյեմբերի 14

Անցա՛վ ցերեկ... երջանիկ եմ
 Որ չեմ տեսնում էլ արեւ.
 Եվ նոր երկինք այժմ բա՛ց են
 Եվ նոր աշխարհ իմ առջև:

- 5 Կախարդական է այդ աշխարհ,
 Եվ գեղեցիկ, տենչալի,
 Եվ երազներ բոլոր ոսկեվառ
 Սիրով ինձ այց են գալի:

- 10 Եվ ջերմագին հորդ վազում են
 Արտասուքը աչքերիցս,
 Եվ խանդակաթ ըսփոփում են
 Իմ խեղճ սիրտը վշտալից...

- Եվ հրեշտակի անմեղ պատկեր-
 Ինձ գգվում է երկնարժան.
 15 Ա՛խ, ի՛նչ քաղցր են այդ երազներ
 Եվ ի՛նչ հոգուս սիրական:

- Եվ սիրում եմ խավար գիշեր,
 Այդ իմ ընկեր սրտակից.
 Եվ ատում եմ վառ նշույլներ
 20 Առավոտյան լուսալից:

Նոյեմբերի 17

Նստած էի մենակ տխուր.
Առջևս վտակն էր սահում,
Շուրջս ծաղկունք վառ խնկաբույր
Անուշ ամբրոս տարածում:

- 5 Եվ հեշտալուր յուր մեղեդին
Սոխական հնչում էր քաղցրիկ,
Եվ ժպտում էր զըվարթագին
Ողջ հովիտը գեղեցիկ:

- 10 Ու առում էի, թե սիրուն է
Բնությունը այս հովտում,
Ասում էի, թե կարող է
Աստ մարդ սիրել Աստըծուն:

- 15 Բայց կըլինեիր դրախտ երկրային,
Եթե առ ժամ աստ ձգեր
Հայացքը յուր վեհ երկնային՝
Իմ հոգյա՛կը գանգրահեր:

Նոյեմբերի 17

52 ԱՆԲԱՂԴԻ ՏՐՏՈՒՆՁ

Գոյությանըս ծանր բեռին
Տակ իմ բաղդը կյանքըս մաշեց...
Ականջ շղրեց իմ թույլ ձայնին
«Հուսա՛, անբա՛ղդ, հուսա՛» կանչեց:

- 5 Ես լսեցի... տեսա միայն
Հարվածներ են իջնում գլխիս...
Եվ ոչ մի խոսք սփռփական—
«Հուսա՛», լսեցի ձայնը վերից:

- 10 Եվ տրտունջը իմ սաստկացավ,
Եվ բողոքել ես կամեցա...
Նորից նույնը կրկնվեցավ.
«Թշվառակա՛ն, հուսա՛, հուսա՛»:

- Եվ անդունդ եմ առջև տեսնում
Մի փոքրը էլ—և ես կորա...
15 Չար բաղդըս միշտ նույնն է պնդում.
«Ի՞նչ գանգատ է. խղճո՛ւկ, հուսա՛»...

Նոյեմբերի 24

Կանաչ դաշտերում ծաղկոտ ափերին
 Զարկում էր խաղաղ հոգով լարերին—
 Եվ թռչում էին սրտառուչ ձայներ
 Նորա տավիղից քնքուշ ոսկեթել:

- 5 «Ես քե՛ղ եմ երգում, Հայրենիք սիրուն,
 Ես սեր եմ երգում և ազատություն»:

Եվ գիտեր սիրել և սիրտն էր ազատ,
 Ինչպես աղզն տեսնել կուզեր հարազատ...
 Բայց է՛ր հրաշալի ձայները լռեցին

- 10 Դալարուն ծառոց ստվերի տակին:—
 «Ի՞նչպես ես երգեմ, ուր ըստըրկության
 Սև, չարագուշակ դղրդում է շղթան...»

Նոյեմբերի 28

Բանձր մեղր բարձրանում է դեպի վեր,
 Սև թուխպերով երկինքըն է ծածկըված,
 Միայն ճախրում են շարաճճիկ ագռավներ
 Հովտի վրա իբրև այրի սուգ կապած:

- 5 Ինչպես ծովում կոհակներով ահագին
 Պտույտ է տալիս ձյունը դաշտում լայնարձակ,
 Հողմը փչում է և սուլում է տխրագին...
 Ո՛հ, ձմեռ է, դաշտ ու անտառ սպիտակ:

- Բնությունը հպարտ գլուխն խոնարհած,
 10 Իբրև մի կույս հետ գեղեցիկ յուր դարնան,
 Յուր սիրեկնից անգթաբար մոռացված,
 Մերկանում է յուր հանգերձը հարսնական,
 Չքնաղ պատկերն խոր գծում են կնճիռներ,
 Քուն է մտնում հանգիստ առնել ծիրանի
 15 Որ նոր կյանքով գեղեցկագույն յուր դարդեր
 Քաղցրիկ ժպտով, կույս մատաղհա՛ս, ողջունի...

- Բայց դո՛ւ, իմ սիրտ, է՛ր չես առնում դու դադար,
 է՛ր վշտակոծ միշտ ողբում ես ու սգում...
 Անցան, այո՛, քո երազներ, հույս պայծառ,
 20 Ոսկի օրեր, բայց ինչո՞ւ ես միշտ արտում:

Նոյեմբեր

55

Ն Վ Ե Ր

Քեզ է մատաղ Մուղաս ձոնում
 Յուր ձայն, սիրո թոթովանք,
 Յուր վիշտ տխուր բոսկենեքում,
 Եվ բերկրություն, և հրճվանք:

- 5 Եվ, նազելի՛, եթե երբեմն
 Այս տողերիս դու ձգես
 Քո հայացքը աստվածեղեն,—
 Ինձ, իմ հոգյա՛կ, կըհիշես.

- 10 Զի քո սրտին թանկ սիրտ լինին
 Նորաբողբոջ իմ քնար,
 Եվ յուր քնքուշ ձայնն անմեկին,
 Որ հայտնի է քեզ համար:

- Կըճանաչես սիրողային
 Երգը թովիչ պատկերիդ,
 15 Գեղեցկության քո երկնային,—
 Եվ մտերիմ ընկերիդ:

Հումվարի 13

Նորից կենաց շունչն է փչում,
 Ծիծաղում են դաշտ, անտառ,
 Երկիրն համայն ուրախ թնդում,
 Զարդարվում է ծաղկավառ:

- 5 Անցան խավար ձմրան օրեր,
 Յնծում է և իմ հոգին.—
 Անհետ կորչեն առ միշտ վշտեր,
 Վերջ չըլինի՝ հրճվանքին:

- 10 Բայց երբ երբեմն մի ամպ մռայլ
 Սրտիս վրա ձգում է
 Տխուր ստվեր թախծի անցյալ,
 Եվ աստղիկս սքողվում է,—

- 15 Ես երեսըս քե՛զ հմ դարձնում,
 Ո՛վ իմ հոգու լուսավոր,
 Եվ քո թովիչ վառ աչերում
 Ինձ տեսնում հմ բախտավոր:

- Քո սիրափայլ հայացքն անգին
 Որ վառվում է երկնահույս,
 Խոստանում է ինձ նոր կրկին
 20 Երանությա՛ն արշալույս:

Սիրտս աչրում է սիրո քո հուր,
Ինձ տանջում են քո աչեր—
Եվ ասում եմ. «Աստված, դու տո՛ւր
Այսպես երկար ինձ օրեր»:

Ապրիլ 27

Երբ որ երբեմն թանձրանում է
 Մըթին գիշեր սենեկում,
 Եվ նույն գիշեր տարածում է
 Թախծի խավար իմ հոգում,

- 5 Երբ որ շուրջըս ամենայն բան
 Պահում է խոր լռություն,—
 Իմ աչերին քունը միայն
 Յուր հանգիստը չէ բերում:

- 10 Ես սպասում եմ իմ հրեշտակին,
 Նեղված սրտի մխիթար,
 Մնում եմ նորա լույս հայացքին
 Սիրո աղբյուր անըսպառ:

- Եվ նա ահա՛ մոտենում է...
 Նրա զգեստն է մեզ թափանցիկ,
 15 Պսակ՝ հյուսած նշույլներե
 Գլխի զարդն է գեղեցիկ:

- Եվ զույգ աստղիկ հրաշավառ
 Լուսավորում են երես,
 Որ ինչպես վարդ սիրողաբար
 20 Ծիծաղում է քաղցրապես:

Եւ ինձ վըրա նա խոնարհած
Երջանկութունս է վկայում,
Ինչպէս մանուկ երկնից օրհնած
Ինձ նա սե'ր է շնչում:

- 25 Նորա փայլում կախարդական
Ես կորչում եմ բերկրալից,
Մոռանում եմ աշխարհ համայն,
Ես չեմ հիշում դրախտն երկնից:

- Մեղրածորան նրա խոսքերին
30 Ես տալ գիտեմ պատասխան.
«Իմ արցունքը, հրեշտա'կ անգին,
Չտաս երբեք մոռացութեան»:

Երբեմն ինձ ոսկի արև
 Յուր ժպիտն է ուղարկում,
 Եվ ջինջ առվակ իմ առաջև
 Խոխոջելով ընթանում:

- 5 Ես տեսնում եմ գարնան պատկեր,
 Լսում ծիծաղ մանկական—
 Հայրենիքըս... սիրելիներ...
 Ու երազն անցնում խոլական:

Նոյեմբեր

59 ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐ

Նայի՛ր, խոնավ գետնի վրա
 Նիհար դեմքով վշտաբեկ
 Ո՞վ է ընկած դերդ անդղա
 Այս անկյունում կիսամերկ.

- 5 Նայի՛ր, խորունկ կնձիռներով
 Նորա ճակատն է ծածկված...
 Անգութ բաղդի հարվածներով
 Նորա սիրտը ջախջախված:

- 10 Եվ թշվառը լա՛լ է ուղում,
 Բայց... ցամքել են արցունքներ.
 Նայի՛ր, առջևն իր սիրասուն
 Մեռնում են խեղճ դավալներ:

- Ա՛խ, մեռնո՞ւմ են, լսո՞ւմ եք դուք,
 Բարի՛ մարդիկ, օգնեցե՛ք...
 15 Ա՛խ, մեռնում են սովալլուկ,
 Բարի՛ մարդիկ, հա՛ց տվեք:

- Անտուն անտեր թափառական
 Հալածված են ամենքից,
 Բարի՛ մարդիկ, պատսպարան
 20 Նորա կամին ձեզանից:

Բայց դո՛ւ, անսի՛րտ գայլ գիշատող,
Խցած են քո ականջներ,—
Դու չես լսում սիրտ պատառող
Աղիողորմ այս ձայներ:

- 25 Դու ոսկեփայլ ասլարանում
Անցնում ես պերճ քո օրեր.
Եվ խիղճըդ սե քեզ չէ տանջում,
Եվ քո հոգին աներեր...

Մարտի 25

Փարթամ ու ճոխ, շռայլ քաղաք,
Ամենայն տեղ կյանք եռուն...
Եվ պերճադարդ ասլարաններ
Փողոցներն են զարդարում.

- 5 Այստեղ ասես ողջն երջանիկ,
Հարուստ ապրում բոլոր մարդիկ:

Բայց տես աղի արցունք աչքին
Ընկած է խեղճ, մերկ, քաղցած
Հայ մշակը. նա ստանում է
10 Հացը գընովն իր քրտանց,
Որով պիտի կերակրվեն
Այնտեղ հեռու վեց զավակներն...

- Եվ այս հարուստ անսիրտ անձինք,
Զարդարում են ակներով
45 Իրանց կանանց, և վատնում են
Իրանց դանձր հաղարով,
Բայց ո՞վ է քեզ, թշվա՛ռ, տեսնում
Ո՞ւմ քեզ համար սիրտը ցավում:

- Ի՞նչ ես կորցրել, խե՛ղճ հայ մշակ,
20 Այս դժոխքում և ի՞նչ հույս
Քեզ խաբուսիկ աստ է բերել,

Ի՞նչ միտք վառել խռովահույզ,
Քո բախտն աշատեղ դու մի՛ պտրիլ,
Բան չես թողել և չես գտնիլ:

- 25 Դարձի՛ր ծխոտ քո խրճիթը,
Գիրկը քո սուրբ հայրենյաց.
Այնտե՛ղ է քո ողջ գոյություն
Իր արմատներն արձակած
- 30 Եվ քո կյանքը երջանկության
Քո եղներն են ու քո գութան:

Շքե՛ղ դարուն, ոսկի՛ արև,
 Եվ ողջ բնություն գեղադարդար
 Ժպտում է արդ կրկին սիրուն՝
 Իբրև մանուկ զվարթ կայտառ:

- 5 Եվ ամեն ինչ մի սիրտ եղած՝
 Ողջունում է նոր կյանք, նոր հույս.
 Բայց ես եմ որ դարձյալ նույնն եմ,
 Իմ միտքըն է խռովահույզ:

- 10 Եվ ես դարձյալ մտածում եմ.
 «Ե՛րբ է դալու մի ժամանակ,
 Որ ավետե և մեզ նույնպես
 Ազատ կենաց նոր եղանակ:

- Ահա՛ անցավ և մի տարի
 Մեզ նոր դարուն տվավ ողջուն.
 15 Մա՛յր-Հայրենիք, քո վերքերին
 Չունիս ոչ մի բժիշկ արթուն:

- Նույն ցավերը քեզ ճնշում են
 Նույնպես թշվառ քո դավակներ...
 Ե՛րբ վերջապես, ո՛վ հայ եղբայր,
 20 Կուղղես հաստատ դու քո քայլեր...»

Ապրիլի 18

Դու հարուստ ես, կյանքդ անհոգ,
 Վայելչություն ես սիրում.
 Դու չգիտես բնավ մտածել
 Թե ինչ է քեզ սպասում:

- 5 Յուլյց ես տալիս քեզ միշտ վսեմ—
 Քո ցանկությունն այդ է միայն—
 Քո առաջին սկիտի սողա
 Տգետ անկիրթ ցած խուժան:

- 10 Դու չես ուզում հավասարել
 Քեզ ճգնասեր գյուղացուն,
 Որ և նորա երակի մեջ
 Աղնիվ արյուն չէ վազում:

- Բայց ինձ ասա՛, ո՛վ մեծամիտ.
 Ինչո՞վ նա ստոր է քեզնից,
 15 Ի՞նչ է արդյոք նորա մեղքը,
 Որ չէ ծնել մեծ ազգից:

- Կամ մի՞թե քեզ քո արծաթը
 Տալիս է այդ իրավունք.
 Դո՛ւ, որ չունիս մի սիրտ բարի
 20 Մի իդեալ, համողմունք:

Դո՛ւ, որ գիտես անմտաբար
Պարծել քո կեղծ կոչումով:
Թեև իրոք դու թշվառ ես,
Տղա՝ մտքիդ տարազով:

- 25 Դու, որ այն խեղճ ռամկի հացը
Իր բերանիցն ես կտրում,
Եվ լսելով նորա լացը
Անհոգ, անվիշտ խրխնջում:

Սեպտեմբերի 27

Հաւատացե՛ք, դուք Հայաստան
 Ձեք ճանաչիլ բնավին,
 Եթե կուզեք տեսնել նորան
 Տաք սենեկում ձեր առջին.

- 5 Ձեք ճանաչիլ երբեք հայուն
 Երբ խոսում եք ճաշի վրա,
 Եվ չեմ ասի ձեզ զգայուն
 Գինին այդպես թե ցույց տա:

- 10 Կամենում եք իրավ գիտնա՞լ
 Թե ի՛նչ բան է Հայաստան.
 Կամ թե իրոք տեղեկանալ
 Հայի թշվառ կացության.—

- Դուք տեսնա՞լ եք խրճիթն աղքատ
 Թանձր ծխից սեպած,
 15 Ուր հայ բարձր դեռ անարատ
 Հայ մարդու մեջ մնացած,

- Ուր ձեր շքեղ թեև չկան
 Գորգերն ու այլ զարդարանք,
 Բայց և չկա ազնվական
 20 Զեղխ, անհաշիվ, շռայլ կյանք:

Դուր տեսե՞լ եք հայ գյուղացուն
Արյուն-բրտինք թափելիս,
Յուր սիրական գութանն արտում
Տխուր երգով քշելիս:

- 25 Դուր տեսե՞լ եք հայ աղջկան
Արեգակի տակ այրված,
Եվ ձեռները այն կուսական
Աշխատանքից կոշտացած:

- 30 Եվ տեսե՞լ եք դուր վերջապես
Թե հայ մարդը անընդհատ
Յուր գոյության կովում ինչպես
Մնում է միշտ անվհատ:

- 35 Ահա՛ որտեղ պետք է տեսնեք
Դուր հայի կյանք, հայի ույժ,
Ահա՛ որտեղ պիտի քննեք
Նորա վերքերը անբույժ:

- Հավատացե՛ք, դուր Հայաստան
Ձեր ճանաչել բնավին,
Եթե կուղեք տեսնել նորան
40 Տաք սենեկում ձեր առջին...

Անպատեհների 27

- Առանց մի խոսքի, առանց արտասվաց,
 Նա լուռ ու մնջիկ, բայց սիրտը լցված
 Գեղեցիկ գլուխն իր սիրականի
 Կրծքին խոնարհեց: Փայլը աչերի,
 5 Ճակատը գունատ, այրվող շրթունքը
 Վկայում են նորա ներքին հուզմունքը:
 Շքեղ դանդուրներ ցրված ուներքին,
 Մեղմ ծածանում է գարնան դով քամին.
 Նա լա՛լ է ուզում, բայց արցունք չկան.
 10 «Ե՛րբ քեզ սպասեմ, ընկե՛ր սիրական»:
 — Ա՛խ, մի՛ խռովիր, հոգյակ իմ անգի՛ն,
 Սիրո այս քաղցր վայրկյանը վերջին.
 Իմ հետին խոսքը, իմ ուխտը լսի՛ր,
 Քո սերը, հավատ դու անխախտ պահի՛ր:
 15 Երգվում եմ ահա՛, կամ քո տեսության
 Ազատ հայրենիք ազատ պիտ դառնամ
 Կամ օտար երկրում պիտի իջանիմ
 Սև գիրկը հողի, նեղ սառը շիրիմ:

Հոկտեմբերի 17

Ինչո՞ւ ես լալիս դու, մանո՞ւկ սիրուն,
 Ինչո՞ւ չես խաղում կայտառ ու զվարթ.
 Տե՛ս, ի՞նչ գեղեցիկ կանաչ պարտեզում
 Բացվել է շուշան, մանուշակ ու վարդ.

- 5 Պարզ երկնքիցը ժպտում է արև,
 Քեզ, չքնա՛ղ մանուկ, տալիս է բարև:

Եվ գեղգեղում է թռչնակն յուր դայլայլ,
 Կարկաջ է հանում առուն հատակից.
 Բայց է՞ր դու, մանո՞ւկ, տխուր ես դարձյալ,
 10 Չկամիս բնության լինել խնդակից.
 Տե՛ս և թռչնակը և ոսկի արև
 Տալիս են ուրախ քեզ իրանց բարև:

- Բայց հայ մանուկը այդ լսել չուզե,
 Ո՛չ թռչնոց երգը, ո՛չ վարդ նա կամի.
 15 «Տվե՛ք ինձ սուսեր ամուր պողպատե—
 Իմ խաղալիքը այդ պիտի լինի.
 Առե՛ք ծաղիկներ, տվե՛ք ինձ հրացան—
 Թո՛ղ այնուհետև թշնամիք դողան»:

Հոկտեմբերի 27

- Երբ որ բաղմած տաք սենեկում,
 Ուր ճոխ այնպես ամեն բան
 Ոսկի փայլով աչք է գրավում—
 Փարթամ արդյունք շռայլության—
 5 Ձեր ականջը մեղմահնչուն
 Փայփայլում է դաշնամուր,
 Եվ անխռով երջանկութուն
 Վայելում եք երկնատուր,—

 Մտածո՞ւմ եք՝ թե նույն ժամին
 10 Դողդողալով ձեր դրան
 Մեկը կանգնած է լալագին,
 Զոհ մի թշվա՞ռ կացության.
 Մտածում եք, թե մինչդեռ դուք
 Ձեր ճաշակն եք բթացնում,
 15 Նորա բաժին—լոկ արտասո՛ւք,
 Լոկ հառաչա՛նքն է մնում...

 Ո՛հ, սիրտ ունի՞ս, դու մեծատուն.
 Քո փշրանքով սեղանի
 Նա կը պահե մի ամբողջ տուն
 20 Մի ողջ ամիս, մի տարի...
 Ո՛հ, սիրտ շունի՞ս, չէ՞ նորանից
 Քո շունն էլ է երջանիկ.
 Բայց և նորան նույն մի հողից
 Եվ քեզ ստեղծե՞լ չէ երկինք...

Նոյեմբերի 7

Եղբա՛յր, ժամանակն անցնում է արագ...
 Ծերուկն իր հետին տալիս է ողջույն
 Ծաղկող բնության. պատանու երակ
 Զարկում է ուժգին և սիրտն է թնդում:

- 5 Գործ և սուրբ վաստակ—ահա՛ մեր կյանքի
 Նպատակ վսեմ: Մեռան մեր հայրեր,
 Մեզ ժառանգություն թողին մեծագնի—
 Գործելու փարթա՛մ, անմշա՛կ դաշտեր:

- Ժանգոտած խոփը մենք չենք թողնելու
 10 Անկյունում ընկած. կառնենք, շունչ կըտանք
 Նորան ամալի հողը վարելու,
 Եվ անապատին կշնորհենք նոր կյանք:

- Ինչ նրանք չարին—մենք կըկատարենք,
 Այդ մեր անհրաժեշտ պարտքն է սրբազան—
 15 Նրանք ձեռ բերին—մենք պիտի պահենք,
 Մենք զարգացնենք, ինչ նրանք ծնան:

- Նայեցե՛ք շուրջը. ամեն բան մեզնից
 Գործ է պահանջում: Ասպարեզը մեծ
 Եվ գործը շատ է. բայց իր զավակից
 20 Մինչ այժմ Հայրենիք միայն խոսք լսեց...

Ահա՛ անցավ մի նոր տարի տխրության.
 Հեծում է դեռ ստրուկ թշվառ հայրենիք.
 Ոչինչ նոր քայլ, ոչ մի նշույլ սփոփության,
 Նույն սառնարյուն, նույն անտարբեր հայ որդիք:

- 5 Արագ արագ, տես, սահում է ժամանակ,
 Հա՛յ ազգ, այդպես դու մի մընար քնեած.
 Մի՞թե բավ չեն քո դարավոր տառապանք—
 Քո ներկայի, ապագայիդ խրա՛տ անցած...

- 10 Եվ ձեռ առած ստոր հաշիվներ եսական
 Քաշքշում ենք իրար օձիք ապարդյուն,
 Իներնի՛ն խախտում ենք մենք հիմքը ազգության,
 Իներնի՛ն մենք մեր ուրանում ենք փրկություն:

- 15 Ժա՛մը հասավ—անցան դարեր, քո վիճակ
 Ընկճված բազդի հարվածներից, Հայրենի՛ք,
 Ահա՛ իբրե թունով լեցուն մի բաժակ—
 «Հառա՛ջ»—այս ձայն թո՛ղ մեր լարե լսելիք:

Դեկտեմբերի 13

Նստած եմ տխուր և երազում եմ,
 Հազար մի ցնորք մտքովս է անցնում.
 Եվ ոգևորվում և կատաղում եմ,
 Ա՛խ, ի՛նչ սոսկալի պատկեր իմ գլխում...

- 5 Ահա տեսնում եմ, անցնում են աղգեր,
 Պատանի աղգեր սրտեռանգն ոգով,
 Հառաջ և հառաջ... արյան հեղեղներ
 Ծածկում են նոցա շավիղ վարդերով:

- 10 Եվ մաքառում են և մեռնել գիտեն
 Դաշտումը ահեղ ճակատամարտի,
 Հաղթել սովոր են, հետ դառնալ չուզեն,
 Աներկյուղ ընդդեմ գնում են սրի...

- Եվ ես տեսնում եմ, արյունս է եռում
 Եվ նախանձիցը և սև ամոթից.
 15 Ինչո՞ւ ուրիշը սրբազան գործում
 Ձեռ է վերցնում ինքն իր անձից,

- Իսկ մենք չծնած պառավ ենք արդեն,
 Մեռած մեր զգացմունք և շունինք հոգի,
 Եվ չենք ընդունակ ոչինչ գործ մեղեն
 20 Կատարել, արժան որ լիներ քաջի...

Ինչո՞ւ այլ ազգեր ունին զորություն
Եւ կամք մեռնելու հայրենյաց համար,
Երբ կուլի խըրոխտ փողըն են լսում,
Զգում են մի մեծ խնդություն պայծառ:

- 25 Իսկ մենք... առաջին խնդիր որ գիտենք,
Մեր ստամոքսը խնամել փութով:
Եւ երբ պատահի, որ գործին մոտ ենք—
Քմծիծաղ թողնել հեռանալ դաւիւլ...

Դեկտեմբերի 21

70 ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻ ԵՐԱՁԸ

Կիզի՜չ արեւ ամառնային,
 Բնությունը շուրջ լռիկ...
 Վիզը ծռած արտի միջին,
 Նա կանգնած է միայնիկ.
 5 Գերանդիին կրթնած տրտում
 Տեսնես ի՞նչ է նա մտածում:

Բայց անխնա տոթն այրում է,
 Նա հոգնած է, ջարդբլծած.
 Գեթ մի վայրկյան նա դնում է
 10 Իր դուխը վաստակած
 Հանգչեցնել կանաչ թփին
 Այն անուշակ ստվերի տակին:

Նա պառկում է. արտը ոսկի
 Ծածանելով կամացուկ
 15 Ասես նորան մնջում լինի.
 «Քա՛ղցր քուն քեզ, ո՛վ խղճուկ»:
 Բայց այլ պատկեր միտքն աղմկած
 Բաց է անում նորա դիմաց:

Եվ տեսնում է, յուր խեղճ կյանքի
 20 Հորիզոնը տխրամած
 Առ ժամանակ մի կենդանի

Վառ լուսով է նկարված,
Եվ մի փոքր այնտեղ հեռու
Ծիծաղում է դեմքն արևու:

- 25 Նա տեսնում է, արդեն մոտ է
Հըրեշտակը փրկության,
Եվ ահա՛ նա, և քակում է
Ստրկության կուռ շղթան,
Ավետում է հային անհույս
30 Ազատության նոր արշալույս...

- Նա տեսնում է, յուր մշակած
Երկիրն իրանն է անկախ,
Եվ արդյունքը քրտնող ձեռաց
Վայելում է ինք խաղաղ.
35 Եվ հայ եղբարքն այնպես զվա՛րթ,
Կյանքն ամենի այնպես ազա՛տ...

- Եվ պառկած է. արտը ոսկի
Ծածանելով կամացուկ
Ասես նորան մնջում լինի.
40 «Քա՛ղցր քուն քեզ, ո՛վ խղճուկ»:
Բայց զարթնում է... չար թշնամի.
Ծաղրում է յուր թշվառ զոհին...

Մարտի 8

Հուսարեկի, մաշված ընկած է բանտում
 Խոնավ, գարշահոտ գետնի վրա, մենակ,
 Եվ կուրծքն առնացի ուժգին բաբախում,
 Եվ շրջան արյունն առնում է արագ:

- 5 Տանջեցին նորան, կիսամեռ արին,
 Բայց կամքն երկաթի ընկճիլ չկարացին.
 Ո՛չ կին, ո՛չ զավակ զբաղում են նորան,
 Այլ յուր գաղափար նախկին՝ սրբազան...

- 10 Եվ նա քուն չունի, ոչ հանգիստ բնավ,
 Եվ կատաղում է և դառըն ժպտում...
 Նորա սրտումը նույն միշտը, նույն ցավ,
 Նույն փոթորիկն է հանդուգն զարթնում.

- Եվ նորա բորբոք մտածողություն
 Սիրած սպասկերն է կենդանացնում,
 15 Եվ ահա՛ ազատ չքնաղ հայրենիք,
 Ահա՛ շարատանջ հայր երջանիկ...

- Բայց այդ ցնորք է, և նա այդ գիտե.
 Ստրու՛կ է հայր, լքյա՛լ, անտերունչ,
 Եվ մինչ մեծատունն անհոգ օր անցնե
 20 Հայ գեղջուկն յուր լուծ պիտ կրե անմոռնչ:
 Վայրագ բնության զոհը մութ խորշում
 Ապարդյուն ազնիվ յուր ույժն է մաշում.
 Իսկ դո՛ւ, ազգասե՛ր մեծամիտ խոսքի,
 Սպասում ես երկնից նոր մանանայի:

Երբ որ նստած եմ հրբեմն սրտնեղած,
Հազար մի ցնորք գլխումս են խոնում,
Եվ անհոգ օրերս և սերը անցած
Եվ վիճակս անհայտ մութ ապագայում
5 Շփոթում են միտքս, հոգիս պղտորում.

Երբ որ հայրենիք, աշխարհ նվիրական,
Ստորուկ եղբայրներ մերժված երկնքից,
Եվ հայ գեղջուկը, խորթ որդի բնության,
Իբրև ստվերներ մռայլ տարտարից
10 Անցնում են տխուր աչքիս առաջից.

Եվ սիրտըս լցված ես լա՛լ եմ ուզում,
Ա՛խ, լա՛լ, արտասվե՛լ աշնպես ջերմագին,—
Ոչինչ ինձ այստեղ չէ մխիթարում.
Եվ ժպտող արևն միայն իմ հոգին
15 Տանջում է որպես պճնասեր մի կին —

Ես այդ հյուսիսի արեգակ ցոլուն
Ծաղր եմ համարում կամ սխալ արարչի.
Ահա՛ և հասավ նորատի գարուն,
Բայց ո՞ւր ոսկե փայլն երկնից հարավի,
20 Ո՞ւր վարդը շքեղ, բույր մանիշակի...

Ո՛հ, ողջը ինչո՞վ հյուսիս կը պարծի,
Ի՛նչ անուն կուզեք՝ հատկացրե՛ք դորան,

- Լոկ գեղեցկության և վառ զգացմունքի
նթե որոնել կամենաք մի բան,—
25 Հեռո՛ւ, այստե՛ղ չէ գոցա սրբարան:
- Եվ զուր եմ այստեղ սփոփություն պտրում.
Միակ անկյունը այն կախարդական,
Ուր ազատ առ ժամ իմ սիրտն է հանդու՛մ—
Իբրև վաղանցիկ մի պատկեր միայն
30 Ստեղծում է այժմ միտքս ինքնահավան:

Անցա՛վ ցնորքի ժամը խաբուսիկ.
Նայում եմ կյանքին ես սառն աչքով,
Եվ չեմ հավատում, եթե երջանիկ
Օր է խոստանում բաղդը ժպտալով:

- 5 Ո՛հ, բավական է. ճակատագիրը
Մի դառն խաղ էր, որ մեզ հետ խաղաց...
Նայեցե՛ք ահա, համայն երկիրը
Մեր խղճուկ հղբարց արյունով ներկած:

- 10 Եվ ի՛նչ ենք ավել երկնից սպասում,
Հերի՛ք հույսերով մեզ փայփայեցինք.—
Արդյո՞ք քնանալ փափկասեր գրկում
Հեշտ մոռացության, բա՛վ ինչ գործեցինք...

Մարտի 20

Հասի՛ր, ո՛վ կույս աշագեղ,
 Վերջ դի՛ր եռուն իմ կրքիս.
 Տո՛ւր այտերըդ այդ գունեղ
 Սեղմեմ այրվող շրթունքիս:

- 5 Թո՛ղ այդ կրծքիդ ձյունափայլ
 Դնեմ գլուխս բորբոքված,
 Եվ ամեն մի զարկ/հուռյալ
 Լսեմ հոգով սիրալզաց:

- 10 Արի՛, ո՛վ կույս, և բա՛ց ինձ
 Դըրախտ սիրուն աշերով,
 Եվ սլալասան հեշտալից
 Լըցրո՛ւ սիրտըս քո շնչով:

Ապրիլի 1

Արև՛, արև՛, ո՛ւր փախար,
 Մեղնի՛ց արդյոք խռովեցար.
 Ինչո՞ւ թուխ թուխ ամպերում
 Այգպես դու շուտ թագ կացար:

- 5 Դու ծածկվեցար գնացիր,
 Անմխիթար մեզ թողիր,
 Պարզ երկինքը կապուտակ
 Դու սև սըգով պատեցիր:

- 10 Էլ վտակը չէ վաղում
 Առաջվան պես կարկաջուն.
 Դու խլեցիր նորանից
 Կայտառ անհոգ խնդովթյուն:

- 15 Եվ չեն տեսնում քո շողեր
 Նորա հստակ ալյակներ,
 Չեն այցելում էլ նորան
 Սիրուն երգիչ արտուտներ:

- 20 Իսկ մանուշակը, տե՛ս, տե՛ս,
 Գլուխը կոր որբի պես,
 Թփի տակից չէ ժպտում
 Ինչպես առաջ քաղցրատես:

Ամպերն եկան փաթթեցին
Սև քող քո լույս երեսին.
Ոսկի՛ արե, դեռ տղայք
Աշուն-ձմեռ չկամին:

- 25 Արև՛, արև՛, ո՞ւր փախար,
Ինչո՞ւ մեղնից խռովեցար.
Դուրս ե՛լ, արև՛, երկնքում
Կրկին շրջի՛ր ոսկեփառ:

Նոյեմբերի 12

Ձմեռ է. ձյունը սպիտակ սալանով
 Մածկել է անտառ, դաշտ, սարեր, ձորեր.
 Կապած կապկապած ամուր սառուցով
 Լռել են գետակ, աղբյուր, առվակներ:

- 5 Տխուր է երկինք, մռայլ, ամպամած,
 Ինչպես որ հոգին ցավոտ ծերուկի,
 Որի ճակատից կնճռված, խորշմած,
 Չէ ջնջվել զիրը անողորմ բաղդի:

- 30 Զուրտ է, խստաշունչ հողմը հյուսիսյան
 10 Զարկում է ուժգին մանկան երեսին
 Որ փողոցներում խեղճ թափառական
 «Հա՛ց», ձայն է տալիս ամեն անցնողին:

- Սառցապատ գետնին կիսամերկ, բոբիկ,
 Ահա՛ նա կանգնած այստեղ անկյունում,
 15 Նա դողդողում է, նա թշվա՛ռ որբիկ,
 Ամենից մի տաք խորշ է աղերսում:

- Անցավ մեծատունն իր շքեղ կառքով
 Եվ չընկատեց խեղճուկ մանուկին.
 Փարթամ տիկինը կծու հայացքով
 20 «Ի՛նչ աղտոտ էակ», ասաց ընկերին:

Բայց ահա՛ տեսաւ այդ մի պատանի
Հագի վերաբերուն մաշված, գզգզված,
Ձեռին լոկ ունեւ մի կապոց թղթի
Քսակը վաղուց պարապ էր մնացած...

- 25 Ձուներ հացի գին, որ տար խեղճ մանկան,
Ձեռիցը բռնեց իր տունը տարաւ,
Տաքացրեց նորան, հագցրեց նորան,
Եւ մխիթարած ճանապարհ դրաւ...

- 26 Ձմեռ է, ցուրտ է. տաք մուշտակներով
30 Շրջում են մարդիկ, կին, մանուկ ու ծեր.
Կիսամերկ, բոբիկ և գողգողալով
«Հա՛ց» է ձայն տալիս աղքատ որբն անտերն:

Տխուր է դուրսը, մթին ու խոնավ,
 Բարակ մաղում է ձյունը վերևից,
 Տխուր եմ և ես, մաշում է մի ցավ
 Իմ հոգին խավար և անկարեկից:

- 5 Ա՛խ, ես ուղում եմ արտասուք թափել,
 Ամբողջ հեղեղատ դառն արցունքների,
 Ա՛յնպես իմ կրծքում զգացմունքըս անել
 Խոնել է, ասես խեղդել ինձ կամի...

- 10 Հոգիս ողբում է. տանջվում եմ սաստիկ,
 Բայց արտասուքս... ա՛խ, մի շիթ գոնե
 Ցաված աչքումըս, գոնե մի հատիկ
 Սրտիս դառնության մասը դուս հանե...

- 15 Նստած եմ ահա՛ մենակ, լուռ ու մունջ,
 Հապտերը ախորժ լույս է ինձ տալիս,
 Կամիմ մոռացվիլ... բայց տես ցրտաշունչ
 Զարկում է քամին լուսամուտներիս.

- 20 Զղերըս ցնցվում ու գրգռվում են,
 Միտքըս թուլացած գործել չէ կարող,
 Եվ տխուր ցնորք ինձ նկարում են
 Հազար մի պատկեր մոռյլ, սևաքող...

Ա՛խ, ես ուզում եմ արտասուք թափել,
Ամբողջ հեղեղատ դառն արցունքների...
Ա՛խ, եթե սրտիս դառնությունն հայտնել
Գոնե ես մեկին կարողանայի...

Նոյեմբերի 14

Սիրում եմ երբեմն՝ երբ ծանրանում է
 Հոգուս վրա տգեղ իրականություն,
 Երբ որ նայելով աչքւս հոգնում է,
 Զէ տեսնում մի վառ նըշույլ երկնքում,
 5 Երբ որ այս թուխսպերն իբր երկնաքար
 Ճնշում են սիրտըս անել մի վշտով,
 Երբ սերը հայտնած ինձ մտերմաբար
 Զէ կարող գրավել խարդախ ժպիտով,—

Սիրում եմ թռչել, սլանալ հեռու
 10 Հոգով ու մտքով այն միակ անկյունն,
 Ուր անկեղծ փայլով պատկերն արեու
 Լցնում է սիրտըս մի անդորրություն,
 Ուր մի դյութական զորությամբ երկինք
 Զինջ, հստակ գեղով մանկամարդ կուսի
 15 Մոռանալ բոլոր տալիս է կարիք
 Բաղդին խաղալիք դարձած մի կյանքի...

Այնտեղ, ո՛հ, այնտեղ զերթ օձ գալարուն
 Կանաչ դաշտերով սահում է Քասախ,
 Այնտեղ զերթ գոհար, միշտ արևասուն
 20 Խաղողն է հասնում որթի վրա մատաղ,
 Այնտեղ աղբյուրներ վըճիտ զինչ բյուրեղ,
 Դալար ափերում կարկաջուն վտակներ,
 Այնտեղ բնություն մանուկ, հրաշագեղ,
 Միշտ պարգևում է ձեզ յուր բարիքներ:

- 25 Թռչում եմ այնտեղ, ուր երջանկանալ
Կարող է մարդը անխարդախ սիրով,
Ուր խաբեբային կարծիք կանխակալ
Պատժում է անխնա ամոթո սրբով.
- 30 Թռչում եմ այնտեղ, ուր մարդ չէ կարող
Մնալ անտերունչ, անհաց ու անտուն,
Ուր խեղճի համար սիրտը չունի ոխ,
Ուր թշվառն ունի մխիթարություն...

Հազիվ արեն յուր առաջին
 Ոսկի շողը ցույց տվավ
 Ու գիշերվան քողը մթին
 Լուսո առջև պատռեցավ,
 5 Ելավ պառավ Կարոտություն
 Կարճ անհանգիստ յուր քնից
 Նիհար, գունատ, մեռելություն
 Ասես թափում է ճակտից.

Ելավ քնից և շուտաքայլ
 10 Եկավ գեղջկի դուռն հասավ,
 Եվ իբրև հյուր անակնկալ
 Զարկեց դուռը, ձայն տվավ.
 «Զարթի՛ր, դարթի՛ր, խեղճ գյուղացի,
 Հերի՛ք անհոգ քնանաս,
 15 Լույսը բացվեց, ե՛լ դու ոտի,
 Աչքըդ ճմռե՛, նայե՛ վրաս:

Թռչուն, գազան վաղուց գործի
 Դուրս են եկել բույներից.
 Մի մեղկանար, ծուլ գյուղացի,
 20 Թռի՛ր իսկույն քնատեղից:
 Բա՛ց աչքերըդ, տես սև կարիք
 Մոտենում է կաղիկաղ,
 Եվ շուտ լծե՛ քո ժիր եղնիք,
 Դուրս ե՛կ արտը անհապաղ»:

- 25 Ասաց, գնաց. իսկ գյուղացին
Ձայնը լրսած չլրսած,
Շուտ զարթեցավ ու ցուրտ առվին
Ձեռք ու երեսը լրվաց:
Եվ դեռ հազիվ մի ժպտացին
30 Դաշտ ու հովիտ արևառ,
Հնչեց նորա երգ ողբագին
Եվ արտուտի ձայն կայտառ...

Անցաւ գրեթե և այս մի տարին...
 Բայց ի՞նչ շահեցար, հոգի՛ դու տանջւած,
 Կարո՞ղ ես ասել արդո՞ք գեթ մեկին
 Թե դու էլ նույնպէս կյանք ես ունեցած:

- 5 Աւա՛ղ, և ոչ մի շրջան երջանիկ—
 Գոնե չեմ տեսնում մի հետք բնավին,
 Եթե եղել է մի օր գեղեցիկ,
 Տածե՛լ է ոսկի հույսեր իմ հոգին:

- 10 Այո՛, կարծես թե բաղդը ծաղրելով
 Կամեցաւ մի օր ինձ էլ փայփայել,
 Կամեցաւ պատիր խաբուսիկ ցնորքով
 Վարդագույն կյանքի օրեր նկարել...

- Ես հաւատացի, ավելի մռայլ
 Որ հետո տեսնիմ իմ երկնականար,
 15 Որ անբաղդ սերըս ողբամ ես դարձյալ,
 Ողբամ այս օրեր խեղճ, անմխիթար:

- Եւ իրա՛ւ, ինչո՞ւ ես բախտավորվիմ,
 Ի՞նչ ուրախական ունի իմ այս կյանք,
 Ոչ մի կարեկից, ընկեր մտերիմ,
 20 Ոչ մի ձեռք սատար և միայն զրկանք...

- Սուլում է հողմը, ուժգին տատանում
 Տերեթափ ծառերն ու թփերն անդարդ,
 Զյան տարափները պտտում է օդում,
 Քողարկում սպիտակ սարերի դադաթ,
 5 Եվ հարվածում է ճամբորդին երես,
 Որ թափառում է մենակ մոլորված...
 Եվ տխուր երկինք սգվոր կնոջ պես
 Նայում է ահա՛ անշարժ, ամպամած:

- Բայց շուտով, սպասի՛ր, կենն խնդադեմ
 10 Արեգը դարնան ոսկի ժպիտով,
 Եվ բնությունը մանուկ լուսեղեն
 Կըխայտա նորից շքեղ պշրանքով...

Գեկտեմբերի 7

Եւ նա անկաւ, դրոշը ձեռին
 Պառկած է նա բաց երկնից տակ,
 Առջեւ արոտ գարնանային
 Եւ խոխոջուն կայտառ վտակ...

- 5 Կաթիլ կաթիլ կարմիր արյուն
 Դուրս է ցայտում արի կրծքից,
 Եւ թարմ ծաղկանց զով սոսափյուն
 Սահում անցնում է ճակատից:

- 10 Աչքը բացեց նա մի վայրկյան,
 Դրոշն ամուր սեղմեց կրծքին.
 Նայեց դեպ վե՛ր արծվի նըման,
 Ժպտաց անո՛ւշ, կարոտագի՛ն.

- «Դու բացվեցա՛ր, իմ հայրենյաց
 Սիրո՛ւն երկինք, ցայսօր խավար».
 15 Եւ հառաչեց, կուրծքը թնդաց:—
 Դրոշը ձեռիդ, քաջ, դու մեռար:

Շքեղ դահլիճը փայլում է պայծառ,—
 Սիրուն տղայոցն ուրախ մի հանդես—
 Վառ լուսավորված կանաչ տոնածառ
 Նայում է շուրջը գույնեղով պեսպես:

- 5 Եվ մանուկները, անյոգ ու զվարթ
 Ինչպես թիթեռներ արծալ դաշտերում,
 Եվ թռչոտում են և պարում աղատ,
 Միմյանց անուշիկ ժպտում, կատակում:

- 10 Նոքա երջանիկ, ծնողներ ունին,
 Սիրված են, գգված քնքույշ մայրերից,
 Թե ի՛նչ է վիշաք գիտնալ չըկամին,
 Հեռու բնավին կյանքի զրկանքից:

- 15 Եվ ուրախ անցնում, դնում են ժամեր
 Անվրդով, քաղցրիկ սիրով անմեկին.
 Լսվում է ծիծաղ, խնդության ճիչեր—
 Այդ դուրս են հանում ծերացած Տարին...

- 20 Մի բույե երս, մի քառորդ վայրկյան—
 Եվ ահա՛ ծերուն հեռացավ կորավ,
 Իսկ ծաղկապսակ նորածին տղան
 Ներս եկավ չքնաղ, ձեռքից-ձեռք անցավ:

«Կեցցե՛ք, գոչեցե՛ք, մանուկ նոր Տարի»—
Կրկին ուրախ ձիչ, ողջուն, համբույրներ...
«Տա աստված, որ սա բերե մեզ բարի,
նորոգ կյանք, նոր հույս, նոր ոսկի օրեր»:

<Հունվարի 1>

Յուրա գիշեր է, բարակ քամին
 Սառցնում է ձեռք ու երես.
 Ճրագները փողոցներին
 Վառ հսկում են սլահակի պես...

- 5 Մեկի տակին, պատին կրթնած
 Դողդողում է որբ երեխան.
 Աղոտ լույսը դեմքին ընկած
 Յուցնում է փայլ անհուսության:

- 10 Արտասուքը տխուր աչքում
 Տե՛ս սառել է, լացել է նա...
 Եվ կանգնած է, հաց է ուղում
 Բայց մին նորան լսող չըկա:

- Նոր տարի է, բոլորն ուրախ
 Վայելում են քաղցրիկ ժամեր.
 15 Իսկ նա անտուն, իսկ նա, ավա՛ղ
 Զունի ծնող, բարեկամներ:

- Մինչդեռ ուրիշ տղա աղջիկ
 Հրճվում են ճոխ դահլիճներում,
 Նա փողոցում, անբա՛ղդ մանկիկ,
 20 Մի տաք անկյուն, հա՛ց է խնդրում:

Սիրո՛ւն մանկունք, մի՛ մոռանաք,
Ձեր փշրանքը գեթ տաք նորան,
Նա էլ, գիտցեք, մի ժամանակ
Ունեցել է մայր սիրական:

- 25 Հիմա մենակ պատին կրթնած
Կանգնած է ցուրտ գիշերին,
Չունի ասող. «Խեղճ արարած,
Շնորհավոր քո նոր ճարին»:

<Հունվարի 1>

- Անշուք կյանքիս մեջ եթե բնություն
Գեթ մի օր ուղեր իմ մի աննշան
Կատարել վերջին—միակ ցանկություն,
Ո՛վ կույս աշագեղ, հոգյա՛կ աննման,
5 Մի համեստ խնդիրք միայն ես ունիմ—
Որ մահիցս առաջ գոնե երջանիկ
Ինձ համարելու ես կարող լինիմ.
Որ՝ թեպետ այսօր, իմ սե՛ր գեղեցիկ,
Արհամարհված եմ, ատված քեզանից,
10 Ոսկի հույսերըս քեզնով խորտակված,
Եվ հոգիս այրված սիրո կրակից
Եվ քո նենգությամբ ողջ կյանքս մաշված,—
Որ գոնե դու գաս մի վերջին անգամ
Նայել երեսիս, փակել իմ աչեր,
15 Որ տեսնես թե ես պիտի քեզ մընամ
Եվ մյուս կյանքում նույնպես անձնվեր.
Որ գաս նայելու ինչպես պիտ մեռնիմ
Քեզ միայն սիրելով և քո ծաղկափթիթ
Օրհնելով հասակն, հոգյա՛կ իմ անգին,
20 Կարոտ նվիրակա՛ն բաղդավոր օրիդ...

Փետրվարի 13

- Ես ասում էի. «Սիրեցե՛ք, քանի
 Ծաղկում է սիրտը զերթ մանուկ զարուն.
 Դուք չեք նշմարել անակնունելի
 Ինչպես վերահաս կըգա ծերություն,
 5 Եվ դուք կանիծեք ձեր ճակատագիր
 Որ կյանքից բարիք դեռ բնավ չտեսած՝
 Արդեն ձեր դեմքը մի խորակնճիռ
 Ակոս և ալիքն է տխուր զարգարած»։

- Այո՛, սիրեցե՛ք. Թեպետ մինչ այսօր
 10 Սիրելով անկեղծ՝ ես դեռ չունեցա
 Ոչինչ, բացի մի մտքից թունավոր
 Թե ինձ երջանիկ վիճակ էլ չըկա...
 Սիրել անմոռնչ հպարտ տանջվելով,
 Մերթ երանելի, մերթ խեղճ, հուսահատ,
 15 Կյանքից քո անձը զուրկ համարելով,
 Սիրել և սիրվիլ, սիրել և խաբված
 Տեսնել վերջապես սուրբ զգացմունքները,
 Որպես ծուխ օդում ցնդված խորտակված
 Վարդագույն ապագադ, ոսկի հույսերը,—
 20 Ահա՛ մի վիճակ, որ ոչ ոք կարծեմ
 Բաղձալի երբեք պիտի համարե։
 Դա է սիրողը. բայց նորեն կասեմ.
 «Պատանի՛, մինչդեռ մատաղ ես՝ սիրե՛»։

- Ո՛հ, սերն է որ մեզ ապրել է տալիս.
25 Եվ առանց սիրո ո՛չ կյանքն է մի բան,
Ո՛չ երջանկությունն է մեզ մոտ դալիս,
Եվ առանց սիրո զրկանք կենսական
Կարծես ավելի ծանրը ճնշում է
Մեր կիսակենդան միտքն ու հոգին,
30 Եվ առանց սիրո ավելի զգում է
Յուր դատարկութուն սիրտը մարդկային...

Բավական է լաս, շարատա՛նջ հոգի,
 Հերի՛ք դժնդակ վիշտը քեզ մաշե.
 Ո՞վ է որ լսե այդ քո թույլ ձայնի
 Պաղատանքներին, հոգի՛ իմ, լոհ...

- 5 Ո՞ւմ են պետք դառը քո առատ արցունք,
 Քո ողբը լռիկ, քո սերը այրող.
 Ա՛խ, քո իղձերը, քո ողջ մտածմունք
 Մի՛շտ պիտի լինին բաղդից ոտնակոխ...

Փետրվարի 21

Արդեն փչում է շունչը դարնային,
 Արագ գետնիցը ձյունն է վերանում,
 Եվ արեն այնպես ցոլում խնդադին
 Եվ ջինջ երկինքը ուրախ ծիծաղում:

- 5 Ուժգին դարկում է սիրտըս վշտահար,
 Պատանել կուրծքըս դուրս թռչել կամի.
 Ա՛խ, դարնան օդը այս կենդանարար
 Իմ հոգու համար զորություն չունի:

- Տանջվում եմ, հոգյա՛կ, տանջվում քո սիրով
 10 Եվ չունիմ ոչինչ մխիթարություն.
 Ա՛խ, ի՛նչպես, ի՛նչպես մի անվերջ քնով
 Կուղեի գտնել ես հանգստություն...
 Բայց բաբախում է կուրծքըս վիրավոր,
 Դեռ չէ լրացել չափը տանջանքիս,
 15 Եվ արդեն ընկճված իբրև ալևոր
 Թառամած եմ այս ծաղիկ հասակիս...

Մարտի 13

Արցունք և արցունք, անվե՛րջ անդադա՛ր...
Ա՛խ, ես խեղդվում եմ, կուրծքս լի ցավով,
Ուղեղըս հոգնած և ոչ մի պայծառ
Միտք ինձ սփռվում է երջանիկ հուսով...

- 5 Ա՛խ, մի՞թե այսօր ինձ այն զգացմունք,
Որ երբեմն այնպես թևավորում էր
Միտքըս ու հոգիս և մի վեհ հուզմունք
Ճոխ ապագայի ինձ միշտ ազդում էր,

- 10 Որ ոսկի օրեր ազնիվ վաստակի,
Հասարակօգուտ գործունեություն,
Եվ խաղաղ սիրով երջանիկ կյանքի
Գուշակում էր ինձ որպես բաղդի ձայն,

- Այն զգացմունքը, որ եղել է ցայսօր
Աստղըս ուղեցույց և իմ քաջալեր,
15 Մի՞թե այժմ իբրև մի կիրք բռնավոր
Յուր կույր թուլամորթ գերին պիտ աներ...

- Ա՛խ, ես տանջվում եմ ընկճված հաղթհարված,
Չէ ոգևորում ինձ մի միտք պայծառ,
Ա՛խ, սիրտս է մաշվում և կուրծքըս ջարդված.
20 Արցունք և արցունք անվերջ, անդադար...

Անցնում են օրեր, ես դարձյալ մենակ
 Տխուր մտքերիս, զգացմունքիս հետ եմ.
 Զրգտա ցայժմ և ոչ մի սփռփանք,
 Դարձյալ նույն վշտիցն այրվում տանջվում եմ...

- 5 Ա՛խ, ինչո՞ւ արդյոք չեմ կարող մոռնալ
 Այս կորստաբեր միտքը մահացու,
 Ինչո՞ւ չեմ կարող գոնե քննանալ
 Մի անվերջ քնով, աստվա՛ծ իմ, ինչո՞ւ...

Մարտի 18

- Ո՛հ, գեղեցիկ է աշխարհն աստուծո,
 Գեղեցիկ է միշտ մատաղ բնություն.
 Բայց ինչո՞ւ մարդը բաղդի ու սիրո
 Վառ զգացմունքիցը միշտ զուրկ է մնում:
 5 Ինձ ատելի է սառ հաշիվներով
 Կյանքը ծաղկաթափ անող կենդանին,
 Որ լուկ խորամանկ խարդախ ուղեղով
 Խորհում է հասնել յուր նպատակին.
 Եվ այդպես կյանքը հաշվով սահմանած
 10 Զունի յուր խորհուրդն, յուր էությունը,
 Քանի որ զուրկ է, առ միշտ կորցրած
 Գաղափարական Գեղեցկությունը:
 Լինի թող միտքըդ առողջ, պատանի',
 Բայց և միշտ ազնիվ զգացմունքի համար—
 15 Խղճի և սիրո—սիրտըդ բաց լինի—
 Այդ ձայնն է բնության, այդ է քո տիպար:

Մարտի 31

Երկինքը պայծառ, օդը կենսաշունչ,
Նոր հոգի առել է համայն աշխարհ,
Իսկ ես տանում եմ իմ վիշտն անմոռնչ.
Խնդություն, ժպիտ չըկա ինձ համար:

- 5 Արևի փայլը, կապույտը երկնից
Ինձ ամենեկին չէ մխիթարում.
Եվ մի՞թե երբեք լինել ցավակից
Մի այրված սրտի կարող է բնություն...

- 10 Բայց երբ միայնակ սենեկում փակված
Երբեմն տխուր մտքիս հետ եմ ես,
Եվ իմ հոգեկի պատկերը սիրած
Կանգնում է առջև ախորժ ցնորքի պես,

- Հոգիս լցվում է մի վեհ զգացմունքով,
Մի աղնիվ և սուրբ ոգևորությամբ,
15 Եվ ես ապրում եմ երջանիկ կյանքով,
Ե՛վ սիրտըս պայծառ և ճակատս անամպ...

- Եվ մոռանում եմ իմ դառըն վիճակ,
Ես մոռանում եմ ողջ շարն աշխարհի,
Եվ իբրև մանուկ լալիս եմ անհագ,
20 Օրհնում այն մատաղ կյանքը սիրելի...

- Ա՛խ, ինչո՞ւ և ես չեմ կարող խնդալ,
 Ինչպես այլք ասել, խոսել, ծիծաղել,
 Ինչո՞ւ չեմ կարող ընկերիմ բանալ
 Սիրտըս և վիշտըս ուրիշին պատմել:
- 5 Ինչու, աստվա՛ծ իմ, արցունքըս ցամաքած—
 Չեմ կարող կուրծքըս թեթևացնել,
 Այս հեծող կուրծքըս տանջված, չարչարված,
 Ինչո՞ւ պիտի միշտ ողբամ շնչարգել:

- Ա՛խ, թողե՛ք գոնե մի անգամ անգամ
 10 Նայեմ արևու ոսկեշող լուսին,
 Իբրև բնության զավակ հարազատ
 Անհաղորդ չըմնամ նորա բարիքին:
 Թե անկեղծ սերը մտերիմ սրտի
 Ունի իրավունք երջանիկ օրվան,
 15 Ա՛խ, թողեք և ինձ կյանքը սիրելի
 Իմը համարեմ գոնե մի վայրկյան:
 Թողե՛ք անարգել տեսքովը հրճվեմ
 Սրտով սիրածիս, թողե՛ք որ կրծքին
 Անգին հոգեկիս ես քուն մտանեմ,
 20 Քուն մոռացության, քաղցր քուն վերջին...

Գաբրիան դեղեցիկ մի առավոտ էր,
 ծնականած էի կանաչ սլուրակում
 Քոչնոց գալալը խորքում հնչում էր
 Սրտիս մի խորին տխրություն բերում.

- 5 Ես լսում էի այդ անհոգ երգը
 Աղատ և կայտառ ծոցում բնության
 Եվ իմ վաստակած հոգին ու միտքը
 Նախանձում էին այդ երջանկության:

- Եվ ասում էի, ինչո՞ւ չեմ կարող
 10 Եվ ես դերթ թռչուն անվիշտ երգ երգել
 Վեհ զգացմունքներըս եղած ոտնակոխ
 Ես ինչո՞ւ լինիմ միայն բանտարգել,
 Ինչո՞ւ սիրելով անկեղծ, անձնվեր,
 Չունիմ ես միջոց աղատ շնչելու,
 15 Աղատ երգելու կյանք մատաղ և սեր,
 Առանց տանջանքի գեթ օր մ'անցնելու:

Հուլիսի 20

- Աղոթի՛ր, հոգյա՛կ, բո սիրտը անբիժ
 Պիտի սիրելի միշտ լինի երկնից.
 Բո միտքը մաքուր, որ զբաղված է
 Միայն վարդագույն օրերի ցնորքով,
 5 Որ ըմբռնելու դեռ ընդունակ է
 Սուրբ խոսքն աղոթքի անմեղ հաժատով,
 Կարող է այսօր սիրով հաչցելու
 Անձնվեր հոգուն հանգիստ շնորհելու:

- Աղոթի՛ր, հոգյա՛կ, այսօր ինձ համար—
 10 Իմ միտքը շունի մի նշույլ սպաժառ,
 Եվ սիրտըս բնավ ասես թե դատարկ—
 Երկինքն իմ ձայնը խուլ է լսելու,
 Եվ իբրև հավերժ հանցավոր անարգ
 Զեմ կարողանում ես աղոթելու.
 15 Երկու կաթ արցունք անուշ աչերիդ
 Կըլինին սփոփանք, հոգյակ, բնկերիդ:

- Իբրև կապարի պատանք խեղդամահ
 Ճնշում է կուրծքըս վիշտը անխնա.
 Հեծում է սիրտըս, բայց թեթևացնել
 20 Ցավը չեն գալիս աղի արտասուք,
 Եվ ես տանջվում եմ, և վիճակս անել
 Ինձ ապագայում այս ավուրց խեղճուկ
 Պատկերը կրկին ցուցնում է տխուր
 Եվ իզուր ցընորք և հույսըս իզուր...

25 Արի՛, ուրեմըն, կարեկից հոգով
Սիրող ընկերիդ տուր շունչ քո սիրով,
Վաստակած գլխին տուր հանգիստ կուրծքիդ
Ասա՛ աղոթել կամիս ինձ համար—
Եվ ես ընդունիմ քո մի վառ ժըպիտ

30 Նորոգ արշալույս սիրո կենարար,
Մի վերածնված կյանքի ավետիք,—
Ինձ այնուհետև ասեմ երջանիկ...

Յգուտոյսի 10

- Դարձյալ, սիրակա՛ն, ինձ երեցար
 Եվ հետըդ բերիր դառն հիշատակ
 Անցած օրերի, երբ մի շող պայծառ
 Յուրում էր սիրույս ճակտին գեղունակ,
 5 Երբ քո մանկական սիրախոս լեզուն
 Խոստովանում էր անմեղ հույսերով
 Քո մատաղ սրտի ներքին խռովություն,
 Երբ դու, նազելի՛, երկնային ժպտով
 Գուշակում էիր ինձ կյանք երջանիկ,
 10 Երբ հուզված գլուխս ես արբեցման մեջ
 Հանգչեցնում էի կուրծքիդ գեղեցիկ,
 Եվ զեղուն զգացմունք հրճվանքս էր անվերջ...

- Իսկ այսօր, հոգյակ, միայնակ նորից
 Ողբում եմ կյանքիս ես դատարկություն,
 15 Վարդգեղ հույսերըս, խորտակված քեզնից,
 Սիրո պատրանքի կեղծ վայելչություն:
 Անցյալից չունիմ ոչինչ սփռփանք,
 Հիշողությունը տանջում է միայն,
 Իսկ ապագայում... ո՛վ դիտե, հուսա՛նք
 20 Արդյոք մեր բաղդի միշտ փոփոխական
 Հոսանքի վըրա. բայց աշխարհային
 Սնոտի կյանքը կեղծիք, ստություն
 Եվ ունայն կարոտ փառքի երկրային—
 Ահա՛ թե միայն ինչ է խոստանում:

- Դործելու մի սուրբ եռանդով անձնվեր
Դու երազում ես, անփո՛րձ պատանի,
Մտնել զեղխության կյանքը հեշտասեր
Հասարակության, որ վաղուց ոսկի
- 5 Կուռքը դրել է սեղանի վրա
Երկրպագության, որ հաշիվներով
Նուրբ խարդախ մտքի միշտ պիտի գնա
Խաբեբայության ստոր շավիղով,
Որ յուր կրծքումը տեղ չունի տալու
- 10 Մի ազնիվ զգացման, որ միշտ պատրաստ է,
Հղորի առաջ խոնարհ սողալու,
Բայց թույլի համար մի բռնակալ է...

- Դու կամիս սորան ներշնչել ոգի
Ազատ սուրբ սիրո և եղբայրության
- 15 Եվ զգացմունքը մի անկախ խղճի
Եվ գորությունը հանճարեղ բնության —
Բայց ի՞նչ ես պտրում, անմի՛տ պատանի,
Ի՞նչ ես կորցրել: Դու, եթե կամիս
Վայելել այստեղ քաղցրություն կյանքի,
- 20 Որ և դու մարդ այս շրջանումն հաշվիս,
Ի՞նչ պիտի անես ընդունակություն
Եվ անկեղծ եռանդ գործունեության.
Զգեցիր զըրա՛հ մարդահաճության,
Ա՛ռ դիմակ ազատ կեղծավորության:

- 25 Որպէս եղեգն եղի՛ր դու ճկուն,
Խոնարհի՛ր հողմի բռնութեան առջև,
Ամենին, որից մի շահ ես սպասում,
Ողջունի՛ր որպէս գարնան նոր արև,
Որ և ժպտում է և ծածկվում թուխպով,
30 Եվ նորան՝ բեզնից որ ունի կախում,
Երևի՛ր այդպէս ամպոտ երեսով
Եվ հըզորի մոտ բեզ պահի՛ր ստվերում...

Վճիտ առվակը վազում է կայտառ,
 Հանում է հեղիկ կարկաջ հատակից.
 Գլորվում են ալիք, արևը պայծառ
 Ժպտում է նորան հստակ երկնքից:

- 5 Մաղկում է շուրջը նորափթիթ մի կյանք,
 Թափշյա կանաչով փիերը պճնւած
 Գրկել են ջուրը, և անվերջ բերկրանք
 Եվ սիրո բուրմունք շունչն են այդ կենաց:

- Եվ թավալում է առուն ալյակներ
 10 Դեպի մեծ ծովը, կնճռոտ ծերունի,
 Շաշում են ալիք, ծեծում են ժայռեր—
 Սոքան անտարբեր և անդդովելի:

- Եվ որպես մանուկ հուսով խայտալով
 Հասավ ծովափը խաղալով անհոգ—
 15 Հորձանքը ուժգին մի աղաղակով
 Ընդունեց նորան կորստյան յուր գոգ...

- Այսպես չե՞ս և դո՛ւ, խեղճո՛ւկ պատանի,
 Տոգորված ոսկի վառ երազներով,
 Երբ մոտենում ես փշաքած կյանքի
 20 Բուռն հոսանքին դու անբիծ սրտով...

Ի՞նչ ես ողբում, հե՛ք պատանի,
 Ինչո՞ւ երգով ոլորուն
 Քարողում ես դու աշխարհի
 Սրտիդ թախիծ, դառնություն.

- 5 Բա՛ց աչերըդ, տես այս անմիտ
 Բաղմությունը ախտասեր
 Ականջ չունի քո քնարիդ
 Լսելու մեղմ նվագներ:

- Ո՞ւմ են պետք քո զգացմունք զեղուն,
 10 Ո՞ւմ ցնորքըդ ոսկեղեն.
 Ոչ քո վիշտը, ոչ խնդություն
 Նորան գրավել կարող չեն:

- Կամի՞ս վալսել հասարակաց
 Ծափհարություն—տո՛ւր նըկար
 15 Նորան դյուրին փափուկ կենաց
 Եվ կյանքը տես միշտ պայծառ:

- Ցույց տո՛ւր տեղը, ուր զորությամբ
 Ապրում է միշտ մամոնան,
 Օրհնի՛ր նորա խնկարկությամբ
 20 Տաճարը պիղծ պաշտաման:

Այն ժամանակ տես մանկական
Արքեցման մեջ ամբոխը
Կըպտական անմահության
Դափնիքով բո գլուխը:

Սեպտեմբերի 4

Ապրում ես, եղբա՛յր, և հույսըդ միշտ վառ
 Եվ հավատում ես թե կըգա մի օր,
 Բաղդի ալեկոծ նավը հողմավար
 Քեզ դուրս կըհանե աշխարհ բաղդավոր,
 5 Ուր բոլոր կըբաժ տառապանքներիդ,
 Հոգուդ տանջանքի, վշտի փոխարեն
 Քեզ երջանկության գեղեցկաժպիտ
 Սեր, վայելչություն, բերկրանք կողջունեն:

Բայց գիտե՞ս ինչ է այդ հույսըդ ունայն—
 10 Ո՛հ, լուկ վրդովմունք պատանու սրտի.
 Եվ թախիժ և վիշտ և ուրախության
 Զերմ արտասուքը քո սպասած կյանքի
 Եվ այն բոլորը, որ քեզ ապրելու
 Տալիս է բաղձանք, հավատա՛, եղբայր,
 15 Եթե ոչ այսօր—վաղն է անցնելու
 Որպես խաբուսիկ մի երազ պայծառ:

Եվ ճակատագրի այն դառըն կատակ՝
 Որ կյանք ենք ասում, իբրև ուրվական,
 Իբրև վաղանցիկ սիրո մի պատրանք,
 20 Իբրև մի բորբոք մտքի մանկական,
 Պիտ անհետանա, հեռանա մեզնից
 Առանց թողնելու մի հետք բնավին.
 Հավատա՛, եռուն երգն արյան հուզմունքից

- Միայն տալիս ենք կյանքին մենք մի գին...
25 Կանցնին տարիներ—և մեր էություն
Ողջ հետքը սրտի մընա լոկ աճյուն.
Կըքակեն պըսակ քո դործոնության—
Մոռացոնք—ահա՛ քեզ վարձատրության...

Սեպտեմբերի 8

- Տանջվիլ հանապաղ, տանջվիլ անվախճան,
 Լռիկ տանելով կյանքի զրկանքներ,
 Եվ լսել կոպիտ եսամոլության
 Այս կույր աշխարհի շար նախատինքներ,
- 5 Այրվիլ եռանդից գործունեության
 Խոստովանելով կամքիդ թուլություն,
 Եվ լինել միշտ զոհ խաբեբայության—
 Խորտակված տեսնել ազնիվ ցանկություն—
 Ահա՛, դու խեղճ մարդ, քո ճակատագիր...
- 10 Դու հավատում ես, որ քո գոյության
 Ունայն է նպատակ, ինչ էլ լինեիր,
 Բայց կրկին կամիս ապրիլ աննշան,
 Որպես խաղալիք քո բաղդի ձեռին:
 Ա՛խ, ես պատրաստ եմ կյանքը անվանել
- 15 Բնության գեղեցիկ մի ձիրք մեծագին,
 Եթե կարող էր մեկը համարել
 Յուր աշխարհային անցվոր գոյություն
 Անվիշտ, երջանիկ գոնե մի վայրկյան...
 Բայց ո՛չ. ես միայն մի երջանկություն
- 20 Խոստովանում եմ, երբ օրհասական
 Իմ ժամը կըգա, կիջնեմ մոլթ շիրիմ,
 Այնտեղ կըգրկեմ մի սեր հարատե,—
 Միայն ա՛յդ սիրուն հավատալ կամիմ,—
 Այնտեղ ցուրտ հողի վերմակի ներքե,

25 Մտած անխուով անտարբեր մի քուն,
Կհանգչեցնեմ գըլուխըս հոգնած
Եվ ջարդված սիրտըս մայր երկրի կրծքում,
Կըսեղմեմ շրթունքս նորա ցուրտ շրթանց...

Սեպտեմբերի 15

Մատաղ տարիներս անցնում են կամաց
 Եվ զլորվում են ալիքը կյանքի,
 Իսկ քո հասակի ծաղիկը չբացված
 Թռչնում է ինչպես կոկոնը վարդի,
 5 Երբ խնկանում էր մայիսյան օրին
 Հաղիվ դեռ ցուցած յուր ժպիտն անուշ,
 Տարածած շնչից ձմրան խստագին
 Խոնարհում է յուր զլուսը քնքուշ...

Եվ կամաց կամաց ծախիչ ժամանակ
 10 Քայքայում է քեզ, դու բոլոր սրտով
 Բոլոր էությամբդ մի սիրով անհազ
 Կամեիր գրկել անկեղծ զգացմունքով
 Ընկերդ, հայրենիքդ, համայն մարդկություն,
 Դու պատրաստ էիր և հասարակաց
 15 Զոհել ոսկեվառ պատանեկություն
 Եվ այն բոլորը, ինչ ունիս սիրած:

Բայց, խեղճո՛ւկ, հանգիստ քեզ տալ չըկամի
 Աշխարհը քո սուրբ վաստակի փոխան.
 Նորա քեզ պարգև—մահաթույն լեղի,
 20 Դու միայն ունիս մի սեր անսահման.
 Այն ինչ դու խոնջած թևերըդ պարզած
 Կուզեիր և սեր ողջունել և կյանք,
 Թշվա՛ռ, գրկում ես լոկ մի սև նախանձ,
 Զարույթյան օձի պատի՛ր խարդավանք...

Սեպտեմբերի 17

Խաղաղ վառվում է լուսինն երկնքում
 Եվ ջինջ կամարը ակառակիւր երկրին
 Մի հաշտ հայացքով նայում է, ժպտում,
 Դյուխական մի փայլ տված աշխարհին:

- 5 Եվ այնպես հստակ երկինքն անտարբեր,
 Այնպես անխռով, այնպես երջանիկ—
 Այստե՛ղ կռվում են երկրային կրքեր,
 Այստեղ զեղխությամբ կուրացած մարդիկ...

- 10 Նայում եմ շուրջըս. ահա՛ շքեղ կառքով
 Թռչում է գոռոզ անսիրտ մեծատունն,
 Իսկ պատին կրթնած ցրտից դողալով
 Բոկոտն երեսան շոր հաց է խնդրում:

- Դիմացիս փարթամ ապարանքներից
 Հեշտասեր նվազի հասնում է ձայներ,
 15 Կողքիս անտերունչ ծերունին անցնողից
 Կալով խնդրում է անցնել սև գիշեր...

- Եվ երբ ես դարձյալ նայում եմ երկին,
 Դառնացած մաղձով շնչում եմ անդոր.
 «Դու այս տեսնում ես, անամո՛թ լուսին,
 20 Եվ ծիծաղում ես դեմքով լուսավոր»:

Երկինքըն ամպոտ, միակերպ տխուր
 Եվ անտառը զուրկ յուր զարդարանքից,
 Եվ աչքդ հանգչիլ կամենում է զուր
 Պատկերի մի վրա բնության կենսալից.

- 5 Արևը հանգած և լուռ է թռչնակ
 Եվ մերկ են ծառեր, կանաչը խամրած
 Եվ արդեն դանդաղ սահում է վրտակ.
 Սպասում է խոր քուն համայն արարած:

- Պիտի դա ձմեռ, մռայլ ծերունի,
 10 Պիտի ծանրահան աչքը բնության
 Մինչև մահատիպ այս նիրհը անցնի
 Եվ փայլի մատաղ ժպիտը գարնան.

- Ա՛խ, լսի՛ր և դու, հոգի իմ տանջված,
 Քուն եղի՛ր և դու, վայելի՛ր հանգիստ.
 15 Ո՛վ գիտե, գուցե մի օր քեզ մոռցած
 Ճակատագիրըդ ժպտի քեզ նորից.

- Գուցե և սերը դարձյալ քեզ այց գա
 Ոչ յուր վշտերով, այլ վառ բերկրությամբ
 Եվ երջանկության հույսը քեզ ցոլա
 20 Որպես արշալույս, կրկին քաղցրությամբ:

Հոկտեմբերի 12

Ծածկվի՛ր շուտ, արև՛. քո դեմքը խարդախ
 Թող վարագուրեն ամպերն ալևոր.
 Ես չեմ կամենում, որ վիշտըս խաղաղ
 Իմանա, ծաղրե աշխարհ կեղծավոր...

- 5 Հասի՛ր, սև գիշե՛ր, պատկեր տխրության,
 Ո՛հ, ինձ քաղցր է քո Թախիծը դեմքի,
 Եվ այս իմ խորունկ ցավը հոգեկան
 Քո դառնության հետ սիրով պիտ հաշտվի:

- Թանձր խավար է, և քուն է մտած
 10 Համայն արարած, խորին լուսնուն...
 Աղատ է շունչըս. մտքերով զբաղված
 Ես վայելում եմ սուրբ անգործություն:

- Զէ նեղում սիրտըս ախտ աշխարհային,
 Հեռու է ինձնից խաբեբայության,
 15 Սառն ատելության պատկեր տխրագին
 Եվ փայլն եսամոլ փարթամ կացության:

- Կարող եմ գոնե առ ժամ մոռանալ
 Տգեղությունը իրական կյանքի,
 Ախորժ տրտմությամբ մտնիլ, խորանալ
 20 Ընտանի աշխարհն փոքրիկ մտքերի...

Հիշել և հուսալ և ջերմ արցունքով
Ողջունել այցը սիրած երազի,
Եւ վառ բերկրութեամբ և անկեղծ հոգով
Գրկել պատկերը ցանկալի կյանքի...

Նոյեմբերի 27

- Հողիս տխուր է. ուզում եմ ցրվել
 Այս դառըն մտքեր, զվարճանալ անհոգ,
 Խնդալ ես կամիմ, ասել ծիծաղել,
 Բայց... ա՛խ, ինչո՞ւ է այս վիշտն անողոր
 5 Իբրեւ մի բեռն, ծանր որձաքար
 Ճնշում իմ սիրտը, խեղդում որպես մահ,
 Եվ արտասուքըս չեն ինձ մխիթար,
 Այլ աչքումս ցամքած՝ տանջում են անխնա,
 Այրում են, մաշում այս տկար կուրծքըս...
 10 Որպես մի մանուկ ես լա՛լ եմ ուզում.
 Ա՛խ, պատառում էին ցաված աչքերըս,
 Գեթ արցունքս լինեիր ինձ սփռված թշուն...

Դեկտեմբերի 6

107

*
* *

Իբրեւ մի թշվառ կիսաշունչ դիակ,
Կուռ շղթաները ոտիդ ու ձեռիդ,
Տանջվում ես անխնա, դու հայ նահատակ,
Ընկած ոտները թշնամիներիդ:

- 5 Պահելով Փրկչի դու սուրբ պատվիրան,
Դարձնում ես երեսդ երկրորդ ապտակին,
Քեզ համար ոչինչ հարվածը դաժան,
Համբույր ես տալիս քեզ վարկող ձեռին:

- 10 Ինքդ քո աղնիվ արյուն քրտինքով
Բուսցրած հացը կտրում ես քեզնից
Եվ բռնավորին, որ դու ճակատով
Քեզ նշավակում է, կրում քո տանից:

- Մի՞թե չեմ տեսնիլ այն օրն երջանիկ,
Երբ այդ մահատիպ քնիցդ արթնացած,
15 Ինքդ կ'հռչակես դու մեծ ավետիք,
Թե ահա՛ վախճան դառն կապանաց...

Դեկտեմբերի 13

Ո՛վ նազելի կույս, դու մի լար
 քեզ համար չեն սև օրեր,
 Մանո՛ւկ հոգով, չեն քեզ համար
 Եվ սրտամաշ դառ վշտեր:

- 5 Քանի մատաղ քո սրտի մեջ
 Նոր զարթնում է դեռ դարուն,
 Երանության ձայների անվերջ
 Պիտի լսես դու կյանքում:

- 10 Արտասուքը քո աչերից
 Հեռու, օտար տակավին,
 Ինչպես դեմքը հստակ երկնից
 Պիտի անհոգ դեռ ժպտին:

- Բայց երբ, չքնաղ, ինչպես թռչնիկ
 Վանդակի մեջ, կ'սթափի
 15 Անուշ թնից և քո սրտիկ
 Աղատություն կըխնդրի,

- Այն ժամանակ կըհասկանաս
 Եվ դու միտքը մեր կյանքի,
 Եվ դու տանջվիլ կըցանկանաս,
 20 Գերի մի քաղցր երազի...

Դեկտեմբերի 13

Ա՛խ, պատառվում է իմ սիրտը վշտից
 Եվ խեղդում են ինձ դառն արտասուքներ,
 Մի՞թե այս անբաղդ անգութ աշխարհից
 Ինձ մի երջանիկ օր պիտի չհասներ:

- 5 Հողիս ողբում է—ես անտեր, մենակ...
 Սրտիս մեջ դժոխք, հուսահատություն,
 Կարծես ինձ համար չունի մի պատրանք
 Ոչ կուտի սերը, ոչ գեղեցկություն...

- 10 Միշտ նույն հակադիր մտքեր տանջական
 Մաշում են ուղեղս անողորմաբար...
 Ա՛խ, լռի՛ր, սիրտ իմ, բերնիցը մարդկան
 Չես լսի երբեք մի խոսք մխիթար...

Հունվարի 23

Մայրաքաղաքը փաթաթված լուսով
Հանգստանում է: Լուսինն երկնքում
Լողում է վառված արծաթ շողերով,
Աստղերը մնջիկ զրույց են անում:

- 5 Խորին լռություն, երբեմն միայն
Մի շքեղ սահնակ թռչում է սրենթաց
Եվ զանգակներովը աղմկածայն
Վրդովում նիրհը պահնորդին հոգնած...

- 10 Եվ տարածվում է փողոցի միջին
Անմիտ զվարճություն լայնբերան մի ճիչ,
Անհոգ մի երգի ձայներ խնդագին,
Կամ մի լիասիրտ կանացի բրբիջ...

- Նորից տիրում է նախկին լռություն,
Ցուցողում է ձյունն հաղար կայծերով.
15 Ո՞վ է սա—հաղիվ քայլերն է փոխում
Գլխաբաց, բորիկ, պատռած շորերով:

- Չուզե մնալ գլուխն ուսերի վրա
Կամ հետ է ընկնում կամ կախվում առաջ,
Ինքն ապուշ կերպով, ասես անզգա
20 Մեկ ձախ է ծռվում, մեկ ձգվում դեպ աջ:

Երբեմն էլ պատին կրթնում է, կանգնում
Բթամիտ դեմքով, աչքը կիսաբաց,
Նոր քայլ փոխելու նա փորձ է անում
Եվ թավազլոր մնում է փռված...

- 25 Մարդիկ տաք մահճում երջանիկ քնով
Հանգստանում են... Լուսինն երկնքում
Լողում է վառված արծաթ շողերով,
Աստղերը մնչիկ զրույց են անում:

Մարտի 3

Դարձյալ գարուն, և խնդագին
Արթնանում է բնություն.
Պարգևում է արևն երկրին
Յուր շնորհատու զորություն:

- 5 Եվ սթափել է մի նոր կյանքով
Կանաչ տերև, թավիշ խոտ,
Եվ բերում է ողջուն սիրով
Ձեզ զեփյուռը քաղցրահոտ:

- 10 Եվ կենսաբույր այս վառ դարնան
Գեղեցկությունն ոգելից
Կամի հուսալ մի պատասխան,
Ներդաշնակ խո'սք աշխարհից:

- Բայց խռովահույզ միտքը մարդկան
Սպասում է այն օրին,
15 Երբ սերը մեծ ու անվախճան
Պիտի հառնե վերստին:

- Եղբայրական սուրբ համբուրով
Մարդիկ միմյանց մոտեցած,
Ողջագուրել անոխ հոգով
20 Պիտի շտապեն սեր գրկած:

Կըգա այդ օրն, էլի նորեն
Մարդիկ մեծ սերն անվախճան
Ամբողջ տարով պիտի թաղեն,
Մինչև նոր օրն հարության:

Ապրիլի 4

Լուռ է հոգիս որպես գիշեր,
 Մռայլ որպես փոթորիկ,
 Եվ ինձ արդյոք լուսո շողեր
 Օր կըբերեն՝ն երջանիկ:

- 5 Անմիտ հուսով սիրտը՝ խաբված
 Պատառվել է կամենում...
 Տո՛ւր ինձ միայն հանգիստ, աստվա՛ծ
 Քեզնից էլ բան չեմ խնդրում:

Ապրիլի 12

Ես տանջվում եմ, ես այրվում եմ,
 Վայելչությա՛ն ծարավի,
 Բայց այն, ինչ որ ես խնդրում եմ
 Բաղդը ինձ տալ չըկամի:

- 5 Ես ատում եմ թշվառ երկրի
 Մեղեդիներ ձանձրության.
 Ես սպասում եմ մի հրաշալի
 Երգ անվախճան քաղցրության.

- Որ հրավառ անհուն կրքով
 10 Մարդու հոգի բորբոքեր,
 Կյանքն այժմ լի դառնությունով
 Մեզ սիրելի դարձրնեն...

Ապրիլի 28

Ո՞ւմ հայտնեմ ցավըս, տանջանքս հոգեկան,
Դառնացած սիրտըս սփոփանք է խնդրում,
Եվ անհոգ խնջույքն վառ ուրախության
Ինձ վաղուց արդեն օտար է թվում...

- 5 Եվ ինչպես հանդչող կանթեղը աղոտ,
Թռչնում է, մեռնում ծաղիկն հասակիս.
Մի քնքույշ սրտի, ջերմ սրտի կարոտ,
Նոր կյանքի հուսով մաշվում է հոգիս...

Սեպտեմբերի 19

Ես տանջվում էի, չափ չըկար վշտիս.
 Ես կարծում էի, նորան հավասար
 Ձեր կարող լինել ողջ վիշտն աշխարհիս
 Եվ ոչ հոգուս սրեա դժոխքը խավար:

- 5 Հասկանալ չուղեն, ես ասում էի,
 Իմ ցավն ահագին մարդիկ քարացած,
 Եվ քնքույշ սերը իմ սիրող սրտի
 Համարում էի մի շար քեն դարձած:

- 10 Բայց դու երեցար, նազելի ընկե՛ր,
 Բացիր ինձ սիրտըդ ջարդված խորտակված,
 Սարսափով տեսա ես նոր սև խոցեր,
 Տեսա որ ինձնից դու շատ ես տանջված:

- Եվ ես այն օրից ուսա համբերել,
 Վիշտըս կիսով չափ իր ույծը կորույս.
 15 Ուրիշի՛ վերքը քո ցավը անել
 Իմ մտածության առարկա դարձուց:

Հոկտեմբերի 13

Ո՛վ իմ շքնաղ, իմ անգի՛ն,
 Վառ աչերով հեշտասեր
 Խոստանում ես դու երգչին
 Երջանկության քաղցր օրեր:

- 5 Ես այրվում եմ քո սիրով,
 Սիրտըս արագ բաբախում,
 Արի՛ մի քաղցր համբուրով
 Յրվի՛ր հոգուս տխրություն:

- 10 Թող մարմարյա քո կուրծքին
 Սեղմեմ գլուխս իմ հոգնած,
 Քո մեղրածոք շրթունքին
 Իմ շրթունքը բորբոքված:

- Եվ աչերիդ նայելով
 Ես մոռանամ ողջ աշխարհ
 15 Եվ մի անվերջ համբուրով
 Այրվի՛մ, հալվի՛մ անդադար...

Դեկտեմբերի 20

Աղի՛ղ բալա, ջա՛ն բալա
Նանի բալա, ջա՛ն բալա:

Մեջքըս կոտորվեր էն օրը
Որ լիս աշխարհ քեզ բերի,
5 Թագն ու սլասկիդ տեղակ
Որ սև հողը շոնի—

Յարաբ ո՞ր մեղքիս համար
Գլխիս ընկավ էս քարը,
Լիս արևը մեր մտավ
10 Գլխիս պատեց խավարը:

Թառլան զուշ էիր ձեռիս
Թռար կորար, բալա ջան—
Ընչի սաղ սաղ շորի
Աղիղ նանիդ գերեզման:

15 Նանիդ աչքը դուրս պրծներ
Քու մեկդը շտեմներ.
Ինձ էլ հետըդ տանիիր,
Յարաբ, բալես, ի՞նչ կըլնիր:

Դեկտեմբերի 21

Ես երգելու ձեն շունեմ
 Բուլբուլի լեզվի նման,
 Ի՞նչ անեմ, որ սեր ունեմ
 Սրտումըս՝ բոցի նման

- 5 Ի՞նչպես, ի՞նչպես կերգեի
 Սերը հալվող իմ սրտի,
 Թե որ դալամըս գրեի
 Քչքչան ջրի նման...

- 9 Գիշեր ցերեկ անդնջում
 10 Ես կըտայի քու անոամ
 Կարմիր վարդի տեսության
 Կարոտ բուլբուլի նման...

Դեկտեմբերի 25

Ա՛խ, սև սև աչեր, ինչո՞ւ ձեզ տեսա
 Այդ հուրն երկնային ձեր մեջ բորբոքված,
 Հանդիստս այն օրից ես կորած տեսա,
 Սրտումքս սիրո կրակը վառված:

- 5 Եվ ո՞րքան տխուր հիշողություններ,
 Անցած օրերի կորած պատկերներ,
 Եվ քաղցր արտասուք, բերկրալի ժամեր
 Հարություն առած ես նորից տեսա:

- Երանի՛ մեկ էլ կարողանայի
 10 Վայելել սերը քո քնքուշ սրտի—
 Ես իրավունքով, ո՛վ կույս, կասեի
 Թե երջանկությունս կատարյալ տեսա:

Գեկտեմբերի 30

120

* * *

Ես էլ չունիմ նախակին գրիչ
 Իմ զգացմունքը երգելու,
 Սիրտըս կարծես էլ նույն թռիչ
 Չունի ոգի առնելու:

- 5 Արի, սոխակ, անուշ ձայնով
 Սերս աշխարհին դու հայտնի՛ր,
 Այն, որ ես չեմ կարող գրչով,
 Դու քաղցր երգով քարոզի՛ր:

- 10 Թռի՛ր, գնա՛ իմ տանջանքի
 Արա երկաթ պատմություն,
 Գնա՛, գուցե մեկը լինի,
 Յուզց տա ինձ կարեկցություն...

<Հումվարի 3>

Երբ որ մահւլանս ժամը հասնի,
Դու մի՛ տրտմիր, դու մի՛ ողբար.
Երբեք երգըս էլ չի մեռնի,
Թեև մարմինս աճյուն դառնար:

- 5 Քիչ ասրեցա, շատ ըզգացի,—
Զգացմունքներըս չըհասկացան.
Ես գործ անշահ, սեր երգեցի
Հասարակաց ազատության:

- Եւ փշոտ էր իմ ճանապարհ,
10 Զբաղեցի կյանքից վարդեր.
Ունայնասեր անմիտ աշխարհ
Միշտ ինձ համար մի մութ բանտ էր...

- Բայց թե ազատ երգն իմ տաղի
Զանցներ ինչպես զուր ձայն օդում,
15 Մաքուր մի իղձ կարենայի
Զարթեցընել մարդկան սրտում,—

- Բարեբաստիկ կըմեռնենի
Ես անվրդով մի քուն մտած
Եւ համարձակ ես կասեի,
20 Թե անպտուղ չէ կյանքս անցած:

Անլույս խավարը իբրեւ փոթորիկ
Կուտւիւած էր հայի շարշարւած գլխին,
Հեծում էր ստրուկ թշվառ հայրենիք
Գլուխ խոնարհած խայտառակ լծին:

- 5 Հազար ցաւերով սիրտը պատառւած
Կարոտ էր գոնե կարեկից խոսքի.
Եվ անմիտները կրագ խավարած
Թանձրացնում էին մռայլը վշտի:

- 10 Բայց հայ երկիրը դեռ երս ղուրկ չէր
Աղնիվ սրտերից. գիտութեան զրահով
Զինավառեցան լուսո զավակներ,
Պատռեցին խավարն ամուր ձեռքերով.

- Մերկացաւ դիմակ փարիսեութեան,
Փքոն խոսքերը օդում ցնդեցան,
15 Երբ մատաղ քնարի լսիկցաւ հնչյուն,
Կենդանի քարոզ վերածնութեան...

- Եվ դու մի մանուկ եռանդով աշրւած,
Տըվիր լարերին ոգևորութուն,
Դու վիշտ երգեցիր, վիշտը հայրենյաց,
20 Հոգով ողբացիր ազգիդ գերութուն:

Սեր, եղբայրութիւն, գիտութիւն և լույս
Դու քարոզեցիր խաւար սրտերին,
Դու վառ հավատով կարգացիր խրախույս
Ծանրը, ահարկու կռիւում ընկճվողին:

- 25 Դու ներշնչեցիր մեզ մի հույս գողտրիկ
Թե մեր փրկութեան օրը շուտ կը գա,
Անկեղծ սիրեցիր դու քո հայրենիք,—
Նա, ազնիւ երգիչ, քեզ չի մոռանա:

Անցան կասկածի, տխրության օրեր.
Աղատ է հողիս, հավատըս պայծառ,
Սիրուն հայրենիք, ես առած թեք
Դեպի քո գիրկը ընկա ճանապարհ:

- 5 Բա՛վ, ինչ ապրեցանք պնմիտ խոսքերով
Եվ թեթևամիտ սին երազներով.
Էլ հառաչանքըդ ինձ չի թողնելու
Կյանքիս մեջ րոպե դադար առնելու:

- 10 Եվ եթե մի է բոլորիս վախճան,
Երջանիկ, անբաղդ թե օր անցնինք,
Թե մեր բաժինն է մի նեղ գերեզման.
Գոնե քաղցր օրիդ թող մենք զոհ լինինք...

- Եվ մընաք բարո՛ւ, սեր, համբո՛ւյր կուսի
Եվ անո՛ւշ հրճվանք մատաղ օրերի,—
15 Ես հայրենյացս եմ միայն սիրահար,—
Նա է լոկ վշտի աղբյուր ինձ համար...

Մարտի 16

- Աղքատ խուցի մեջ անկյունում նստած
 Լուռ մտածութեան մեջ է ծերունին,
 Բարձր ճակատը վշտից խավարած,
 Ալեղարդ գլուխն հենած է ձեռին.
- 5 Կանթեղը հաղիվ պլպլում է, վառվում,
 Եվ աղոտ ցոլքը տախտակին ընկած
 Հաստ մագաղաթըն է լուսավորում,
 Որ ծերի առաջ դրած է բացած:
 Աչքերը թաղված խոր կնճիռներում
 Հառած են դեղին այն մագաղաթին,
- 10 Փետուրը նորա դողդոջուն ձեռում,
 Մեկանը շորցած մնացել է ծայրին:
 Տանջված նայում է ծերուկը գրբին,
 Զէ զորում գրիչն առաջ ընթանալ,
 Նոր էջը բացած նորա առաջին
- 15 Սպասում է վսեմ խոսքով ստվաբանալ...

Հանկարծ դողդողաց փետուրը ձեռին,
 Անդոր արտասուքն աչքերում ցոլաց,
 Եվ մագաղաթը առավ ծերունին,
 Բլխեցան խոսքերն հոգուցը ցաված.

- 20 — Հայո՛ց աշխարհ, հայո՛ց աշխարհ,
 Ողբում եմ քեզ հուսահատ,
 Արյունաներկ քո ճանապարհ,
 Քո կորուսած կյանք ազատ.

- Հանդած աստղըդ, փառքըդ շիջած
25 Եւ ավերած քո օջախ
Եւ գալերին քո մատներված
Անբաղդ որդոցդ խեղճ փարախ.

- Սորա համա՞ր դու ապրեցար,
Այս խայտառակ օրհասի.
30 Շղթաների արժանացար,
Տխուր վիճակ ստրուկի.

- Եւ գահադուրկ դու սողում ես,
Բռնավորի ոտքն ընկած,
Պատի՛վ, ամո՛թ մոռանում ես,
35 Կամքըդ, խիղճըդ վաճառած:

Եկեղեցիդ ապականված
Առադաստը հարսնական
Ասպարեզ է արդեն դարձած
Սեղեխների պղծության...

- 40 Եւ ոտնակոխ քո սրբություն,
Դու լռում ես իբրեւ մունջ,
Լկտի լուծը, չար բռնություն
Դու տանում ես անտրտունջ:

- Եւ անդանակ պատառեցին
45 Ջքնաղ կուրծքըդ կուսական,
Լալ, հառաչել քեզ ստիպեցին
Եւ փակեցին քո բերան...

- Ա՛խ, խեղդվում եմ անհուն վշտից.
Մա՛յր—հայրենիք, ինձ ների՛ր,
50 Թունաշաղախ այս տողերից
Որդուդ սերը ճանաչիր:

Ես մեռնում եմ. թող ի՛նձ նըման
Քո որդիքը քեզ սիրեն,
Թող միայն նոքա հրջանկության
55 Պատկերը քեզ ընծայեն...

Մարտի 25

Դատարիկ, անմիտ հուշսերով
 Մեզ խաբում ենք անդադար,
 Թե որ կըզա—վառ շողով
 Բազդ կըցոլա մեզ սպայծառ:

- 5 եվ նոր դարուն ու արև
 Դուք երս մեզ կըխաբեք,—
 Է՛հ, մընացեք դուք բարև,
 Մնաս, աշուն դուք եկեք.

- Տերևի սկս աշնային
 10 Մեզ հողմը կըխորտակե,
 Մի թիզ խավար ցուրտ դետին
 Մեզ հավիտյան կըփակե.

- Ինչպես մի մոմ հալվելով,
 Հանգչում է մեր մատաղ կյանք,
 15 Անմտությամբ տանջվելով
 Լոկ տեսնելով տառապանք....

Մարտի 29

Հայրենիքի հոտ բուրեցիր, մանիշակ,
Գարնան անուշ շունչ բերեցիր, մանիշակ,
Սառ հյուսիսում տաքացրերի իմ հոգին
Կապուտաշյա կույս դու համեստ, մանիշակ:

- 5 Ա՛խ, ո՛ր ծառի դու ստվերում ծաղկեցար,
Դու ո՛ւմ քաղցրիկ վառ աչերին ժպտեցար,
Հյուսիս հասար ցուրտ շնչիցը սառեցար
Դու նազելի կույս աննըման, մանիշակ:

- Քո կարոտով այրվում էի օրն ի բուն,
10 Մարող հոգուս եկար տալու հարություն.
Բայց հյուսիսից էլ մի սպասիր փրկություն —
Մնացիր անտեր, թառամեցար, մանիշակ:

Ապրիլի 24

- Ո՛հ, մի վրդովեք ըզմայլված հոգին,
 Սրբազան նիրհը ազատ սրեւտի,
 Երբ որ հոգեւոր նորա աչքերին
 Բաց է բնության խորհուրդը գաղտնի,
 5 Երբ սիրագործով ողջունն են տալիս
 Նորան երկնքից հուսավառ աստղեր
 Եվ քաղցրաժպիտ երբ այց են գալիս
 Վաղեմի գարնան շքեղ սլատիկերներ...

- Ո՛հ, հանգիստ թողեք, դուք չեք հասկանալ
 10 Ոչ նորա վիշտը և ոչ բերկրություն...
 Եվ թղթի վրա հառաչել ու լալ—
 Ձեզ համար միայն բառադասություն
 Եվ վսեմ հոգու այն նուրբ շարժումներ
 Մի՞թե կը հասնեն ձեր խուլ ականջին,
 15 Ո՛չ, մինչև թուղթը և կսկիծ և սեր
 Կըմարեն ինչպես ձայն գիշերային:

Հունիսի 11

Նա երեւցավ անժպիտ դեմքով,
 Եւ արշալույսի շողը ոսկեւառ
 Զէր խաղում ճակտին կենդանի ցոլքով,
 Սոխակի երգը չէր նորա համար:

- 5 Վշտից խավարած, արցունքն աչերին
 Փշյա պսակը բոլորած գլխին,
 Նա զարթեցրեց իմ մանուկ հոգին
 Եղբարցս տանջանքն ողբալու համար:

- 10 Խորտակւած քնար բեկբեկ լարերով
 Նա տվաւ ձեռքըս և թույլ մատներով
 Նվազել ուսա հայի դարերով
 Փորած շիրիմը սըգալու համար:

- 15 Եւ հիմա միայն, անո՛ւշ, սիրելի՛,
 Մի երազ ունիմ, երկի՛ր սպառնելի,
 Որ մեկ էլ քնարս ձեռքըս առնեի
 Քո հարությունը տոնելու համար...

Հունիսի 21

Տե՛ս խավարը թանձրանում է,
 Վերջին շողն էլ կը հանգչի.
 Սե, ցուրտ գիշեր մոտենում է,—
 Արևը շուտ կը թագչի...

- 5 Հոգուդ քունը հեռու քշի՛ր—
 Մեռելություն չըբերե՛,
 Հուսո կայծը թող սիրալիլ
 Սրտիդ բոցը վառ պահե՛:

- 10 Մոռացո՛նքը, միին ստվեր,
 Անկեղծ երգչի չէ բաժին.
 Թող ստրկության մռայլ գիշեր
 Ահ չըբերե՛ք ու սրտին.

- 15 Թե՛ք երգը դաշնակաձայն
 էլ տեղ չունի աշխարհում,
 Թե՛ շղթայի հիմա դաժան
 Շաշյունն է լուկ մեղ հասնում,—

- 20 Մի՛ վհատիր, ե՛լ ասպարեղ,
 Ա՛ռ յոթնադի քո քնար,
 Եվ տանջանքի օրհներգ տուր մեղ,
 Ողբի աղբյուր մեղ համար.

Կամ թող հնչեն հզոր լարեր
Ինչպես փողը հաղթական,
Թնդան ուժգին թմրած սրտեր,
Փայլի սուրբ խաչ վկայության...

- 25 Եւ քո ձայնը թող որոտա
Ինչպես ամպրոպ խավարում,—
Թուխալը ցրվի, կայծակ ցոլա
Արյամբ փրկված աշխարհում...

Ես չեմ նախանձում թշվառ ստրուկին
 Որի վիզն արդեն մաշել է շղթան,
 Ոչ վանդակի մեջ երգող սոխակին,
 Թեև նա լինե՛ր վայելք մեծատան:

- 5 Եվ նորան, որի խիղճը չէ սանձած
 Վառ գիտակցությամբ անարդար գործի,
 Որ անդորր հոգով յուր հաշիվն արած
 Երջանկանում է,— չեմ տալ երանի:

- 10 Բայց ես զգում եմ, որ միշտ քո ձեռին
 Բաղդավոր գերի կըմնամ, իմ հրեշտակ.
 Նորից կյանք կըտան աչերդ իմ սրտին,
 Թեպետ հեծում եմ վշտի բեռի տակ:

<Սեպտեմբերի 5>

Անմիտ գծերով թղթի վրա շարված,
 Իմ ցնորքները աննկուն ուժով
 Իբրեւ մի հոսանք գլխիս մեջ խոնած
 Հանգիստ չեն տալիս ինձ ինչպես թունով
 5 Լի մի բաժակ, որ հուսահատին
 Դառըն վիճակը ցուցնում է ծաղրով,
 Եվ մոտեցնում է ծարավ շրթունքին
 Եվ հետ և քաշում չարագործ ձեռով...

Սեպտեմբերի 20

Ես փառք չեմ խնդրում, ոսկի չեմ ուզում
 Ոչ կամիմ լինել ես կուռքն ամբոխի:
 Եվ փառքն ու ոսկին շատ շուտ են անցնում,
 Գինու շոգի է, սերը խուժանի:

- 5 Միայն կենդանի մնալ իմ հավատ
 Թե մի օր չարի խավարը կանցնի,
 Եվ միշտ անխափան իմ երգը ազատ
 Քնքուշ հնչյունով սրտումն կլսվի:

- 10 Եվ անկեղծ սիրով միշտ մատաղ կուրծքից
 Կարձակվեն ձայներն օրհնաբանելու
 Եվ ճշմարտութուն և վիշտ կարեկից
 Եվ վառ հրաշալիք գարնան արևու:

- Միայն իմանամ, որ քաղցր բուրմունք
 Շքեղ պսակիս կղմայլեցնեն,
 15 Հոգիս բորբոքված և վեհ զգացմունք
 Միշտ իմ սրտի մեջ անշեջ կըպահեն:

- Որ չքնաղ վարդերն անապատ կյանքում
 Չեն թառամելու թունոտ փշերից,
 Որ իմ ուղեցույց աստղիկն երկնքում
 20 Չէ խավարելու ահեղ ամպերից:

- Դուք բնակիչ ազատ երկրի լուսավոր,
 Ազատ կարգով, ազատ սրտով ու խղճով,
 Դառնությունը անշուք վեպիս սրգավոր
 Դուք չեք զգալ այստեղ հյուսած տեսնելով.
- 5 Ոչ մեկանով պետք էր նորան շարհարել,
 Անզուր խոսքը կենդանության ույժ չունի.
 Պետք էր և ձեզ ձիգ դարերով լուծ կրել,
 Լսել շաշյուն խավարածին շղթայի...
- Այնտեղ ուր միտք, հոգի և կամք կաշկանդած,
 10 Ուր իբր հեղեղ արյուն արցունք հոսում են,
 Ուր առաջին մանկան ճիշդ արձակած
 Ահեղ ձայնը, կոպիտ ձեռքը խեղդում են:
 Ուր բնության հրապույրքը և բարիք
 Առատությամբ մշակողին պարգևած,
- 15 Ինչպես ստրուկին շնորհած փարթամ մի խորտիկ
 Միշտ երկյուղով, տանջանքով է համեմված,—
- Այնտե՛ղ միայն քնքուշ սերն էլ է ծածկվում
 Մի արտաքին ցուրտ կոշտության կեղևով,
 Այնտեղ անզուսպ մի բռնություն է դառնում
- 20 Քմահաճույքն անզոր արգելք տեսնելով.

Ամաչում է կարծես ազատ երևիլ
Անկեղծ սերը, մաքուր զգացմունք և հոգի.
Ինչպես մի կայծ սև մոխրի տակ միշտ թաղվիլ
Աշխատում է շողը խանդի և վշտի...

<Գեկտեմբեր>

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1880

Ա. ՊՈՒՇԿԻՆ

1 ԱՆԱՎԱՐՏ ՊԱՏԿԵՐ

Այս ո՞ւմ խանդավառ միտքն է գուշակել,
Ըմբռնել դադանիքը գեղեցկության,
Ո՞ւմ յարգյոք, երկի՛նք, վրձինն է դրոշմել
Այս քսքանչելի գծեր երկնարժան:

- 5 Այդ դու ես, հանճա՛ր... Բայց խորտակեցին
Սիրո տառապանք նորան. և անձայն
Աչքերը հառած յուր գործի վրան՝
Հանդչում է արդեն բոցավառ հոգին...

Սեպտեմբերի 30

Ա. ՊՈԻՇԿԻՆ

2

* * *

Ո՛վ վարդ աղջիկ, գերի եմ ես,
Բայց կապանքից չեմ ամաչում.
Արքա-երգիչ սոխակն այսպես
Անցնում է կյանք դափնիներում
5 Հպարտ, չքնաղ վարդի մոտին
Գերության մեջ, սակայն անուշ,
Եվ յուր տաղերն երգում քնքուշ
Մութ, հեշտալի գիշերներին:

Սեպտեմբերի 30

Ա. ՄԻՅԱԵՎԻՉ

3

* * *

Ես ջերմ արցունք թափեցի,
Երբ մանկությունս հիշեցի.
Ես ջերմ արցունք թափեցի,
Երբ զորությունս հիշեցի.

5 Ես լալիս եմ և այժմիկ,
Մոտ է վերջին փոթորիկ...

Սեպտեմբերի 30

ԲԱՌԻ ԿՈՌՆՈՒԵԼ

4

Ե Ր Գ

Թող երգը անուշ հնչե հեշտագին,
 Ինչպես խոխոջը վըճիտ առվակի,
 Թող հիշեցնե մարդկային աղբին
 Սիրելի պատկեր անցած օրերի:

- 5 Վեհ ձայնը երգչի թող դնե վախճան
 Մեր դառն սուգին, ստոր կրքերին.
 Թող նորա երգը ազգասիրական
 Ներշնչե աշխույժ եռանդ մեր սրտին:

- 10 Ինչ մեզ հուզում է՝ թող այն ամենայն,—
 Ե՛վ ծիծաղ, և՛ լաց, հանգիստ և թախիծ,
 Ե՛վ ուրախություն, և՛ վիշտը մարդկան—
 Թող մասն ունենան այն հզոր երգից:

- 15 Թող վարթեցնե նա միտքը քնեած,
 Թուլերին ույժ տա, քաջերին ոգի,
 Եվ պարգևատրե որդոցն հայրենյաց
 Փառքովը իրանց արդար գործերի:

Սեպտեմբեր

- Զուրը վշվշում, ջուրն էր դիզանում.
 Ձկնորսը նորա նստած էր ափին,
 Անխռով, հանդարտ կարթին էր նայում,
 Սառը քնի մեջ ընկղմած հոգին:
- 5 Եվ մինչդեռ կարթին նայում է նստած,
 Ահա պատառվում, բացվում են ալիք,
 Եվ դուրս է գալիս ջրիցը հուզված
 Նորա առաջև մի կույս գեղեցիկ:
- Եվ անուշ երգում, ասում է նորան.
 10 «Ինչո՞ւ ես որսում իմ հպատակներին.
 Խորամանկ խելքով մտել ես դարան,
 Մատնում ես նոցա մահացու տոթին:
 Բայց ի՞նչ երջանիկ, եթե իմանաս,
 Զրի խորքերումն ապրում են ձկներ,
 15 Դու էլ ցած կիջնես, հենց ինչպես որ կաս,
 Եվ սիրով, քաղցրիկ կանցնես քո օրեր:
- Մի՞թե ոսկեշող արևն ու լուսին
 Ծովի ցուրտ գրկումը չեն զովանում,
 Եվ դեմքը նոցա ջրի երեսին
- 20 Ավելի չքնաղ չէ՞ պատկերանում:
 Եվ պայծառ երկինք գրավո՞ւմ չէ քեզ,
 Երբ վճիտ ջրումն է նա նկարված.
 Եվ քո խակ պատկերն, երբ այնտեղ նայես,
 Քեզ չէ՞ հրապուրում դեպի ծոցն ալյաց»:

- 25 Զուրը վշվշում, ջուրն էր գիզանում,
Ոտները թրջում բոբիկ ձկնորսին.
Անուշ ցանկությամբ հոգին էր լցվում,
Ասես այն սիրո հույզն էր առաջին:
Եվ կույսը նորան երգում էր, թովում,
30 Եվ ձկնորսը խեղճ իրանից զնայ.
Եվ կույսն էր քաշում, ինքն էլ հետևում,
Ահա՛ն անհետ ջրի տակ մնայ:

Նոյեմբեր

6

* * *

Իմ արցունքից բուսնում են
Անուշաբույր շատ ծաղիկ.
Հառաչներըս դառնում են
Սոխակների դայլայլիկ:

Յ Սիրի՛ր դու ինձ—քեզ պարզե
Տամ, իմ հոգյա՛կ, ծաղիկներ.
Պատուհանիդ առաջև
Անուշ երգեն սոխակներ:

Լ. ՀԱՅՆԵ

7

*
* *

Այս ի՞նչ երգ է հնշտադին
Թափանցում խորքն իմ հոգուն.
Հնչի՛ր, երգ դու գարնային,
Չայնիկդ հասնե թող հեռուն:

- 5 Հնչի՛ր, հասի՛ր այն տնակ,
Ուր ծաղկունք են բողբոջում.
Այնտեղ կլինի իմ հոգյակ՝
Կըտաս նորան իմ ողջուն:

<նայեմքե>

Ն. ՆԵԿՐԱՍՈՎ

8

ՆՈՐ ՏԱՐԻ

Մաշվում է իմ կյանք, հալվում ամե ցամ.
 Տըկար է միտքըս, սառչում է արյուն...
 Ես, մա'յր-հայրենիք, կիջնեմ գերեզման՝
 Չըտեսած քա՛ղցր քո ազատություն:

- 5 Բայց ես կուզեի—գեթ իմ օրհասին
 Դու ոտ կոխեիր հաստատ ճանապարհ,
 Տանջանքից հետո դու քո առաջին
 Տեսնեիր բացված քո օրը պայծառ:

- 10 Կուզեի—գե'թ այժմ հասցնեիր քամին
 Հայրենի դյուզինց մի ձայնիկ միայն,
 Որ ինձ շրթերեր նոր բռթ ցավագին
 Դառն արտասուքի, ծովացած ալյան...

Փետրվար

Ա. ՊՈԽԵԿԻՆ

9

ՊՈԵՏԻՆ

Պոե՛տ, սիրույն դու ամբողջի մի՛ տար գին —
 Շո՛ւտ կըլնեն աղմկալից դրվատներ.
 Մաղը ու լուտանք թող որ թափեն քո գլխին,
 Այլ դու մընա՛ միշտ անխռով, աներեր:

- 5 Արքա ես դու. ապրի՛ր մենակ: Քո ուզին
 Գընա՛ վստահ, ուր որ տանե միտքդ աղատ.
 Հասունացրո՛ւ դու պտուղներն հարազատ
 Վեհ խոհերիդ, վարձ մի՛ ուզիր քո գործին:

- 10 Վարձահատույց և դատավոր դու ինքդ ես.
 Քո գործը դո՛ւ ամենից խիստ կը դատես:
 Ինքդ գո՛հ ես, արվեստավո՛ր անաչառ:

Գո՛հ ես. խուժանն հայհոյե՛ թող քո վաստակ,
 Մաղըն բազինդ, ուր վառվում է քո կրրակ,
 Եռտանիդ դրդվեցընե տղայաբար:

Մարտի 20

Ա. ՊՈՒՇԿԻՆ

10

Է Լ Ե Ք Ի Ա

Անցած բերկրանքը անմիտ օրերի
 Ինձ ծանր է որպես ըմպելյաց շոգի.
 Բայց իբրև գինի, քանի հիմն, այնքան
 Խիստ է հիշատակ անցյալ տխրության:
 5 Տրտում է ուղիս: Կսկիծ ու տանջանք
 Լոկ խոստանում է հեղհեղուկ իմ կյանք:

Բայց չեմ կամենում, ընկերներ՝, մեռնիլ,
 Ես ապրիլ կամեմ, խորհիլ ու տանջվիլ.
 Եվ, գիտեմ, կյանքի վիշտ ու հոգսերում
 10 Սպասում է ինձ և վայելչություն.
 Քաղցրությամբ երբեմն հոգիս կըլցվի,
 Արցունքովս մտքիս պտուղը կթրջվի
 Եվ գուցե տխուր իմ արևմուտին
 Յուլանա սերը մի ժպտով հետին:

Օգոստոսի 11

- Օդն անվրդով է և խաղաղական
 Քնով հանգչում են դաշտերն՝ ամայի
 Եվ անուշ բուրմունքը և մի՛ ասահման
 Թեթև թափանցիկ մեզ երեկոյի.
- 5 Ո՛հ, պարզեցե՛ք հանգիստ երկնային
 Աշխատավորի վաստակած գլխին,
 Օրոր ասելով քուն դրեք նորան
 Դալար ու քնքուշ մարգերի վերան:
- Ահա՛ և գիշեր. երկնքում ցրված
 10 Եվ տարածված են բյուրավոր աստղեր,
 Փայլում, ցոլում են որպես հուր վառված,
 Այստեղ ու այնտեղ արձակում շողեր.
 Նիրհում է գետը. ջրերը՝ վըճիտ,
 Եվ ջինջ է երկինք. գիշերը՝ պայծառ—
- 15 Եվ քունը բնության գեղեցկաժախտ,
 Տե՛ս, պահպանում է լուսին պերճափառ:
- Արդեն և ժամը հասավ ննջելու,
 Եվ ուրախություն և վիշտ հեռացան:
 Դեռ կրկին է քո հոգին զարթելու,
 20 Արդ նորեն փայլին հավատա՛ օրվան:

Ահա՛ և շունչը հովիկ գիշերի
Բըլբուրի վըրա փշեց հաճելի,
Եվ արծաթափայլ մեղմ ալյակներով
Արտն է ծածանվում լիքը հասկերով:

- 25 Հավատա՛ լույսին և հեռո՛ւ թախիծ—
Եվ ամենայն ինչ մատչելի է քեզ:
Այդ թեթև նինջը թոթափի՛ր քեզնից.
Որպես ըմպելի նա հաղթում է մեզ.
Եզի՛ր դու կտրուկ և մի՛ խռովիր
- 30 Ամբոխի առաջ անզոր, դանդաղկոտ.
Նա է հզորը, որ անախտակիր
Եվ խելացի է և չէ՛ վեհերոտ:

Ես դուրս եմ գալիս մենակ ճամբու վրան.
Փայլում է հեռու միդապատ ուղին
Խաղաղ գիշեր է և նիրհած բնության
Աստղերն են հսկում զրուցելով լռին:

- 5 Նայում է երկինք շքեղ հրաշալի
Եվ կապուտազգեստ երկիրն է հանգչում,
Բայց ինչո՞ւ է այս վիշտը իմ սրտի.
Սպասո՞ւմ եմ մի բան, թե՞ կորցրածս ողբում:

- Կյանքից հուսալու էլ ոչինչ չունիմ
10 Եվ չեմ ամսոսում օրերս անցյալ,
Ես ազատություն, ես հանգիստ կամիմ,
Ա՛խ, ես կուղեի մոռացվիլ, քնանալ:

- Բայց ոչ մահատիպ ցուրտ շիրմի մի քուն
Կուղեի մտնել այնտեղ հավիտյան,—
15 Ո՛չ, որ իմ կուրծքը զգար զորություն
Միշտ երիտասարդ կյանքի բաղցրության,

- Որ գիշեր ցերեկ ինձ անուշ մի ձայն
Սեր երգեր, գգվեր իմ լսողություն,
Որ կանաչախիտ կաղնին իմ վրան
20 Խոնարհած հաներ մի ախորժ շրջուն:

Կուղեի անհետ հեռանալ, կորչել,
Որպես ոսկեվառ շողն արշալուսի,
Որպես մի աստղիկ կուղեի հանգչել
Բարձր կամարում կապույտ երկնքի:

- 5 Որպես քաղցր երազ կուղեի անցնել,
Խանգարված տգեղ հոգսերիցն օրվան,
Կամ գիշերային ձայնի պես մեռնել,
Տեղ տալով խորին մի խաղաղության:

- եվ որպես ցողը ես շոգիանալ
10 Կուղեի հղոր արևի տապից,
Կուղեի դեպի երկինք բարձրանալ
Որպես սրբազան կնդրուկ բուրվառից:

- եվ կըցանկայի ինչպես ծուխ ցրվիլ,
Ինչպես օդումը բույր ծաղիկների.
15 Ողջ իմ էությամբ բնավին ջնջվիլ
Կուղեի հանկարծ, առանց ցավերի:

- եվ կըցանկայի... բայց ինչո՞ւ ցանկամ,
Դյուրավ չէ գալիս մահը վերահաս,
Մինչ նորա գալը բաժին է մարդկան
20 Սրտամաշ ցավով տանջվիլ հանապազ:

Եվ ահա հետո հասնում է միայն
Բոլոր վշտերի տխուր փրկություն,
Եվ քեզ համար է լոկ անվիշտ վախճան
Քե՛զ համար, դու՛ն մե՛ծ, անսի՛րտ բնություն:

Սեպտեմբերի 21

Անկենդան հովիտ ձյունով ըսքողված,
 Եվ շուրջը թախիծ, սև, չարագուշակ
 Յրտաշունչ ամպեր լուռ անշարժ կանդնած
 Իմ գլխի վրա և մշտանվագ

- 5 Ողբում էր հողմը: Հուսահատության
 Երգն էր հովտի մեջ հնչում դառնազին
 Եվ ագռավների շար ձայնը դաժան...
 Անձնատուր էի ես իմ մտքերին:

- Երկի՛ր հարազատ, այս քե՛ղ եմ տեսնում
 10 Գեղեցիկ գլուխդ աշդպես խոնարհած,
 Քեզ, խրո՛խտ աշխարհ, ծաղկափթիթ, սիրուն
 Այդպես մահատիպ ձմրանից ընկճված:
 Օրերն անցնում են. ձյուն և ձյուն միայն
 Եվ քուն մեռելոտ... Իսկ հույս և ոչ մի...
 15 Ո՛հ, մայրիկ, լսի՛ր, որդունդ է այս ձայն.
 Զարթի՛ր, մի՛թե չէ՛ ժամը քո բաղդի:
 Հալեցրո՛ւ մի ջերմ սիրո ժպիտով
 Սառուցի կապանքն և սպիտակ պատան,
 Զորեր բերկրության ցողի՛ր արցունքով,
 20 Յրի՛ր իմ վիշտը, թախիծն հոգեկան:
 Զգեցի՛ր դյութական հանդերձ պերճափառ

- Հեռո՛ւ արևից մղի՛ր այդ թուխպեր.
 Նորա շողերը կցողան զերթ գոհար,
 Եվ նորից անամպ կըսահեն օրեր:
- 25 Հանկարծ լավեցավ. «Գալուստդ անժամ է,
 Դեռ երս դարունն հեռու է փայլում,
 Մահացու պատանս խեղդովի և ծանր է,
 Նորան պատառել ուշքըս չէ բանում»:
 Ի զուր ես կոչում, աղերսում էի
- 30 Եվ տալիս էի շարունակ հարցեր.
 Խորունկ էր նիրհը նորա աչքերի,
 Կապել էր անգույն ցուրտը շրթունքներ:
 Եվ ազդավների շար ձայնը դաժան
 Կսվում էր այնտեղ: Ես իմ մտքերում
- 35 Բնկղմած էի. և շարակական
 Կալիս էր հողմը, դառնագին ողբում...
 Ի՞նչ էր նա երգում: Ո՞ւմ էր անիծում:

Ա. ՄԻՅԱԵՎԻՉ

15

Ե Ր Ա Ջ

Գուցե նախանձոտ խիստ ճակատագիր
 Եվ մեր օրերին դրեւի է սահման,
 Բայց ոչ մի խոսքով դու այդ մի՛ հիշիր,
 Երբ վերա հասնի հրաժեշտի մեր ժամ:

- 5 Վերջին ժամերը վերջին գիշերովան
 Աննկատելի սիրով թող անցնեն...
 Եվ միայն վերջը տխուր տեսության՝
 Դու ինձ թույն կըտաս—սիրով կընդունեմ:

- Եվ վերջին անգամ քաղցր քուն կլինեմ
 10 Իմ շրթունքները քոնին սեղմելով.
 Եվ վերջին անգամ թույնը կըխմեմ,—
 Թույնը համբույրի,—աչքիդ նայելով:

- Եվ օրեր կանցնեն, գուցե տարիներ—
 Կըգա բոլորի ժամը ելնելու—
 15 Ընկերիդ համար դու այս կամարներ
 Կըթողնես, կիջնես ինձ դարթեցնելու:

- Քեզ այն ժամանակ նորից կըգրկեմ,
 Եվ քո ջերմ կրծքում առաջվա նման
 Վառ սիրով աչքիդ կընայեմ, կասեմ,
 20 Թե նիրհել էի քեզ հետ մի վայրկյան:

Սեպտեմբերի 27

Վ. ՍԻՐԱԿՈՄԷՅԱ

16

ԱՆԳՐԱԳԵՏ

Երբեք մեկին չեմ նախանձում ես աշխարհի երեսին,
 Միայն, գրագե՛տ դուք պարոններ, նախանձում եմ ձեր
 Բաղդին:
 Ա՛խ, գթացե՛ք գեղջուկ որբիս, մի լավություն միայն
 արե՛ք—
 Տըվեք մի թերթ ինձ ճերմակ թուղթ, մի փետուրե գրիչ
 տվեք,

- 5 Եվ ինձ գրել սովորեցրե՛ք, սովորեցրե՛ք լա՛վ, շուտո՛վ,
 Որ գրիչս կաթակից էլ արագ թռչե գրելով.
 Որ պատմելով թղթի վերա ես ձեզ ցույց տամ ամեն բան—
 Մեր աշխատանք, մեր շարձարանքն ու մեր խաչը
 վկայության...

- Կըհայտնեի, ի՛նչ ցնորքներ, ի՛նչ մտքեր կան իմ գլխում,
 10 Մի ողջ աշխարհ ցույց կտայի ես աննման պատկերում...
 Բայց այժմ անհետ չքանում են բոլոր իմ քաղցր երազներ,
 Ես անգրագետ, ես անուս եմ... Սովորեցրե՛ք,
 պարոններ:

Կըգրեի ես առաջուց, ի՛նչ եմ տեսնում երազում...

- Այս երազներն այնպես շքեղ, հրաշալի՛ են... Եվ դաշտում
 15 Ահա գեղջուկ մատաղ աղջիկն հունձ է անում եռանդով.
 Նորան հրեշտակն երկնքիցը ժպտում է վառ աչերով...
 Երեի թե կարեկցո՞ւմ է նա հնձվորին... Եվ նորա՞ն
 Արտուտիկը կամի սփոփել յուր երգովը քաղցրաձայն...
 Կըգրեի, ինչպե՛ս ամառն արշալույսն է փայլափայլում,
 20 Եվ քարերին զարնըվելով կայտառ ջուրն է խոխոջում.

Ի՛նչպես արտում ցորենի հետ զրույց է անում մեղմ քամին,
եւ աղոթքի հրավիրում է փոքրիկ զանգը մեր ժամին.
ես աղոթեմ կամենում եմ, բայց չգիտեմ աղոթքներ—
ես անգրագետ, ես անուս եմ... Սովորեցրե՛ք,
պարոններ:

- 25 Աղնիւ գործ է՝ թե մարդ գրել յուր խոսքերը կարենա,
Բոլորն, ինչ որ մտածում է, բոլորն, ինչ որ գրելուիսը գա,
Գրչով պատմեմ այն ամենը, ինչ դիզվել է յուր սրտում,
Ճշմարտություն միշտ քարոզեմ, բարի գործի մեծություն.
Կալ է նույնպես, թե կարող է, գրչով կծու խոսքերին
30 Պատասխանեմ—սուսերի պես կհարվածեմ չարերին:
ես շատ անգամ ծաղր եմ լսում, բայց իմ ուսյալ թշնամուն՝
Սիրտս այրվում է, պատասխանի չունիմ բնավ զրուցյուն,
եւ զուր տեղը ես տանջվում եմ, և հուզվում եմ, և դողում,
եւ միմիայն թղթի վրա անմիտ կերպով խաղկւում.
35 Ինձ ծաղրում են, և ամոթու կարմրում են իմ այտեր...
ես անգրագետ, ես անուս եմ... Սովորեցրե՛ք,
պարոններ...

- Շատ լավ բան է դիր իմանալ: Գրագետ է վաշխառուն.
Գրագետ են դատարանի ծառայողներն անկշտում.
Եռանդով էլ նոքա գրում են, նոցանն է դրախտն աշխարհի,
40 Իսկ այդ գրելն ի՛նչ փուլթ որ խեղճ մարդու հոգին պիտ
հանի...

- Շուտո՞ւմ, շուտո՞ւմ գրիչ տվե՛ք, սովորեցրե՛ք գործ ածել,
Կամիմ գրել աղգիս համար, նորա համար աշխատել.
Եւ ես նորան կը պաշտպանեմ չարագործից, հիմարից,
Կարտագրեմ Ավետարանն ես բոլորը սկզբից...
45 Ա՛յ դու, սագ իմ ճերմակթևիկ, քեզ տվել եմ կերպիւր,
Քեզ սիրել եմ—փոխարենը թեիցդ ինձ մի գրիչ տո՛ւր.
Միրո՛ւն դու սագ, տո՛ւր, խնդրում եմ, ինձ թռչելու զույգ
թևեր,
Ուր ամենքը զըրագետ են... Սովորեցրե՛ք, պարոններ:

Յոլուն աստղերը կապույտ երկնքում
Երգում են անուշ միասին խմբված,—
Եվ զգուշությամբ կամաց են երգում
Որ չվարթեցնեն երկիրը նիրհած.

- 5 Ա՛խ, ամբողջ օրը շրջող ոտներից,
Անվերջ աշխատող կուռ բազուկներից,
Ամուր բաբախող մարդկանց սրտերից
Խեղճ մայր-երկիրը սաստիկ է հոգնած...
Մարտի 14

Ս. ՆԱԴՍՈՆ

18

ՊՈԵՏ

Թող քո երգում եռա հուրը բարկության,
Թող երգդ այրե հոգի անկեղծ արցունքով,
Թող արձագանք լինի ազնիվ ցանկության,
Ոգևորե հայրենիքի սուրբ սիրով:

- 5 Նորա ամեն թող ձայնն առաջ մեղ կոչե,
Հույս ներշնչե ահեղ մարտից ընկճվածին,
Անմահությամբ թող անկածին պսակե,
Նշավակե երկշոտությամբ փախչողին:
Ստության հետ և խավարի կռիվ մտած՝
10 Ճշմարտությա՛ն, լուսո՛ համար մարտնչենք,—
Այն ժամանակ քո առաջին խոնարհած՝
«Դու պոետ ես», քեղ հրճվանքով մենք կասենք:

- Թող երգդ հնչե, որպես վտակ կարկաչուն,
Որ սահում է մեղմ հորձանքով արծաթի,
15 Որպես աղբյուր եռան հույսեր, ցանկություն,
Եվ ույժ լսվի և մի ծիծաղ կենդանի:
Թող մոռացվինք մատաղ ձայներ լսելով,
Թռչենք քեղ հետ երազների այն աշխարհ,
Ուր չեն թափվում դառն արտասուք տանջանքով,
20 Ուր կա հանգիստ, գեղեցկություն սիրավառ.
Զվարճանանք՝ թողած ամեն վիշտ, հոգսեր,
Եվ մանկության անուրջներով մենք ապրենք,—
Եվ մենք կօրհնենք այն ժամանակ քո գործեր,
«Դու պոետ ես», քեղ հրճվանքով մենք կասենք:

Փետրվարի 8

321

Պաղպաղուն առվա՛կ, սահի՛ր դեպի ծով,
 Հանդարտ գըլորի՛ր ավիքըդ վճիտ.
 Էլ չեմ գալ երբեք խըռոված հոգով
 Ես ալցեկության սիրուն ավերիդ:

- 5 Սահի՛ր մարգերով և հովիտներով,
 Դարձի՛ր, սիրելի՛, հորդառատ մի գետ.
 Էլ չես տեսնելու ինձ հուղված սրտով,—
 Ո՛հ, մընա՛ս բարե, ընկե՛ր իմ, հավետ:

- վերադ խոնարհած կողբա ուռնին,
 10 Կըլսվի այստեղ շրշյունը բարդու,
 Մեղուն կըճախրե քո կանաչ ավին.
 Բայց դու ինձ երբեք էլ չես տեսնելու:

- Ոսկեվառ շողեր գարնան արևի
 Ալիքներիդ հետ ուրախ կըխաղան,
 15 Լուսինը քեզ հաշտ գուցե դեռ ժպտի,—
 Բայց էլ չես տեսնիլ դու ինձ հավիտյան:

Ընկե՛ր իմ, եղբա՛յր, դու վաստակաբեկ եղբա՛յր իմ
տանջված,

Ով որ էլ լինիս, դու մի՛ վհատիր.

Թող հեծե թշվառ, անարդարությամբ, չարիքով լցված

Դառն արտասուքով ողողված երկիր,

5 Թող որ խորտակված, ոտնակոխ լինի քո սուրբ իդեալ,

Թող անմեղների արյունն հորդանա,—

Հավատա՛, եղբա՛յր, կըգա ժամանակ—կըկորչի Բաալ,

Եվ նորից երկրին սե՛ր կըտիրանա:

Ո՛չ շղթաների դաժան բեռի տակ, ո՛չ փուշ պսակով,

10 Եվ ո՛չ ծանր խաչ կորացած ուսին,—

Նա աշխարհ կըգա մի նոր զորությամբ և մի նոր փառքով,

Բաղդի պայծառ ջահն անհողդողդ ձեռին:

Եվ էլ չի լինի աշխարհում արցունք, ոչ թշնամություն,

Ոչ մոռցված շիրիմ և ոչ ըստրուկներ,

15 Ոչ կարոտություն, անլո՛ւյս, մահառիթ սև կարոտություն,

Ոչ սուր, ոչ մահու խայտառակ սյուներ:

Գիտեմ, իմ ընկե՛ր, չէ մի պատիր հույս, ո՛չ ցնորք

վաղանցիկ

Սիրո անձկալի գալուստը պայծառ.

Զորս կողմըդ նայի՛ր—չափազանց արդեն ճնշում է
չարիք,

- 20 Եվ խիստ է արդեն դիշերը խավար:
Տառապանքներից աշխարհը կընկճվի, և կըթուլանա
 Նա անմիտ կռվից, արյան մեջ խեղդված,—
Եվ դեպի սերը, մեծ սերն անձնազոհ, աչքը կամբառնա,
 Աչքը՝ վշտալի աղերսով լցված...

Դեկտեմբերի 24

1880

21 ԱՂՋԿԱ ԵՐԳԸ
(Իտալերենից)

Թխերեսս հմ ու սիրուն
Ունիմ հրացա՛յտ ես աչեր,—
Բայց կատակեց բնություն
Տալով այս սիրտն ինձ նվեր:

- 5 Երբ տեսնում եմ սլառանուն
Սիրո համար երգելիս,
Ես շարժված եմ ձևանում
Եվ սրտահույզ՝ ու լալիս:

- 10 Բայց երբ շունի սիրականս
Իմ հոգյակն այլևս կասկած,—
Նրան նայում եմ ու ասում
Թե միայն ծիծաղս է շարժած:

Ապրիլի 5

Մինչ Ապոլլոն նվիրական
 Զոհ պոետից չէ խնդրում,
 Նա սնոտի աշխարհական
 Ընկղմած է հոգսերում:

- 5 Կուռ է նորա քնար սրբազան,
 Սառն քնի մեջ է հոգին,
 Ու երկրի որդոց նա աննշան
 Ամենիցքն է չնչին:

- Բայց երբ բարբառն աստվածեղեն
 10 Հասնե նորա ականջին,
 Պոետի հոգին կսթափի քնեն,
 Ինչպես զարթնում է արծվին:
 Աշխարհն ուրախ է, նա տրտում,
 Զայնին չէ լսում մարդկային.
 15 Հպարտ գլուխն չէ խոնարհում
 Ամբոխի կուռքի առաջին,
 Նա փախչում է դժնահայաց
 Վայրի ալյաց ամբար,
 Կայնածսովալ մարգերը,
 20 Եվ սրտահույզ և խրոնոված...

- Երբ որ սիրունիս իմ թուլուալով
 Խոսում է երբեմն, պապաջում, երգում,
 Այնպես քաղցր է երգն, որ շուգենալով
 Բաց թողնել մի խոսք, որ նա է ասում,
 5 Կախարդված հուզված առաջն հմ նստում
 Չեմ վստահում լալ, շնչել, ծիծաղել,
 Նստում հմ առնշարժ, հրճվում հմ, լռում—
 Լսե՛լ հմ ուզում, լսե՛լ ու լսե՛լ:

- Բայց երբ որ նորա կապուտակ աչեր
 10 Հրավառ ցուան անուշ խոսելով,
 Անհոգ փաթաթվին դանգրահեր մաղեր
 Վարդագեղ նորա շքեղաշուք վզով,
 Վառվին ալ թշեր, շրթունքը բացվին,
 Մարգարոյա փայլին պայծառ ատամներ,—
 15 Կըդադարեմ լսել ես իմ հոգյակին,
 Կ'ուզեմ համբուրե՛լ, պի՛նդ պի՛նդ համբուրել:

Սեպտեմբերի 30

ԱՆԱԿՐԵՈՆ

24

ԳԱՐՈՒՆ

- Ժն, նոր դարնան տալուր ողջոյն
 Փռւշս վարդից սիրուն Քարիտք
 Եւ հեշտութեան ի նիրհ ծովուն
 Պարզավճիտ հանգչին ալիք:
 5 Եւ բաղն ի լիւղ կայտառ հրճուի,
 Սաւառնաթե կռունկն թռանի
 Արփիաճեմ ելնալ Տիտան
 Վարէ դթուղարս գիշերացած
 Գործք ի նորոյ եռան մարդկան,
 10 Արտք ծածանին համատարած:
 Եւ խոնարհին ճիւղք ձիթենվոյն,
 Եւ Բաքոսին որթք ուռճանան,
 Եւ ոստք մատաղ պտղոց ծառոյն
 Միլս ընձիւղեն ամենաղան:

Մարտի 11

Ափրոդիտէ՛, Զևսայ դուստրդ դու անմահ,
Գաղտնորոգայթ, որ յերփներանգ բաղմիս դահ,
Մի՛ աղաչեմ, ո՛վ տիրուհի, մաշեցես
Ի դառնութեան վիշտ զիմ հոգի աղէկեղ:

- 5 Այլ է՛ջ առ իս, որպէս երբեմն հաճեցար.
Զի խոնարհեալ յեմ պաղատանս ինձ լուար,
Թողիր զհօրդ դու զոսկիփառ բնակարան,
Իջիր ի կառս լինել հիքիս ախոեան:

- 10 Եւ առ երկիր երամովին աղանիք
Զքեղ ածէին երագաթովչք գեղանիք,
Անդուստ յերկնից ի թև ամուր սլացեալ
Եւ գեղապար ընդ ջինջ եթեր ճախր առեալ:

- Ժամանեցին. և դու, յավե՛րժ երանիկ,
Դու ժպտերես յիս հայեցեալ չքնաղիկ
15 Հարցիր, եթէ զի՞նչ կրիցիմ ի նորոյ
Եւ զի՞նչ պատճառք կրկին ի քեզ հայցելոյ:

Զի՞նչ մանավանդ ես տեսանել փափաղիմ
Յոգի բերկրեալ. հարցիր, որո՞յ կարօտիմ,

Որոյ բաղձամ սիրոյն, ո՞րք, ուլ Սափոյ,
20 Խարդաւանակ եղև սկսող քո հողոյ:

Որ խոյս տա արդ, առ քեզ դարձցի հոսկ ապա,
Որ ցարդ շերեր քեզ պատարագ, ընդհուպ տայ,
Որ ի սիրկեան ատէ թէև, այլ վաղիւ
Ի սէր քնքոյշ զքեզ սիրեսցէ կարոտիւ:

25 Ե՛կ և այսօր, ո՛վ բարեգութ, բա՛րձ հինեն,
Զտանջանաց բեռնս դաժան, և որ հն
Իղցք ըղձացեալք իմոյ սրտիս, կատարեա.
Լե՛ր աջակից իմ մտերիմ, յիս գթա՛:

Ա. ՊՈԻՇԿԻՆ

26 <«ԺԼԱՏ ԱՍՊԵՏ»-ԻՑ>

- Ինչպես սպասում է վաժաշ պատանին
 Խարդախ հոմանու կամ թե իր խաբած
 Թեթևամտի մի տեսությանը,
 Այնպես ողջ օրը ես այն բոլորին
 5 Մնում եմ անհամբեր, երբ իմ նկուղը
 Պիտի իջանեմ ես դադտագողի
 Իմ հավատարիմ դամբյուղների մոտ,
 Ի՞նչ օր երջանիկ. կարող եմ այսօր
 Վեցերորդի մեջ (որ դեռ լիքը չէ)
 10 Մի բուռը ժողոված ոսկի էլ լցնել:
 Փոքր է երևում, բայց մեծ գանձերը
 Բշից են ստեղծվում: Ես կարդացել եմ
 Չդիտեմ ինչ տեղ, որ մի թագավոր
 Իր ծառաներին հրաման է տվել
 15 Մի օր հող կրել բուռն առ բուռը,
 Եվ բարձրանում է բլուրը հպարտ
 Եվ թագավորը այդ բարձրությունից
 Կարող է ուրախ տեսնել հովիտը,
 Որ վերաններով ծածկված է սպիտակ,
 20 Եվ ծովն, ուր արագ նավեր են վազում:
 Դույնպես բերելով ես բուռը բուռը
 Իմ սովորական հարկը նկուղը,

- Կազմեցի բլուր—որտեղից ահա՛
 Տեսնել կարող եմ ինչ ինձ է հպատակ:
 25 Ի՞նչ չէ ինձ հնազանդ... ինչպես մի ոգի
 Այստեղից աշխարհն եմ կառավարում.
 Լոկ ուզեմ—պատրաստ են ինձ ապարանք:
 Եվ կախարդական իմ պարտեզները
 Կայտառ խմբերով հավերժահարսներ
 30 Պիտի ըշտասպեն, և մուսաները
 Իրանց հարկը տան, ազատ հանճարը
 Իմ գերին դառնա, առաքինություն,
 Անքուն վաստակը իմ պարզեններին
 Սպասելու են խոնարհ: Լոկ նշան անեմ—
 35 Ինձ մոտ հեղությամբ արշունաթաթավ
 Եղենազորժը պիտի ներս մտնե,
 Համբուրե ձեռքս, աչքերիս նայե,
 Որ այնտեղ կարդա իմ կամքի նշան:
 Ամենն ինձ հնազանդ, իսկ ես ոչնչի.
 40 Ինձ համար ստոր է ամեն ցանկություն.
 Եվ ես հանգիստ եմ. գիտեմ իմ ույժը,
 Ինձ բավական է այդ խոստովանքը:

(Նայում է ոսկուն)

Մահտարածամ. Յասունն

Երգի՛ր ցասումն, ո՛վ դիցունհիդ, Պելիսյանն Աքիլլեսի,
Կորստաբե՛ր, որ բյուրավոր ցավեր բերեց աքայեցվոց.
Շատ դյուցազանց արի հոգիքն ուղարկեց նա Այիդես,
Իսկ իրանց ձրդեց իբրև կերակուր նա շընեբին

- 5 Եվ գիշատիչ բոլոր թռչնոց—կատարվեցավ Զեսի վճիռ—
Այն օրվանից, երբ գժտությամբ կռվեցան միմյանց հետ
Ատրիդես՝ արանց արքան և դիցազարմն Աքիլլես:

Բայց ո՛վ աստվածներից կրուիլ հարույց նոցա մեջ.

Զեսի որդին և Լետոյի. արքայի վրա նա սրտմտած

- 10 Զորքին չար ախտ ուղարկեց, և կոտորվում էին մարդիկ,
Որովհետև Քրյուսես քրմին անարգել էր Ատրիդես:

Եկել էր նա աքայանց դեպի նավերն արագասահ

Յուր դստերն աղատելու՝ փրկանք տալով մեծագին.

Պըսակ ձեռին բռնած Հեռաձիգն Ապոլլոնի

- 15 Ոսկեղեն ցլավի վրա՝ խնդրում էր նա աքայեցվոց.

Եվ առավել ազգաց իշխան Ատրեյանց երկուսին.

«Ատրեյանք և դուք, բոլոր քաջազորահ աքայեցիք,

Թող տա՛ն ձեզ աստվածներն, որ Վոլիմպումն են բնակում,

Ավերել Պրիամոսի քաղաքն ու տուն բարով դառնալ.

- 20 Աղատեցե՛ք սիրուն դստերս և փրկանքն ընդունեցե՛ք,

Ի պատիվ Զեսի որդի Հեռաձիգն Ապոլլոնի»:

Եվ տվին հավանություն աքայեցիք ամենեքյան

- Հարգել քրմին և ընդունել այն փրկականքն հոյակապ.
 Բայց անհաճո թըվեցալ Ագամեմնոն Ատրիդեսին,
- 25 Եվ դայրույթով ու շարացած նա սպառնալից խոսք ասաց.
 «Ջրտեսնեմ քեզ, ա՛յ ծերուկ, խորագոգ նավերի մոտ
 Ոչ հիմա մընացած և ոչ հետո նորից եկած.
 Ապա թե չի օգնիլ քեզ ցուպն աստծուդ ու հերակապ.
 Չեմ արձակիլ ես նորան, մինչև որ նա ծերանա
- 30 Իմ տանըս մեջ, Արգոսում, հայրենիքից հեռավոր
 Ոստանի շուրջը պտտելով, ինձ լինելով անկողնակից:
 Բայց հեռացի՛ր, և մի՛ ինձ զայրացնիլ, որ ողջ երթաս»:
 Այսպես ասաց, և ծերունին ահաբեկ՝ լսեց խոսքին.
 Եվ գընաց նա լուլլայն մրրկածուփ ծովի ափ,
- 35 Եվ ապա առանձնացած շատ աղերսեց ծերունին
 Ապոլլոն արքա որդուն քաջագանգուր Լետոյի:
 «Լսի՛ր ինձ, արծաթաղեղն, որ պահպանում ես Քրյուսին
 Եվ Կիլլան նըվիրական, հըղոր տե՛ր Տենեդոսի,
 Ո՛վ Սմինթյանդ, եթե երբեք չընաղ տաճարդ եմ պսակել
- 40 Կամ թե ձոն ես քեզ համար պարարտ այրել եմ աղղըրներ
 Եզների ու այծերի, կատարի՛ր այժըմ այս իմ փափագ.
 Թող տա՛ն դանայացիք փոխն արցունքիս քո սլաքներով»:
 Այսպես ասաց աղերսավոր, լսեց Փեբոսն Ապոլլոն,
 Վռլիմպոսի գագաթից իջավ, եկավ զայրացած՝
- 45 Աղեղն ու ամրապինդ յուր վապարճքն ուսը ձգած.
 Եվ նետերը շաչեցին նորա ուսին, երբ սրտմտած
 Շարժվեցալ ինքն ու հառաչեց դնաց նըման գիշերի:
 Ապա նստավ նա նավերից մեկուսի, նետն արձակեց.
 Եվ արծաթյա աղեղից շաչյուն եկավ ահարկու:
- 50 Նախ հարվածեց ջորիներին և շներին երազընթաց.
 Իսկ հետո նետ ինքյանց վըրա արձակելով դառնաղետ
 Ձըգեց, և դիերի խիտ բոցերը վառվեցան:
 Ինն օր նետերն աստուծո՝ բանակի վրա թափվեցան,
 Իսկ տասներորդ օրն Աքիլլես ժողով կռչեց ժողովրդին.
 55 Հերան նորա միտն այդ ձըգեց, ճերմակբաղուկ դիցուհին,
 Վշտացած դանայեցվոց կոտորածը տեսնելով:
 Եվ երբ սոքա ժողովելով խմբվեցան համագումար,

Արագոտըն Աքիլլէս ելաւ կանգնեց ու ասաց.

«Ատրիդէ՛ս, այժմ կարծեմ մենք դեպի հետ

վերդառնալ

- 60 Պիտի ստիպվենք, եթե միայն ազատվենք կոտորածից.
Երբ և մահ և պատերազմ ջարդ են տալիս արայեցվոցս.
Բայց հարցընենք մենք գուշակող մի մարդու կամ թե քրմի,
Կամ թե մեկին երազահմա—երազն էլ Զևսն է ղրկում—
Որ ասե, քիչ քիչ այսպես մեզ բարկացել Փերն Ապոլլոն,
65 Կամ աղոթքի կամ թե զոհի պատճառով է նա դժգոհ.
Գուցե ճենճերն անարատ դառների և այծերի
Ընդունելով կամի մեզնից կոտորածն հեռացնել»:

Եւ այսպես նա խոսելով՝ կրկին նստաւ, ապա ելաւ,

Կալքաս Թեստորիդէսն ամենալաւ համահրման

- 70 Ամենից, որ այժմ կան, եղած են ու կըլինեն.
Նա իլիոն առաջնորդեց արայեցվոց նավերին
Գուշակությամբ, որ նորան տվել էր Փերսոն Ապոլլոն.
Նոցա համար բարեմիտ այսպես խոսեց ու ասաց.

«Ո՛ւ Աքիլլէս, սիրելիդ Արամազդի, տո՛ւր ինձ հրաման

- 75 Պատմեմ ցասումն ես Ապոլլոն հեռածիզ թագավորի.
Այդ ես կասեմ. բայց և դու ուխտ արա՛ և խոստացի՛ր
Ինձ օգնել պատրաստական թե խոսքով և թե բազկով.
Գիտեմ, պիտի բարկանա նա, որ իշխում է բոլոր
Արգիավցոց և որին հընազանդվում են արայանք:
80 Զի կարո՛ղ է թագավոր, թե բարկանա անազատի.
Որովհետեւ եթե զսպե՛նույն օրըն նա յուր բարկություն,
Սակայն հետո կըպահե նա ոխը յուր սրտի մեջ,
Մինչև հանե. արդ խոստացի՛ր, որ դու ինձ

կըպաշտպանես».

Արագոտն Աքիլլէս պատասխանեց ու ասաց.

- 85 «Սիրտ ա՛ռ, ասա՛ մեզ համարձակ, ինչ պատգամ որ դու
գիտես.

Վըրա՛ Փերսոն, Արամազդի սիրելին, որից, Կալքաս՛ս,
Խնդրելով կամքն աստվածների՝ հայտնում ես դու

դանայեցվոց.

Քանի որ ես երկրիս վըրա դեռ ևս կամ կենդանի,

- Քեզ բոլոր դանայեցւոց ոչ մէկը ձեռ կարող չէ տալ
 90 Գոգավոր նաւերի մոտ, և ոչ նույն իսկ Ագամեմնոն,
 Որ այժմ իրեն արայեցւոց ամենաքաջն է հռչակում»:
 Այն ժամանակ խրախուսւեցաւ, ասաց զուշակը
 պատվական,
 «Ո՛չ աղոթքի և ո՛չ զոհի պատճառով է նա դժգոհ,
 Այլ թե քրմի համար, որին անարգեց Ագամեմնոն,
 95 Չաղատեց նորա դստերն ու ոչ փրկանքն ընդունեց
 Այս պատճառով ցավեր տվաւ Հեռաձիգըն և դեռ կըտա:
 Դանայեցւոց այս դարձ մահն այն ժամանակ նա կըկարճե,
 Երբ սիրելի հորը հետ տա բոլորաշյա օրիորդին
 Առանց զնի ու փրկանքի, և նվիրական զոհ բերն
 100 Քրյուսեռւմ. հետո զուցե հուսանք նորան հաշտեցնել»:
 Եվ այսպէս նա խոսելով կրկին նստաւ, ապա ելաւ
 Ատրիդես դյուցազն մեծ տիրասլետ Ագամեմնոն
 Զայրացած. և բարկությամբ խիստ մռայլ սիրտն էր
 լցւած,
 Եվ աչքերն ինչպէս կրակ փայլում էին բոցաւառ.
 105 Դեմքը խոժոռ՝ նա Կալքասին առաջ նայեց ու ասաց.
 «Չարիքների դու զուշակո՛ղ, երբեք լաւ բան ինձ
 չասացիր.
 Միշտ սիրելի է քո սրտին դժբախտություն զուշակիւ,
 Իսկ բարի խոսք դու չես ասել ոչ երբեք կամ կատարել.
 Եվ այժմ էլ դանայեցւոց զուշակելով ասում ես դու,
 110 Թե Հեռաձիգն այն պատճառով նոցա ցավիւր է ուղարկում,
 Որ ես փրկանքն հոյակապ Քրիսեիս օրիորդի
 Ընդունել չըկամեցա, նորան շատ ցանկանալով
 Տանս ունենալ և սիրելով ավելի Կլիտեմնեստե
 Իմ հարազատ կնոջից, որից բնավ նա չէ պակաս
 115 Ոչ հասակով և ոչ դեմքով, ոչ խելքով և ոչ զործով:
 Սակայն դարձյալ կուզեմ հետ տալ ես նորան, թե ա՛յդ
 է լաւ.
 Ժողովրդի փրկությունն եմ ցանկանում և ոչ կորուստ.
 Բայց ինձ համար շուտով պարգև պատրաստեցի՛ք, որ
 ես մենակ

Արդիացւոց մեջ չըմնամ հանիրավի անպարզեւ.

120 Տեսնում եք արդ ամենքդ էլ, գնում է պարգևս իմ ձեռից»:

Պատասխանեց աստլածաղարմ արագոտըն Աքիլլէս.

«Ո՛վ պանծալիդ Ատրիդէս, դու ամենից ընչասե՛ր,

ի՞նչպէս արդյոք քեզ վեհանձն արայեցիր պարգև տան,

Զգիտենք որեւէ տեղ պահւած մի գանձ ընդհանուր,

125 Իսկ ինչ որ քաղաքներից մենք ձեռք բերինք,

բաժանվեցավ,

Եվ անվայել է, որ մարդիկ կրկին մի տեղ այն ժողովեն:

Բայց հետ տո՛ւր այժմ աղջկանն աստծուն, և արայանքըս

Եռապատիկ, քառապատիկ կհատուցանենք, թե Արամաղդ

Տա որ մենք Տրոյա քաղաքն ավերենք ամբապարիսպ»:

130 Ագամեմնոն արքան նորան պատասխանեց ու ասաց.

Դու որ աղնիվ ես, Աքիլլէ՛ս դիցանուման, մի՛ լինիր

Նենգամիտ, քանի որ ինձ ոչ կըխաբես, ոչ կհամոզես.

Թե՛ կամենում ես ըստանալ ինքըդ պարգև, իսկ ես

այսպէս

Մնամ կարոտ, և հրամայում ես, որ սորան հետ դարձնեմ.

135 Բայց ինձ վեհանձն արայեցիր պիտի տան սրտիս ուղած

Մի պարգև, որ տըվածիս գինն ունենա հավասար.

Իսկ եթե նոքա չըտան, ինքըս կըգամ, կըվերցընեմ

Կամ քո պարգեն կամ Այասի կամ թե չէ՝ Ոդիսէսի,

Ես կըտանեմ, և որին վըրա հասնեմ՝ կըկատաղի:

140 Բայց այս մասին կարող ենք դեռ կրկին անգամ մենք

խոսել,

Իսկ այժմ մենք դիցանւմեր ծովը քաշենք սև նավակ,

Եվ ճարտիկ նավաստիներ ժողովենք վըրան, և

պատրաստենք

Զոհն ու իրան նըստացընենք գեղեցկայտ Քրիսեիսին.

Եվ մի մարդ էլ թող լինի խորհրդատու առաջնորդ,

145 Կամ Այաս, կամ Իդոմեն, կամ Ոդիսէսն աստլածաղարմ,

Եվ կամ թե դու, Պելիսյանըդ, ահավո՛ր դու ամենից,

Զոհ բերես Հեռաձրգին, որպիսդի մեզ ողորմի»:

Խեթ-խեթ նայեց, ասաց նորան արագոտըն Աքիլլէս.

«Ո՛վ դու, ա՛յ անամոթ ու նենգամիտ, ի՞նչպէս արդյոք

150 Աքայեցի մեկը լրսե բարեհաճ քո խոսքերին—
Գնալ ճանապարհ կամ բաջությամբ պատերազմել
մարդկանց հետ:

Ես այստեղ նիզակավոր տրոյացվոց հետ կռվելու
Չեմ եկել, նոքա բընավ մեղավոր չեն իմ առաջ,
Քանի որ երբեք բերրի ու բաղմամարդ Փթեյայում

155 Չեն վընասել բերքերին, որովհետև շատ կան այնտեղ
Լեռներ ըստվերախիտ, նաև ծովը մոնչոդ:
Այլ մենք քեզ, ա՛յ լիրբբդ դու, հետևեցինք, որ խնդաս,
Վրեժն առնելով Մենեկավի և քո, ո՛վ դու շընաչա,
Տրովյաններից. այս չես տեսնում և ոչ բընավ մըտածում:

160 Ահա և սպառնում ես դու իմ պարզեն էլ խըլել ինձնից,
Որ աքայանց տըվին որդիքն աշխատանքիս փոխարեն.
Բայց ես պարզե չեմ ստանալ հավասար, երբ աքայանք
Ավերելու լինին քաղաքն այս բաղմամարդ տրեւացվոց.
Եվ սակայն շատ ավելի տաժանելի պատերազմում

165 Իմ ձեռներն են աշխատել, իսկ բաժանումն երբ որ կըզա,
Քեզ է հասնում մեծ պարզեն ու ես քըչով զոհացած
Դեպի նավերն եմ դընում, թեև մարտում շատ տանջված:
Բայց ես հիմա Փթեա կերթամ, որովհետև լավ է շուտ
Տուն հետ դառնալ մահկաձև նավերի հետ. չեմ մտադիր

170 Մընալ այստեղ անպատիվ, քեզ ստացվածք ու գանձ
կիտել»:

Նորան ապա պատասխանեց արանց արքան
Ազամեմնուն.

«Փախի՛ր, եթե սիրտդ է ուզում, և ես երբեք չեմ խնդրիլ
Որ ինձ համար այստեղ մընաս. ուրիշներն էլ կան
ինձ մոտ,

ինձ պատվողներ, և մանավանդ իմաստունըն Արամադդ:

175 Ինձ ատելի ես դու բոլոր աստվածասուն իշխաններից,
Որովհետև սիրում ես միշտ վեճ ու կռիվ և պատերազմ.
Թե ամենքից հզորն ես դու, այդ էլ աստված է քեզ տվել:
Տուն դու հետ վերադարձի՛ր ընկերներովդ ու նավերովդ,
Իշխի՛ր Միրմիրդոնացդ, ես քեզ համար հոգ չեմ անում

180 Եվ ոչ վախում բարկությունիցդ, այլև սպառնում եմ քեզ
այսպես.

Քանի որ Փեքն Ապոլլոն խլում է ինձնից Քրիսեիսին,
ես նորան ընկերներին ուղեկցութեամբ և իմ նաւով
Կուղարկեմ և ղեղեցկայտ Քրիսեիսին ես կըտանեմ՝
Քո տաղավարըն ինքքս գալով, քո պարգէն, որ լավ
տեսնես՝

185 Քեզնից որքա՛ն եմ գերազանց, և վախենա ամեն այլ ոք
ինձ հավասար իրան կարծել և ինձ հետ համեմատվել»:

<Բ>

Եվ այս վճիռն Հերան մտքումն նախապատիւ համարեց
Որ Իդայի վերա Զևսին նա գեղապարտ ետևի:

Գուցե ցանկա նա քրնանալ, վայելչանալ և սիրով
Երբ որ տեսնե նորա հրապույրքն և, ով գիտե, կարենա

5 Հերան խորունկ և քաղցր քուն բերել Զևսի աչերին.
Ահա մտաւ մեր գիցուհին յուր քնարանն, որ որդին
Յուր սիրասուն Հեփեստոսն էր պինդ դռներով կառուցել.
Կրունկներին դռներն ամուր փականքներով հարմարած՝
Անմահներից դեռևս ոչ մին ծածուկ փակը չէր բացել.

10 Այնտեղ մտաւ Հերան, ցոլուն դռներ ամուր նա փակեց,
Ամբրոսական ջրով լվաց ամեն փոշի յուր մարմնից,
Զքնաղ մարմինն օծեց յուղով, յուղ երկնային, քաղցրահոտ,
Հստակագույն, ամենաաղնիւմ այն ամենից որ ուներ.
Կռոնիոնի պղնձապատ տան մեջ հաղիւմ շոշափոված՝

15 Մինչև երկիր, մինչև երկինք անմահ բույր էր արձակում:

<Գ>

Քուն դու, բոլոր անմահների և մահացւալսց դու իշխան,
Եթե երբեք հոժարութեամբ կատարել ես դու իմ խոսք,
Ո՛հ, կատարիր դու այսօր էլ. շնորհակալիքս անբավ է:
Քուն դու, փակի՛ր Ամպրոպայնի սլաքձառ աչերն ինձ
համար.

Այն վայրկենին, երբ մահճի մեջ գիրկըս նորան կընդունիմ
Ինձնից պարզե դռ կստանաս անեղծելի գահ շքեղ
Յվ ոսկեշող. վարպետ որդիս, կաղնուրն այն Հեփեսոսս,
Կլկերկոե ինքն և քեղ համար կըհարմարե պատվանդան,
Ուր քո քնքուշ ոտներն հանդչին խնջույքներում

քաղցրունակ:

ԷՍԵՒԼՈՍ

28 <«ՇՂԹԱՅՎԱԾ ՊՐՈՄԵԹԵՎՍԻՑ»>

<Ա>

<Պրոմեթէսի մենախոսութիւնը>

- Ա՛հ, տառապանք, անհուն, անվերջ տառապանք...
Սանդարամետ և յուր բոլոր արհաւիրք
Զեն հավասար իմ անվախճան ցավերին:
Վկա եղե՛ք տանջանքներիս, օվկիան,
5 Լուսին, արե, և դուք աստղեր ժպտադեմ,
Լեռնե՛ր, դետե՛ր, համայն տարե՛րք աշխարհի.
Վկա եղե՛ք անդուժ Զեւսի չարութեան:
Տեսե՛ք, ինչպե՞ս հայրն աստվածոց և մարդկան
Տանջում է ինձ վրեժխնդրութեամբ անիրավ,
10 Դահլիճս ահա շուտով դարձյալ կըհասնի,
Այս լեռների խիզախ արքան օդաչու:
Արի՛, արծի՛վ, որ քո աղատ վե՛ս հոգին
Տվիր բաժին բռնավորին ցնորամիտ.
Զեն ահարկու քո նողկալի մագիլներ,
15 Պրոմեթէսին դու չե՛ս բնկճիլ տանջելով:
Եվ դու, ո՛վ Զեւս, որ մահաբեր շանթերիդ
Ապավինած, սպառնում ես ինձ խրոխտալով,
Տես, որ միայն արհամարհել գիտեմ ես
Քո բռնակալ անարդ հոգու չարութեան:
20 Ծառայամիտ սպասարկուններն աթոռիդ

- Հայր և արքա թող տան, ո՛վ Զևս, քեզ անուն,
 Թող քո առաջ առատ կնդբով միշտ ծխեն,—
 Զէ ահռելի քո զորությունն ինձ համար.
 Դու տիրացար իմ հեր մարմնին անպաշտպան,
 25 ինձ զոհ տվիր արենարբու այս արծվին,
 Եվ չեմ տեսնում տառապանքիս ես վախճան,
 Բայց բռնությունդ էլ ավելի ուշժ չունի,
 Սահմանն է այս արքայական զորությանդ...
 Եվ մի՞թե դու կարծում էիր, թե ազատ
 30 Հոգու վերա իշխել պիտի կարենաս,
 Թե կըփակես դու իմ շրթունք, որ մարդկանց
 Քո ապիկար ու շարանենդ վարչության
 Գաղտնի խորհուրդն ու նպատակ ցույց տվին,
 ... Ահ, դու իսպառ ինձ կործանել ես սպառնում,
 35 Շանթ ու որո՞տ ես ուղարկում իմ գլխին.
 Ահա լեռներ դղրդելով ահագին.
 Զարհուրելի վիհ ես բանում ինձ համար...
 Բայց դու զիտցի՛ր, կործանելով իմ մարմին՝
 Երբեք իմ գործն էլ սպանել չես կարող.
 40 Մարդկանց աչքերն ես բաց արի, տվի լույս
 Նոցա խավար, ստրկացած խեղճ մտքին.
 Եվ կըտեսնես, որ կըգա օր, և նոքա,
 Որ սարսափում, դողում էին առաջիդ,
 Կըծանակեն հպարտությամբ քո շանթեր,
 45 Եվ կիմանան, որ ամպերով միշտ ծածկված
 Գահդ անառակ պիղծ որջի մեջ է կանգնած...
 Օրը կըգա, կըխորտակվի Օլիմպոս,
 Եվ լուսավոր երկնքի տակ թև առած
 Կըսավառնի ազատության վեհ հոգին:
 50 Թող հավիտյա՞ն իմ տառապանքը տևի,
 Բայց ես զիտեմ, կերթան, կանցնեն սերունդներ,
 Երկրի վերա Զևսի անունն էլ չեն տա,
 Իսկ Պրոմեթևս մարդկանց փրկիչ կըմնա:

- Ո՛վ ջինջ եթեր և դուք, հողմո՛ւնքն արագաթև,
Դուք, վտակնե՛ր, և ծովերի անհո՛ւն ալիք,
Դու, ո՛վ երկիր, մայր կենդանյաց, ամենատես
Դու արեգակ,—ո՛հ, դուք ամենքդ եղբք վկա.
- 5 Ի՞նչ եմ կրում, տեսե՛ք ահա, աստվածների
ես երեսիցն՝ աստված գոլով նոցա նման...
Տեսե՛ք, թե ինչ տանջանքների պիտի տանեմ
Հազարավոր ես տարիներ... Ի՞նչ կապանքներ
Ամոթալի՝ լոկ ինձ համար ստեղծել է արդ
- 10 Անմահների նոր թագավորն... Ավա՛ղ, ավա՛ղ,
Սոսկալի է այս տառապանքն անծայր, անվերջ.
Եվ ե՛րբ արդյոք տանջանքներիս կըգա վախճան...
Ի՞նչ եմ ասում. ես քաջ գիտեմ իմ ապագան.
Ոչ մի փորձանք չէ ինձ համար անակնկալ:
15 Բայց անխռով պիտի տանեմ այս ցավերին—
Զբոս հնար մաքառելու օրհասի դեմ:
Եվ ոչ լռել, ոչ տրտնջալ կարող եմ ես...
Թշվառըս ես պիտի տանջվեմ, որովհետեւ
ես բարեբար եղա մարդկանց—ամենազոր
- 20 Գաղեցի հուրն եղեգնի մեջ, մարդկանց նորա
Կիրառությունն ես ուսուցի: Իբրեւ պատիժ
Ոճրիս համար ես շղթայված պիտի մնամ
Օգում կախված... (Հառաչում է) Ավա՛ղ, ավա՛ղ,
Ի՞նչ ձայն է այս,
Այս ի՞նչ բուրմունք հասնում է ինձ, արդյոք մարդո՞ւց,
- 25 Թե՞ աստրժուց, թե՞ աչնալիսի մի էակից,
Որ երկուսի բնությունն էլ ունի յուր մեջ...
Արդյոք եկե՛լ է մեկն այստեղ, ծայրն աշխարհի,
Այս ժայռի վրա, որ հրճվանքով տառապանքիս
Նայե, կամ ա՛յլ նպատակով: Փուլթ չէ, տեսե՛ք
- 30 Ինձ թշվառիս. մարդկանց վերա իմ ունեցած
Սիրո համար շղթայվեցա՝ աստված տեղովս,
Եվ թշնամի դարձա Զևսին և բոլոր դից,

- Որ են նորա բնակակից: Ավա՛ղ, ավա՛ղ:
 էլ ի՞նչ է այս, որ լսում եմ. թռչունների
 35 Թեթևաշարժ թևերի ձայն է հասնում ինձ...
 Ինչ էլ լինի՝ վախում եմ ես ամեն բանից:
- Պար. (Օդում) Մի՛ երկնչիր, — բարեկամ ենք, արագաթև
 Մենք երամով թռանք հասանք ապառաժիդ
 Հաղիվ առանք կամքը մեր հոր: Սրաթռիչ
 40 Հողմը բերեց մեզ մինչ այստեղ: Պողպատ մուրճի
 Հարվածներից, որ խորքն հասան մեր այրերի,
 Մենք մոռացանք մեզ զարդարող երկշտուրթյուն.
 Բոթիկ այստեղ մեր թևավոր եկանք կառքով:
- Պրմ. Ավա՛ղ, դստերք բազմասերունդ դուք Տեթյուսի,
 45 Ո՛վ զավակունք դուք ծերունի օվկիանոսի,
 Որ միշտ անխոնջ հոսում է շուրջն ամբողջ երկրի,
 Նայե՛ք ինչպես շղթայակապ այս զառիվայր
 Ժայռի գլխին պիտի մնամ ես սլահապան,
 Որին ոչ ոք չի նախանձիլ:
- Պար. Տեսնում ենք մենք,
 50 Ո՛վ Պրոմեթևս, և վշտի ամպն արցունքի հետ
 Մեր աչքի վրա է ծանրանում, երբ քո տանջանք
 Այստեղ տեսնում ենք մենք. ամուր դու բեռաված
 Ժայռի վրա՝ իբրև ծաղրի ես առարկա:
 Նոր իշխաններ, այո՛, դարձան կառավարիչ
 55 Օլիմպիոսի. նոր օրենքներ է սահմանում
 Զևսն անարդար. և վաղեմի քաջ հսկաներ
 Ընկնում են արդ նորա ձեռքից:
- Պրմ. Օ՛հ, երանի՛ր
 Երկրի ընդերքն ինձ կլաներ կամ Հադեսի
 Տերության մեջ, Տարտարոսի մութ խորքերում,
 60 Ծանր շղթայք կաշկանդեին ինձ հավիտյան, —
 Լոկ թշնամյաց չըլինեի զըվարձալիք
 Եվ ոչ սլատճառ աստվածների ուրախության:

ՍՈՖՈԿԼԵՍ

29

<«ԱՆՏԻԳՈՆԵԻՅ»>

ԱՆՏԻԳՈՆԵ

- Ո՛վ քույրդ իմ հարազատ, դու սիրելի Իսմենե,
Գիտե՞ս արդյոք թե Զևսն Իդիպոսի չարիքներից
Ի՞նչ է թողել որ մեզ վերա մնա դեռևս անկատար:
էլ չլրկա և ոչինչ վիշտ և ո՛չ մի թշվառություն,
5 Անպատվություն և անարգանք, որ ես դեռ ևս չեմ տեսած
Թե քեզ, թե ինձ մինչև այսօր վերա հասած աղետներից:
Եվ հիմա՝ ի՞նչ է դարձյալ, որ ասում են թե իշխանն
Արձակել է նոր հրաման քաղաքիս ժողովրդին.
Դու բան գիտե՞ս և լսե՞լ ես, թե անհայտ է քեզ մինչ արդ
10 Մեր սիրելյաց դեմ խորհած թշնամական չարիքներ:

ԻՍՄԵՆԵ

- Ոչ մի համբավ սիրելյաց մասին դեռ ինձ, Անտիգոնե,
Ոչ ախորժ, ոչ վշտալից չէ հասել այն օրվանից,
Երբ մեր երկու եղբայրներից մենք զրկվեցանք երկուքս էլ.
Որոնք մեռան միևնույն ավուր մեջ միմյանց ձեռքից.
15 Իսկ երբ դնաց Արդիացվոց զորագունդն այս զիշեր,
Այլևս ոչինչ այնուհետև չեմ իմացել, ես բընավ
Ոչ մի լուր ուրախառիթ և ոչ մի բոթ վշտալի:

ԱՆՏԻԳՈՆԵ

Հավ գիտեմ, և քեզ այս ուրախ դռներից դուրս
Նորա համար ես կոչեցի, որ դու մենա՛կ այս լսես:

ԻՍՄԵՆԵ

- 20 Եվ ի՞նչ կա. որովհետև դու խոսում ես մտատանջ <....>

Ա. ՊՈԻՇԿԻՆ

30

Վ Ա Ս Տ Ա Կ

Ժամը հասավ անձկալի ծանր գործիս կատարման:
 Բայց է՞ր ծածուկ մի թախիժ խռովում է իմ հոգին.
 Թե՞ կատարած իմ վաստակ՝ ես եմ անսկեսք մի վարձկան,
 Որ օրավարձն ստացած սպասում է նոր գործին.

5 Թե՞ իմ ջանքն եմ ավաստում, դիշրան լռիկ ուղեկից,
 Ոսկի Այգին մտերիմ և սրբազան Պենասից:

Մարտի 21

- Ուժգին հողմերը արձակ դաշտերում
 Կանաչ ծառերի զարդերն են սփռում,
 Գոռում են, սուլում դառնաշունչ վայրագ
 Եվ խաղացնում են բաց ծովում նավակ
 5 Եվ սարսափ բերում մենակ ճամբորդին:
 Դուլնպես, պատանի', անողոր բաղդին,
 Ճնշում է կյանքը մեղ խիստ հարվածով,
 Խաղում է մեղ հետ անտարբեր ոգով,
 Դուլնպես ծաղրում է մեղ անողորմաբար:
 10 Պատանի', դու՝ որ գիտես վիշտ մարդկան,
 Պատանի', սիրտըդ բա՛ց կարեկցաբար
 Զգալու անել կարիք դառնության,
 Տե՛ս ծանրը պիտույքն համայն աշխարհի,
 Տե՛ս քո շուրջն ի՛նչ ցավ, հառաչանք, կական...
 15 Եվ տխուր, մռայլ այս ժամանակում
 Կարո՞ղ ես չանսալ օտարի վշտին,
 Բեռն համարել կարեկից զգացում,
 Անձնատուր լինել միայն քո շահին:
 Ո՛չ. պատվիրանը Հիսուսի պահած
 20 Ա՛ռ դու երգեցիկ քնար քաղցրադի,
 Փոքրոգի և կույր երկյուղը թողած
 Ե՛լ փարատելու կարիքն աշխարհի:

- Արհամարհելով անեծքը մարդկան
Եւ անուշադիր նոցա սպառնալայց,
25 Խիստ սլատժի՛ր ձեռքը շարագործության,
Խեղճի վրա թափի՛ր հեղեղ արտասւլաց:
Անկեղծ ջատագով կլինի՛ս ճշմարտին.
Խայտառակ դարուս խարաղան անխնա,
Կլինի՛ս սոսկալի բոլոր չարերին,
30 Անշուշտ կըլինիս դու... մարդ, հավատա՛:

- Թե պատահում է հասարակական
 Զքվարթ կենդանի խոռոն ակումբներում
 Պտտում եմ անհոգ, թե ընտանեկան
 Նստած եմ համեստ ախորժ շրջանում,
- 5 Եվ ընդհանուրի անամալ ճակատին
 Կարդում եմ պատկերն անուշ մի կյանքի,
 Կարդում եմ ասես և մի սրտագին
 Գոհունակություն բաղդիցն ամենի:
- 10 Եվ ինձ երբեմն թվում է նույնպես,
 Երբ մի անորոշ ցնորքի եմ տրված,
 Թե դուցե հեռու գնում եմ և ես
 Դեպի երջանիկ մի հանգիստ կենաց.
- 15 Դուցե վերստին մի վերջին ժպիտ
 Եվ ինձ պարզեւս սերը մանկության,
 Եվ հրապույրքը դալարափթիթ
 Վայելեմ նորից ես կյանքի դարնան...
- 20 Բայց հանկարծ, հոգյակ, իբրև մի ըստվեր
 Առաջիցըս քո պատկերն է անցնում,
 Եվ ասես, զերթ ծուխ ոսկի երազներ
 Յնդում են գլխիցս անհետ հեռանում—
- Մարդկային սիրտը, հոգյա՛կ իմ անգին,
 Դու ծառ շիմանաս, որ ամեն դարուն,
 Հարվածից հետո ձմրան ցրտագին—
 Նոր ծաղիկներով լինի դարդարուն:

Վ. ՍԻՐԱԿՈՄԼՅԱ

33

Տ Ի Կ Ի Ն

Թե իմ տիկինը էլ լաց չըլիներ
 Եվ իրան պահեր ուրիշների պես—
 Ինչ որ ասում են, խոսում միշտ մեծեր
 Բոլորը նորան կըպատմեի հա:

- 5 Ինձ համար տոնին նոր շոր կըկարեն,
 Ես կխելոքանամ, կըսիրունանամ,
 Աղոթք կըկարդամ ես ֆրանսերեն
 Եվ մայրիկի հետ ես ժամ կըդնամ:

- 10 Դու տես՝ բոլորն էլ պիտի արմանան,
 Զէ՛ ֆրանսերեն բան չեն հասկանում:
 Ես ազատ աղջիկ—մյուսների նման
 Լեհերեն աղոթքն ինձ չէ վայելում:

- Լեհերեն աղոթք բարձր չեմ կարդա,
 Բայց ցած... Լեհերեն կըխնդրեմ Փրկչին,
 15 Որ շուտ մեծանամ, որ նա փող շատ տա
 Հորըս էլ, մորս էլ, սպիտակ ու դեղին:

- Ա՛խ, ի՛նչպես նոքա փող շատ են սիրում,
 Խաչհամբույր մի-մի տալիս են ոսկի,
 Իսկ ինչ որ ասածուն դու ես նվիրում,
 20 Հարյուրապատիկ նա ետ է տալի:

Ա՛յ, տես՝ նորա էլ գոհում են ասածոն,
Եվ վարձատրում է նա նոցա սիրով.
Մենք էլ կըղիպենք փող, հարստություն,
Ով գիտե՝ կորցնենք հաշիվն էլ շուտով:

- 25 Տիկի՛ն, ա՛յ տիկին, ա՛խ, ի՛նչ հիմարն ես,
Գիտեմ, գլուխդ անշուշտ պիտի գա,
Թե աստված ինքը կամ հրեշտակը մեզ
Կըզան հայրիկին փող բերեն ընծա:

- 30 Ի՛նչպես չէ... փողը բերում է հրեան,
Ասածու կամքովը միշտ պիտի բերեն.
Մենք փողը կըտանք, կառնենք շորս ավան,
Հետն էլ շատ ճորտեր, որ հողը վարեն:

- Դու չես իմանում. մենք աղատներ ենք,
Ճորտերը բոլորն էլ անաղատ են.
35 Նորա միշտ անխոնջ, ինչ որ մենք ուզենք,
Ասածու հրամանով, պիտի կատարեն:

- Պատուած շորերով, կեղտոտ, անճոռնի—
Կասես կենդանի մարդու չեն նման,
Աստված է պատժում, որ իմ հայրիկի,
40 Իրանց աղայի չեն լսում հրաման:

Ա՛յ, տես, հայրիկըս ձի շատ է սիրում,
Մայրըս Քոթոտին, ճորտերին ոչ ով...
Խզնում եմ նոցա, թեպետ չեն պահում
Ճորտերը իրանց վայելուչ ձևով:

- 45 Երեկ տեսնեի՛ր... հայրիկըս արդեն
Մահիճ էր մտել թե նոր էր ուզում—
Արջի պես տուն են թափվում, գոռում են,
«Հաց տո՛ւր, սոված ենք. մենք հա՛ց ենք խնդրում...»

Քշեցին նոցա... սաստիկ ջարդեցին...
50 Բայց կըտեսնես որ երբ ևս մեծանամ—
Մինչև գլուղացիք ողջը գոհ լինին,
Ես բնաւ քունըս պիտի մոռանամ:

Ո՛ւմ քուն կըտանի, երբ հաց է ուղում
Աղբատ ամբոխը դրանը կանգնած,
55 Ու դեռ հաց չըտա՞ս... գուցե երազում
Մեռել էլ տեսնես... նրա գողը գնաս...

Եվ չէ՞ անպատճառ կիմանա աստված
Որ կերակրում է միշտ սովածներին...
Ա՛խ, տիկի՛ն, խնդրենք ողջություն ու հաց
60 Մայրիկ—հայրիկին, բոլո՛ր ճորտերին:

Ս. ՆԱԴՍՈՆ

34


* * *

- Իմ սերը, մանո՛ւկ, քո զարթած հոգուն
 Ձի բերել հանգիստ և մոռացություն.
 Դառն զրկանքներ, աշխատանք, կարիք—
 Մեզ խոստանում են օրերը գալիք:
- 5 Ես կցրեմ ինչպես երազ ծաղկավառ
 Քո անգիտության, ցնորքի աշխարհ,
 Միտքըդ կըվառեմ խանդոտ թախիծով,
 Կյանքդ կալեկոծեմ փոթորիկներով:
 Այն պարտեղիցը, ուր մեր առաջին
- 10 Համբույրը երեկ լավեցավ լոին,
 Երբ վերջալույսը անոսր ամպերում
 Ոսկի շողերով մայր էր մտանում,
 Այդ քո տաք բույնից, սիրելիներից,
 Անհոգ կյանքիցըդ, արևից, ծաղկից,
- 15 Տանջանքի համար, մարտի ասպարեզ
 Զոհել և կռվել կոչում եմ ես քեզ,
 Ահեղ ասպարեզ և փոթորկալի
 Ուր անչափ դործ կա, անթի՛վ թշնամի...
 Բթամիտ, ապուշ քեզ երջանկություն
- 20 Բերելու չունիմ բնավ ցանկություն:
 Իսկ թե իմանալ երջանկություն է,
 Որ քո ընկերը խղճին հայրենյաց

Զի դավաճանել և գնահատում է
Առավել հոգիդ, սիրո համար բոց,
25 Քան դեղեցկությունդ,— էլ ես չեմ վախում
Քեզ համար, մանո՛ւկ, տո՛ւր ձեռքդ անահ,
Երջանիկ կլինենք, ինչպես երկնքում
Երջանիկ են լուկ աստվածներն անմահ:

Փետրվարի 11

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Հովհաննես Հովհաննիսյանի «Երկերի ժողովածուի» ներկա գիտական հրատարակության համար հիմնական աղբյուր է հանդիսացել նախ և առաջ ԳԱ գրականության և արվեստի թանգարանում պահպանվող բանաստեղծի արխիվը (այսուհետև՝ ՀՀա), որը նրա մահից հետո ժառանգների կողմից նվիրաբերվել է թանգարանին:

Հովհաննիսյանն սկսել է ստեղծագործել աշակերտական նստարանից: Նրա ամենավաղ գրած ոտանավորները վերաբերում են 1879 թվականին: Դրանք վետեղված են սովորական աշակերտական տետրերում, մասամբ դպրոցական այլևայլ առաջադրանքների շարքում, մասամբ հատկապես ոտանավորների համար առանձնացված տետրերում: Այդպիսի ընդհանուր տետրերի թիվը արխիվում հասնում է քսանի (NN 1—20 ներառյալ): Այս բաժնի հաջորդ համարների տակ արդեն գրանցված են մեկ կամ մի քանի ինքնուրույն բանաստեղծություններ, գրված առանձին թերթիկների վրա, կամ մի քանի ոտանավոր՝ նույն մեծ թերթի վրա:

Հովհաննիսյանն ինտենսիվ է ստեղծագործել 1880—1887 թվականներին: Նրա գրիչն առանձնապես բեղմնավոր է գտնվել 1880, 1884, բայց, հատկապես, 1886 թվականներին: Եղել են ամիսներ, երբ նա գրել կամ թարգմանել է համարյա ամեն օր, օրեր են եղել նույնիսկ, որ նա մի քանի ոտանավոր է հորինել:

Վերը նշված քսան տետրերից հատուկ ուշադրության են արժանի NN 18-ը, 16-ը, ինչպես և 14-ը: Դրանք ամփոփում են հեղինակի այն բանաստեղծությունները, որոնք ընտրված են 1880—1884 թթ., բայց մեծ մասամբ 1885—1887 թթ. հորինած գործերից, թվով 90 հատ, որոնք և ներկայացվել են Պետերբուրգի գրաքննչական կոմիտեին՝ թույլտվություն ստանալու համար: Գրաքննությունն արգելել է դրանցից 7 հատը («Ահա՛ քնար և տավիղներ», «Հայրենասեր», «Զինվորի մահը», «Տեսնում եմ ահա՛ ազգեր են մեռնում», «Իմ խեղճ հայրենիք, անփառք վիճակիդ», Նեկրասովի «Նոր Տարին», և «Տղմուտը»: Այս վերջինը մինչև թանգարան մտնելը պոկվել է բուն տետրից և այժմ գրանցված է առանձին համարի տակ), 3-ը թույլ է տրվել սաստիկ կրճատում-

ներից հետո («Գիշերվան երգը», «Անցան դարեր—ստրկության» և «Առավոտ»)։ Բոլոր այս տասը բանաստեղծությունները Հովհաննիսյանն ուղարկել է Մարսել, Մ. Փորթուգալյանին, որը հրատարակել է իր «Արմենիա» լրագրի էջերում։ Այսպիսով, 1887 թ. ժողովածուում տպագրվել են ընդամենը 69 բանաստեղծություն։ Ինչո՞ւ չեն տպագրվել մնացած 14 ոտանավորները, մի հարց է սա, որին դժվար է այժմ ստույգ պատասխան տալ. պետք է ենթադրել, որ տպագրության ընթացքում հեղինակն իր հայեցողությամբ կամ ընկերների խորհրդով դրանք հարմար չի գտել վետեղելու անդրանիկ գրքում։ Գրաքննությանը պետք է հանձնված լինի նաև N 14 տետրը, թեև այստեղից գրքի մեջ է մտել ընդամենը 4 բանաստեղծություն։

Ինչպես ասվեց «Երկու խոսք»-ում, այս հրատարակության մեջ առաջին անգամ հրապարակվում են 107 ոտանավոր։ Սպառվո՞ւմ է դրանով բանաստեղծի անհայտ և անտիպ գործերի հրապարակումը։ Ո՛չ, չի սպառվում։ Արխիվում էլի՛ կան ոտանավորներ, որոնք ցրված են նրա աշակերտական տետրերում, դրանք անվարժ, թույլ գրչի փորձեր են, բառիս իսկական իմաստով նախնական գրառումներ։ Դրանց հրապարակումը կհակասեր ոչ միայն բանաստեղծի կամքին, այլև գիտական հրատարակության ոգուն։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «ՏԵՍԵՂ ԵՍ ԱՐԳՅՈՔ ԱՅՆ ԲԸԼՈՒՐՆԵՐԸ»

Պահպանված է ինչպես առաջին գրառումը, նույնպես և հեղինակային վերամշակված օրինակը, Բանաստեղծությունների՝ գրաքննությանը ներկայացրած տետրում: Առաջին ինքնագրի նախնական վերնագիրը պետք է որ եղած լինի «Իմ Հայրենիքը», ապա սկզբից ավելացրել է «Տեսե՛լ ես» բառերը, հետո դրանք էլ է ջնջել, երբ, հավանորեն, գտել է (կամ որոշել է դնել) «Իմ Հայրենիքը տեսե՛լ ես, ասա՛» Գյոթեից առնված էպիգրաֆը, որով և փոխվել է բանաստեղծության կառուցվածքը. սկզբում մտահղացված վեց տողանի տները այժմ դարձել են չորս տողանի, այսինքն ջնջվել են բոլոր տների 5-րդ և 6-րդ տողերը, բացի վերջինից: Նախքան այս ինքնագրի տեքստային տարբերություններին անցնելը՝ պարզենք մի հարց. սա նախնական գրառումն է արդյոք:

«Ներկերի ժողովածուի» 1937 թվականի հրատարակության ծանոթություններում (էջ 404), բերված է մի ոտանավոր՝ «Տեսե՛լ ես ծերուկ ժայռերի միջով» սկսվածքով, ընդամենը 12 տող, ոտանավորի տեքստային տարբերություններով (10 տող): Բերելով այս ինքնագիրը, կազմողը ենթադրություն է անում, թե դա պետք է որ լինի ոտանավորի առաջին գրիչը:

Այստեղ մի կոպիտ շփոթություն կա. դա ոչ թե մի նախնական ինքնագրի, այլ մեր նշած առաջին վարիանտի մասն է, նրա ուղիղ երկրորդ կեսը: Բանն այն է, որ բանաստեղծությունների այդ տետրը, թվով N 6, համարակալված է ոչ թե սովորական ձևով, ձախից աջ, այլ հակառակը՝ վերջից գեպի սկիզբ: Դա առիթ է տվել մի թյուրիմացության, որին դեռ կանգրադառնանք: Այս գեպբում կազմողը, չնկատելով բանաստեղծության սկիզբը, ձախ կողմի վրա գրածը համարել է ամբողջական:

Իրոք, առաջին գրառումը այս պատկերն ունի (ՀՀա, I—6).

Իմ հայրենիքը տեսե՛լ ես, ասա՛:

[Ասա], Տեսե՛լ ես արդյո՞ւմ այն բլուրները
Ուր ճոխ ծաղկում է մշտական դարուն,
Կանաչում թաղված այն այդինները,
Ուր երբեմն գոհար խաղողն է հասնում,
[Տեսե՛լ ես, ասա՛, իմ հայրենիքը,
Սիրաշունչ նորա ախորժ երկինքը]:
[Շքեղ դալարուն պաճուճանք նորա]:

Տեսե՛լ ես դաշտեր, մարգագետիններ
Ու բացված այնտեղ վառ շուշան, մեխակ,
Շնորհատու [արեգն] արև, ոսկի նշույլներ,
[Կամարում սփռած պայծառ կապուտակ]
Եվ միշտ սիրաշունչ երկինք կապուտակ.
[Տեսե՛լ ես, ասա՛, իմ հայրենիքը
Սիրաշունչ աննման նորա երկինքը]:

Սիրուն թփերում տեսե՛լ ես փթթված
Մանուշակը հովտում ամոթխած դեմքով
[Եվ պարզ] Գարնան գիշերին կայտառ խաղ բռնած
[Երկնից աստեղաց հետ] վառ աստղերի ճեղ սիրահար աչքով
[Իմ Հայրենիքը տեսե՛լ ես, ասա՛,
Որի նմանը ոչ մի տեղ չկա]:

Տեսե՛լ ես ծերուկ ժայռերի միջով
[Մուկղին] Փրփրած գետը կատղած անցնելիս,
Ականջ դրե՛լ ես խռոված սրտով
[Հուզված] [Խրոխտ] Այն աղմկալից դռոցին ալյաց,
[Տեսե՛լ ես, ասա, հայրենիքս սիրուն,
Ահարկու նորա խորունկ ձորերում]:
Տեսե՛լ ես դյուղը հովտի մեջ մենակ,
[Շուրջը ծառադարձ] Եվ շուրջը փռված շֆեղ պարտեզների:

Ոսկի հասկերը և խաղաղ վտակ,
Լսե՛լ ես քաղցրիկ արտուտի երգեր.
[Ասա, ո՞ր երկիրն քան իմ հայրենիք,
Առավել շքնաղ է և գեղեցիկ]
[Ավելի պերճ է, չ՛հաղ գեղեցիկ]:

[Բայց] եվ դու տեսե՛լ ես նորա գանձն անգին,
Դեմքով հրշտակ, հասակը փարթամ
Հարավո զուտորը հրապույրքն աշերին.
Շրթունքը ալ վարդ, ժպիտն անթառամ...
Սիրատանջ այրված քնքուշ այտերից
Քաղելիս համբույր [ջիւմազին սրտից] որ քաղցր է մեղրից...

1880, 17 հոկտեմբերի

Գրաբնությանը ներկայացրած Բանաստեղծությունների տետրը մոծելիս (ՀՀա, I—18) ոտանավորը ենթարկվել է հետագա փոփոխության. քառյակները միանալով դառնում են ությակներ, փոխվում, մշակվում են տողերով:

Տպագրության ընթացքում ոտանավորը նորից է թևթև մշակման ենթարկվում, դուրս է թողնվում հետևյալ շորս տողը.

Սիրուն թփերում տեսե՛լ ես փթթած
Մանուշակը հովտում ամոթխած դեմքով
Գարնան զիշերին կայտառ խաղ բռնած
Վառ աստղերի հետ սիրահար աչքով:

Ո՞ւմից է մղումն ստացել երիտասարդ Հովհաննիսյանն այս ոտանավորը հորինելիս, Լերմոնտովի՞ց, Շահադիզի՞ց, թե՛ հենց Գյոթեից, որի մի տողը իրրեք բնաբան է վերցրել նա,— մի հարց է, որին էական նշանակություն չպետք է տրվի: Կարևորն այն է, որ նա ստեղծել է բոլորովին ինքնուրույն մի գործ:

Թե ինչո՞ւ է նա այս բանաստեղծությունը դուրս թողել 1903 թ. հրատարակած ժողովածուից, դժվար է ասել. արդյո՞ք ոչ իդեալական նկատառումներով: Համենայն դեպս, նա չէր կարող չբաժանել իր այդ ոտանավորի առթիվ Հովհ. Թումանյանի 1910-ին գրած՝ հանրահայտ, Parodia-ի պաթոսը, մանավանդ որ ճիշտ այդ ոգով ոտնավոր էր գրել «Տեսե՛լ ես արդյոք այն բլուրները» բանաստեղծությունից ընդամենը երկու տարի հետո, 1882 թվականի սեպտեմբերին (Թումանյանի պարոդիայից 28 տարի առաջ), որ անտիպ է մնացել մինչև օրս (տես այս հատորի Սևագրություններ և Ֆրագմենտներ բաժնում «Հավատացե՛ք, դուք Հայաստան» տողով սկսվող ոտանավորը):

2 «ԱՌԱՎՈՏՍ ԱՆՅԱՎ: ԱՌԱՋ ՆՄ ՆԱՅՈՒՄ»

Գրել է 1882 թ. նոյեմբերի 22-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—10), որը նախապես խորագրված է եղել «Իրականություն» և սրա հեղի-

նակային պատճենը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագիր պատճենի:

3 «ՇՏԱՊԻՐ, ՊԱՏԱՆԻ՝, ՏԱԼ ՎԱՅԵԼՈՒԹՅԱՆ»

Գրել է 1883 թ. փետրվարի 27-ին: Պահպանված է ինքնագիրը (ՀՀա, I—10) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ այդ հրատարակության: Առաջին ձևագրում.

- 8 Նալում է երկինք [ջինջ, խաղաղական] անուշահոտ դարնան
10 Չրկա եռանդը [այն տըղայության] պատանեկության

4 ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ

Գրել է 1883 թ. մարտի 1-ին: Պահպանված է ինքնագիրը՝ ուղղումներով (ՀՀա, I—10) և դրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևագրում.

- 3 Շրեղ, [երջանիկ] բաղդավոր նվիրական աշխարհ
7 [Գոհար շիթերով խնդադին ցողած] երջանիկ օրեր սիրով զարդարված
8 [Փափկասիրության խաղաղ վտակի] ել վայելչության անձկալի ժամեր
9 [Վաստակած գլխին աշխատավորի] Աշխատավորի վաստակած գլխին
10 [Պիտի զարդարեն շրջանում կենաց] Պիտի պարզենե հանգիստ
խնդագին
11 Մյուսն անասաւտ [ձեղ] ինձ դուրս է հանում
19 [Մրբիկ են այնտեղ] Գոռ փոքրիկ են երկրին գուշակում
22 [Այդ երկու շավիղից] Արդյո՞ք երկուսից ևս ո՞րը ընտրեմ:
28 Նորա մարմարին կրճերին [վրա մարմարիոնի] նազելի
44 [Դեպ վերջին շավիղ ևս բայլ ևմ փոխում] Կյանք, ինձ երկուսից ո՞րն
ևս պատրաստում
45 [Այդտեղ կարող ևմ գեթ մի թշվառի
46 Տալ անդորր հոգով լուման իմ ձեռի]:

5 «ՋԻՆՋ ԵՐԿՆՔԻՅ ՈՍԿԻ ԱՐԵՎ»

Հովհաննիսյանի առաջին տպագրված բանաստեղծությունն է: Առաջին անգամ լույս է տեսել «Աղբյուր», 1883, № 4:

Արխիվում պահպանվում է երեք ինքնագիր. առաջինը սևագրություն «Քրիստոս հարյավ ի մեռելոց» խորագրով, թվագրված 3 մարտի (ՀՀա, I—15), երկրորդը, մաքրագիր, «Հայ մանկան Ջատիկը» խորագրով, թվագրված է 1883 թ. 4 ապրիլի (ՀՀա, I—10), երկուսն էլ բաղկացած չորսական տնից: Տպագրության հանձնելիս բանաստեղծը կ' մշակել է, կ' կրճատել չորս տողով: Երրորդ ինքնագիրը (ՀՀա, I—25) սոսկ արտագրություն է տպագրվածից այսպիսի նշումով. «Աղբյուր, 1883, ապրիլ (հմտ. նույնը, 1913, ապ-

քիլ)»։ Ուղղադրությունը ցույց է տալիս, որ դա կատարված է սովետական տարիներին։

... Տպագրվում է ըստ վերջին ինքնագրի։

6 «ՄԻՆՎԵՆՈՒՅՆ ՎԻՇՏՐԱՆՔՆԵՐ ՄԻԱՅՐԵՑ»

Գրել է 1884 թ. սեպտեմբերի 3-ին։ Պահպանված է երկու ինքնագիր (ՀՀա, I—14 և ՀՀա, I—18)։ Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում։

Տպագրվում է ըստ ինքնագրի։

Առաջին ձևագրում.

12 [Ողբում են միակ իրանց բաղդի վրա] Իրանց շար բաղդը ողբում են նոխա։

7 «ՈՐՊԵՍ ՀԱՂԹԱՆԴԱՄ ՄԻ ՄԵՐՈՒԿ ՀՍԿԱ...»

Գրել է 1884 թ. սեպտեմբերի 5-ին։ Պահպանված է ինքնագիրը (ՀՀա, I—14) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—18)։ Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում։ Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության։

Երկու ձևագրերի մեջ կա հետևյալ տարբերությունը։ Տպագրության համար նախատեսվող տետրում արտագրելիս բանաստեղծը բաց է թողել (բն. հանել է) 5—8 տողերը, բայց տպագրության պրոցեսում այն վերականգնել է։

8 ԱՎԵՐԱԿ

Գրել է 1884 թ. սեպտեմբերի 17-ին։ Պահպանված է ինքնագիրը (ՀՀա, I—14) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—18)։ Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում։ Տպագրվում է ըստ ինքնագրի պատճենի։

Առաջին ձևագրում.

4 Խոնխա ավերակն [ահել] նախնայց մեծության

11 Եվ սեր [ատելություն] և հրեվանք, համայն գեղեցիկ։

9 «ԱՒԻ, ՏՎԵՔ ԻՆՁ ՔԱՂՅՐԻ ՄԻ ՔՈՒՆ...»

Գրել է 1884 թ. սեպտեմբերի 18-ին։ Պահպանված է ինքնագիրը (ՀՀա, I—14) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—18)։ Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում։ Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության։

Առաջին ինքնագրի վրա, որ վերանված է «1889 ամի նոյեմբեր» նշումը կրող տետրում, ինչ-որ երկրորդ ձևգրով, մատիտով մակագրված է՝ «печатать». պետք է այդ նույն անձն էլ մատիտով դրած լինի վերնագիրը՝ «Ցանկություն», որ բանաստեղծը չի պահել սակայն։

Առաջին ձևագրում.

24 [Կյանքից] Հեռու, հեռու սըլանամ

Առաջին տպագրության մեջ.

20 Փարիս, մեղմիկ փաղաքէն:

10 ՀԱԿՈՐ Ա. Ք. ՍՈՒՐԵՆՅԱՆՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Գրել է 1884 թ. հոկտեմբերի 21-ին: Պահպանված է ինքնագիրը (ՀՀ ա, I—14) և նրա հեղինակային պատճենը (ՀՀ ա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1887 թ. հրատարակության:

Ոտանավորը նվիրված է կրոնի իր ուսուցիչ Հակոբ ավագ քահանա Սուրենյանի հիշատակին, որ մեռել է 1884 թ. հոկտեմբերի 21-ին:

Այս ոտանավորը նա ուղարկել է Գարեգին Ենգիբարյանին, որ Սուրենյանի թաղումը նկարագրելուց հետո բերում է նրա երկու տունը («Արձագանք», 1884, № 43): Տես նաև «Միևնույն վիշտը մեզ միացրեց» բանաստեղծությունը:

11 ԶԻՆՎՈՐԻ ՄԱՀԸ

Գրել է 1885 թ. նոյեմբերի 18-ին:

Արխիվում պահպանվում է երեք ինքնագիր, որոնցից ամենավաղ գրվածը ամփոփված է «1884 ամի, դեկտեմբեր, Մոսկվա» նշումը կրող տետրում (ՀՀ ա, I—16): Դա ջնջված է և՛ մատիտով, և՛ թանաքով: Մնացած երկուսը, առանձին թերթիկների վրա, արտագրված պետք է լինեն հետադաշում (ՀՀ ա, I—33 և ՀՀ ա, I—35):

Առաջին անգամ լույս է տեսել «Արմենիա», 1887, № 10:

12 «Ի ԶՈՒՐ Է, ՀՈԳԻՍ, Ի ԶՈՒՐ, ԻՄ ՀՐԵՇՏԱՎ...»

Գրել է 1885 թ. նոյեմբերի 22-ին: Պահպանված է ինքնագիրը, որ խորագրված է «Անցածի մի հիշողություն» (ՀՀ ա, I—16) և նրա հեղինակային պատճենը (ՀՀ ա, I—33): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում:

Տպագրվում է ըստ ինքնագրի:

13 «ԱՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՐԵՐՈՒՆ ԿՅԱՆՔԻ»

Գրել է 1885 թ. նոյեմբերի 24-ին: Արխիվում պահպանվում է երկու ինքնագիր. նախնականը, որ ունի մշակության հետքեր, առանձին թերթիկի վրա (ՀՀ ա, I—34), մյուսը՝ տետրում (ՀՀ ա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ այդ հրատարակության: Առաջին սևագրում.

2 [Դատարկ հույսերով] Ամփիտ ցնորով մաշված սրտերին

7 [Մաղում] Բերում ես քաղցր հույս երջանկության

14 «ԵՍ ԶՐՈՍՆՈՒՄ ԵՄ ԲԵՐԿՐԱՄԻՏ»

Գրել է 1885 թ. դեկտեմբերի 13-ին: Գրաքննությանը ներկայացրած

տետրում արտագրված է երկրորդ ձևը (ՀՀա, I—18): Բանաստեղծությունը նախապես կոչվել է «Հիշատակ Մարիամ Զանումյանին» հետո հեղինակի ձևը ուղղված է՝ «նվեր օր. Մարիամ Զանումյանին» (ՀՀա, I—7): Առաջին հրատարակության մեջ պահպանվել է միայն ազգանվան ինիցիալը: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ այդ հրատարակության:

15 ԳԻՇԵՐՎԱՆ ԵՐԳՐ

Գրել է 1885 թ. դեկտեմբերի 13-ին: Գրաքննությանը ներկայացրած Բանաստեղծությունների տետրում արտագրված է երկրորդ ձևը և ուղղված է հեղինակի կողմից: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում գրաքննական կրճատումներով (ՀՀա, I—18), ըստ որում հանված են եղել երրորդ և յոթերորդ տները: Ամբողջությամբ տպագրվել է «Արմենիա», 1887 Ն 9: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

16 ՀԱՅՐԵՆԱՍԵՐ

Գրել է 1885 թ. դեկտեմբերի 14-ին: Նվիրված է Խաչատուր Աբովյանի հիշատակին: Պահպանվել է ինքնագիրը՝ ուղղումներով (ՀՀա, I—16) և մի հեղինակային պատճենը (ՀՀա, I—35): Հեղինակի ծրագրով պետք է մտնեռ 1887 թ. ժողովածուի մեջ, բայց արգելվել է գրաքննության կողմից: Առաջին անգամ լույս է տեսել «Արմենիա», 1887, Ն 16: Տպագրվում է ինքնագրից: Առաջին ձևագրում.

- 6 [Վատթար երկյուղով] Միայն բերում է հուսահատություն
- 7 [Միայն բերում, մինչ] Մինչև երկյուղով ստվերը սեպհական
- 9 Երբ [եղջուրացած] որ սևադեմ հասպաշտ հոգին
- 25 [Հրատապ] Բոցավառ սիրով դեռ մանուկ այրված

17 «ԱՅՍ ՕՐԵՐՈՒՄԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՒԳԻ»

Գրել է 1885 թ. դեկտեմբերի 19-ին: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի (ՀՀա, I—16): Զեռագրի, ինչպես և առաջին հրատարակության մեջ եղած ուղերձը («նվեր օր. Ս. Բ.-ին») չի պահպանվել Վերահրատարակության ժամանակ: Ինքնագրում.

- 12 Հարյուրավորի [արտասունքներից] աղի արցունքից

18 «ԴԱՐՁՅԱԼ ՆՈՐ ՏԱՐԻ. ԹՈՂ ՈՒՐԱԽԱՆԱՆ»

Գրել է 1886 թ. հունվարի 2-ին: Պահպանված է ինքնագիրը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Զեռագրում.

- 18 [Դարձնում եմ հոգիս նվիրական բազին]

19 [Երկրպագության] Խմ մաշված սիրտը և ակնածությամբ

23 եւ [միայն] լոկ մի խոսքըդ բարեկամության

19 Ե Ր Գ

Գրել է 1886 թ. հունվարի 14-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

20 «ՏԸԼԵՈՒՐ ԵՐԳԻՉՐ ՔՆԱՐԸ ՁՆՈՒՆ»

Գրել է 1886 թ. հունվարի 21-ին: Պահպանվել է ինքնագիրը (ՀՀա, I—17) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—16), որոնք վերնագրված են «21 հունվար» և հետո ջնջված (արտագրության ժամանակ), որը «Երկերի ժողովածուի» 1937 թ. հրատարակության կազմող Ռ. Զարյանի կողմից սխալմամբ ընթերցվել է «Սգավոր»: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուի մեջ:

Սևագրության մեջ.

5 [Հուսահատ] դառնացած հոգով նա խորասուլիված

11 Կուսի ջերմ սիրտը [հուսահատ] գլխին հուսաբատ

12 Միայն [այդ տվեց] պարզեց հանգիստ փրկության

14 Այս [ուրախ] բաղջըր օրին ցանկալ որ պատած

15 Անկեղծ սիրովը [բարեկամների] մատաղ փերողի

16 Ծաղկիս դու [իրեկ զարնան] չֆնաղ իրեկ վարդ փթթած

21 ԻՆՁ ՄԻ ՍԻՐԻՐ

Գրել է 1886 թ. հունվարի 25-ին: Պահպանված է սևագրությունը (ՀՀա, I—17) և դրա մաքրագիր օրինակը (ՀՀա, I—16), որ արդեն խորագիր ունի: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Սևագրության մեջ, 8-րդ տողից հետո եղել է.

9 [Ես փշոտ շավղի վերա

10 Քեզ կըլինեմ սպասավոր]

22 «ԵՐԱՆԻ ՆՈՐԱՆ, ՈՐ ՏԵՐ Է ԱԶԱՏ»

Գրել է 1886 թ. հունվարի 27-ին: Պահպանված է ինքնագիրը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

23 «ԶԳՈՒՄ ԵՄ ԱՐԳԵՆ, ՀԱՆԳՉՈՒՄ Է ՀՈԳԻՍ»

Գրել է 1886 թ. փետրվարի 17-ին: Պահպանված է ինքնագիրը (ՀՀա, I—17) և նրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում:

Գրել է 1886 թ. փետրվարի 27-ին: Հեղինակի արխիվում պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—17) և դրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—16), որ ամբողջ տետրով ներկայացվել է գրաքննությանը: Գրաքննությունը հանել է երկրորդ, երրորդ և չորրորդ բառակենրը, ընդամենը 12 տող. այդպես էլ առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուի մեջ: Ամբողջությամբ տպագրվել է «Արմենիա», 1887, № 16: Տպագրվում է ըստ ինքնագիր պատճենի:

25 ԳԵՂԵՑԻՎ ՕՐԵՐ, ԾԱՂԿԱՎԱՌ ՕՐԵՐ»

Գրել է 1886 թ. մարտի 15-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—20) և դրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—16), որ վերնագրված է «Նվեր օր. Նդխարեթ Զանումյանին»: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում «Նվեր օր. Նդխարեթ Զ-ին» ձևով, որ 1908 թ. հրատարակության մեջ հանվել է բոլորովին: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևագրում.

23 Չպիտի մեռնի... [և արդյոք] զուցե և շուտով

Առաջին հրատարակության մեջ.

30 Ինձ վայելչության բերում են ժամեր

26 ԳՅՈՒՂԻ ԺԱՄԸ

Գրել է 1886 թ. մարտի 16-ին: Պահպանվում է այս բանաստեղծության սևագիրը (ՀՀա, I—20), որ վերնագրված է «Ժամերը տվին» և մաքրագիրը (ՀՀա, I—16), որ արդեն կրում է «Գյուղի ժամը» խորագիրը: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Սխալ կողմնորոշում ստանալով քննադատությունից (հմտ. «Աղբյուր», 1890, № 1, 2), բանաստեղծն այս ոտանավորը չի մտցրել 1908 թ. հրատարակության մեջ: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Չևագրում.

1 [Դին-դոն, դին-դոն] Տա՛ն-դո, տա՛ն-դո... Նազլու, վեր կաց

5 Ժամը տվին. [դին-դոն, դին-դոն] տա՛ն-դո, տա՛ն-դո

6 Տե՛ր, փառքըդ շատ. [դին-դոն, դին-դոն] տա՛ն-դո, տա՛ն-դո

31 [Դին-դոն, դին-դոն] Տա՛ն-դո, տա՛ն-դո, Նազլու դհանք

35 Ժամը տվին, [դին-դոն, դին-դոն] տա՛ն-դո, տա՛ն-դո

36 Տե՛ր. փառքըդ շատ [դին-դոն, դին-դոն] տա՛ն-դո, տա՛ն-դո

27 ԱՌԱՎՈՏ

Գրել է 1886 թ. մարտի 18-ին: Պահպանվում է սևագիր ինքնագիրը (ՀՀա, I—20) և նրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—16), որի վերջին վեցնյալը գրաքննության կողմից ջնջված է: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում, առանց 13—18 տողերի: Ամբողջությամբ տպագրվել է «Արմենիա», 1887, № 9: Տպագրվում է ըստ ինքնագրի:

28 «ԵՍ ՔԵԶ ՍԻՐՈՒՄ ԵՄ, ՍՈՒՐԲ ԳԵՂԵՅԿՈՒԹՅԱՆ»

Գրել է 1886 թ. մարտի 20-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—20) և նրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևագրում.

5 Ոչ վարդ այտերիդ, նազում շրթունքիդ [համար]

Առաջին վեց տողերից հետո ջնջված է՝

Ո՛չ, կույս նաղելի, սիրում եմ քեզնում

Իմ ցնորքների կատարելությունն

Իմ մշտաբորբոք պատկերն երազած,

Իբրև հրաշակերտ մի չքնաղ ստեղծված:

11 Ահա թե ինչք, մանուկ [սիրելի] պաշտելի

14 Հավի՛ն ու ղմուռս, կնդրուկ [նվիրական] սրբազան

երկրորդ ձևագրում.

Առաջին վեց տողերից հետո ջնջված է՝

Ո՛չ, կույս նաղելի. սիրում եմ քեզնում

Իմ ցնորքների կատարելությունն

Իմ մշտաբորբոք պատկերն երազած,

Իբրև հրաշակերտ մի չքնաղ ստեղծված:

29 «ՔԱՆԻ՛, ՔԱՆԻ՛ ԿԱՄԵՅՆԻ ԵՄ»

Գրել է 1886 թ. մարտի 23-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—20) և նրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Ինքնագրում ջնջված է երկրորդ տունը, որը, սակայն, վերականգնված է արտագրության ժամանակ: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

30 «ԱՄՆԵԱՅՆ ԱՆԳՍՄ, ԵՐԲ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ՔԵԶ»

Գրել է 1886 թ. մարտի 25-ին: Պահպանվում է սևագրությունը (ՀՀա, I—20) և ինքնագիր պատճենը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

31 «ԱՀԱ ՔՆԱՐ ԵՎ ՏԱՎԻԴՆԵՐ»

Գրել է 1886 թ. մարտի 27-ին: Պահպանվում է սևագրությունը (ՀՀա, I—20) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): զրաքննությունը ներկայացրած տևորում, որը ջնջված է զրաքննիչի կողմից: Առաջին անգամ լույս է տեսել «Արմենիա», 1887, № 16: Տպագրվում է ըստ ինքնագրի:

32 ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻՆ

Գրել է 1886 թ. մարտի 30-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—20) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել

ուսանողական «Հուլյս» քնկերության հրատարակած շաբթից շորորդ՝ «Հնդու
աքաղաղ» խորագրով (1886) գրքուկին իբրև սկիզբ կամ բնաբան, անստո-
րագիր, «նվեր Ռ. Պատկանյանի 35-ամյա հոբելյանին» վերնագրով: Տպա-
գրվում է ըստ ինքնագրի, որի նախնական վերնագիրն է եղել «Ռ. Պատկան-
յանի 35-ամյա հոբելյանին նվեր», դա էլ ջնջված է և կապույտ մատիտով
գրված՝ «Գամառ-Քաթիպային նվեր»:

33 «ԱՆՆՈՒՅՍ ԽԱՎԱՐԸ, ՉԱՐՈՒԹՅԱՆ ՈԳԻՆ»

Գրել է 1886 թ. ապրիլի 1-ին: Պահպանվում է սևագրությունը (ՀՀա,
I—37) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է
տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

34 Հ Ա Տ Ի Կ

Գրել է 1886 թ. ապրիլի 2-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—17)
և հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է
տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևագրում.

7 Թող [կորչի] մեռնի դարդըս գեանի տակ անհետ

17 Մլի՛ր, կանաչի՛ր [և ոսկե փեշով] ոսկի սավաճով

19 Նոր այն ժամանակ [ոսկե] անուշ շրշյունով

35 Ձ Ա Տ Ի Կ

Գրել է 1886 թ. ապրիլի 4-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—16):
Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ
ինքնագրի:

36 «Ա՛ն, Ի՛նՉՊես, ՀՈԳՅԱ՛կ, ԿԸԿԱՄԵՆԱՅԻ»

Գրել է 1886 թ. ապրիլի 5-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա,
I—17)՝ գրված մատիտով և հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Առաջին
անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևագրում.

5 Մեր ամբողջ կյանքը անցնում է [փոքրիկ] շէշին

6 [Անմիտ] փոքրիկ կրքերով, ունայն հոգսերում

12 Չըկա [այն բույրը] բուրմունքը սիրավառ սրտի

16 Կարոտ եմ [անհուն] բոցոտ, անհուն զգացմունքի

17 Ես քեզ եմ դարձնում [ես աղաչանքով] հոգյակ, իմ աչե՛ր

18 [Աչքը լի սիրով] Լի մի խանդակաթ սիրով անսահման

Երկրորդ ձևագրում.

11 Ուր տեր և իշխան սև շարությունը

դառնում է

11 Ուր տիրազուլս է սև շարությունը

և 14 Մի ղեկուն հասակ հոգեբույս երգի

ու՝ ռնում է

14 Մի ղեկուն, մաքուր հոգեբույս երգի

37 ԵՐԿՈՒ ՀԱՄԲՈՒՅՐ

Գրել է 1886 թ. ապրիլի 5-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—17) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևադրում.

16 Մեղ փաղաքշիտվ յուր [ոսկրոտ] անկյանն հուրծքին

38 «ԵՍ ԱՆՄՌՈՒՆԶ ԳՆՈՒՄ ԷՒ ՃԱՆԱՊԱՐՀ»

Գրել է 1886 թ. ապրիլի 9-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—20) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—16), երկուսն էլ թվագրված ապրիլի 9-ին, մինչդեռ առաջին տպագրության մեջ 9-ը դառել է 6: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևադրում.

1 Ես անմոռնչ զնում [Լմ իմ] էի ճանապարհ

2 [Ինձ] իմ հեղհեղուկ բաղդի [կամքին] տված ինձ խոնարհ

3 Բայց [և] այն օրից երբ ողջունես հրաժեշտի

10 Ոչ քո ոսկին [արծաթ] և ոչ խարդախ ստույթուն

11 Զրկամիմ քո [արևնագին] արյամբ զնա՞ծ սարդենին

20 Երբ ողջունես [արդար] մի նոր կյանքի արեգակ

39 «ՔՆՔՈՒՇ ՏՈՂԵՐՈՒՄ ԵՍ ՊԻՏԻ ԵՐԳԵՄ»

Գրել է 1886 թ. ապրիլի 14-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

40 «ԵՎ ԱՅՍ ԳԱՐՈՒՆ ԿԱՆՅՆԻ ՇՈՒՏՈՎ»

Գրել է 1886 թ. ապրիլի 15-ին: Պահպանվում է հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

41 «ԵՐԲ ԵՍ ՆՍԱՍԾ ԵՄ ՏՆՈՒՐ ՈՒ ՄՆԶԻԿ»

Գրել է 1886 թ. ապրիլի 15-ին: Պահպանվում է հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

42 «ԵՐԲ ԵՍ ՏՆՍՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ՈՒՆԱՅՆԱՍԵՐ»

Գրել է 1886 թ. ապրիլի 17-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—16):

Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Ձեռագրում.

17 Մենք [պիտի գլորենք] կըտապալենք այն վեհ բարձրություն

43 «ԻՆՉՊԵՍ ՎՏԱԿ ԵՍ ԿԸԹԱՓԵՄ»

Գրել է 1886 թ. ապրիլի 19-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Առաջին հրատարակության մեջ.

2 Աշերիցըս արտասուք

11 Կըհիշես ինձ որ ես մեռա

12 Քո մտերիմ, սիրական

44 «ԵՐԲ ՄԱՏԱՂ ՄՈՒՍԱՍ ԺՊԻՏՆ ԵՐԵՍԻՆ»

Գրել է 1886 թ. ապրիլի 20-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—16): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

«Երկերի ժողովածուի» 1937 թ. հրատարակության ծանոթության մեջ ասված է, որ «Հովհաննիսյանի ձեռագրերի մեջ պահվում է հետևյալ տարբերակը, որը, սակայն, գրված է մեկ տարով ավելի ուշ (1887, 21 հունվարի)»: Այդ տարբերակը «Իմ մուսան» խորագրով բանաստեղծությունն է և թեմայից բացի ոչ մի այլ ընդհանրություն չունի այս ոտանավորի հետ:

Ձեռագրում.

7 Կուսական սրտի վիշտը նաղելի

18 Ամոթով ալբիթ [դեմքը] մեծատան երեսն

23 [Թող] եվ կեղծավորը ուժաթափ եղած

Առաջին հրատարակության մեջ.

3 Միայն գեղեցկության, սիրո պատկերին

8 Վայելչությունը սիրո արեքման

19 Մեր բոլոր կեղտը ցույց տուր աշխարհին

21 Թող չարությունը սարսափի տեսած

45 «ԼԻՆՈՒՄ Է ՐՈՊԵ, ԵՍ ԱՆԻՄՈՒՄ ԵՄ»

Գրել է 1886 թ. ապրիլի 22-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

46 «ԶՔՆԱՂ ՄԱՆՈՒԿ, ՀՐԵՇՏԱԿ ԴԵՄՔՈՎ»

Գրել է 1886 թ. ապրիլի 23-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Գրեւ է 1886 թ. ապրիլի 26-ին, իր 22-րդ տարեդարձի օրը: Պաշպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ձևագրում.

19 Թե անհոգ [քնարի] տալիի ձայնը մարեցալ

20 եվ մընաց ինձ [միայն] լոկ նորա հիշատակ

48 «ԴՈՒ ԱՐՏԱՍՎՈՒՄ ԵՍ ԵՎ ՉԵՍ ԱՄԱԶՈՒՄ»

Գրեւ է 1886 թ. մայիսի 7-ին: Պաշպանվում է ինքնագիրը: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

49 «ԱՀԱ ՔԵՉ ՁԵՌՐԱ, ԸՆԿԵՐ ԹԱՆԳԱԳԻՆ»

Գրեւ է 1886 մայիսի 9-ին: Պաշպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

50 «ԹՈՂ ԱՅՍՈՐ ՄՈՒԹՆ Է ՔԵՉ ՀԱՄԱՐ ԱՐԵՎ»

Գրեւ է 1886 թ. սեպտեմբերի 28-ին: Պաշպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—39): զրված մատիտով և նրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Անագրության մեջ.

3 [Վիճակն] Բազդն իրբն խորթ մայր բերն քո առջև

7 Կըցուլա խաղաղ վիճակի քաղցր հույս

8 եվ ուրախության կհոսեն արցունքներ

51 «ԵՍ ՔԵՉ ՍԻՐՅՅԻ, ԲԱՅՅ ՉԵՄ ԿԱՄԵՆՈՒՄ»

Գրեւ է 1886 թ. դեկտեմբերի 14-ին: Պաշպանվում է երկու ինքնագիր, առաջինը՝ մատիտով զրված (ՀՀա, I—42), երկրորդը՝ Բանաստեղծությունների տետրում (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևագրում.

2 Սիրտըս քեզ բնավ զերի տալ, հողյակ

3 Մի [փոքրիկ] անկյուն [ևս] նորա անմեկին խորքում

52 «ԵՐՐ ՆԱ. ԴԵՌ ՆՈՐ ԷՐ ԼՈՒՅՍ ԱՇԽԱՐՀ ՏԵՍԵԼ»

Գրեւ է 1886 թ. դեկտեմբերի 16-ին, նվիրված է Միքայիլ Նալբանդյանի հիշատակին: Պաշպանվում է սևագիրը (ՀՀա, I—42), զրված մատիտով, և մաքրագիրը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Առաջին ձևագրում.

- 2 Դառն [աշխատանքի] աշխատույթան, [սև] կարիքի զավակ
Առաջին հրատարակության մեջ.
13 Բայց չարաճրճի քուրմերը ուժի

53 «ՄԻ՝ ԹՈՂՆԻՐ, ԵՐԳԻՂ, ՔՆԱՐԲԻ ԿԱԽԱՄ»

Գրել է 1887 թ. հունվարի 2-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—42) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

54 «ԻՄ ԽԵՂՃ ՀԱՅՐԵՆԻՔ, ԱՆՓԱՌՔ ՎԻՃԱԿԻԳ»

Գրել է 1887 թ. հունվարի 3-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—42) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—18): Բանաստեղծի ծրագրով պետք է մտներ 1887 թ. ժողովածուի մեջ, բայց արգելվել է գրաքննության կողմից: Առաջին անգամ լույս է տեսել «Արմենիա», 1887, № 16: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Զեռագրերում որպես բնարան բերված է. «... և սպասեց որ խաղող բերե, բայց բերավ աղոխ»: Մարդ. Եսայա, Գլ. Ե, 2:

55 ՏՂՄՈՒՏ

Գրել է 1887 թ. հունվարի 7-ին: Պահպանվում է այս գործի երկու ինքնագիր. առաջինը թվագրված «1887, 7 հունվարի» (ՀՀա, I—45), երկրորդը, արգեն նախորդից մաքուր արտագրված, «1887, 7 փետրվարի» (ՀՀա, I—46): Ամբողջ բանաստեղծությունը, տետրի շորս էջ, հետագայում կրկնակի անգամ (մատիտով և թանաքով) ջնջված է. լուսանցքի ստորագրությունները ցույց են տալիս, որ ջնջումը կատարված է գրաքննության կողմից: Այսպիսով, «Տղմուտը» պետք է մտներ բանաստեղծությունների առաջին զրբի մեջ, բայց հանվել է: Առաջին անգամ լույս է տեսել «Արմենիա», 1887, № 10: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևագրում.

- 17 Եվ Տղմուտը հառաչում է սգավոր
20 Անցած փառքը [միտն են բերում] հիշեցնում են հայերին
23 Նոքա մեռան [ղարդարեցին զափնիններ] և կուրծքերը անվհեր
35 Հայ սար, հայ գետ, հայ դաշտորայք [մարմնացած] շունչ առած
36 [Ամոթ են որ] Պիտ ամորով այրեն ձեր սև երեսներ
47 [Ոտքի կանգնել] Կանգնեցնել նոր Արտաշատ, Խոխոցիմ
52 Անցած փառքը [միտ են բերում] հիշեցնում են հայերին
53 Անցան դարեր. [<1աճեր. > Տղմուտը] դեռ ձեռունին հեծելով

56 «ՀԱՍՈՐ, ՍԻՐԱԼԻՍ, ԲԵՐ ՈՍԿԻ ՓԸՆԱՐ»

Գրել է 1887 թ. հունվարի 21-ին: Պահպանվում է երկու ինքնագիր (ՀՀա, I—40 և ՀՀա, I—47) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—18): Առաջին

անդամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ հեղինակային պատճենին:

Առաջին ձևագրում.

6 Արցունքի փոխան թող աչքիցս բղխին

57 Ա Շ Ո Ւ Ղ

Գրել է 1887 թ. հունվարի 22-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Չևագրում.

6 Հայրենիքիդ խոր խոցերը դու համբում ես դարերով

9 Լուս մնալով մեր վերքերին պիտի չանես դու դարման

58 Ե Ր Գ Ջ Ի Ն

Գրել է 1887 թ. հունվարի 23-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—43) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—18), երկուսն էլ բաղկացած երեք բառյակից: Այդպես էլ առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: 1908 թ. հրատարակության մեջ հեղինակը կրճատել է երկրորդ տունը.

Մենք չըկամինք խաբխափել

Խավարի մեջ տղիտության,—

Կամինք սիրվել և սիրել,

Հավատարիմ մեր կոչման:

Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Առաջին ձևագրում.

5 [Թող] Վառե դու մեր սրտերում

59 «ՍԻՐՈՒՆ ԳԼՈՒԽԸԴ ԿՈՒՐՄՔԻՍ ԽՈՆԱՐՀԱՄ»

Գրել է 1887 թ. հունվարի 25-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—43) և սրա հեղինակային պատճենը՝ «Երազ» խորագրով (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի: Հեղինակի կամքի համապատասխան՝ բաց է թողնվում խորագիրը:

60 «ԱՄԵՆԱՅՆ ԱՆԳԱՄ, ԵՐԲ ԹԵԹԵՎԱՄԻՏ»

Գրել է 1887 թ. հունվարի 26-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—45) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—18): Բանաստեղծությունը նվիրված է ջրոջը՝ Փառանձևմին («Նվիրում եմ իմ բույր Փառանձևմին»): Առաջին անգամ այդպիսի ընծայականով էլ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Առաջին ձևագրում.

12 [Նվ վառ] կենդանի հրճվանքը կուտական սրտի

22 Ուր լավում է [լուկ] միայն հառաչք [ողբ] լալագին

Երկրորդ ձևադրում.

18 Իրրե հառաչանք պաղատող սրտի

22 Ուր լսվում է միայն հառաչք լալադին

61 «ԳՈՒ ԶՐԿԱՄԻՍ, Ո՛Վ ԿՈՒՅՍ, ԼԻՆԵՆՆ»

Գրել է 1887 թ. հունվարի 27-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—45) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևադրում.

10 Ալիքներումն են պահված

12 Սրտիս խորքումն են թաղված

62 «ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ԱՀԱ—ԱԶԳԵՐ ԵՆ ՄԵՌՆՈՒՄ»

Գրել է 1887 թ. փետրվարի 5-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—45) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—18): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնել 1887 թ. ժողովածուի մեջ, սակայն արգելվել է գրաքննության կողմից: Առաջին անգամ լույս է տեսել «Արմենիա», 1887, № 9, հրատարակչի հետևյալ ծանոթությամբ.

«Ռուսաստանի հայ գրականության նորընծա մշակներեն պ. Հովհաննես Հովհաննիսյանի «Բանաստեղծություններին» հրատարակությունն ծանուցած ենք մենք արդեն: Այդ տևտրակի մեջ ընթերցողն կրպատահի այնպիսի տողերի, որոնք երևան կըբերեն հեղինակի բանաստեղծական տաղանդը և հույս կուտան, որ պ. Հովհաննիսյան ապագայի մեջ առաջնակարգ բերթողներեն մին կըլինի կիև քաջալերություն գտնե: Այս օրեր անցան մեր ձեռք պ. Հովհաննիսյանի անտիպ բանաստեղծություններն ևս, որոցմե մի քանին իրր ճաշակ ավելւորդ չենք համարիր հրատարակել Աւմենիայի մեջ հետզհետե, ցույց տալու համար թե որչափ ավելի եռանդոտ և գեղեցիկ կըլինին բանաստեղծի մտքի և սրտի արտահայտություններն, երր կարենան ազատ ասպարեզ դուրս գալ՝ չենթարկվելով գրաքննության ճնշումներին»:

Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևադրում.

6 Յուրում է նոցա [անվիշտ] պայծառ ճակատին

23 [Թեև մահամերձ, դու մի ձայն հանիր] Դու, հայի առե, դու շեղ
րացվիր

24 [Եվ տես՝ որդիբերդ կըզան չորս կողմից] Գիշերը վաճիր հեռու
մեզանից

63 «ԱՍՈՒՄ ԵՆ. «ՊՈՆՏՏ, ՄԵՆՔ ԶԵՆՔ ԿԱՄՆՆՈՒՄ»

Գրել է 1887 թ. փետրվարի 9-ին: Պահպանվում է ինքնագիր պատճենը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Զեռադրում.

11 Եվ չես սպասում մի մաքուր զգացման

12 Մի ազնիւ սիրտ նշուլլ դոցանից

24 Առաքելական՝ շունիս ունկնդիր

64 «ՔԵԶ ՄՈՏԵՅԱ ՍԵՐ ՀՈՒՍԱՆՈՎ»

Գրել է 1887 թ. փետրվարի 11-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—48) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

65 «ՄԸՆԱՔ ԲԱՐՈՎ, ԱՐԵՎ, ԳԱՐՈՒՆ»

Գրել է 1887 թ. փետրվարի 12-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

66 «ԴՈՒ ԾԱՂԱՌՈՒՄ ԵՄ, ԻՆՉՊԵՍ ՎԱՐԴԻ ՀԱՐԱՎԻ»

Գրել է 1887 թ. փետրվարի 14-ին: Պահպանվում է երկու ինքնագիր (ՀՀա, I—48 և ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևագրում.

9 Բայց չըզիտես դու բո ուլժը, [իմ հոգյակ] սիրելի

10 Միամիտ ես, անհոգ իբրեւ աղավնի

16 եվ [չեւրմ արցունք բեզ թափել տար բույրը] Եիրտըդ Իունդ զարկել տար բույրը վարդի

67 «ԶԵԶ ԵՄ ՆՎԻՐՈՒՄ ԻՄ ԱՆՎԱՐԺ ՏՈՂԵՐ»

Գրել է 1887 թ. փետրվարի 20-ին: Պահպանվում է սևագրությունը՝ բաղմաթիվ յուզղումներով (ՀՀա, I—50) և հեղինակային պատճենը՝ զրաքննությունը ներկայացրած տետրերից առաջինում (ՀՀա, I—18): Գրված է իր անդրանիկ զրբի հրատարակության առթիվ: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուի առաջին էջում՝ իբր ընծայական հետևյալ վերնագրով. «Ընկերներիս, նվիրում եմ առաջին զրականական փորձերս»: Ինքնագրի, ինչպես և առաջին հրատարակության մեջ բանաստեղծությունը բաղկացած է երեք բառատողից, որից միայն վերջինն է պահպանվել վերահրատարակության ժամանակ, և այն էլ իբրեւ զրբի բնարան: Տպագրվում է ըստ առաջին հրատարակության:

Առաջին ձևագրում.

3 Դեռ պահպանում եր վսեմ միտք և սեր

4-րդ տողից հետո ջնջված է՝

[Ո՛հ, հավատացեք, որ մենք [վաղ] ուշ թե վաղ

Պիտի չքանանք, [որպես] ինչպես մի ճճի,

եվ պիտի ցնդի մեր կյանքը մատաղ

Ինչպես քաղցրություն ոսկի երազի]

6 [Յուր] Այդ վառ հավատը, [բաղցր] ոսկի երազներ [ով]

7 [Թող <1 անընթաց> թառամեցնի] Թեպետ և քակե բաղդն անադորուն
8 Մեր սիրուն պսակի [փարթամ] շքնաղ ծաղիկներ
9 [եվ] Միայն այն կապրի [լուկ ալն] որ միշտ է անմահ

12-րդ տողից հետո եղել է՝
Ուրեմն տըվե՛ր ձեռներդ անկասկած—
եվ առաջ իբրեւ հղբարբ հարազատ,
Մի անմահ դործ է մեր առաջ կանդնած,
Աստղարեղ մտնենք հուսով անվըհատ:

Լույս, ճշմարտություն—ահա մեր նըշան,
եվ թող պատերազմն ահեղ բորբորվի,—
Մենք հավատարիմ ենք չոր աղատության
Վառ արշալույսը [շուտ] մեզ [պիտի] շուտ կըբացվի:
եվս մի փորձ՝

[Լուս փոթորիկը մեզ է մոտենում,
եվ մենք թողնում ենք մեր անհոգ խաղեր,
Վախով և հուսով մենք ձեռք ենք [սեղմում] մեկնում]
Երկրորդ ձեռագրում.

3 Դեռ պահպանում եք վըսեմ միտք և սեր
Երկրորդ հրատարակության մեջ.
12 Ու սերն անձնազոհ՝ խեղճ հղբոր համար

68 Ս. ՇԱՀԱՋԻՋԻՆ

Գրել է 1887 թ. մարտի 13-ին: Պահպանվում են երկու ինքնագիր. առաջինն անվերնագիր (ՀՀա, I—52), երկրորդը՝ «Երզնին (Ս. Շ.)» խորագրով (ՀՀա, I—51), երկուսն էլ շտկումներով: Առաջին անգամ լույս է տեսել «Արարատ», 1908, № 1, խմբագրության հետևյալ ծանոթությամբ:

«Կարդացված է 1887 թվին ի պատիվ հանգույցյալ բանաստեղծի յուր 25-ամյա հորեկանի առթիվ պատրաստված մի ընկերական հացկերույթի ժամանակ Մոսկվայում»:

Տպագրվում է՝ առաջին մասը, որի ձեռագիրը մեզ անհայտ է, ըստ 1908 թ. հրատարակության, երկրորդ մասը՝ ըստ ինքնագրերի:

Առաջին ձեռագրում.

- 17 Անլույս խավարը իբրեւ փոթորիկ
18 [Ծանրացած] Կուսված էր հայի շարշարված գլխին
22 Կարոտ էր դոնի [սրտացավ] կարեկից խոտրի
23 Եվ անմիտները իրանք խավարած
24 Թանձրացնում էին մոռլը վշտի
25 Բայց հայ երկիրը դեռ երս զուրկ չէր
30 Փքուն խոտերը օդում ցնդեցան
33 Եվ դու դեռ մանուկ եռանդով աշրված
37 Դիտություն, [ուսում] և լույս, սեր, հղբայություն

- 41 Դու ներշնչեցիր [հույս ոսկեղենիկ] մեզ մի հույս զողորիկ
 44 [Սրտացավ] նա, ազնիվ երգիչ, [նա] բեզ չի մոռանա
 երկրորդ ձեռագրում.
 17 [Անուշա խավարը] Աստուծոյ գիշեր իրրե փոթորիկ
 18 [Կիտ] Կախված էր հայի շարշարված գլխին
 22 Կարոտ էր [գոնե] լսել զեր խոսքի կարեկից [խոսքի]
 24 Թանձրացնում էին [մոայլը վշտի] մութ փող երկնից
 25 Բայց հայ երկիրը դեռ երս դուրի չէր
 30 Փքուն խոսքերը օդում ցնդեցան
 33 Եվ դու մի մանուկ, եռանդով այրված
 39 Դու վառ հավատով կարգացիր խրախույս

69 «ԱՐԱՋՆ ԷԿԱՎ ԼԱՓԻՆ ՏԱԼՈՎ»

Գրել է 1887 թ. հուլիսի 21-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—57): Առաջին անգամ լույս է տեսել 1888-ին, «Հանդես գրականական և պատմական» առաջին դրբում (էջ 105): Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

70 «ՀԻՐԱՇԱԼԻ ԳԻՇԵՐ... ԽԱՂԱՂ ՔՈՒՆ ՄՏԱԾ»

Գրել է 1887 թ. հուլիսի 27-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—57): Առաջին անգամ լույս է տեսել «Արարատ», 1908, № 2: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Ձեռագրում.

- 2 Հանգչում է բնություն անխուռն երազով
 6 Նազելի բույրը վարդն է պարզեում
 8 Առաջին սիրո շունչըն է հուզում
 9 Եվ ես զոհ բերի մի այսպես գիշեր
 10 Իմ մանուկ սիրտը նենդալոր կուսին
 11 Նախկին հանդիստը, անցան տարիներ
 12 Էլ հեռ չստացավ իմ տանջված հոգին

71 «ԵՍ ՓԱՌՔ ՉԵՄ ՈՒՋՈՒՄ, ՈՍԿԻ ՉԵՄ ԽԵՂԻՐՈՒՄ»

Գրել է 1887 թ. սեպտեմբերի 24-ին: Պահպանվում է մատիտով գրված ինքնագիրը (ՀՀա, I—61): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Այս նույն թեմային, առաջին տողի համարյա կրկնությամբ («Ես փառք չեմ խնդրում, ոսկի չեմ ուզում») բանաստեղծը վերադառնում է նույն թվականի նոյեմբերի 12-ին: Այդ ոտանավորը զետեղված է Սևագրություններ և ֆրագմենտներ բաժնում:

72 «ԻՆՉՊԵՍ ՔԱՂՅՐ ԵՐԱՋ ՕՐԵՐՈՂԻ ԿԱՆՅՆՆՆ»

Գրել է 1887 թ. սեպտեմբերի 26-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա,

1—38): Առաջին անգամ լույս է տեսել 1889-ին, «Հանդես գրականական և պատմական» երկրորդ գրքում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ձեռագրում.

15 [Բայց արդեն դեռին տապալած <?>] [

16 [Մատաղ տունկին էլ գլուխ է խոնարհում] Կրմնա մեճակ, հուսահատ, տրտու՜մ

73 «ՄԱՔՈՒՐ ՕՐԵՐԻ ԱՆՈՒՇ ԵՐԱՋՈՎ»

Գրել է 1887 թ. նոյեմբերի 8-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, 1—63) առաջին անգամ:

Ձեռագրում.

15 [Արդյոք] Պիտի շանթի մեզ խարդախ օձի պես

74 «ԹՈՒՅԼ ՏՈՒՐ, ԻՄ ՀՈԳՅԱ՛Կ, ԿՈՒՐԾՔԻԳ ԽՈՆԱՐԱՄ»

Գրել է 1887 թ. դեկտեմբերի 19-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, 1—210) առաջին անգամ:

75 ՆՈՐ ՏԱՐԻ

Գրել է 1887 թ. դեկտեմբերի 19-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, 1—62) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, 1—63): 1908 թ. հրատարակության մեջ հեղինակը չի մտցրել բանաստեղծության վերջին ութնյակը.

Բայց ես լսում եմ. [անմեկին] կախաբղիչ մի ձայն,

Ինչպես մրմունջը արաջին սիրո,

Ինչպես թոթովանք մանուկ բերկրության

Ինչպես լուսավոր հրեշտակը հուսո,

Մեղմ շնչում է ահա ականջիս.

«Ներջանիկ է նա, որ այս ցուրտ ձմրան

Մահու շղթայքը շուրջը տեսնելիս

Գեռ երազում է հրաշքները գարնան,...

Առաջին անգամ լույս է տեսել «Աղբյուր», 1888, № 1:

Առաջին ձեռագրում.

6 Փոթորիկն անցավ. հասավ վառ դարուն

7 Բազը մարդկության բերեց նոր տարի

8 Փրկության այգը, լույս, սեր, գիտություն

11 Մանրացան [դարձյալ] նորից իմ սրտի վրա

Երկրորդ ձեռագրում.

6 Փոթորիկն անցավ, հասավ վառ դարուն

7 Բաղդը մարդկության բերեց նոր տարի

8 Փրկության այգը, լույս, սեր, դիտություն

76 «ԹԵՊԵՏ ԽԵՂԴՎԱՆ ԵՄ ԵՍ ԴԱԺԱՆ ՎՇՏԻՅ»

Գրել է 1887 թ. դեկտեմբերի 25-ին: Պահպանվում է սեպտեմբեր (ՀՀա, I—64): Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Ձևագրում.

1 Թեև խնդրված եմ ես դառն վշտից

3 Թեև մինչ այսօր խաբված եմ կյանքից

4 Կարոտ տեսնելու անկեղծ սեր, դորո՞ւ

5 Թեպետ դառնությամբ իմ հոգին լցված

6 Միշտ գանգատվում եմ շար բաղդին վերա

13 Թե արժաթափայլ [<աճե՞ր. >] ամոթխած լուսին

15 Թե [իմ միշտ մատաղ սիրատենչ հոգին] ծով-ծով աչիւն անճաման
կուսի՞ն

16 [Հրացայտ աշաց կարոտով կարվի <?>] Սիրտս անուշ տենչով դեռ
նուզե՞ն պիտի:

ԲԱԼԼԱԴՆԵՐ ԵՎ ՊՈԵՄՆԵՐ

1 ԱՐՏԱՎԱԶԴ

Գրել է 1887 թ. փետրվարի 18-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Հովհաննիսյանի բալլադի համար հիմք է ծառայել Խորենացու պատմության հետևյալ հատվածը.

«Յևտ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա...

Զամանէ երգիչըն Գողթան առասպելաբանն այսպէս. եթէ 'ի մահուանն Արտաշիսի բաղում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց գժուարի, ասեն, Արտաւազդ՝ ասելով ցճայրն. Մինչ դու գնացիր, և զերկիրս ամենալն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞րպէս թագաւորեմ: Վասն որոյ անիծեալ զնա Արտաշիսի՝ ասաց այսպէս. եթէ դու յորս հեծցիս յազատ ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յազատ ի վեր ի Մասիս, անդ կացցես, և զլոյս մի՛ տեսցես:

Զրուցն զամանէ և պառաւունք, եթէ արգելեալ կա՛յ յայրի միում՝ կապեալ երկաթի շղթայիւք, և երկու շունք հանապաղ կրծկով զշղթայսն, ջանա ելանել և առնել վախճան աշխարհի. այլ 'ի ձայնէ կռանարկութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն: Վասն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ՝ բազումք 'ի դարբնաց, զհետ երթալով առասպելին, յաւուր միաշաբաթուոյ երկուց

կամ չորիցս բախեն դստին, զի դօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ»
(Խորենացու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 189—190):

Ձեռագրում.

- 23 Սպասում ենք մենք դեռ ևս գեղեցիկ օրեր
26 Բարբառը սուրբ սիրո, և վերածնության
27 Ավազան նոր կյանքի մեղ չէ փրկելու
34 Բայց ո՛չ, մենք փրկության դեռ հավատում ենք
36 Եվ ահա փայլակը արդեն տեսնում ենք
Առաջին հրատարակության մեջ.

- 23 Սպասում ենք մենք դեռ ևս գեղեցիկ օրեր
26 Բարբառը սուրբ սիրո, և վերածնության
27 Նոր կյանքի ավազան մեղ չէ փրկելու
34 Բայց ո՛չ, մենք փրկության դեռ հավատում ենք
36 Եվ ահա ծխածանն արդեն տեսնում ենք

2 ՎԱՀԱՄԱՆԻ ԾՆՈՒՆԳԸ

Գրել է համարներն 1904 թ.: Պահպանվում է ինքնագիրը՝ «Վահագնի ծնունդը (բալլադա)» խորագրով (ՀՀա, I—116): Տպագրվում է ըստ ինքնագրի: Առաջին անգամ լույս է տեսել «Մուրճ», 1904, № 1, կրճատված, առանց վերջին չորս տողերի: Երկրորդ անգամ, լրիվ, «Գեղարվեստ» 1908, № 1, խմբագրի հետևյալ ծանոթությամբ.

«Այս բանաստեղծությունը, երբ դեռ չէինք վայելում տպագրական խոսքի ազատությունը, «Մուրճ» ամսագրում լույս տեսավ կրճատված. այժմ մենք հնարավորություն ունինք տպագրելու լրիվ, յուր ամբողջությամբ»:

Հովհաննիսյանի բալլադի համար հիմք է ծառայել Խորենացու պատմության մեջ եղած հետևյալ հատվածը.

... «Գործէ ասեն առասպելը. Երկնէր երկին և երկիր. երկնէր և ծիրանի ծով, երկն ՚ի ծովուն ունէր վկարմրիկ եղեղնիկն. ընդ եղեղան փող ծովս ելանէր, ընդ եղեղան փող բոց ելանէր և ՚ի բոցոյն պատանեկիկ վաղէր. նա հուր հէր ուներ. ապա թէ բոց ունէր մօրուս, և աչկունքն էին արեղակունք» (Խորենացու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 87):

Ձեռագրում.

- 7 Բոց է պատել կարմիր եղեղնիկ
18 Սաստում են ալայցն հրավառ շրթունք

3 ՍՅՈՒՆՅԱՅ ԻՇԽԱՆԸ

Գրել է 1887 թ, փետրվարի 17-ին: Պահպանվում է սեպտուբրյանը, խորագրված «Վաստակ» (ՀՀա, I—50), գրաքննությանը ներկայացրած տետրում հեղինակային մի պատճենը (ՀՀա, I—18) և մի արտագրված օրինակ (ՀՀա, I—49), որ սակայն թերի է, մինչև 98-րդ տողը:

«Սյունյաց իշխանը» Հովհաննիսյանի այն հաղվազյուտ ստեղծագործություններից է, որը եթե ոչ բացահայտ թշնամարար, ապա, համեմայն դեպս,

տարակուսանքով է ընդունվել քննադատության կողմից: Ի՞նչպես է պատահել, որ հայրենասեր բանաստեղծը փորձել է արդարացնել հայրենիքի այնպիսի մի դավաճանի, որպիսին է Վասակը, այն Վասակը, որի անունը նշանակվել է դարեդար, սերնդից սերունդ, համարվել սխմելու ազդու րացության... Ոմանք փորձել են շտեմանելու տալ այդ գործը՝ խնայելու համար բանաստեղծին, մյուսները ջանացել են բացատրել այն, բայց դրանով տարակուսանքը չի փարատվել:

Նախ պարզենք մի հարց. ի՞նչպես կարող էր երիտասարդ բանաստեղծի մոտ առաջանալ այդպիսի հանդուգն մի միտք. վերանայել տրագիկոն կարծիքը Վասակի մասին, այլ մեկնաբանություն տալ նրա պատմական նկարագրին, ի՞նչպե՞ս կարող էր մղումն հանդիսանալ այդպիսի մի գործի համար: Այդպիսի մղում է հանդիսացել, հավանորեն, Նազսունի «Հուզան», մի երկ, որ այդ տարիներին բուռն վեճեր էր առաջացրել ընթերցողների շրջանում: Փիլիսոփայական պրոբլեմը՝ Չարի մեջ տեսնել բացասող, ժխտող ուժը, — գալիս էր, իհարկե, հինից, բայց իր փայլուն արտահայտությունն էր գտել Միլտոնի Սատանայի, Գյոթեի Մեֆիստոֆելի, Լերմոնտովի Գեի մեջ: Բնավ այս մասշտաբով չի վերցված Նազսունի Հուզան, բայց որ նա հանդես է գալիս առավելապես իրրեւ մի մեղանշող, զղջացող մարդ, — արդեն խախտում էր եկեղեցու կողմից սրբագործված պատկերացումը:

Հովհաննիսյանի թեման բոլորովին այլ է, իհարկե: Ազգային-ռոմանտիկական պիեսները վաղուց արդեն հոգնեցրել էին հայ հասարակությանը կեղծ Վարդաններով և նույնքան կեղծ Վասակներով. դրանց խոսքը բնմիջ բաղձից կրկնված հայրենասիրական ճառեր էին. բացակայում էր կենդանի, ինքնատիպ միտքը, չկար կենդանի մարդը:

Ահա՛ թե որտեղից էր գալիս Վասակի կերպարի նոր մեկնաբանման պահանջը: Նազսունի «Հուզան» դրական առիթ էր սոսկ, ուրիշ ոչինչ, Հովհաննիսյանը տվել է բոլորովին ինքնուրույն, խորապես մտածված մի գործ, նրա Վասակը ճշմարիտ դրամատիկական կերպար է. մտքերից այրված նրա ուղեղը նույնիսկ ծերության օրերին շարունակում է վերմբռնել իր արարքը, շուրջը կատարվածը: Մի՞թե ինքը դավաճան է իրոք, մի՞թե ինքը պակաս չի ատում Հազկերտին և չի ցանկանում հայրենիքի անկախությունը: Հապա ինչո՞ւ չեն հասկանում, չեն ընդունում իրեն իր զավակները, չի ընդունում հայրենիքը: Նա մեկ մտածում է, որ հայրենիքի դատավճիռը ճիշտ է, մեկ՝ ըմբոստանում է դրա դեմ, ապա նորից հանդում այն դառն ճշմարտությունը, թե միանգամայն իրավացի է ժողովրդի կարծիքն այն մասին, որ «Անարգ Վասակը մատնեց հայրենիք»:

Այսպիսով, ետ տալով իր հերոսին տառապելու իրավունքը, այսինքն՝ դարձնելով կենդանի մարդ, որը հանիրավի խլել էին նրանից ոչ միայն մեք պատմաբանները, այլև արվեստագետները, — բանաստեղծը բնավ էլ չի արդարացնում նրա դավաճանությունը: Այդ դավաճանությունն այժմ շատ ավելի ծանր է ու դարձուրելի, քանի որ դուրս է կորզված բուն իսկ դավաճանի շուրթերից:

Այս է ահա Հովհաննիսյանի պոեմի էությունը և ինչ չհասկացան նրա քննադատներից ոմանք, հասկացավ մի մարդ, որին և պատկանում է Վասակի գեղարվեստական (և պատմական, իհարկե) ճշմարիտ կերպարն ստեղծելու պատիվը. դա Գեղեցիկ Գեմիրճյանն է: Ծիշտ այնպես, ինչպես «Վարդանան-րի» ընթերցողները չեն տարակուսում հեղինակի վերջնական դատավճռի համար Վասակի նկատմամբ, այդպես էլ չեն տարակուսում այդ մասին «Սյունյաց իշխանի» լրջմիտ ընթերցողները:

Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. Ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Առաջին ձևագրում.

8 Որ մանկական [մենք հրճվանքով] բերկրությամբ անմիտների

9 Առաջին ենք [սփռում փառքով] մենք տարածում, և մի նըշան

Շարունակության մեջ ջնջված է հետևյալ հատվածը՝

[Մենք որ սովոր ենք միշտ մընալ գերի

Կանխակալ կարծյաց, մենք անփույթ կերպով

Մի ավանդություն անցած դարերի

Պատրաստ ենք կրկնել անհաշիվ խոսքով

Որի նախատին դափնի ենք տեսնում.

Գոչում ենք. «սա է մեր կուտը անմահ»

Հասկանալ բընավ էլ չենք կամենում—

Անմահությունը ո՛րքն է նորա:

Եվ ոտքի կոխան շարախինդ կերպով

Դարձնում ենք նորան, որի հրեմին

Նշավակության անարդ դրոշմով

Կարողում ենք անեծք մեր նախորդներին...]

13 Բայց [մեր կուտերի բաղմաթիվ խմբից] [անցած ավուրց] այդ անցյալի խորին խալաբից

19 Սե դրոշմի տակից [նորա] մաշված ճակատի

36 [Հեռու] ել զու, անողորմ, թշվառ հայրենիք

57 [Ուրուրի նըման] նուտի պես խեղդել յուր մազիկներում

58 [Խեղդել [ինչպես] ճուտի պես] ինչպես մի ուրու... Դու թաղից գրկված

63 Մի [խաղաղ] հանդարտ լուսով ճրագն էր վառվում

65 Ոհ, հեռու սիրուն, թշվառ [ուրվականներ] զավակներ

94 [Սեղանի] Սուրբ ազատության սեղանի վերա

113 Չարատանջ հողիս գոռ [կովի] մարտի դաշտում

129 Չէ ներումն երբեք [չէ] բաժին մատնության

132 Շրթունքըդ ինձ միշտ պիտի [անիծեն] նըզովեն

Երկրորդ ձևագրում.

8 Որ մանկական մենք հրճվանքով անմիտների

9 Առաջին ենք սրփռում փառքով, և մի նըշան

20 Ես նորա այրող տանջանքն եմ կարդում

ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ

1 Ե Ր Գ

Դրեւ է 1880 թ. ապրիլի 7-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—1)
առաջին անգամ:

2 ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Դրեւ է 1880 թ. ապրիլի 16-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—1)
առաջին անգամ:

3 Գ Ի Շ Ե Ր

Դրեւ է 1880 թ. ապրիլի 29-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—1)
առաջին անգամ:

4 «ՍԵՐ ԴՈՒ, ՍՐՏԻ ՊԱՅՄԱՆ ԶԱՀ»

Դրեւ է 1880 թ. ապրիլի 30-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—1),
առաջին անգամ:

5 «ՆԱ ԷՆ ԷՐ ՊՈՆՏ ՎԱՂ ԺԱՄԱՆԱԿՈՎ»

Դրեւ է 1880 թ. ապրիլի 30-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—1)
առաջին անգամ:

6 «ԿՈՒՅՍ ԴՈՒ ՉՔՆԱՂ, ԿՈՒՉԵՍ ԺՊՏԱՂ»

Դրեւ է 1880 թ. մայիսի 8-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—2)
առաջին անգամ:

7 ՍԻՐՈ ԱՍՏՂ

Դրեւ է 1880 թ. մայիսի 12-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—2)
առաջին անգամ:

Ձեռագրում.

14 Կլավեն [խորքից] [մոտքից] աստից

16 Կոռնեն [կրկնուղից] անից

8 Մ Ա Յ Ի Ս

Դրեւ է 1880 թ. մայիսի 15-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—2)
առաջին անգամ:

9 «ՔԵԶ ՍԻՐՈՒՄ ԵՄ, ՄԱՆՈՒՇԱԿ»

Դրեւ է 1880 թ. մայիսի 19-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—2)
առաջին անգամ:

Ձեռագրում.

5 Բայց իմ [սիրտը] հոգին սիրազգաց

10 Գ Ն Տ Ա Կ

Դրեւ է 1880 թ. մայիսի 22-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—5)
առաջին անգամ:

11 «ԱՅՆ ԻՆՉ ԱԶԳ Է, ԱՅՆ ԻՆՉ ՑԵՂ Է»

Գրել է 1880 թ. մայիսի 22-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, 1—5) առաջին անգամ:

12 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Գրել է 1880 թ. մայիսի 23-ին: Սկզբնապես վերնագրված է եղել «Բարի մարդիկ»: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—5) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 4 Մնա՛ աներկյուղ [մեր] դու հաստափոր աղայից
9 Կյանքիս նավի ես իմ ղեկը [ծուռ] քյուր շավղից
12 [Բարոն] Լավին էի ուղում դիմել զգաստացած
14 Որովհետեւ... [որովհետեւ] նոցա խառն էր շատ բարի
17 [Եվ մանավանդ այս վերջինը... Ա՛խ, ոսկի]
18 [Շողոքորթել լուկ քեզ համար եմ պատրաստի]

13 «ՃԱԿԱՏԸԴ ՊԱՅԾԱՌԻ ԴԱՐՆՈՎ ՊՍԱԿԱՆ»

Գրել է 1880 թ. մայիսի 28-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—5) նվիրված է Միքայել Նալբանդյանին: Առաջին անգամ լույս է տեսել ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 1:

Ձեռագրում.

- 13 Բայց [թշվառ է չէ] վաճառակապառ դու խավար խորշում
14 [Խոնավ անկյունում] օտար աշխարհի աչերդ փակեցիր

14 ԹԵ ԼՈՒՍԱՆՈՒՄ Է

Գրել է 1880 թ. մայիսի 29-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—5) առաջին անգամ:

15 Զ Ա Ն Գ Ի

Գրել է 1880 թ. մայիսի 30-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—5) առաջին անգամ:

16 ՔԱՐԱԺԱՅՈՒ

Գրել է 1880 թ. մայիսի 30-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—5) առաջին անգամ:

17 «ՄԸԹԻՆ ԳԻՇԵՐԻՆ ԽԱՎԱՐ ԵՐԿՆՔՈՎ»

Գրել է 1880 թ. հունիսի 4-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—5) առաջին անգամ:

18 ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Գրել է 1880 թ. հունիսի 5-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—5) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 3 Ուր քաղցրատես [աշխույժ] քո սև աչքունք
5 [Մարգարտափայլ] Ուրախությամբ աշխույժ ջրերի

12 Որով օրերդ [սահում են] կբաճեն

13 Թո՛ղ, նազելի՛, կենացդ [լուսինը] կամար

19 ԿԱԼԱՆԱՎՈՐ

Գրել է 1880 թ. հունիսի 11-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—5): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

20 Ն Ա Վ Ա Կ

Գրել է 1880 թ. հունիսի 12-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—5): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

21 «ԵՐԲ ԵՍ ԿԻՋՆԵՄ ԳԵՐԵՋՄԱՆ»

Գրել է 1880 թ. հունիսի 13-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—5) առաջին անգամ:

4 Հեռու [< 1 անընթ. >] կլինիմ ախտերից

15 Թող [նվազե] երգ երգե նա միայն

17 Որի [< 1 անընթ. > ու մնչիկ] սիրտը սպառկալիմ

22 NNN

Գրել է 1880 թ. հունիսի 13-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—5) առաջին անգամ:

23 Ս Ո Ն Ե Տ

Գրել է 1880 թ. օգոստոսի 12-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—5) առաջին անգամ:

Ձեռագրում.

7 Չքնադ պատկերն տեսնում [ափում] չբում

24 ԱՌԱՋԻՆ ՍԵՐ

Այս բանաստեղծության առաջին երեք տունը առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում հետևյալ ծանոթագրությամբ. «Ինքնագիրը (ՀՀա, I—6) թվագրված չէ, բանաստեղծությունը գտնվում է մի տետրում, որտեղ հավաքված են գրեթե բոլոր այն երկերը, որոնք հորինվել են 1880-ին»: Հրատարակչի աչքից վրիպել է շարունակությունը, որ դարձյալ լուսանցքում, թերությունը գրված է հաջորդ էջում (ավելի ճիշտ՝ նախորդ, քանի որ այս տետրը, ինչ բմահաճ տրամադրությամբ, դժվար է ասել, էջակալված է վերջից դեպի սկիզբը) և նշված է թիվը՝ «1880, սեպտեմբերի 2»: Այսպիսով, բանաստեղծության օրգանական շարունակությունը կազմող վերջին չորս տնե-րը հրատարակվում են առաջին անգամ:

Ձեռագրում.

11 Եվ մերթ [< 1 անընթ. >] կուզեի գիտենալ ինչ կա

23 Հասկացա [Ինչ էր քեզի խոտվում] երեսդ է՛ր է՛ի դարձնում:

25 «ՈՍՍԻՈՒ ՈՒ ԱՐՄԱԹ ՔՈ ՍԸՆԴՈՒԿՆԵՐՈՒՄ»

Գրել է 1880 թ. սեպտեմբերի 3-ին: Այն հանդամանքը, որ ձեռագիրը գետնադրած է «Փինաչի» չափածո հեքիաթի վերջում («Երկերի ժողովածու», հատոր առաջին: էջ 441), (ՀՀա, I—6), հիմք է տվել Ռ. Զարյանին իրավացիորեն կարծելու, որ սույն բանաստեղծությունը պետք է հանդիսանար «հեքիաթի բարոյական իմաստն ամփոփող վերջը»: Առաջին անգամ հրատարակվել է այս հեքիաթի ծանոթություններում:

26 Ա Շ Ո Ւ Ն

Գրել է 1880 թ. սեպտեմբերի 3-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—5): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ձեռագրում.

4 Զարդից [ծառերն] անտառն զրկեց 'ւ ևրդից նա անույշ:

27 ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳ

Գրել է 1880 թ. սեպտեմբերի 10-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

Ձեռագրում.

23 [Պայծառ] Սիրուն դեմքիդ նախանձում

27 [Թռիլ] Արի', հոգիս սփռիլի'

28 «ԱՇԽԱՏՆՅԱՔ ԱՆՆՈՆՁ, ԽԵՂՃԵՐ»

Գրել է 1880 թ. սեպտեմբերի 11-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

7 [Ձեր] Դառն բրտիքով էիք ջրում

12 Ձեզ կերակ[ընդ]ուր տալու չէ

29 «ԾԱՂԿԱԶԱՐԳ Է ՀՈՎԻՏ»

Գրել է 1880 թ. սեպտեմբերի 11-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

30 Ե Ր Ա Ձ

Գրել է 1880 թ. սեպտեմբերի 14-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

Ձեռագրում.

4 Առ ժամ քեկ լոկ հանգ[իստ առավ] յալ

31 «ԿԱՐՄՐԱԹՈՒՇԻԿ ՎԱՐԴՆ ԱՍԱՅ»

Գրել է 1880 թ. սեպտեմբերի 16-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

32 ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Գրել է 1880 թ. սեպտեմբերի 18-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա,

1—6): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում, թյուրիմացաբար առանց թվագրության: Տպագրվում է բոլոր ինքնագրի:

Ձեռագրում.

- 5 Երբ անհոգ լարերն [անմիտ] անուշ բերկրությամբ
10 Կորցրած իդեալն [սիրուն] չհնազ յուր սրտի

33 «ԻՐԻԿԱՆ ՅՈՂԸ ԹԱՎՇՅԱ ԱՐՈՏԻՆ»

Գրել է 1880 թ. սեպտեմբերի 20-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 6 [Սևազղեստ] Պարզ գիշեր սիրուն և վառ փայլեցան
20 [<4 անընթ.] Բեզ պիղծ ոտների անում է կոխան:

34 ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Գրել է 1880 թ. հավանորեն սեպտեմբերի 30-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 3 Անդրանիկ որդուն ղեպ դաշտն [Արևի] մարտի
15 [Պաշտպան մեծ] Եվ վսեմ գործին անվահեր պաշտպան
20 Կարմրաթուշ վարդեր [սիրունիկ] զեղեցիկ փայլով

35 «ԿՈՒՅՍ ՀՐԱՇԱԳԵՂ, ԿՈՒՅՍ ՆԱԶԵԼԻ»

Գրել է 1880 թ. հոկտեմբերի 2-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 4 [Վշտերն] Վերբերն նորից բաց անում
14 Ես [կենարար զով] զովարար հեշտ ալիք
18 [Պայծառ երկնից] Սիրուն հովտի զարդ ու պսակ
19 Սիրո երգեր [քեզ] Բաղդ հեշտալի
21 Եվ իմ [հոգին] սիրտը քեզնով ալրված

36 «ԱՆ, ՀԱՆԳԻՍՏ ԱՌ ԵՎ ԱՆՅՅԱԼԸ ՄՈՌԱՅԻՐ»

Գրել է 1880 թ. հոկտեմբերի 6-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

37 ՊԱՏԿԵՐ

Գրել է 1880 թ. հոկտեմբերի 13-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

38 ԱԶԵՐ

Գրել է 1880 թ. հոկտեմբերի 15-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 7 [Մրահոն հոնքերից] Կամարաձև հոնքիդ տակ

Գրել է 1880 թ. հոկտեմբերի 15-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—6): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ձեռագրում.

25 [Բայց բունս փախավ] Ես զարթեցա... աչերս բաց են...

26 [Հորդ վազել են արցունքներ] Ասացե՛ք, այն երա՞գ էր

40 ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵՎ

Գրել է 1880 թ. հոկտեմբերի 15-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—6): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ձեռագրում.

1 Տխրադին քամին [փչում] սուլում է, հեծում

4 Լուռ [է կամաց] վտակի խաղաղ մրմունջը

18 [Անմխիթար] Անսխիթ մենակ սգավոր մնաց

41 Ա Ր Տ Ո Ւ Տ

Գրել է 1880 թ. հոկտեմբերի 17-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—6): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

42 «ԾԱՂԻԿ ԹԱՌՄԱԾ, ԾԱՂԻԿ ՉՈՐՅԱԾ»

Գրել է 1880 թ. հոկտեմբերի 27-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—6): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ձեռագրում.

13 Գիտե՞ս ծաղիկդ ինչ [դառն ես] արցունքով

15 [Ծաղիկդ... ինձ սիրիր] Հողյակ, ինձ սիրիր

20 [Մոտ] Կից եմ քեզ հոգով

43 «ԿՈՒՋՆԻ ՄԵՌՆԵՆ... ԲԱՅՅ ՄԱՀՍ ՄՈՏ ՉԷ»

Գրել է 1880 թ. հոկտեմբերի 29-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

Ձեռագրում.

6 Բայց ինչպես [քեզ] մոռնամ [դու] Բեզ, իմ սեր անգին

7 Վրաս գոռում են [երկինքը] ամպերը խավար

44 Ա.Ե, ԻՆՉ ԵՄ ՈՒՋՈՒՄ

Ինքնագիրը (ՀՀա, I—6) թվագրված չէ, բայց ուսանավորը պետք է որ գրված լինի 1880 թ. հոկտեմբերին, քանի որ զետեղված է այդ ամսին գրած բանաստեղծությունների շարքում: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

45 ԸՆԿԵՐԻՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Գրել է 1880 թ. նոյեմբերի 3-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

Զեռագրում.

11 [Քաղցրը հրդերը դադարիլ չեն] [Ազատ] Անոգ կերգեն ազատ քաղում

12 [Շիրմիդ վրա բո սիրազգաց] Շուրշը նորա երգ սիրազգաց

16 Քեզ չի հասնիլ խոխոջն [վտակին] առվին...

19 [Ավադ, պատկերդ] [Իբրև գարուն] Միայն այլևս [Բայց] թո գեղեցիկ

20 [Նորից] Պատկերդ հրերք [լույս չի տեսնի] մեզ չի ժպտի

46 ՏԵՍԵՂ ԵՍ ԿՈՒՍԻՆ

Գրել է 1880 թ. նոյեմբերի 10-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

Զեռագրում.

16 Անուշ ժպտ [հեշտ] փափկության

21 Հանդարտ [սիրտը] կուրծքը բարախում է

47 «ԴՈՒ ԻՄ ՍԻՐՏԸ ԿԱՄԻՍ ՏԵՍԻՆԷԼ»

Գրել է 1880 թ. նոյեմբերի 11-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—7): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է առաջին անգամ:

48 «ՍԻՐՏԸ ՄԱՇՎՈՒՄ Է ՕՏԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

Գրել է 1880 թ. նոյեմբերի 12-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

Զեռագրում.

10 Ինձ հեշտ էր մոռնալ [շուտով իմ անձը] իմ գոլուրդունը

49 Շ Ո Ւ Շ Ա Ն

Գրել է 1880 թ. նոյեմբերի 14-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—7): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

50 Գ Ի Շ Ե Ր

Գրել է 1880 թ. նոյեմբերի 17-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

51 «ՆՍՏԱԾ ԷՒ ՄԵՆԱԿ ՏՆՈՒՐ»

Գրել է 1880 թ. նոյեմբերի 17-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

Զեռագրում.

2 Առջև վտակն էր [խոխոջում] սառնում

52 ԱՆՐԱՂԻՒ ՏՐՏՈՒՆԶ

Գրել է 1880 թ. նոյեմբերի 24-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—7): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ձևագրում.

- 5 ես [հուսացի] լսեցի... տես[եմ] յա միայն
7 եվ ոչ մի խոսք [մխիթարական] ավուփական
10 եվ բողոքել [կամեցա] [ցանկացա] ես կամեցա
13 [Ան] եվ անդունդ եմ [Ահա առջես] առջես տեսնում [եմ]
14 Մի փոքրը էլ—և ես [մեռ] կորա

53 ՄԱՏԱՂՀԱՍ ԵՐԳԻՉԸ

Գրել է 1880 թ. նոյեմբերի 28-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

54 ՉՄԵՌ ԵՎ ԳԱՐՈՒՆ

Գրել է 1880 թ. նոյեմբերին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

Ձևագրում.

- 4 Հովտի վրա [ձյուն է գալիս սաստկացած] իբրև այրի սուգ կապած
8 Ո՛հ, ձմեռ է [չկա ծաղիկ ու թռչնակ] դաշտ ու անտառ սպիտակ
10 Իբրև [անբաղդ] մի կույս հետ գեղեցիկ յուր զարնան
14 [եվ ծերունի] Քուն է մտնում հանգիստ առնել ծերունի

55 Ն Վ Ե Ր

Գրել է 1881 թ. հունվարի 13-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

Ձևագրում.

- 1 Քեզ է մատաղ Մուղաս [նվիրում] ձոնում

56 «ՆՈՐԻՑ ԿԵՆԱՑ ՇՈՒՆՁՆ Է ՓՉՈՒՄ»

Գրել է 1881 թ. ապրիլի 27-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

Ձևագրում.

- 23 եվ ասում եմ. [խոսում իղուր?] Աստված, դու տուր
24 [Կյանքի] Այսպես երկար ինձ օրեր

57 Հ Ր Ե Շ Տ Ա Կ

Գրել է 1881 թ. ապրիլի 28-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

58 «ԵՐՐԵՄՆ ԻՆՁ ՈՍԿԻ ԱՐԵՎ»

Գրել է 1881 թ. նոյեմբերին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

Գրել է 1882 թ. մարտի 25-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—7): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Զեռագրում.

3 Ո՞վ է ընկած [ասես] զերդ անդգա

9 Եվ [խղճուկը] քշվառը լալ է ուղում

60 Մ Շ Ա Կ

Գրել է 1882 թ. ապրիլի 6-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

Զեռագրում.

12 [նոր մանուկ] Այնտեղ հեռու վեց զավակներն

13 Եվ այս հարուստ [շոալը?] անսիրտ անձինք

61 ՆՈՐ ԳԱՐՈՒՆ

Գրել է 1882 թ. ապրիլի 18-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—7) առաջին անգամ:

62 «ԴՈՒ ՀԱՐՈՒՍՏ ԵՍ, ԿՅԱՆՔԳ ԱՆՆՈՐ»

Գրել է 1882 թ. սեպտեմբերի 27-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—7): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Զեռագրում.

5 [Եվ պահում ես] Հույս ես տալիս քեզ միշտ վսեմ

63 «ՀԱՎԱՍՏԱՑԵՔ, ԴՈՒՔ ՀԱՅԱՍՏԱՆ»

Գրել է 1882 թ. սեպտեմբերի 27-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—10) առաջին անգամ:

Զեռագրում.

3 Եթե կուզեք [նորան] տեսնել նորան

7 Եվ [չեք երբեք դուք] չեմ ասիլ ձեզ ղզայուն

8 Դիմին [լեզուքդ երբ բանա] այդպես քե ցույց տա

64 ՀՐԱԺԵՇՏ

Գրել է 1882 թ. հոկտեմբերի 17-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—10): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

65 ՀԱՅ ՄԱՆՈՒԿ

Գրել է 1882 թ. հոկտեմբերի 27-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—10) առաջին անգամ:

Գրել է 1882 թ. նոյեմբերի 7-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—10): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածո»-ում: Տպագրվում է բոլոր ինքնագրի:

Զեռագրում.

11 Մեկը կանգնած է [կա] լալադին

23 [միմե քեզ էլ] Բայց և նորան նույն մի հողից

67 ԿՅԱՆՔ

Գրել է 1882 թ. նոյեմբերի 11-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—10) առաջին անգամ:

68 ՆՈՐ ՏԱՐԻ (1883)

Գրել է 1882 թ. դեկտեմբերի 13-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—10) առաջին անգամ:

69 ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրել է 1882 թ. դեկտեմբերի 21-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—10) առաջին անգամ:

Զեռագրում.

23 Երբ կովի [դուռը] խրոխտ փողըն են լսում

70 ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻ ԵՐԱԶՐ

Գրել է 1883 թ. մարտի 8-ին: Վերնագիրը նախապես եղել է «Երկրագործի երգեր»: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—10) առաջին անգամ:

71 ԱՌԱՋԻՆ ԶՈՀ

Գրել է 1883 թ. մարտի 9-ին: Հավանորեն նվիրված է Միքայել Նալբանդյանին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—10): Առաջին անգամ լույս է տեսել ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 1:

72 «ԵՐՐ ՈՐ ՆԱՏԱԾ ԵՄ ԵՐԲԵՄԵ ՍՐՏՆԵՂԱԾ»

Գրել է 1883 թ. մարտի 11-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—10) առաջին անգամ:

Զեռագրում.

20-րդ տողից հետո ջնջված է հետևյալ հեղյակը.

[«Իսկ չե՛ն դրավում քեզ աչիր կուսի»:

Հա՛, բայց ասացե՛ք, դուք ճանաչո՞ւմ եք

Այն դուստր բնության չքնաղ, նազելի.

Այն աչիր հրացայտ, իրան դուրաթեք,

[Այն այրող շրթունք] Այտե՛ք վառվառում, սե մազեր բեկրեկ...]

73 «ԱՆՅԱՎ ՅՆՈՐՔԻ ԺԱՄԸ ԽԱՐՈՒՍԻԿ»

Գրել է 1883 թ. մարտի 20-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—10) առաջին անգամ:

74 Ե Ր Գ

Գրել է 1883 թ. ապրիլի 1-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—10) և սրա պատճենը (ՀՀա, I—15): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

75 Ա Ր Ե Վ

Գրել է 1883 թ. նոյեմբերի 12-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—10): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

76 Ձ Մ Ե Ռ

Գրել է 1883 թ. նոյեմբերի 13-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—10): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

77 «ՏԵՈՒՐ Է ԳՈՒՐՍԸ, ՄԹԻՆ ՈՒ ԽՈՆԱՎ»

Գրել է 1883 թ. նոյեմբերի 14-ին: Պահպանվում են երկու ինքնագիր. առաջինը (ՀՀա, I—14)՝ մատիտով գրված սևագրությամբ և սրա մաքրագրած օրինակը (ՀՀա, I—214): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ավարտված ինքնագրի:

Մաքրագրության մեջ բանաստեղծը կրճատել է հետևյալ երեք բառատողերը.

Ահա՛ նա, որ ինձ այնպես զգայուն
Հայտնեց յուր սերը խորամանկ, խարդախ
Նա՛, որ գուշակեց ինձ երջանկություն,
Եվ ոսկի օրեր և կյանք միշտ խաղաղ:

Ահա՛ նա, օձի չարափուն լիզվով,
Բայց լույս աշերով իբրև մայիսյան
Սիրուն առավոտ, նա որ ժպիտով
Մի վերք մահացու կըտա հոգեկան:

Եվ ես տանջվում եմ խարդախ հայացքից
Այդ չքնա՛ղ կուսի, նազելի կուսի,
Իսկ նա ինձ լինել չուզե վշտակից,
Չարատանջ հոգիս տեսնել չըկամի...

Առաջին ձևագրում.

4 Իմ հոգին [մռայլ] խավար և անկարեկից

19 [Երեւակայիւ ես սկսում եմ] եւ Խիստ ցնորք ինձ նկարում եմ
23 Ա՛խ, [գոնե] երեւ սրտիս դառնությունն հայտնիւ

78 «ՍԻՐՈՒՄ ԵՄ ԵՐԵՄՅԱՆ՝ ԵՐԵ ՄԱՆՐԱՆՈՒՄ Է»

Գրել է 1883 թ. նոյեմբերի 18-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14)՝ մատիտով գրված և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—26): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնէր 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևագրում.

9 Սիրում եմ [սլանալ] թռչել սլանալ հեռու

32 Թշվառի համար միշտ կա սփոփոթյուն

Երկրորդ ձևագրում.

21 Այնտեղ աղբյուրներ [ցոլուն] վրնիտ զինչ բյուրեղ

24 Միշտ պարզեւում է [միշտ] ձեզ յուր բարիքներ

32 Ուր թշվառ [ի համար միշտ կա սփոփոթյուն] ունի մխիթարություն

79 «ՀԱՋԻՎ ԱՐԵՎՆ ՅՈՒՐ ԱՌԱՋԻՆ»

Գրել է 1883 թ. նոյեմբերի 19-ին: Պահպանվում է սևագրությունը (ՀՀա, I—14)՝ մատիտագիր և հեղինակային պատճենը (ՀՀա, I—27): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնէր 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Իր վրա կրում է Ռ. Պատկանյանի «Ա՛յ մարդ, այսօր շատ քնեցար, ննջեցիր» բանաստեղծության աղղկեցությունը:

Առաջին ձևագրում.

15 Լույսը բացվեց, ելա ոտի

23 Եւ շուտ լծե քո չաւ եզնիք

24 Դուրս եկ արտը դու ուրախ

26 [Ահ ու գողը սիրտն քնկած] Զայնը լսած չլսած

27 Շուտ զարթեցաւ [<1 անքեր.>] ու ցուրտ առվին

28 Զեռք ու երեսը [լաւ] լվաց

29 Եւ դեռ հազիւ [թե] մի ժպտացին

31 Հնչեց նորա երգ [տխր] ողբազին

32 [<1 անքեր.>] եւ արտուտի ձայն կայտառ

Երկրորդ ձևագրում.

15 Լույսը բացվեց, եւ [ա] դու ոտի

23 Եւ շուտ լծե քո [չաւ] ժիւր եզնիք

80 «ԱՆՅԱՎ ԳՐԵԹԵ ԵՎ ԱՅՍ ՄԻ ՏԱՐԻՆ»

Գրել է 1883 թ. նոյեմբերի 20-ին: Պահպանվում է սևագրությունը (ՀՀա, I—14)՝ մատիտով գրված և հեղինակային պատճենը (ՀՀա, I—27): Առաջին

անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի: Հեղինակի ծրագրով պետք է մտնեք 1887 թ. ժողովածուի մեջ:

81 «ՍՈՒՆՈՒՄ Է ՀՈՂՄԸ, ՈՒԺԳԻՆ ՏԱՏԱՆՈՒՄ»

Գրել է 1883 թ. դեկտեմբերի 7-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեք 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

82 «ԵՎ ՆԱ ԱՆԿԱՎ. ԴՐՈՇԸ ԶԵՌԻՆ»

Գրել է համանորին 1883 թվականին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—170) առաջին անգամ:

Զեռագրում.

7 եվ [<2 անգր. >] բարձ ծաղկանց զով սոսափյուն

16 Դրոշը ձեռիդ [<2 անգր. >] թաշ, դու մեռար

83 ՆՈՐ ՏԱՐԻ

Գրել է 1884 թ. համանորին հունվարի 1-ին: Այս և հաջորդ բանաստեղծությունը կաղմում են միմյանց օրդանական շարունակությունը և դրաբնույթյանը ներկայացրած տետրում զետեղված են «1884, Նոր Տարի» ընդհանուր խորագրի տակ (Ա և Բ): Դրանցից առաջինը (ՀՀա, I—14) ջնջված է մատիտով, համանորին դրաբնույթի կոդից: Երկրորդն էլ չեն մտել 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

84 «ՅՈՒՐՏ ԳԻՇԵՐ Է, ԲԱՐՍԱ ՔԱՄԻՆ»

Գրել է 1884 թ. համանորին հունվարի 1-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—14) առաջին անգամ:

Տե՛ս նախորդ բանաստեղծության ծանոթագրությունը:

85 «ԱՆՇՈՒՔ ԿՅԱՆՔԻՍ ՄԵՋ ԵՔԵ ԲՆՈՒԹՅՈՒՆ»

Գրել է 1884 թ. փետրվարի 13-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեք 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

86 «ԵՍ ԱՍՈՒՄ ԷԻ. «ՍԻՐՆՅԵՔ, ՔԱՆԻ»

Գրել է 1884 թ. փետրվարի 17-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեք 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

87 «ԲԱՎԱԿԱՆ Է ԼԱՍ, ՉԱՐԱՏԱՆՁ ՀՈԳԻ»

Գրել է 1884 թ. փետրվարի 21-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեք 1887 թ. ժողովածուի մեջ:

Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

88. «ԱՐԴԵՆ ՓԶՈՒՄ Է ՇՈՒՆԶԸ ԳԱՐՆԱՅԻՆ»

Գրել է 1884 թ. մարտի 13-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, II—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

89 «ԱՐՅՈՒՆՔ ԵՎ ԱՐՅՈՒՆՔ, ԱՆՎԵՐՋ, ԱՆԴԱԴԱՐ...»

Գրել է 1884 թ. մարտի 18-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

90 «ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՕՐԵՐ, ԵՍ ԴԱՐՉՅԱԼ ՄԵՆԱԼ»

Գրել է 1884 թ. մարտի 18-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

91 «Ո՛Շ, ԳԵՂԵՑԻԿ Է ԱՇԽԱՐՀՆ ԱՍՏՈՒԾՈՒ»

Գրել է 1884 թ. մարտի 31-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Զեռագրում.

13 Լինի թող [ուղեղդ] միտքդ առողջ, պատանի

92 «ԵՐԿԻՆՔԸ ՊԱՅՄԱՌ, ՕՐԸ ԿԵՆՍԱՇՈՒՆԶ»

Գրել է 1884 թ. ապրիլի 12-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

93 «Ա՛Ն, ԻՆՉՈ՛Ւ ԵՎ ԵՍ ՉԵՄ ԿԱՐՈՂ ԽՆԴԱԼ»

Գրել է 1884 թ. հունիսի 26-ին, Բողոքողական: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

94 «ԳԱՐՆԱՆ ԳԵՂԵՑԻԿ ՄԻ ԱՌԱՎՈՏ ԷՐ»

Գրել է 1884 թ. հուլիսի 20-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—28) առաջին անգամ:

95 «ԱՂՈԹԻՐ, ՀՈԳՅԱ՛Կ, ՔՈ ՍԻՐՏԸ ԱՄԲԻՄ»

Գրել է 1884 թ. օգոստոսի 10-ին, Բողոքողական: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Ներկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

96 «ԴԱՐՁՅԱԼ, ՍԻՐԱԿԱ՛Ն, ԻՆՁ ԵՐԵՎԵՅԱՐ»

Գրել է 1884 թ. օգոստոսի 19-ին Բողոքողական: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Ներկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

97 «ԳՈՐԾԵԼՈՒ ՄԻ ՍՈՒՐԲ ԵՌԱՆԴՈՎ ԱՆՁՆԵՐ»

Գրել է 1884 թ. օգոստոսի 30-ին: Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—14) առաջին անգամ:

98 «ՎՃԻՏ ԱՌՎԱԿԸ ՎԱԶՈՒՄ Է ԿԱՅՏԱՌ»

Գրել է 1884 թ. օգոստոսի 31-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—29): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Ներկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

99 ՍՐՏԻ ԴԱՆԴԱՏԸ

Գրել է 1884 թ. սեպտեմբերի 4-ին: Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—14) առաջին անգամ:

100 «ԱՊՐՈՒՄ ԵՍ, ԵՂԲԱ՛ՅՐ, ԵՎ ՀՈՒՅՍԸՐ ՄԻՇՏ ՎԱՌ»

Գրել է 1884 թ. սեպտեմբերի 8-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Ներկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ձեռագրում

10 Ո՛հ, [Միայն հուզմունք] լոկ վրդովմունք պատանու սրտի

101 «ՏԱՆՁՎԻՎ ՀԱՆԱՊԱԶ, ՏԱՆՁՎԻՎ ԱՆՎԱՆՃԱՆ»

Գրել է 1884 թ. սեպտեմբերի 15-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—30): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Ներկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձեռագրում.

9 Ա՛հա՛, [ճակատագիր] դու խեղճ մարդ, բո ճակատագիր

17 Յուր աշխարհային [վաղանցիկ կյանքը] անցվոր գոյություն

Գրել է 1884 թ. սեպտեմբերի 17-ին: Բանաստեղծի ծրագրով պետք է մտներ 1887 թ. ժողովածուի մեջ: Տպագրվում է բնագրից (ՀՀա, I—14 և ՀՀա; I—30) առաջին անգամ:

Ձեռագրում.

4 Թռչնում է [իբրեւ] ինչպես կոկոնը վարդի

103 «ԽԱՂԱՂ ՎԱՌՎՈՒՄ Է ԼՈՒՍԻՆՆ ԵՐԿՆՔՈՒՄ»

Գրել է 1884 թ. սեպտեմբերի 22-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—31): Բանաստեղծի ծրագրով պետք է մտներ 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձեռագրում.

9 Նայում եմ շուրջըս, [մերթ] ահա՛ շրեղ կառքով

104 «ԵՐԿԻՆՔԸՆ ԱՄՊՈՏ, ՄԻԱԿԵՐՊ ՏԵՈՒՐ»

Գրել է 1884 թ. հոկտեմբերի 12-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—32): Բանաստեղծի ծրագրով պետք է մտներ 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձեռագրում.

4-րդ տողից հետո՝

[Արևը վաղուց ողջույնը վերջին

Տվել է երկրին. և լուռ է թռչնակ]

11 Մինչև մահատիպ այս հանդիստն անցնի

Երկրորդ ձեռագրում.

4-րդ տողից հետո՝

[Արևը վաղուց ողջույնը հետին]

[Տվել է երկրին] Արևը հաճաճ, և լուռ է թռչնակ

105 «ԾԱԾԿՎԻՐ ԾՈՒՏ, ԱՐԵՎ. ՔՈ ԴԵՄՔԸ ԽԱՐԴԱՆ»

Գրել է 1884 թ. նոյեմբերի 27-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—16): Բանաստեղծի ծրագրով պետք է մտներ 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

106 «ՀՈԳԻՍ ՏԵՈՒՐ Է, ՈՒԶՈՒՄ ԵՄ ՅՐՎԵԼ»

Գրել է 1884 թ. դեկտեմբերի 6-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Բանաստեղծի ծրագրով պետք է մտներ 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Գրել է 1885 թ. դեկտեմբերի 13-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—36) առաջին անգամ:

108 «Ո՛Վ ՆԱԶԵԼԻ ԿՈՒՅՍ, ԴՈՒ ՄԻ ԼԱՐ»

Գրել է 1885 թ. դեկտեմբերի 13-ին: Բանաստեղծի նախնական ծրագրով պետք է մտներ 1887 թ. ժողովածուի մեջ: Տեսրում արտագրված է երկրորդ ձևերով: Տպագրվում է ըստ այդ պատճենի (ՀՀա, I—18): Ուսանալորի վերջին տունը թյուրիմացաբար ջնջված է: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում:

109 «Ա՛հ, ՊԱՏԱՌՎՈՒՄ Է ԻՄ ՍԻՐՏԸ ՎՇՏԻՅ»

Գրել է 1886 թ. հունվարի 23-ին: Պահպանվում է սևագրությունը (ՀՀա, I—16) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—17): Բանաստեղծի ծրագրով պետք է մտներ 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

110 «ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ ՓԱԹԱԹՎԱԾ ԼՈՒՍՈՎ»

Գրել է 1886 թ. մարտի 3-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—16) և սրա մշակված օրինակը (ՀՀա, I—20): Բանաստեղծի ծրագրով պետք է մտներ 1887 թ. ժողովածուի մեջ: Հորինման առիթը բանաստեղծը շարագրել է ինքնագրի կողքին. «Մարտի 3, գիշերը ժամի 1-ին փողոցի տրոտուարովը հազիվ ոտերը փոխելով քայլում էր հարբած մի մարդ մոտ 40—50 տարեկան, «Գլխաբաց, բոբիկ, պատռած շորերով»: Երկու լավ հագնված դիշերային զվարճամոլներ անցնում էին նորա մոտովը. մինը ծիծաղելով ցույց տվեց թշվառականի վրա. «Ничего, с горя подвыпил немножко!» պատասխանեց մյուսը: Հեղինակը ոտանավորը այդպես էլ վերնագրել է. С горя подвыпил немножко!, որ հետո, արտագրության մեջ թարգմանել է՝ «Բան չկա, դարդու մի քիչ քցել է...»: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի պատճենի:

Առաջին ձևագրում.

17 [Կանգնել] Չուղի մնալ գլուխն ուտերի վրա

19 Ինքն անմիտ կերպով, ասես անզգա

25 Մարդիկ [սենեկում] տաք մահճում երջանիկ քնով

111 «ԴԱՐՉԱԼ ԳԱՐՈՒՆ, ԵՎ ԽՆԴԱԳԻՆ»

Գրել է 1886 թ. ապրիլի 4-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—17) առաջին անգամ:

Ձեռագրում.

4-րդ տողից հետո՝

[Ամեն մի թուփ, ամեն տերեւ]

[Սթափում է] [Ըզգեմում է մի նոր կյանք]

7 Եվ [տալիս] բերում է ողջույն սիրով

Գրել է 1886 թ. ապրիլի 12-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—16): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

113 «ԵՍ ՏԱՆՋՎՈՒՄ ԵՄ, ԵՍ ԱՅՐՎՈՒՄ ԵՄ»

Գրել է 1886 թ. ապրիլի 28-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

114 «ՈՒՄ ՀԱՅՏՆԵՄ ՅԱՎՐՍ, ՏԱՆՋԱՆՔՍ ՀՈԳԵԿԱՆ»

Գրել է 1886 թ. սեպտեմբերի 19-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—38) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—41): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

115 «ԵՍ ՏԱՆՋՎՈՒՄ ԷՒ, ՉԱՓ ՉԿԱՐ ՎՇՏԻՍ»

Գրել է 1886 թ. հոկտեմբերի 13-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ձեռագրում.

15 [Այդպես թաղցրած] Ուրիշի վերքը բոց ցավը անել

116 «Ո՛Վ ԻՄ ՉՔՆԱՂ, ԻՄ ԱՆԳԻՆ»

Գրել է 1886 թ. դեկտեմբերի 20-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18) և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—40): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնեն 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձեռագրում.

1 [Կույս հրաշագեղ, որ երկնային] Ով իմ չհնաղ, իմ անցին

2 Վառ աչերով [փափկ] հեշտասեր

3 Խոտտանում ես [մատաղ] դու երգչին

4-րդ տողից հետո ջնջված է՝

[Դո՛ւ, որ այդպես նազելի

Թիկնած փափուկ ձեռիդ վրա

Ժպտում ես ինձ կրքով լի

Մոռանալ ես տալիս մահ]

10 Սեղմեմ գլուխս [բորբոքով] իմ հոգեմ

12 [Իմը լինի միացած] Իմ շրթունքը բորբոքված

Գրել է 1886 թ. դեկտեմբերի 21-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—40): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

118 «ԵՍ ԵՐԳԵԼՈՒ ԶԵՆ ՉՈՒՆԵՄ»

Գրել է 1886 թ. դեկտեմբերի 25-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18): և սրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—40): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնել 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Առաջին ձևադրում.

5 Ա՛խ, ես ինչպես կերգեի

119 «Ա՛ն, ՍԵՎ ՍԵՎ ԱԶԵՐ, ԻՆՉՈ՛Ւ ԶԵՂ ՏԵՍԱ»

Գրել է 1886 թ. դեկտեմբերի 30-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—18): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնել 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

120 «ԵՍ Է՛Լ ՉՈՒՆԻՄ ԴԱՆԻՍԻՆ ԳՐԻՉ»

Գրել է հավանորեն 1887 թ., հունվարի 3-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—42) առաջին անգամ:

Ձևադրում.

3 Սիրտըս կարծես [չունի] է՛լ նույն թուշ

121 «ԵՐԲ ՈՐ ՄԱՀՎԱՆՍ ԺԱՄԸ ՀԱՍՆԻ»

Գրել է 1887 թ. փետրվարի 4-ին: Պահպանվում է մատիտով գրված սևագրություներ (ՀՀա, I—41): Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—47) առաջին անգամ:

Առաջին ձևադրում.

7 Ես [մի] զործ անշահ, սեր կրկեցի

11 [Միակ իղձս է, որ [իմ] կրկիս համար

12 Որ ձեր սիրտը մի տեղ պահեր]

13 Բայց թի ազատ [ձայնն] երգն իմ տաղի

16 Զարթեցնեի [ևս ձեր] մարդկան սրտում

17 [Ես կրջանիկ] Բաբեբաստիկ կրմեռնեի

122 «ԱՆԼՈՒՅՍ ԽԱՎԱՐԸ ԻՐԻՆՎ ՓՈԹՈՐԻԿ»

Գրել է 1887 թ. մարտի 13-ին: Չափը, ինչպես և առաջին տողի առաջին հատվածը մի պահ ենթադրել են տալիս, թե վերամշակված տարբերակն է «Անլույս խավարը, շարուփյան ոգին» բանաստեղծության, գրված 1886 թ. ապրիլի 1-ին: Սակայն համեմատությունը ցրում է այդ տարակուսանքը. այս

գեպրում ևս մենք դորձ ունենք համանման տրամադրութիւնների հետ: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—52) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 2 [Մանրացած] Կուտված էր հայի շարշարված գլխին
6 Կարոտ էր գոնի [սրտացավ] Կարեկից խոսքի
21 Սեր, եղբայրութիւն, գիտութիւն, [ուսում] և լույս
25 Դու ներշնչեցիր [հույս ոսկեղենիկ] մեզ մի հույս գողտրիկ
28 [Սրտացավ] նա ազնիւ կրդիչ, [նա] բնդ չի մոռանա

123 «ԱՆՅԱՆ ԿԱՍԿԱՄԻ, ՏԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ»

Գրել է 1887 թ. մարտի 16-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—52) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 15 նա հայրենյացս ևմ [հիմա] միայն սիրահար
16: նա [միայն] է լոկ վշտի աղբյուր ինձ համար

124 ԽՈՐԵՆԱՅՈՒ ՈՂՐԸ

Գրել է 1887 թ. մարտի 25-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—53) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 38 [Օթեան] Ասպարեզ է արդեն դարձած

125 «ԴԱՏԱՐԿ, ԱՆՄԻՏ ՀՈՒՅՍԵՐՈՎ»

Գրել է 1887 թ. մարտի 29-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—53) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 11 [Եվ նեղ շիրիմ] Մի թիզ խալար, ցուրտ գետին

126 «ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀՈՏ ԲՈՒՐԵՅԻՐ, ՄԱՆԻՇԱԿ»

Գրել է 1887 թ. ապրիլի 24-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—54) առաջին անգամ:

127 «Ո՛Շ, ՄԻ ՎՐԴՈՎԵՔ ԸԶՄԱՅԼՎԱՄ ՀՈԳԻՆ»

Գրել է 1887 թ. հունիսի 11-ին: Տպագրւում է ինքնագրից (ՀՀա, I—55) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 16 Կրմարեն ինչպես ձայն [օդի միջին] զիշերային

128 ԻՄ ՄՈՒՋԱՆ

Գրել է 1887 թ. ապրիլի 21-ին: Ռ. Զարյանը առանց որեւէ հիմքի այս ոտանավորը համարել է «Երբ մատաղ մուսա ժպտն երեսին» բանաստեղծութիւն տարբերակը: Փաստորեն դրանք տարբեր գործեր են՝ նույն թեմայով

հորինված, ինչ որ շատ ենք հանդիպում Հովհաննիսյանի մոտ: Ամբողջությամբ տապալարվում է առաջին անգամ (ՀՀա, I—56):

Ձեռագրում.

3 Ձեր խաղում ճակտին [երկնային] կենդանի ցոլֆով

129 «ՏԵՄ ԽԱՎԱՐԸ ԹԱՆՁՐԱՆՈՒՄ Է»

Գրել է 1887 թ. հուլիսի 31-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—58) առաջին անգամ:

Ձեռագրում.

24 [Տոնենք] Փայլի սուրբ խաչ[ը] վկայության

27 Թուխպը ցրվի [փայլակ] կայծակ ցուլա

130 «ԵՍ ՉԵՄ ՆԱԽԱՆՁՈՒՄ ԹՇՎԱՌ ՍՏՐՈՒԿԻՆ»

Գրել է հավանորեն 1887 թ. սեպտեմբերի 5-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—61) առաջին անգամ:

131 «ԱՆՄԻՏ ԳԾԵՐՈՎ ԹՂԹԻ ՎՐԱ ՇԱՐՎԱՄ»

Գրել է 1887 թ. սեպտեմբերի 20-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—61) առաջին անգամ:

Ձեռագրում.

2 Իմ ցնորքները, [որ բուռն] աճեկուն բլծով

5 [Ցողված] Լի մի բաժակ[ին], որ հուսահատին

132 «ԵՍ ՓԱՌՔ ՉԵՄ ԽԵՐԲՈՒՄ, ՈՍԿԻ ՉԵՄ ՈՒՋՈՒՄ»

Գրել է 1887 թ. նոյեմբերի 12-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—59) առաջին անգամ:

Ձեռագրում.

1 Ես փառք չեմ խնդրում, ոսկի չեմ [խնդրում] ուզում

5 Միայն [միշտ] կենդանի մնալ իմ հավատ

18 Չեն [խեղդվի] թառամելու թունոտ փշերից

133 «ԴՈՒՔ ԲՆԱԿԻՉ ԱՋԱՏ ԵՐԿՐԻ ԼՈՒՍԱՎՈՐ»

Գրել է 1887 թ.: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—64) առաջին անգամ:

ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավարտված թարգմանություններ

1 ԱՆԱՎԱՐՏ ՊԱՏԿԵՐ

Թարգմանել է 1880 թ. սեպտեմբերի 30-ին: Բանաստեղծի արխիվում պահպանվում է այս թարգմանության նախնական փորձերից մեկը (ՀՀա,

I—6): Առաջին անգամ լույս է տեսել 1899 թ. «Քնար Պուշկինի» ժողովածուում (էջ 47): Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Ձեռագիրը.

Որի՞ միտքն է այնպես բերկրած

Գեղեցկությունն հասկացել.

[Որի՞] Ու՛մ վրձինն է նշանակած

Այս երկնային վսեմ գծեր.

Դու, հանճար... Բայց սիրո տանջանք

Նորան [հանգցրին] մեղքերին: [Յուր] Ստեղծվածին

Նա յուր ձգեց անխոս հայացք

Նվ հանգչում է ջերմ հոգին:

2 «Ո՛ւ՛՛՛՛՛՛՛ ՎԱՐԳ ԱՂՋԻՎ, ԳԵՐԻ ԵՄ ԵՍ»

Թարգմանել է 1880 թ. սեպտեմբերի 30-ին: Պահպանվում է սևագրությունը (ՀՀա, I—6), որ ջնջված է, սրա մշակված օրինակը (ՀՀա, I—6)՝ արտագրված տետրի նույն էջում և մի հիմնովին վերամշակված վարիանտ (ՀՀա, I—106)՝ արտագրված երկրորդ ձեռքով: Առաջին անգամ լույս է տեսել «Տարազ», 1899, № 26: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Քանի որ ավարտված ինքնագրի և վերամշակված ձեռագրերի մեջ տարբերությունը շատ է զգալի, բերում ենք ինքնագիրն ամբողջությամբ՝ միշտ հետևելով նաև նախնական սևագրությանը.

Ով վարդ—օրիորդ [և կաշկանդված եմ] կաշկանդված եմ ևս

Բայց չեմ ամաչում բո կապանքներից

[Այսպես սոխակը դափնի թփերում] Դափնի թփերում սոխակը այսպես
Թեպետ [արքա անտառի երգչաց] երգչաց սիրուն ամենից

[Հպարտ վարդին առաջ չբնաղ, գեղեցիկ] Գերությանը մեջ ուրախ է
ապրում

[Ազատ ապրում է, բայց բաղձրիկ] [Ջրնաղ] Հպարտ գեղեցիկ վարդի
առաջին,

[Եվ քնքույշ երգեր է նորան երգում] Եվ նորան քնքույշ երգեր է երգում
Հեշտաշունչ գիշերն խավարի միջին:

3 «ԵՍ ԶԵՐՄ ԱՐՅՈՒՆՔ ԹԱՓԵՅԻ»

Թարգմանել է 1880 թ. սեպտեմբերի 30-ին: Պահպանվում է սևագրությունը (ՀՀա, I—6) և մարագիրը (ՀՀա, I—18). վերջինս զրաբնությունը ներկայացրած տետրում արտագրված է երկրորդ ձեռքով: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ արտագրված պատճենի:

Սևագրության մեջ.

5 [Արտասվում եմ] ես լալիս եմ և այժմիկ

Ինքնագիրը, որի վրա կառարված են շատ ջնջումներ և շտկումներ, թվագրված է «սեպտեմբեր»։ քանի որ ղեկավարված է 1881 թ. գրած բանաստեղծությունների շարքում (ՀՀա, I—7), պետք է ենթադրել, որ այդ թվին էլ թարգմանված է։ Առաջին անգամ լույս է տեսել «Աղբյուր», 1887, № 12: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ինքնագրում.

- 1 Թող անուշ երգը հնչել [քաղցրագին] հեշտագին
- 6 Մեր [տխրությանը] [լաց ու կոծին] Դառը սուգին ստոռ [հաշիվ-ներին] կրքերին
- 7 Թող երգը նորա ազգասիրական
- 8 Ներշնչել [արի] աշխույժ հոռակ մեր սրտին
- 9 [Թող ամենը, որ մեզ խոսվում է] [ինչ վրդովում է մեզ, բող ամենայն] ինչ մեզ հուզում է, բող այն ամենայն
- 10 [խռովություն, հանդիստ] Հանգիստ և բախիժ և ծիծաղ և լաց
- 12 Թող [հղոր արձագանք գտնել նորանում] մասն ունենա այն հզոր երգից
- 16 Փառքովը [վսեմ] արդար իրանց գործերի

5 Ձ Կ Ն Ո Ր Ս

Թարգմանել է 1881 թ. նոյեմբերին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—7), որ բաղմամբիլ ջնջումներ ունի, ինչպես թանաքով, նույնպես և մատիտով: Առաջին անգամ լույս է տեսել «Արարատ», 1884, № 3: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Ձեռագրում.

- 1 Զուրը [խոխոշում] վշվշում, ջուրը [ուռչում էր] էր դիզանում
- 3 Անխուղ կարթին հանդարտ նայում էր
- 5 Եվ [մինչ նստած է և կարթին է նայում] մինչդեռ կարթին նայում է նստած
- 6 Ահա տատանվում, բացվում են ալիք
- 7 Եվ հուզված ջրից դուրս է ելանում
- 9 [նա] Եվ անուշ երգի [ից] ում, ասում է [նա] նորան [ասաց]
- 11 [Մարդկային խելքով որոգայթ լարած] Խուամանկ խելքով մտել ես դարան
- 12 [Եվ դո՛հ ես տալիս] Մատնում ես նոցա մահացու տոթին
- 13 Ա՛խ, թե դիտնայի՛ր, ինչպես երջանիկ
- 14 Զրի [խորումը] խորքերումը ապրում են ձկներ
- 15 Կիջնելիք դու ցած, կսիրելիք ալիք
- 16 [Եվ այն ժամանակ կյանքդ [հեշտ] բաղը կրլիներ] Եվ բաղրիկ կյանքի կանցնելին օրեր
- 17 Մի՛թե արեւ ճաճանշովն ոսկի

18 Եվ չէ զովանում լուսինը ծովում
19 Մի՞թե առավել այնտեղ սիրելի
20 Նոցա պատկերը չէ արտափայլում
Նոր փորձ.

17 Միթե ոսկեփայլ հրատապ արմիին

18 Եվ լուսին ծովի մեջ չեն զովանում

19 Միթե առավել այնտեղ խնդազին

20 Նոցա պատկերը չէ արտափայլում

25 Զուրը կարկաշում, ջուրը ուռչում էր

26 [Ուտերը բորբի նորա] Եվ [ձկնորսի] մերկ ուռ[ը] ներք թրչում
[էր] ձկնորսի

27 Սիրտը [զղացմունքով] ցանկությամբ նորա լցվում էր

28 [Ասես նազելին նրան ողջունում էր] Ասես քե սիրո ասել էր ողջուն

29 [Նա նվազում էր և նրան ասում] Եվ կույսը նորան ասում էր, երգում

30 Եվ խեղճ ձկնորսը ահա մարեցավ

31 Եվ նա բարշտում էր, և ինքն էր գնում

32 Ահա՛ և անհետ նա ընդ միշտ կորավ

6 «ԻՄ ԱՐՅՈՒՆՔԻՅ ԲՈՒՍՆՈՒՄ ԵՆ»

Ունի երկու ինքնագիր սեպարություն (ՀՀա, I—7) (Թանաքով զրվածը թվագրված՝ 1881, առանց ամսաթվի) և մի պատճեն՝ արտագրված այլ ձեռքով (ՀՀա, I—18): Բանաստեղծի ծրագրով պետք է մտնի 1887 թ. ժողովածուի մեջ: Հետագայում հեղինակը վերամշակել է և մտքերի 1908 թ. ժողովածուի մեջ, ըստ որի և տպագրվում է:

Առաջին սեպարության մեջ (Թանաքագիր)

1 Արտասուքս բուցնում են

2 Շատ անուշոտ ծաղիկներ

3 Հառաչանքս [իմ] փոխվում են

4 Սոխակների բաղքը երգեր

5 Սիրիր դու ինձ—[և] քեզ պարզե

6 Տամ, հոգյակ իմ, ծաղիկներ

7 [Պատուհանիդ] Լուսամուտիդ [բո] առաջև

8 [Նվազեն անուշ] Անուշ երգեն սոխակներ

Երկրորդ սեպարության մեջ (մատիտագիր)

3 Հառաչանքներս դառնում են

6 Տամ, իմ հոգյակ, [իմ] ծաղիկներ

7 «ԱՅՍ ԻՆՁ ԵՐԳ Է ՀԵՇՏԱԳԻՆ»

Գրել է 1881 թ. նոյեմբերին: Պահպանվում է երկու ինքնագիր, երկուսն էլ նույն տետրում (ՀՀա, I—7), առաջինը՝ սեպարություն, Թանաքով և մաքրագրությունը՝ մատիտով զրված: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Սեազրության մեջ.

- 1 Խաղաղ հոգիս Բախանցում է
- 2 Երգի ձայնը անուշիկ
- 3 Ա՛խ, գարնային երգ դու, հնչե՛
- 4 Հեռու հասնե՛ քո ձայնիկ
- 5 Հնչիր մինչև այն տնակը
- 6 Ուր ծաղկունք են բողբոջում
- 7 Եթե այնտեղ տեսնես վարդը
- 8 Ասա նորան [տա] [տար] ես տալիս եմ ողջուն

8 ՆՈՐ ՏԱՐԻ

Թարգմանել է 1882 թ. փետրվարին: Պահպանվում է երկու ինքնագիր սեազրություն (առանց վերնագրի) (ՀՀա, I—7. և ՀՀա, I—35) և մի հեղինակային պատճեն (ՀՀա, I—18): Հեղինակի նախնական ծրագրով պետք է մտներ Բանաստեղծությունների 1887 թ. ժողովածուի մեջ, սակայն արգելվել է զրաբնության կողմից: Առաջին անգամ լույս է տեսել Մարտելում, Մ. Փորթուզայանի «Արմենիա» թերթի 1887 թ. № 16-ում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Սեազրության մեջ.

- 1 Մաշվում է կյանքըս, հալվում ամի ցամ
- 2 [եվ] միտքըս տկար է [և] սառնում է արյուն
- 5 Բայց ես կուզեի [որ] գեթ իմ օրհասին
- 7 Որ մշակելով տեսներ առաջին
- 8 Սերմնացանը յուր օրը պայծառ
- 9 Որ իմ ականջին հայրենի գյուղից
- 10 Հասցենք քամին մի ձայնիկ միայն
- 11 Որ[ը] [չըզուժեք] ինձ չըբեբեք նոր բոթ աղետից:
- 12 Դառն արտասուքի, հեղեղի արյան

9 ՊՈՆՏԻՆ

Պահպանվում է երկու ինքնագիր. առաջինը (ՀՀա, I—10), «Քերթողին» խորագրով, որ նախնական փորձ է, թվագրված է «1883, մարտի 20» և սրա վերամշակությունը (ՀՀա, I—229): Պետք է ենթադրել, որ սա վերաբերում է արդեն ուշ ժամանակի, այն է՝ Պուշկինի ծննդյան հարյուրամյակի օրերին: Առաջին անգամ լույս է տեսել «Քնար Պուշկինի», 1899, էջ 49: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Սեազրության մեջ.

- 1 Քերթո՛ղ, մի տար կշիռ սիրուն ամբոխի
- 2 Շուտ վաղանցիկ կանցնի աղմուկ բերկրանաց
- 3 Քեզ կհալածե ծաղրը, վճիռ խոթանի
- 4 Բայց դու մընա հաստատ, հանգիստ, խոտհայաց
- 5 Դու արքա ես. ապրի՛ր անկախ: Եվ աղատ

- 6 Գրնա շալղով, ուր միտքըդ աղատ կըտանն
- 7 Աղնիվ վաստակդ անվարձ դու թող որ անն
- 7 Մշակելով պտուղ ցնորքիդ հարազատ
- 9 Ինքդ ես դու բո վարձահատույց, դատարար
- 10 Դու բո գործին զին կհատանես անաշառ
- 11 Դո՛ւ, բաջ վարպետ խստապահանջ, դու գո՛հ ես
- 12 Եթե գոհ ես, թո՛ղ խուժանը անարդե
- 13 Բող ոտնակոխ սրբարանը բո անն
- 14 Եվ բո զրդվն հոռտանին տղայապես

10 Է Լ Ե Գ Ի Ա

Թարգմանել է 1884 թ. օգոստոսին 11-ին, Բոգորոդսկում: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Առաջին անգամ լույս է ընծայել Ռ. Զարյանը «Պուշկին» հավաքածուում (1937): Տպագրվում է ըստ ինքնագրի:

11 «ՕՐԵ ԱՆՎՐԴՈՎ Է ԵՎ ԽԱՂԱՂԱԿԱՆ»

Թարգմանել է 1884 թ. օգոստոսին 11-ին, Բոգորոդսկում: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

12 «ԵՍ ԴՈՒՐՍ ԵՄ ԳԱԼԻՍ ՄԵՆԱԿ ԺԱՄԲՈՒ ՎՐԱՆ»

Թարգմանել է 1884 թ. օգոստոսի 26-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—14): Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

13 «ԿՈՒՁԵՒ ԱՆՀԵՏ ՀԵՌԱՆԱԼ, ԿՈՐՉԵԼ»

Թարգմանել է 1884 թ. սեպտեմբերի 21-ին: Պահպանվում է երկու ինքնագիր (ՀՀա, I—14 և ՀՀա, I—31), որոնք տարբերակներ են և մեկ հեղինակային պատճհն (ՀՀա, I—18): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Առաջին ձևագրում.

- 13 Եվ որպես ծուխը կուղեի ցրվիլ
- 14 Կամ որպես օդում բույր ծաղիկների
- 15 Ողջույն էությամբս [կուղեի] բնավին ջնջվիլ
- 16 Կուղեի հանկարծ [բնավին] առանց տանջանքի
- 17 Կուղեի... Բայց է՛ր է իմ ցանկություն
- 18 Զե՛, մահը դուրավ չէ [հասնում] զալիս մարդկան
- 19 Զբհասած նորան—տանջանք է սպասում
- 20 Սիրտ կըպատումվի շրհասած դամբան
- 21 Եվ այն ժամանակ զալիս է միայն
- 22 Բոլոր վշտերի տխուր աղատություն

Երկրորդ ձևագրում.

- 13 Եվ կրցանկայի [որպես] ինչպես ծուխ ցրվիլ
 14 [Կամ որպես] ինչպես օդումը բյուր ծաղիկների
 15 [Ողջուն] [Բուր] Ողջ էությունըս բնավին ջնջվիլ
 16 Կուղիի հանկարծ առանց տանջանքի
 21 Եվ ահա [ապա գալիս է] հետո հասնում է միայն
 22 Բուրը վշտերի տխուր [աղատություն] փրկություն

14 «ԱՆԿԵՆԳԱՆ ՀՈՎԻՏ ՁՅՈՒՆՈՎ ԸՍՔՈՂՎԱՄ»

Թարգմանել է 1884 թ. նոյեմբերի 24-ին: Խորագրի փոխարեն գրված է «Պ. Ե.-ից (Թարգմանություն)»: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—16) Բանաստեղծությունների զբաղնությունը ներկայացրած տետրերից մեկում: Տպագրվում է ինքնագրից առաջին անգամ:

15 Ե Ր Ա Ձ

Թարգմանել է 1885 թ. սեպտեմբերի 27-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—218) և հեղինակային պատճենը (ՀՀա, I—16)՝ Բանաստեղծությունների զբաղնությունը ներկայացրած տետրում: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ում: Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ինքնագրում.

- 19 [Համբույրով] վառ սիրով աչքիդ կրնայիմ, կասեմ
 20 Թե նիրհել էի քեզ հետ առ վայրկյան

Արտագրված օրինակում.

- 20 Թե նիրհ[ել] ամ էի քեզ հետ [առ] մի վայրկյան

16 Ա Ն Գ Ր Ա Գ Ե Տ

Թարգմանել է 1886 թ. մարտի 2-ին: Պահպանվում է երկու ինքնագիր (ՀՀա, I—20)՝ առաջինը, որ կարելի է և սեպագրություն համարել, ջնջումներով և ուղղումներով և զրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Առաջին ձևագրի վրա թանաք է թափվել, ուստի շատ տողեր չեն երևում: Առաջին անգամ լույս է տեսել «Աղբյուր», 1886, № 7: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Սեպագրության մեջ.

- 4 Մի թերթ ճերմակ թուղթ և մեկ էլ մի տետր <1 անընթ. > գրիչ տվեք
 10 Մի ողջ աշխարհ ցույց կըտայի ես աննման <1 անընթ. >
 13 Կըզրեի ես [սկզբից] առաջուց ինչ եմ տեսնում երազում
 16 Նորան հրեշտակն երկնիցը [նայում է] ժպտում է վառ աչքով
 20 Եվ բարերին զարնվելով խաղիկ ջուրն է կարկաչում
 25 <անընթ. > յուր բոլոր խոսքերը գրել կարենա
 29 <անընթ. > կարող [ես չար ու] է գրչով կծու խոսքերին
 32 Սիրտս այրվում է, պատասխանի չունիմ ոչինչ զորություն
 34 Եվ միմիայն թղթի վրա անմիտ կերպով խաղիսաղում
 37 Շատ լավ բան է [գրագետ լինել] գիր իմանալ: Գրագետ է վաշխառուն

38 [Դատարանումը բաշ կիող ծառայողն էլ է գրագետ] Գրագետ են դատարանի ծառայողներն անկշտում

39 [Եվ] եռանդով էլ գրում են նորա, նոցանն է գրախտն [այս կրկրի] աշխարհի

42 [Կուղեմ] կամիմ գրել ազգի համար, նորա համար աշխատել

43 Եվ ես նորան [սխտի] [նորան] կըպաշտպանեմ շարագործից, հիմարից

44 [Եվ] կարտադրեմ Ավետարանն [մինչև վերջը] ես բոլորը սկզբից

46 [Քեզ պահել եմ—գորա տեղը ինձ բո թեկից] Քեզ սիրել եմ փոխարենը քեկից ինձ մի գրիչ տուր

48 Ուր բոլորը գրագետ են:— Սովորեցրե՛ք, պարոններ

Մարբազրության մեջ.

20 Եվ բարերին դարնվելով խաղիկ ջուրն է կարկաշում

34 Եվ միմիայն թղթի վերա անմիտ կերպով խաղխաղում

42 Կամիմ գրել ազգի համար, նորա համար աշխատել

17 «ՅՈՒՈՒՆ ԱՍՏՂԵՐԸ ԿԱՊՈՒՅՏ ԵՐԿՆԲՈՒՄ»

Թարգմանել է 1886 թ. մարտի 14-ին: Պահպանվում է թարգմանության ինքնագիրը (ՀՀա, I—20) և նրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—16) «Պրերագովիչից» խորագրով: Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ ինքնագրի: Զեռագրերի մեջ պահպանվել են երկու այլ թարգմանություններ ևս Պրերագովիչից. «Օրիորդը ծովն էր նայում», կատարված 1886 թ. մարտի 14-ին և «Պայծառ արեն երկնքում», կատարված հաջորդ օրը:

18 Պ Ո Ւ Տ

Թարգմանել է 1887 թ. փետրվարի 8-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—7): Առաջին անգամ լույս է տեսել 1887 թ. ժողովածուում: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Զեռագրում.

18 Թռչենք քեզ հետ շնաշխարհիկ մի աշխարհ

19 Ուր չեն թափվում ջերմ արտասուք տանջանքով

22 Եվ մանկության երազներովը ապրենք

Առաջին հրատարակության մեջ՝

18 Զրնաշխարհիկ թռչենք քեզ հետ մի աշխարհ

22 Եվ մանկության երազներովը ապրենք

19 ՄՆԱՍ ԲԱՐԵՎ

Թարգմանել է 1887 թ. դեկտեմբերի 18-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—209): Առաջին անգամ լույս է տեսել «Աղբյուր», 1888, № 2: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Ձեռագրում.

4 Ձեմ գալ ես երբեք սիրուն ափերիդ

20 «ԸՆԿԵ՛Ր ԻՄ, ԵՂՐԱ՛ՅՐ, ԴՈՒ ՎԱՍՏԱԿԱՐԵԿ ԵՂՐԱՅՐ ԻՄ ՏԱՆՋՎԱՍ»

Թարգմանել է 1887 թ. դեկտեմբերի 24-ին: Պահպանվում է թարգմանության սեղագրությունը (ՀՀա, I—64): Առաջին անգամ լույս է տեսել «Հանդես գրականական և պատմական», 1889, դիրք 2: Տպագրվում է ըստ 1908 թ. հրատարակության:

Ձեռագրում.

1 Ընկե՛ր իմ, եղբայր, դու իմ վաստակ[յալ]արեկ, [տառապյալ] եղբայր իմ տանջված

5 Թող որ խորտակված [է] ոտնակոխ [արած] լինի թո սուրբ իդեալ

9 Ոչ շղթաների [ծանր] դաժան բռնի տակ, ո՛չ փուշ պսակով

10 Եվ ոչ [ծանր] ծանր խաչ կորացած ուսին

12 Բաղդի [վառ] սլայծառ ջահը անհողողդ ձեռին

17 Ընկեր իմ, ցնորք չէ և ոչ պատիր հույս այս մեծ, դերասանծ

18 Սիրո գալուստը, զերթ այդ լուսավառ

19 Չորս կողմդ նայիր, չարը ճնշում է արդեն չափազանց

22 Նա անմիտ կռվից [մեջ], [արյունից] արչան մեջ խեղդված

23 Եվ դեպի սերը, [դեպի] մեծ սերն անձնազոհ [սերը] աչքը կամբառնա

Անավարտ թարգմանություններ

21 ԱՂՋԻԱ ԵՐԳՐ

Փոխադրե՛լ, Բե՛ գրել է 1880 թ. ապրիլի 5-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—1) առաջին անգամ:

22 Պ Ո Ն Տ

Թարգմանել է 1880 թ. օգոստոսի 24-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—7): Առաջին անգամ լույս է ընծայել Ռ. Զարյանը «Պուշկին» ժողովածուում (1937): Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ձեռագրում.

1 Մինչ [որ Փերան] Ասլուլոն նվիրական

23 «ԵՐԲ ՈՐ ՍԻՐՈՒՀԻՍ ԻՄ ԹՈՎՈՒԱԼՈՎ»

Թարգմանել է 1880 թ. սեպտեմբերի 30-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—6) առաջին անգամ:

Ձեռագրում.

3 Այնպես քաղցր է երդն, որ [չկամեալով] չուզեալով

5 Կախարդված [խոռված] հուզված առաջն եմ նստում

13 Վառվին ալ [այտերն] քշեւ, շրթունքը բացվին

Թարգմանել է 1882 թ. մարտի 11-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—7): «Առաջին անգամ տպագրվել է «Երկերի ժողովածու»-ի 1937 թ. հրատարակության ծանոթություններում:

25 «ԱՓՐՈՒԿՏԷ՛, ՋԵՎՍԱՅ ԳՈՒՍՏՐԳ ԳՈՒ ԱՆՄԱՀ»

Թարգմանել է 1882 թ. մարտի 14-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—230) և նրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—7): Տպագրվում է ինքնագրից առաջին անգամ:

26 <«ԺԱՏ ԱՍՊԵՏ»-ԻՅ>

Թարգմանել է 1880-ական թվականների սկզբներին: Գրված է աշակերտական տոտրում, մատիտով: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—8) առաջին անգամ:

Ձեռագրում.

- 12 [Փոքրից] Քչից են ստեղծվում: Ես կարդացել եմ
20 եվ ծովն, ուր արագ նավեր են վազում [են արագ]
22 [Իմ հարկը այստեղ] իմ սովորական հարկը նեղուղս
27 [Գեթ] Լոկ ուղիմ—պատրաստ է ինձ ապարանք
32 Իմ գերին [պիտ] դառնա առաքինություն
38 Որ այնտեղ կարգա [նշանը] իմ կամբի նշան

27 <«ԻԼԻԱԿԱՆ»-ԻՅ>

«Իլիականի» և «Ոդիսականի»՝ Հոմերոսյանի կողմից թարգմանելու մտադրության մասին առաջին անգամ իմանում ենք Մ. Բարխուդարյանին գրած նրա 1889 թ. հունվարի 20-ի նամակից: Այդտեղ նա խնդրում է ուղարկել իրեն «Իլիականի» և «Ոդիսականի» հունարեն բնագրերը: Ընկ. Ռ. Զարյանը այս երկին նվիրած իր ծանոթության մեջ բերում է Ստ. Լիսիցյանի գրավոր վկայությունն այն մասին, որ այդ թարգմանությունը պետք է կատարված լինի 1889—1891 թթ.:

«1889—90 թթ., մինչև 91 թ. մարտ ամիսը,— գրում է Լիսիցյանը,— ես և Հոմերոսյանը միասին պաշտոնավարում էինք էջմիածնի ճեմարանում: Մեզ հետ էր և Վարդգես Սուրենյանը, նկարիչը, որը շատ էր հափշտակված Շեքսպիրի գրվածքներով և փորձեր էր անում նրա ստեղծագործությունները հայերեն թարգմանելու: Մեր ջրջանում այն համոզմունքն էր տիրում, որ Հ. Հոմերոսյանը տիրապետելով հունարենին, ամեն հարմարություն ունի տալու Հոմերոսը ընտիր հայերենով: Եվ իրավ. նա այն ժամանակ կարգաց մեզ «Իլիական»-ից իր թարգմանած մի քանի հատվածները. դրա համար օգտվել էր Միսիթարյանների գրարար թարգմանությունից: Նրա կարդացած հատվածները մեզ այն ժամանակ ավելի ևս համոզեցին, որ մեր ակնկալությունները հիմնավորված էին: Այդ թարգմանությունը նա այնուհետև շարունակեց, և միշտ, մինչև վերջին տարիները, մեր հանդիպումների ժամանակ

ափսոսանք էր հայտնում այդ անկատար մնացած իր աշխատության մասին («Երկերի ժողովածու», առաջին հատոր, 1937, էջ 448):

Կարևոր այս վկայությունը հաստատվում է բանաստեղծի ձեռագրերի մեջ պահպանված մի տետրով, որն սկսվում է Հոմերոսի «Իլիականի» թարգմանությամբ: Ցավոք սրտի, դա մի չնչին մասն է այն հսկա աշխատության, որին ձեռնարկել էր կարող բանաստեղծը: Նա թարգմանել է և մշակել ընդամենը 186 տող. բացի դրանից, նա թարգմանել է ևս երկու հատված, որոնք համեմատաբար անմշակ են: Այս հատվածներն առաջին անգամ հրապարակվել են «Երկերի ժողովածուի» 1937 թ. հրատարակության ծանոթություններում:

Չնայած դրան, Գ. Լեոնյանն իր «Գեղարվեստի» 1909 թ. հրատարակած երրորդ գրքի տեղեկանքի բաժնում տեղավորում է հետևյալ լուրը.

«Մեր նորագույն գրականության անդրանիկ գեմբերից տաղանդավոր բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը մի քանի տարի առաջ ձեռնարկել էր Հոմերոսի թարգմանության՝ բնագրից. այժմ, ինչպես հաղորդում են մեզ էջ-միածնից, պ. Հովհաննիսյանը աշխատում է իր անկատար դործը լրացնել և, վերջնական խմբագրությունից հետո, հանձնել տպագրության: Մեզ միանգամայն ուրախացնում է սիրելի բանաստեղծի այդ նոր եռանդը. որի հետևանքը կտա մեր գրականությանը մի արժեքավոր սյուրսը՝ ընտիր թարգմանությունը համաշխարհային հռչակ ունեցող այդ կլասիկ ստեղծագործության»:

Ինչպես հաղորդում է «Երկերի ժողովածուի» 1937 թ. հրատարակության կազմող և խմբագիր Ռ. Զարյանը, Լեոնյանի այս հայտարարությունը դուրկ է եղել հիմբից. «Գեղարվեստի» խմբագիրը դա արել է բանաստեղծին ոգևորելու համար միայն:

Այն հարցը, թե Հովհաննիսյանն ինչու էլ շարունակել իր ձեռնարկած թարգմանությունը, իր սպառիչ պատասխանն է գտնում բանաստեղծի իսկ գրած մի պաշտոնական նամակում (1910, հոկտ. 17), ուղղված Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերության վարչությանը: Հովհաննիսյանը, որին Հրատարակչական Ընկերությունը «Իլիականի» թարգմանելու առաջարկն էր արել, այդ նամակի մեջ գրում է.

««Իլիականն» ու «Ոդիսականը» թարգմանելը շատ ազդերի թարգմանիչների համար ամբողջ կյանքի դործ է եղել. համենայն դեպս, ամեն մեկն առանձին մի լաճի տարվա լուրջ, հարատև աշխատանք է պահանջում, եթե խոսքը կանոնավոր, գեղարվեստական թարգմանության մասին պետք է լինի և հարկավ հունարեն բնագրից:

Հոմերոսն իմ սիրո առարկան է եղել դեռ աշակերտական իտարանի վրա և համալսարանում. տարիներ հունաց գրականության պատմություն և՛ ավանդել ձեռնարանում և մասնավորապես Հոմերոսով զբաղեցրել և՛ ունկնդիրներին (մի կարճ ժամանակ նույնիսկ հունարեն բնագրով), վերջապես փորձել և՛ թարգմանել աշխարհաբար «Իլիականը» և եկել և՛ այն եղբակացության, որ մեր գրական լեզվի արդի վիճակը և մասավանդ թե մեր տաղաչափությունը հնարավորություն չեն տալիս այն թարգմանությունը

տալու, որ յուր աշխատութիւնը գնահատող և գիտակցող թարգմանիչը գոհ մնա յուր արածից:

Այս խնդրի մասին երկարաբանին ավելորդ եմ համարում այստեղ. միայն այսքանը կասեմ, որ եթէ այդ հանգամանքն էլ մի կողմը թողնենք, Հոմերոսի թարգմանութիւնը հանձն առնողը անշուշտ նյութական հոգսերից ազատ և բացի գրական աշխատանքից՝ ուրիշ ոչ մի գործով չպարագայող մարդ պիտի լինի, որ կարողանա մի քանի տարւան ընթացքում դուրս բերել այդ թարգմանութիւնը, ուրիշ խոսքով, Դուք մի 5—6 տարի առնվազն՝ տարեկան 2000 (երկու հազար) ոտճկով պիտի ասպահովացնէք թարգմանչին, եթէ նա յուր բնական զգոյշութեամբ ուրիշ աշխատանքով է հայթհայթում: Կարո՞ղ է Հրատարակչական Ընկ. այդպիսի պայման հանձն առնել: Իմ կարծիքով, այս նվազագույն պահանջն է, որ կարող է Հոմերոսի թարգմանութիւն հանձն առնողը Ձեզ առաջարկել: Եթէ ես համալսարանն ավարտելուց հետո տարին տասներկու ամիս լծի եղան նման դատապարտված չլինեի իմ աշխատանքին միայն ապավինած ընտանիքիս ապրուստի համար շարշարվելու, ես՝ եթէ ոչ ուրիշ բան, գեթ «Իլիականը» վաղուց այսպես թե այնպես թարգմանած կլինեի, բայց habent fata sua... aufores—գրական աշխատանքն ինձ համար եղել է և երկրորդական և երրորդական, ազատ, հոգսերից ազատ ժամերի գործ, որովհետեւ երեսնաներիս փորը չի կշտացրել և մերկութիւնը չի ծածկվել»:

Այդպիսի տխուր ճակատագիր ունեցավ «Իլիականի» աշխարհաբար թարգմանութիւն հովհաննիսյանի փորձը:

Հատվածներից առաջինի ինքնագիրը մաքուր է, խնամքով արտագրված հատուկ այդ նպատակով կաղնած տետրում (ՀՀա, I—215), տողատված հեղինակի կողմից: Այդ հատվածն առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածու»-ի 1937 թ. հրատարակութիւն մեջ, մյուս երկու հատվածները (ՀՀա, I—216)՝ նույն երկի ծանոթութիւններում:

Ձեռագրում.

14 Պրոսպէ Ժեռին բռնած [գիպաղեղն] հեռաձիգն Ապոլլոնի

21 Ի պատիւ Ձեռի որդի [գիպաղեղն] հեռաձիգն Ապոլլոնի

83 Մինչև հանկ. [ուստի և դու] արդ խոստացիր, որ դու ինձ կաշտպանես

88 Քանի որ ես երկրիս վերա դեռ երս կամ [ու դեռ] կենդանի [եմ]

91 Որ այժմ իրան քաջացելուց ամենաքաջն է [կարծում] հռչակում

98 Երբ սիրելի հորը հետ տա [աչաղեղ] բոլորաշյա օրիորդին

100 Քրիսեոմ. [ապա] հետո դուցե հուսանք նորան հաշտեցնել

131 Դու որ ազնիվ ես, Աքիլլէս դիցանքման, մի՛ [այդպես] լինիր

154 [Որովհետեւ] Քանի որ երբեք բերրի ու բազմամարդ Փթեալում

181 [Որովհետեւ] Քանի որ Փեթն Ապոլլոն խլում է ինձինք Քրիսեոմիսին

28 <<ՇՂԹԱՅՎԱԾ ՊՐՈՄԵԹԵՎԱՍ>-ԻՅ>

Ըստ երևութին, 1882 թ. սկսած Հովհաննիսյանը ձեռնարկած է եղել

Ֆսբիլոսի «Շղթայված Պրոմեթեոս» ամբողջական թարգմանությունը բնագրից: Այդ է ապացուցում սույն ողբերգությունից կատարված այս հատվածների թարգմանությունը: Հատվածներից առաջինը նա մշակել է հրատարակել է նախ «Արարատում» (1908, № 4), ապա «Բեղարվեստում» (1913, № 5): Հատվածներից երկրորդը (ՀՀա, I—207), որ սկազրություն է, առաջին անգամ հրապարակվել է «Երկերի ժողովածուում», ծանոթությունների բաժնում: Առաջին հատվածից պահպանված է մի ինքնագիր (ՀՀա, I—208): Տպագրվում է ըստ ինքնագրի:

Ձևագրում 7-րդ տողին հետևում է.

[Անունն է հայր աստվածների և մարդկան,

Բայց հսամու մի բռնավոր նախանձոտ,

Նա չի կարող տեսնել այլոց երջանիկ,

Նորա համար մարդիկ միայն խեղճ զերի,

Երկրպագու պիտի լինին յուր փառքի]

16 Եվ դու, ով Ձևս, որ մահաբեռ շանթերիդ [ղործության]

21 Հայր և արքա թող [բեղ] տան, ով Ձևս, բեղ անուն

31 Թե կրփակես դու իմ [բերան] շրթունք, որ մարդկանց

29 <«ԱՆՏԻՓՈՆԵՆ»-ԻՅ>

Սոփոկլեսի «Անտիգոնեն»-ից կատարած թարգմանության այս հատվածը սկազրություն է: Թարգմանությունը կատարված է հունարեն բնագրից: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածուում»: Տպագրվում է ըստ ինքնագրի (ՀՀա, I—231):

30 Վ. Ա. ԱՍԱԿ

Թարգմանել է 1883 թ. մարտի 21-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա, I—10): Առաջին անգամ լույս է ընծայել Ռ. Զարյանը «Պուշկին» ժողովածուում (1937): Տպագրվում է ըստ ինքնագրի:

31 «ՈՒԺԳԻՆ ՀՈՂՄԵՐՈՂ ԱՐՁԱԿ ԴԱՇՏԵՐՈՒՄ»

Թարգմանել է 1883 թ. նոյեմբերի 14-ին: Առաջին անգամ լույս է տեսել «Երկերի ժողովածուում»: Տպագրվում է ըստ ինքնագրի: Պահպանվում է երկու ինքնագիր. առաջինը սկազրություն (ՀՀա, I—214), զրված մատիտով, երկրորդը՝ դրա արտագրությունը՝ տետրում (ՀՀա, I—10, երկուսն էլ խոթագրված «ծանոթություն Վ. Հյուգոյին»):

Սկազրության մեջ.

3 Դռում են սուլում [խտաշունչ] դառնաշունչ վայրագ

8 [Դուլնակս] Մեզ հետ խաղում է անտարբեր հողով

9 [Մեզ հետ] Դուլնակս ծաղրում է մեզ անողորմաբար

12 Զգալու անել կարիքը [մարդկան] տանջալան

20 Ա՛ռ դու [հեշտաձայն] երգեցիկ քնար [երգեցիկ] քաղցրավի

23 [Հպարտ ատելով] Արհամարհելով անհժքը մարդկան

27 [Կլինկոս անկաշառ զինվոր] Անկեղծ ջառագով կլինես հշմարտին
Մաքրագրության մեջ.

12 Զգալու անկ կարիք [տանջական] դառնուրյան

16 Բևորն [անվանել] համարել կարեկից զգացում

32 «ԹԵ ՊԱՏԱՀՈՒՄ Է ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ»

Թարգմանել է 1884 թ. օգոստոսի 24-ին: Բանաստեղծի ծրագրով պետք
է մտնել 1887 թ. ժողովածուի մեջ: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա, I—14)
առաջին անգամ:

Ձեռագրում.

19 Եվ [արպես նոցա] ասես զերթ ծուխ [ասես] ոսկի երազներ

24 Նոր [պտուղներով] ծաղիկներով լինի դարգարուն

33 Տ Ի Կ Ի Ն

Թարգմանել է 1886 թ. մարտի 8-ին: Պահպանվում է ինքնագիրը (ՀՀա,
I—20) և նրա հեղինակային պատճենը (ՀՀա, I—16): Բանաստեղծի ծրագրով
պետք է մտնել 1887 թ. ժողովածուի մեջ: Առաջին անգամ հրատարակել է
Բ. Զարյանը «Երկերի ժողովածուի» ծանոթություններում: Տպագրվում է ըստ
ինքնագրի:

Առաջին ձեռագրում.

28 [Պիտ] Կըզան հայրիկին փող բերեն ընծա

36 [Տիրոջ] Աստծու հրամանով, պիտի կատարվի

34 «ԻՄ ՍԵՐԸ, ՄԱՆՈՒԿ, ՔՈ ԶԱՐԹԱՄ ՀՈԳՈՒՆ»

Գրել է 1887 թ. փետրվարի 11-ին: Տպագրվում է ինքնագրից (ՀՀա,
I—219) առաջին անգամ:



Երկու խոսք	5
----------------------	---

ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «Տեսնի՛լ ես արդյոք աշն քրտրները»	11
2 «Առավոտս անցավ: Առաջ եմ նայում»	13
3 «Շաապի՛ր, պատանի՛, տալ վաշխըսկան»	14
4 Երկու ճանապարհ	15
5 «Զինջ երկնքից սուկի արե»	17
6 «Միևնույն վիշտը մեզ միացրեց»	18
7 «Որպես հաղթանդամ մի ծերուկ հոկա»	19
8 Ավերակ	21
9 «Ա՛խ, ավե՛ր ինձ բազրյա մի բուն»	22
10 Հակոբ ա. ք. Սուրենյանցի հիշատակին	24
11 Զինվորի մահը	26
12 «Ի դուր է, հոգի՛ս, ի դուր, իմ հրեշտա՛կ»	27
13 «Անապատումը երերուն կյանքի»	28
14 «Ես գրոսնում եմ բերկրամիտ»	29
15 Գիշերվան երգը	30
16 Հայրենասեր	32
17 «Այս օրերումը քնդհանուր սուղի»	34
18 «Դարձյալ նոր տարի. թող ուրախանան»	36
19 Երգ	37
20 «Տրխուր երգիչը քնարը ձևին»	38
21 Ինձ մի սիրիք	39
22 «Երանի նորան, որ տեր է ազատ»	40
23 «Զգում եմ արդեն, հանդում է հոգիս»	41
24 «Անցան դարեր—ստրկության»	42
25 «Գեղեցիկ օրեր, ծաղկավա՛ս օրեր»	44
26 Գյուղի ժամը	46
27 Առավոտ	48
28 «Ես բեզ սիրում եմ, սուրբ գեղեցկության»	49
29 «Քանի՛, բանի՛ կամեցել եմ»	50
30 «Ամենայն անգամ, երբ տեսնում եմ բեզ»	51
31 «Ահա քնար և տավրիկներ»	52
32 Գամառ-Քաթիպային	53
33 «Անույտ խավարը, շարության ողին»	54
34 Հատիկ	55
35 Զատիկ	56

36 «Այն, ի՞նչպէս, հողլա՛կ, կրկամենայի»	58
37 Երկու համբույր	59
38 «Ես անմոռելի դնում էի հանապարհ»	60
39 «Քնքաւ տաղերում ես պիտի երգեմ»	61
40 «Եվ այս դարուն կանցնի շուտով	62
41 «Երբ ես նստած եմ տխուր և մնչիկ»	63
42 «Երբ ես տեսնում եմ, որ ունայնասեր»	64
43 «Ինչպէս վտակ ես կրկնափեմ»	65
44 «Երբ մատաղ մուսա ծպխտն երեսին»	66
45 «Լինում է րոպէ, ես անիծում եմ»	68
46 «Զքնաղ մանուկ, հրեշտակ դմբով»	69
47 26 ապրիլի	70
48 «Գու արտասովում ես և չես ամաչում»	72
49 «Ահա քեզ ձեռքս, բնկեր թանկագին»	73
50 «Թող այսօր մոլին է քեզ համար արեւ»	74
51 «Ես քեզ սիրեցի, բայց չեմ կամենում»	75
52 «Երբ նա դեռ նոր էր լույս աշխարհ տեսել»	77
53 «Մի՛ թողնիր, երգի՛չ, ընարբղ կախած»	78
54 «Իմ խեղճ հայրենիք, անփառք վիճակիդ»	79
55 Տղմուտ	80
56 «Հասի՛ր, սիրելի՛ս, բե՛ր ոսկի քընար»	83
57 Աշուղ	84
58 Երգչին	86
59 «Սիրուն զլուխըդ կուրծքիս խոնարհած»	87
60 «Ամենայն անգամ, երբ քնկամիտ»	88
61 «Գու չըկամիս, ո՛վ կույս, լինել»	89
62 «Տեսնում եմ ահա—ազգեր են մեռնում»	90
63 «Ասում են. «Պահ՛տ, մենք չենք կամենում»	92
64 «Քեզ մոտեցա սեր հուսալով»	94
65 «Մընա՛ր բարով, արեւ, դարուն»	95
66 «Գու ծաղկում ես, ինչպէս վարդը հարավի»	96
67 «Զեղ եմ նվիրում իմ անվարժ տղերք»	97
68 Ս. Շահադիլին	98
69 «Արաղն էկավ լափին տալով»	100
70 «Հրաշալի՛ր դիշեր... խաղաղ բուն մտած»	102
71 «Ես փառք չեմ ուղում, ոսկի չեմ խնդրում»	103
72 «Ինչպէս քաղցր երազ օրերդ կանցնեն»	104
73 «Մարութ օրերի անուշ երազով»	105
74 «Թույլ տո՛ւր, իմ հողլա՛կ, կուրծքիդ խոնարհած»	106
75 Նոր տարի	107
76 «Թեպետ խեղդված եմ ես դաժան վշտից»	108

ԲԱԼԱԳՆԵՐ ԵՎ ՊՈՆՄՆԵՐ

1 Արտավազդ	111
2 Վահագնի ծնունդը	113
3 Սյունյաց իշխանը	115

ՍԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՅՐԱԿՄԵՆՏՆԵՐ

1 Երգ	123
2 Իմ հայրենիքը	124
3 Գիշեր	125
4 «Անր դու, սրտի պայծառ ջահ»	127
5 «Նա էլ էր սյուհա վաղ ժամանակով»	128
6 «Կույս դու չքնա՛ղ, կուղես ժպտա՛»	129
7 Սիրս աստղ	130
8 Մայիս	132
9 «Քեզ սիրում եմ, մանուշակ»	134
10 Գետակ	135
11 «Այն ի՛նչ ազգ է, այն ի՛նչ ցեղ է»	136
12 Ժամանակակից ճշմարտություն	137
13 Ճակատը պայծառ դարձով պսակած»	138
14 Թե լուսանում է	139
15 Զանգի	140
16 Քարածայռ	141
17 «Մըթին գիշերին խավար երկնքով	142
18 Յանկուլություն	143
19 Կալանավոր	144
20 Նավակ	145
21 «Երբ ես կիջնեմ գերեզման»	146
22 NNN	147
23 Սոսնա	148
24 Առաջին սեր	149
25 «Ոսկի ու արծաթ քո սընդուկներում»	151
26 Աշուն	152
27 Պանդխտի երգ	153
28 «Աշխատեցաք անխոնջ, խեղճե՛ր»	155
29 «Ծաղկազարդ է հովիտ»	157
30 Երազ	158
31 «Կարմրաթուշիկ վարդն ասաց»	160
32 Հիշողություն	161
33 «Իրիկվան ցողը թավշյա արոտին»	162
34 Աղատություն	163
35 «Կույս հրաշագե՛ղ, կույս նաղիլի՛»	164

36 «Ա՛խ, Հանդիստ առ և անցյալը մոռացիր»	166
37 Պատկեր	167
38 Աշեր	169
39 Այն երա՛ղ էր	170
40 Վերջին տերև	172
41 Արտուտ	173
42 «Ծաղիկ թառամած, ծաղիկ չորցած»	174
43 «Կուզեի մեռնել... բայց մահս մոտ չէ»	175
44 Ա՛խ, ի՛նչ եմ ուզում	176
45 Ընկերիս հիշատակին	177
46 Տեսե՛լ ես կոտին	178
47 «Դու իմ սի՛րտը կամիս տեսնել»	180
48 «Սիրտըս մաշվում է օտարությունում»	181
49 Շուշան	182
50 Գիշեր	183
51 «Նստած էի մեռակ տխուր»	184
52 Անբաղձի տրտունջ	185
53 Մատաղահաս երգիչը	186
54 Ձմեռ և զարուն	187
55 Նվեր	188
56 «Նորից կենաց շունչն է փչում»	189
57 Հրեշտակ	191
58 «Երբեմն ինձ սսկի արև»	193
59 Անմեղ զոհեր	194
60 Մշակ	196
61 Նոր զարուն	198
62 «Դու հարուստ ես, կյանքդ անհոգ»	199
63 «Հալատացի՛ք, դուք Հայաստան»	201
64 Հրածեղտ	203
65 Հայ մանուկ	204
66 Մութացկան	205
67 Կյանք	206
68 Նոր տարի (1883)	207
69 Խորհրդածություն	208
70 Հայ գեղջուկի երաղը	210
71 Առաջին դո՛հ	212
72 «Երբ որ նստած եմ երբեմն սրտնեղած»	213
73 «Անցա՛վ ցնորքի ժամը խաբուսիկ»	215
74 Երգ	216
75 Արև	217
76 Ձմեռ	219
77 «Տխուր է դուրսը, մթին ու խոնավ»	221

78	«Սիրում եմ երբեմն՝ երբ ծանրանում է»	223
79	«Հազիվ արեն յուր առաջին»	225
80	«Անցավ զրեթի և այս մի տարին»	227
81	«Սուլում է հոգիք, ուժգին տատանում»	228
82	«Եվ նա անկալ. գրոշը ձևին»	229
83	Նոր տարի	230
84	«Յուրա զիշեր է, բարակ բամբակ»	232
85	«Անշուր կշանբա մնջ կիև բնություն»	234
86	«Ես առում էի. «Սիրեցի՛ր, քանի»	235
87	«Բավական է լաս, չարատա՛նջ հոգի»	237
88	«Արդեն փչում է շունչը դարնային»	238
89	«Արցունք և արցունք, անվ՛րջ, անդադա՛ր...»	239
90	«Անցնում են օրեր, ևս դարձյալ մենակ»	240
91	«Ո՛հ, գեղեցիկ է աշխարհն աստուծո»	241
92	«Երկինքը պայծառ, օդը կենսաշունչ»	242
93	«Ա՛խ, ինչո՛ւ է ևս չեմ կարող խնդալ»	243
94	«Գարնան գեղեցիկ մի առավոտ էր»	244
95	«Ազոթի՛ր, հոգա՛կ, քո սիրտը ամբիծ»	245
96	«Դարձյալ, սիրակա՛ն, ինձ երեկցար»	247
97	«Գործելու մի սուրբ հասնողով անձնովիր»	248
98	«Վճիռ առվակը վաղում է կայտառ»	250
99	Սրտի զանգատը	251
100	«Ապրում ես, կզրա՛յր, և հույսըդ միշտ վառ»	253
101	«Տանջվիլ հանապաղ, տանջվիլ անվախճան»	255
102	«Մատաղ տարիներս անցնում են կամայ»	257
103	«Նազաղ վառվում է լուսինն երկնքում»	258
104	«Երկինքըն ամպոտ, միակերպ տխուր»	259
105	«Ծածկվի՛ր շուտ, արե. քո գեմքը խարդախ»	260
106	«Հոգիս տխուր է, ուզում եմ ցրվիլ»	262
107	«Իբրե և մի թշվառ կիսաշունչ դիակ»	263
108	«Ո՛վ նազելի կույտ, դու մի լար»	264
109	«Ա՛խ, պատառվում է իմ սիրտը վշտից»	265
110	«Մայրաքաղաքը փաթաթված լուսով»	266
111	«Դարձյալ գարուն, և խնդաղին»	268
112	«Լուս է հոգիս սրբիս գիշեր»	270
113	«Ես տանջվում եմ, ևս այրվում եմ»	271
114	«Ո՛ւմ հայտնեմ ցավքս, տանջանքս հոգեկան»	272
115	«Ես տանջվում էի, չափ չըկար վշտիս»	273
116	«Ո՛վ իմ չքնաղ, իմ անդի՛ն»	274
117	«Ազի՛դ բալա, ջա՛ն բալա»	275
118	«Ես երգելու ձեն չունեմ»	276
119	«Ա՛խ, սե սե աշեր, ինչո՛ւ ձեզ տեսա»	277

120 «Ես էլ չունիմ նախկին գրիչ»	278
121 «Երբ որ մահվանս ժամը հասնի»	279
122 «Անուշտ խավարը իբրև փոթորիկ»	280
123 «Անցան կասկածի, տխրության օրեր»	282
124 Խորհնացու ողբը	283
125 «Գառարի, անմիտ հույսերով»	286
126 «Հայրենիքի հոտ բուրեցիր, մանիշակ»	287
127 «Ո՛հ, մի վրդավեք ըզմայլված հոգին»	288
128 Իմ մուգան	289
129 «Տես խավարը թանձրանում է»	290
130 «Ես չեմ նախանձում թշվառ ստրուկին»	292
131 «Անմիտ գծերով թղթի վրա շարված»	293
132 «Ես փառք չեմ խնդրում, սակի չեմ ուղում»	294
133 «Դուք բնակիչ ազատ երկրի լուսավոր»	295

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավարոված քաղամանություններ

1 Անավարտ պատկեր	299
2 «Ո՛վ վարդ աղջիկ, գերի եմ ես»	300
3 «Ես չեմ արցունք թափեցի»	301
4 Երգ	302
5 Զինորս	303
6 «Իմ արցունքից բուսնում են»	305
7 «Այս ի՞նչ երգ է հեշտագին»	306
8 Նոր տարի	307
9 Պսևին	308
10 Էլեգիա	309
11 «Օգն անվրդով է և խաղաղական»	310
12 «Ես գուրս եմ գալիս մենակ ճամբու վրան»	312
13 «Կուղիի անհետ հեռանալ, կորչել»	313
14 «Անկեղծան հովիտ ձյունով ըսքողված»	315
15 Երազ	317
16 Անգրազեա	318
17 «Ցուրն աստղերը կապույտ երկնքում»	320
18 Պսևա	321
19 Մնաս բարե	322
20 «Բնիկ՛ր իմ, եղբա՛յր, դու վաստակարեկ եղբայր իմ տանջված»	323

Անավարտ քաղամանություններ

21 Աղջկա երգը	325
22 Պսևա	326

23 «Երբ որ սիրահիտ իմ թափալով»	327
24 Գարուն	328
25 «Ափրոդիտէ՛, Զևսայ զուտորդ զու անմահ»	329
26 «Ժլատ տապևտ»-ից	331
27 «Իլիական»-ից	333
28 «Շղթալված Պրոմէթէոսից»	341
29 «Անտիգոնէից»	345
30 Վաստակ	346
31 «Ուժգին հոգմերը արձակ դաշտերում»	347
32 «Թե պատահում է հասարակական»	349
33 Տիկին	350
34 «Իմ սերը, մանս'ւկ, բո զնարթած հոգուն»	353

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
 ИОАННЕС ИОАННИСЯН

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
 Հ ա տ ո թ Ի

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության
 ինստիտուտի գիտական խորհրդի հանձնարարությամբ

Հրատ. խմբագիր՝ Ա. Ա. Հովակիմյան
 Նկարչական ձևավորումը՝ Կ. Թ. Տիրատուրյան
 Տեխ. խմբագիր՝ Խ. Ե. Սամվելյան
 Սրբագրիչ՝ Ս. Կ. Զաքարյան

հրատ. № 2358, ԽՀԽ № 880, պատվեր 3, տպաքանակ 5500

Հանձնված է արտադրության 31/X 1963 թ.:

Ստորագրված է տպագրության 14/II 1964 թ.:

Տպագրական 26,5 մամուլ + 1 ներդիր, հրատարակչական 12,31 մամուլ,
 թուղթ 84×108¹/₃₂: Գինը կազմով 1 ռ.

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220036648

A $\frac{\pi}{36648}$